ԱՎԵՏԻՍ ՓԱՓԱԶՅԱՆ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՊԱՅՔԱՐ

9(56)
Ա-31

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՎԵՏԻՍ ՓԱՓԱԶՅԱՆ

3079

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՊԱՅՔԱՐ

ԵՐԵՎԱՆ 2000

ԳՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)52
Փ 311

Փ 311 Փափազյան Ավետիս. Ցեղասպանություն և գոյատևման պայքար,- Եր.: «Զանգակ-97, 2000 թ.- 191 էջ

Տպագրվում է Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Սույն աշխատությունը բաղկացած է երկու մասից:

Առաջին մասում բերված են հայերի ցեղասպանության վերաբերյալ տարբեր ազգությունների պատկանող մտավորականության գնահատականներն ու տեսակետները, քաղվածքներ համաշխարհային մամուլից, ինչպես նաև առանձին հատվածներ 1915 թ. Մեծ Եղեռնի վերապրողների նամակներից: Հատուկ ուշադրություն է դարձված Արևմտյան Հայաստանի մշակութային արժեքների ոչնչացման խնդրին:

Երկրորդ մասում ընդգրկված են հայ ժողովրդի գոյատևման, ազատագրության և անկախության համար մղված պայքարի պատմությանը նվիրված հեղինակի ուսումնասիրությունները:

Նախատեսված է ընթերցող լայն հասարակության համար:

Ա 0503020913 / 0003(01)-00 ----------2000 ԳՄԴ 63.3(2Հ)52

ISBN 99930 - 2 - 076 - 1

© «Զանգակ-97» հրատ., 2000 թ.

Այս գրքի հովանավորությունը ստանձնեցին

ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՓԻԵՌ ԵՎ ԱՍՊԵՏՈՒՀԻ ՍԻՄՈՆՅԱՆՆԵՐԸ

իրենց ծնողի՝

ՀԱՅԿ ԵՎ ՌՈԶԻՆ ՂԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ

անմար հիշատակին:

Հեղինակը հայտնում է իր խորին
շնորհակալությունը
հարգարժան մեկենասներին



ՀԱՅԿ ԵՎ ՌՈԶԻՆ ՂԱԶԱՐՅԱՆՆԵՐ

ՀԱՅԿ ԵՎ ՌՈԶԻՆ ՂԱԶԱՐՅԱՆՆԵՐ

Հեղինակի կողմից

Հայկ Ղազարյանը հարազատ հորաքրոջս՝ Նեկտար Ղազարյանի կրտսեր որդին էր։ Ծնվել է 1910 թ. Նիկդեյում (Թուրքիա)։ Հայրը, Միսակ Ղազարյանը Մեծ Եղեռնի զոհերից է։ Որբացած պատանին, տարրական դպրոցն ավարտելուց հետո, ստիպողաբար լծվում է չարքաշ աշխատանքի հոգալու համար ընտանիքի ամենօրյա ապրուստը։ Թերի մնացած ուսումը հետագա տարիներին իր աշխատասիրությամբ ամբողջացնում է ինքնուս կրթությամբ։

Հայկ Ղազարյանը եղել է առաքինի, աշխատասեր, հայրենիքի հոգսերով ապրող մի անձնավորություն և ամբողջ իր կյանքի ընթացքում Սիրիայի Լաթաքիա քաղաքի հայահոծ գաղութում նվիրվել է ազգային հասարակական աշխատանքներին։ Միևնույն ժամանակ խորը հավատքով վարել է ավագ սարկավագի պաշտոնը տեղի Ս. Հակոբ հանրահայտ եկեղեցում։

Նրա երկաթագործության արհեստանոցը, որը գտնվում էր Լաթաքիայի կենտրոնական փողոցներից մեկում, իր ընկերների և բարեկամների համար մի տեսակ օրվա անցուդարձը քննարկելու հավաքատեղի էր (1940 թվականի սկզբներին այդ փողոցը կոչվում էր Rue de France)։ Նշեմ նաև, որ Հայկ Ղազարյանը բավականին հարգանք ու պատիվ էր վայելում իր արաբ ընկերների շրջապատում։

1943 թ. Հայկ Ղազարյանը Լաթաքիայում ամուսնանում է Ռոզին Դեկիրմենջյանի հետ, և մինչև իրենց կյանքի վերջն ապրում են համերաշխ, փոխադարձ սիրով ու հարգանքով։ Այդ ընթացքում ծնվում են նրանց երեք զավակները՝ Համբարձում, Ասպետուհի և Մարիա Ղազարյանները, որոնք իրենց հայեցի ուսումն ու դաստիարակությունը ստանում

են Սիրիայի հայկական վարժարաններում և այնուհետև հետևելով իրենց ծնողի օրինակին ձգտում են օգտակար դառնալ Լաթաքիայի հայ համայնքին: Հետագայում ամուսնանում և ընտանիք են կազմում նույնպես հայեցի ոգով դաստիարակված հայորդիների հետ, իրենց ծնողին պարգևելով սիրասուն թոռնիկներ:

Ամբողջ կյանքը Լաթաքիայում անցկացրած Հայկ Ղազարյանի համար մեծ երջանկություն էր 1979 թ. իր դստերերի հետ Հայաստան կատարած այցելությունը: Եղան մեր ընտանեկան հարկի տակ. միասեղ այցելեցինք Հայաստանի մի շարք հիշարժան վայրերը: Ուղղակի հիացած էր և հպարտ բոլոր ասպարեզներում հայ ժողովրդի ձեռք բերած աննախընթաց նվաճումներով:

1964 թ. Հայկ Ղազարյանը երբ տեղեկացավ, որ ես մասնագիտանում եմ հայ-թուրքական հարաբերությունների պատմության ուսումնասիրությամբ, սկսեց պարբերաբար ինձ ուղարկել թուրքերեն պատմագիտական նորատիպ գրքեր, բառարան, հանրագիտարան: Այդ բոլորի մեջ ամենաարժեքավոր նվերը տվյալ ժամանակ Թուրքիայում 7 հատորով հրատարակված ստվարածավալ «Օսմանյան կայսրության պատմությունն» էր:

Մի խոսքով Լաթաքիայի հեռավոր ափերից իր հայրենասիրական կարոտալի գրություններով ձգտում էր բարոյապես քաջալերել ինձ և ամեն կերպ օգտակար դառնալ իմ գիտական աշխատանքի առաջընթացին:

ՀԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՅ
ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ ԵՂԻՅԻ

ԱՌԱՋԱԲԱՆ

2000 թվական, ապրիլ 24.

Լրանում է հայ ժողովրդի նկատմամբ 20-րդ դարասկզբում գործադրված Մեծ Եղեռնի ողբերգության 85-րդ տարելիցը:

1915 թ. Երիտթուրքերի կառավարության կիրառած ցեղասպան քաղաքականության հետևանքով Արևմտահայությունը կանգնեց իսպառ ոչնչացման վտանգի առջև: Նյութական հսկայական կորստի հետ մեկտեղ հայ ժողովուրդը զրկվեց իր բնօրրանից՝ Արևմտյան Հայաստանից, տալով մեկուկես միլիոնից ավել անմեղ զոհեր:

Այո՛, Սուլթան Աբդուլ Համիդի բռնատիրության շրջանում հայերի բնաջնջման վերաբերող նենգ արարքները նույնությամբ որդեգրեցին նաև 1908 թ. իշխանության գլուխ եկած երիտթուրքական կառավարությունն ու «Իթթիհադ վե թերաքքի» (Միություն և առաջադիմություն) կուսակցության պարագլուխները: Նրանք իրենց հայաջինջ ծրագրերը իրագործեցին Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, կանխամտածված ծրագրով և այդ նպատակի համար ստեղծված «Թեշքիլաթը մահսուսե»-ի (հատուկ կազմակերպություն) արյունարբու հրոսակախմբերի միջոցով:

Եվ այդպես հայկական հարցը լուծելու համար երիտթուրքերն ընտրեցին Արևմտահայությանը իսպառ բնաջնջելու ճանապարհը:

1915 եղեռնով հայ ժողովրդի համար սկսվեց տառապանքներով լի դաժան մի շրջան: Մի կողմից հայաթափվեց Արևմտահայաստանը իր բնիկ ժողովրդից, իսկ մյուս կողմից ողջ մնացածները անտուն-անհայրենիք ցրվեցին աշխարհով մեկ, մի մասն էլ գաղթեց դեպի Արևելյան Հայաստան:

Առ այսօր աշխարհի մի շարք կառավարությունների կողմից ապրիլ 24-ը պաշտոնապես հայտարարված է որպես

հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր։ Դժբախտաբար թևակոխում ենք 21-րդ դար, բայց դեռևս չի ճանաչված մարդկության դեմ ուղղված այդ ծանրագույն հանցագործությունը, չի դատապարտվել միջազգային չափանիշով և չի հատուցվել հայերի նյութական և հոգային արդար պահանջները։

Այնուհանդերձ Մեծ Եղեռնի փաստը այսօր էլ բուռն թափով շարունակվում է մնալ համաշխարհային պատմագրության, միջազգային հասարակության և առանձին պետությունների ուշադրության կենտրոնում։ Այն յուրովի մեկնաբանություն է գտել նաև թուրքական պատմագրության և պետական գործիչների հակահայկական քաղաքականության շրջանակներում, ուր ամեն ջանք գործադրվում է քողարկելու այդ ողբերգական դեպքերը, աղավաղելու պատմական ճշմարտությունը և հատկապես հերքելու Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած հայերի բռնագաղթն ու կոտորածները։

Թուրք պատմաբաններն ու պետական գործիչները հիմնականում մեղադրում են հայերին, որ իրենց ապստամբական գործողություններով իբր վտանգ են սպառնացել թուրքական կովկասյան բանակի թիկունքում։ Ուստի կառավարությունը նախաձեռնել է հայերի տեղափոխությունը մի այլ վայր։

Այս տեսակետը չինծու է և բոլորովին չի համապատասխանում իրականության։ Թուրք պատմաբանները անտեսում են շատ կարևոր մի փաստարկ, որ հայությունը տեղահանվեց այնպիսի շրջաններից, գյուղերից և քաղաքներից, որոնք շատ հեռու էին գտնվում հակառակորդի սահմանամերձ գոտուց։ Իրականում Արևմտահայության ինքնապաշտպանությունը ոչ թե ապստամբություն էր, այլ գոյության կռիվ։ Հայերը զենքի դիմեցին այն պահին, երբ կանգնեցին կոտորվելու վտանգի առջև։

Այո՛, առանձին շրջաններում «Մահ կամ ազատություն»

կարգախոսով հայ քաջամարտիկները հերոսական մարտեր մղեցին թուրք ջարդարարների դեմ։ Անհավասար պայքարում միշտ չէ, որ հաջողությամբ պսակվեց նրանց ազատատենչ ձգտումները, այնուհանդերձ աշխարհով մեկ ցույց տվեցին հայության ապրելու և գոյատևելու ըմբոստ ոգին։

Այս տեսակետից հիշատակության արժանի են Վանի հերոսամարտը, Մուսա լեռան դյուցազնամարտը, Մուշի, Սասունի, Շապին Կարահիսարի, Ուրֆայի, Հաջընի, Ցոզղաթի ինքնապաշտպանական կռիվները։

Պայքարը հետագայում ևս շարունակվեց բուռն կերպով և հայ ժողովուրդը նոր հաղթանակների հասավ Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերում ու կերտեց իր անկախությունը Պատմական Հայաստանի արևելյան տարածքում։ Այսօր էլ առկա բոլոր դժվարություններով հանդերձ, Հայաստանը մտնում է 21-րդ դար որպես հայության հուսալի պատվար։

Պայքարը շարունակվում է և պիտի շարունակվի մինչև որ հայերի ցեղասպանությունը ճանաչվի, դատապարտվի միջազգային հանրության, պետությունների կողմից և արդար հատուցում ստանա նրա արյան, հոգային և նյութական պահանջատիրությունը։

Գիրքը նվիրվում է Մեծ Եղեռնի 85-րդ տարելիցին։

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ցեղասպանություն,-գործողություններ, որոնք կատարվում են ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խմբի նկատմամբ, լրիվ կամ մասնակիորեն այն ոչնչացնելու մտադրությամբ. քրեական ծանր հանցագործություն: Որպես ցեղասպանություն են որակավորվում հետևյալ գործողությունները. մի խմբի նման անդամների սպանությունը, խմբի նման անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ խանգարումներ պատճառելը, որևէ խմբի համար կանխամտածված այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որոնք հանգեցնելու են նրա լրիվ կամ մասնակի ոչնչացմանը, միջոցներ, որոնց նպատակն է կանխել ծննդաբերությունը նման մի խմբի միջավայրում, երեխաների բռնի հանձնումը մարդկային մի խմբից մյուսին:

... Ցեղասպանության դասական օրինակ է հանդիսանում 1,5 միլիոն հայերի բնաջնջումը Օսմանյան կայսրության իշխանությունների կողմից, որոնք օգտվեցին Առաջին համաշխարհային պատերազմի իրադրությունից («Ինչը ինչ է համաշխարհային քաղաքականության մեջ, տեղեկատուբառարան, Մոսկվա, 1987, էջ 91-92, ռուսերեն):

Այս տարի(1965) հինգամյակն է հայկական ջարդերի, որոնք կազմակերպվեցին Օսմանյան Թուրքիայի կողմից՝ ազգային հարցը ամբողջ մի ժողովրդի, բնաջնջման ճանապարհով լուծելու նպատակով: Այդ ցեղասպանությունը արժեցավ մեկուկես միլիոնից ավելի ազատասեր հայերի՝ այսինքն հայ ժողովրդի երկու երրորդի կյանքը:

Հելսինկիում կայացած խաղաղության
կողմնակիցների համաշխարհային գոնկըրեսի որոշումից:
Հուլիս (15), 1965 թ.

Եվրոպական պառլամենտը... այն կարծիքին է, որ Օսմանյան կայսրության տարածքում հաստատված հայերի հետ կապված 1915-1917 թթ. ողբերգական դեպքերը իրենցից ներկայացնում են ցեղասպանություն՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948-ի դեկտեմբերի 9-ին հավանության արժանացած ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու դաշնագրի իմաստով:

Եվրոպական Պառլամենտի որոշումից:
Հունիս 18,1987 թ. Ստրասբուրգ

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Արևմտահայության զանգվածային կոտորածների և հատկապես 1915 թ. երիտթուրքական կառավարության կողմից կազմակերպված և գործադրված Մեծ Եղեռնի վերաբերյալ առ այսօր հրատարակվել և դեռ շարունակվում են հրատարակվել բազմաթիվ լեզուներով ուսումնասիրություններ, վավերագրերի ժողովածուներ, ականատեսների վկայություններ, վերապրողների հուշագրեր, տարբեր երկրների դեսպանությունների պաշտոնական զեկուցագրեր, և այլն։

Իր ժամանակին և հետագայում տարբեր ազգությունների պատմաբաններ, հրապարակախոսներ, լրագրողներ, ինչպես նաև պետական բարձրաստիճան գործիչներ, իրենց ելույթներում, հոդվածներում և աշխատություններում ցասումով դատապարտելով երիտթուրքերի կողմից կատարված հրեշավոր չարագործությունները հայ ժողովրդի նկատմամբ, հավաստի և անաչառ գնահատական են տվել հայերի ցեղասպանությանը։ Ստորև ընթերցողին ենք ներկայացնում այդ մտավորականների եզրակացություններից քաղված հատվածներ, որոնք ամբողջական պատկերացում են տալիս հայերի ցեղասպանության մասին։

Բերված գնահատականները վճռականորեն հերքում են ժամանակակից թուրք պատմաբաններին և պետական գործիչներին, որոնք աշխատում են քողարկել և խեղաթյուրել դարասկզբին Արևմտյան Հայաստանում և արհասարակ ամբողջ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայերի հալածանքներն ու ցեղասպանությունը։ Հակառակ այդ հերքումներին, տվյալ ժամանակի թուրք պետական գործիչներից ու պատմաբաններից մի քանիսը իրենց հուշագրություններում և աշխատություններում անդրադարձել են հայկական կոտորածներին և ինչ որ տեղ նրանց գրիչը չի խուսափել նշելու այն ողբերգությունը, որ տեղի ունեցավ Աբդուլ Համիդի բռնատիրության շրջանում և երիտթուրքերի իշխանության օրոք։ Նույնիսկ հայերի ցեղասպանության անմիջական մասնակիցները խոստովանել են իրենց կատարած հանցագործությունները։

Ուշադրության արժանի փաստ է նաև, որ հակառակ թուրք պետական գործիչների և պատմաբանների այսօրվա ուրացումներին, վերջին տարիներին առանձին թուրք մտավորականներ համարձակորեն հանդես են գալիս ճշմարտությունը բացահայտելու և հայերի ցեղասպանությունը դատապարտելու գրություններով և ելույթներով։ Այդ առումով որոշ հատվածներ բերել ենք նաև հայկական կոտորածների կապակցությամբ արտահայտված նրանց մտքերից։

Բնականաբար, լայնածավալ թիվ է կազմում նաև տվյալ ժամանակի տարբեր լեզուներով հրատարակված համաշխարհային մամուլի գնահատականները, որոնք նույնպես հաստատում են տեղի ունեցած կոտորածներն ու սարսափը։ Այդ հրատարակումներից նույնպես բերել ենք առանձին քաղվածքներ, որոնք անմիջական և հավաստի պատկերացում են տալիս Արևմտահայության նկատմամբ կատարված ցեղասպանության մասին։

Անկողմնակալությունը պահպանելու նկատառումով գրքում չենք ընդգրկել հայ մտավորականների, պետական և հասարակական գործիչների հուշերն ու վկայությունները։ Այնուհանդերձ մեզ իրավունք ենք վերապահել Եղեռնից վերապրողների նամակներից բերել առանձին հատվածներ,

*Այս խորագրի տակ բերված նյութերը նախաձեռնել ենք հավաքել 1988 թվականից սկսած, որոնց մի մասը պարբերաբար լույս է տեսել Լոս Անջելոսի հայ մամուլում։ Ներկայումս անտիպ նյութերով հանդերձ հրատարակում ենք ամբողջությամբ։ Անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, թուրքերեն նյութերի թարգմանությունները մերն են.-Ա. փ.։

որոնք ականատեսի հավաստի վկայություններ են կատարված ահավոր ողբերգության մասին։

Առանձին գլխով կանգ ենք առել նաև Պատմական Հայաստանի տարածքում հայ մշակութային արժեքների ոչնչացման թուրքական քաղաքականության վրա։

Մի խոսքով բերված բոլոր փաստերն ու վկայությունները, տեսակետներն ու գնահատականները լիովին հաստատում են 20-րդ դարի սկզբին հայերի նկատմամբ տեղի ունեցած ցեղասպանությունը։ Որոշ առումով պահպանել ենք բերված նյութերի ժամանակագրական կարգը։

ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայերի ցեղասպանությունը ճանաչվել և «Հայ նահատակների հիշատակման օր» է հայտարարվել ԱՄՆ-ի հետևյալ նահանգների խորհրդարաններում. ՎԻՐՋԻՆԻԱ, ԻԼԻՆՈՅ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿԱՐՈԼԻՆԱ (1996 թ. ապրիլ 23), ԿԱԼԻՖՈՐՆԻԱ (1997 թ. ապրիլ 21), ՆՅՈՒ ՅՈՐՔ (1998 թ. ապրիլ 24), ՋՈՐՋԻԱ (1999 թ. փետրվար 17), ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿԱՐՈԼԻՆԱ (1999 թ. ապրիլ 14)։

ԹԵՈԴՈՐ ՌՈՒԶՎԵԼՏ, ԱՄՆ-ի նախագահ 1901-1909 թթ.- Քիչ բան է անում մեր երկիրը վայրագությամբ ու ծավալով աննախընթաց այն ոճիրների առթիվ, ինչպիսին հայկական կոտորածներն էին։ (New York Times, January 12, 1915)։

ՀԵՆՐԻ ՄՈՐԳԵՆԹԱՈՒ, ԱՄՆ-ի դեսպան Թուրքիայում 1913-1916 թթ.- Ես վստահ եմ, որ ամբողջ մարդկության մեջ չկան այնպիսի սարսափելի փաստեր, ինչպես այս կոտորածն էր։ Թվում էր, որ անցյալում եղած մեծ կոտորածներն ու հալածանքները 1915 թ. հայ ազգի տանջանքների հետ համեմատած աննշան են։ (Henry Morgenthau, Ambassador Morgenthau's Story, Garden City, New York, 1918, p. 324).

ՎԻԼՍՈՆ ԹՈՄԱՍ ՎՈՒԴՐՈ, ԱՄՆ-ի նախագահ 1913-1921 թթ.- Ջենքերը վար պիտի չդնենք, մինչև որ Թուրքիոյ կողմե ճնշված ազգերը չգտնեն իրենց ազատությունը։ Թուրքիա իր վայրագությամբ գլեց անցավ իր տերերը՝ գերմանացիները։ Հայերու հանդեպ գործադրված մեթոդիկ ջարդերը կստիպեն մեզ ավելու Եվրոպայի վրայեն այս տգետ ու վատառողջ ավազակախումբը (Երիտասարդ Հայաստան, 84-րդ տարի, թիվ 4, օգոստոս 1986)։

ՋԵՐԱԼԴ ՖՈՐԴ, ԱՄՆ-ի նախագահ 1973-1977 թթ.- Խորը զգացումով նշում ենք հայ ժողովրդի նկատմամբ կատարված թուրքական ցեղասպանության 50-րդ տարելիցը։ Մենք խորը կսկիծով անդրադառնալով 1915 թ. սարսափելի դեպքերի տարելիցին, մի կողմից վերհիշում ենք հայերի կոտորածները, իսկ մյուս կողմից հպարտությամբ ողջունում ենք այն քաջ հայրենասերներին, որոնք կարողացան իրենց գոյությունը պահպանել, կռվելով հանուն ազատության, Առաջին համաշխահային պատերազմի ընթացքում...(Այս խոսքերը ասված են 1965 թ. կոնգրեսում։ Տե՛ս "The Armenian Genocide. Compiled and edited by Libarid Azadian, Armen Donoyan, Los Angeles, 1987, p. 93)։

ՋԻՄԻ ՔԱՐԹԵՐ, ԱՄՆ-ի նախագահ 1977-1981 թթ.- Այժմ ընդհանրապես ողջ աշխարհին հայտնի է, որ 1916 թ. նախորդած տարիներին եղել են փոխհամաձայնեցված ջանքեր, բնաջնջելու հայ ժողովրդին. դա դեռևս որևէ ազգին բաժին ընկած մեծագույն ողբերգություններից է (Գրական Թերթ, 1990, Ապրիլ 27, թիվ 18 (2369))։

ՌՈՆԱԼԴ ՌԵՅԿԱՆ, ԱՄՆ-ի նախագահ 1985-1989 թթ.- 65 տարի առաջ մարդկության տարեգրության պատմության մեջ տեղի ունեցավ ամենացավալի ողբերգությունը, երբ մեկուկես միլիոն անմեղ հայեր, կանայք և երեխաներ

կոտորածի ենթարկվեցին Արարատ լեռան ստորոտում։ Դարերից ի վեր նրանց միակ «մեղքը», քրիստոնյա հավատքով, ազատ հայ ապրելու նվիրվածության մեջ էր այն հայրենիքում, ուր մի ժամանակ իրենց դիրքով ու հզորությամբ չլացնում էին Փոքր Ասիան (Հատված 1980 թ. ապրիլ 15 «Ասպարեզ» օրաթերթին ուղղված գրությունից)։

ՋՈՐՋ ԲՈՒՇ, ԱՄՆ-ի փոխ նախագահ 1980-1988, նախագահ՝ 1988-1992.- Կոտորածների այս 75-րդ տարեդարձին ես ցանկանում եմ միանալ հայերին և բոլոր ժողովուրդներին, նշելով 1990 թ. Ապրիլ 24-ը, որպես հիշատակի օր մեկ միլիոնից ավելի հայ զոհերի համար։ Ես կոչ եմ անում բոլոր ժողովուրդներին ջանալ կանխել ապագա ոճրագործությունները մարդկության դեմ, և իմ 1988 թվականի Հունիսի ելույթն արտահայտում է իմ խոր զգացումները դեպի հայ ժողովուրդը և նրա կրած տառապանքը (Գրական Թերթ, 1990, ապրիլ 27, թիվ 18 (2369))։

ԲԻԼ ՔԼԻՆԹՈՆ, ԱՄՆ-ի նախագահ 1993 թվից.- Այս հանդիսավոր օրը ես միանում եմ համայն աշխարհի հայերի հետ հարգելու Օսմանյան կայսրությունում 1915 թվին կազմակերպված հայկական ջարդերի զոհերի հիշատակը։ Այդ ողբերգության հետևանքները բոլորիս խորապես հուզել են և մենք միասին սգում ենք այնքան շատ անմեղ կյանքերի ահավոր կորուստը։ Այնուհանդերձ, նույնիսկ այդպիսի կործանարար իրադարձությունից հետո էլ հայկական հարուստ ու կենսուրախ մշակույթը շարունակել է ծաղկել։ Արտասովոր ճկունություն և խիզախություն ցուցաբերելով՝ ամերիկահայերը խոշոր ներդրումներ են կատարել մեր երկրի հաջողության և զարգացման մեջ (Ազգ, ապրիլ 26, 1994)։

ՀԵՐՐԻ ԳԻԼՄՈՐ, ԱՄՆ-ի դեսպան Հայաստանում,- Հայաստանը հաճախ եղել է ողբերգությունների և արցունքների երկիր։ Բայց շնորհիվ հայաստանցիների և սփյուռքահայերի ծանր աշխատանքին, Հայաստանը նորից կարող է

3079

դառնալ խոստումի ու հուսո երկիր։ Ես հույսով եմ, որ ապագայի արցունքները կլինեն ուրախության արցունքներ։ Ես հույսով եմ և հավատում եմ, որ մենք բոլորս կապրենք, տեսնելու այդ օրը (Նոր Օր, հունիս 18, 1994)։

Գիտեի, թե Ապրիլ 24-ը կարևոր թվական է հայերի համար և այս տարի առիթը ունեցա զգացական կերպով ապրելու ինքս էլ։ Եվ մեծապես զգացված էի Հայկական Ցեղասպանության մեկուկես միլիոն նահատակներին նվիրված հուշակոթողին առջև (Հայ կյանք, հունիս 22, 1994, էջ 6)։

ԷԴՈՒԱՐԴ ՔԵՆԵԴԻ, դեմոկրատ ծերակուտական, Մասաչուսեթս նահանգից,- Այսօր մենք կրկին խոնարհվում ենք մեկուկես միլիոն հայերի հիշատակի առջև, որոնք զոհ գնացին դարասկզբում Օսմանյան կայսրությունում կազմակերպված ցեղասպանությանը...։ Հանուն իրենց հավատի հայերին վիճակված հրեշավոր տառապանքները, արիությունը, որով նրանք կրեցին այդ ողբերգությունը, աննախադեպ են մարդկության պատմության մեջ։ Ահա թե ինչու ես պաշտպանում եմ Ապրիլի 24-ը հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի ազգային օր հայտարարելու գաղափարը (Ազգ, ապրիլ 23, 1994)։

ՌՈԲԵՐԴ ՏՈԼ, կոնգրեսի ծերակուտական,- Ես այսօր վեր կենալով միանում եմ իմ գործընկերներին խորը վշտակցությամբ հիշելով հայերի ցեղասպանության ողբերգական իրադարձությունները։ Այդ 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն էր, բայց ոչ վերջինը։ Մենք պետք է գործադրենք մեր բոլոր հնարավորությունները, որպեսզի բնավ չկրկնվեն պատմության այդ աղետները։ Սա է միակ ճանապարհը մեր հարգանքի տուրքը մատուցելու անցյալի ցեղասպանության զոհերին (Asbarez, April 30, 1994, p. 8-9)։

ՄՈՆՐՈ ՖՐԻՄԵՆ, քաղաքական գործիչ,- Այսօր (1980) մենք ցավով ենք հիշում 20-րդ դարի առաջին ցեղասպանության ժամանակ մորթված, սովամահ ու տանջամահ

արված մեկուկես միլիոն հայերին (Գրական Թերթ, ապրիլ 27, 1990, թիվ 18 (2369.)։

ԺՈԶԵՖ Ռ. ՍԵՐԵԼ, հասարակական քաղաքական գործիչ,- Ցեղասպանություն. ամենահասարսուռ բառերից մեկը, մարդկային գիտակցությունը ցնցող մի ողբերգություն, վայրագություն, գազանություն, որ աններելիորեն հաճախակի է կիրառվում ժողովուրդների նկատմամբ՝ միմիայն նրանց ազգային և հավատքային պատկանելիության համար...։ Եվ ամենացայտուն օրինակը՝ մեկուկես միլիոն հայերի ոչնչացումը քայքայվող Օսմանյան կայսրությունում, 75 տարի առաջ (Երկիր Ավետյաց, հոկտ. 8, 1990)։

ՌԻՉԱՐՏ ԼԵՀՄԱՆ, ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի անդամ,- 1915-1923 թվականներին Օսմանյան կայսրության կառավարության կողմից ցեղասպանության ենթարկվեց հայ ժողովուրդը։ Կոտորվեց մեկուկես միլիոն տղամարդ, կին և երեխա։ Օսմանյան կայսրության կողմից էթնիկական այս ժողովրդի բնաջնջումը, իրոք որ ողբերգական կորուստ էր, որի հետևանքով զոհվեց հայերի երկուերրորդ մասը, որոնք բնակվում էին իրենց հայրենիքում (Asbarez, April 30, 1994, p. 8)։

ԷԼԹՈՆ ԿԱԼԵԿԼԻ, ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի անդամ,- Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում Օսմանյան կայսրությունում ապրում էին 2,5 միլիոն հայեր։ Այսօր 80.000-ից էլ քիչ են մնացել Թուրքիայում, այն էլ մեծամասնությամբ Ստամբուլում և Թուրքիայի արևմտյան մասում։ Հայերի նախկին բնակավայրը հանդիսացող Արևելյան նահանգները փաստորեն մնացել են առանց հայերի։

Այսօր հիշելով հայերի ցեղասպանության զոհերին, մենք երախտագիտությամբ գնահատում ենք նաև մեկ միլիոն ամերիկահայերին, որոնք իրենց խորը ներդրումն ունեն այս երկրի բարգավաճման ընագավառում (Asbarez, April 30, 1994, p. 8)։

ԶԱՎԻԵ ԲԵՍԵՐԱ, ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի անդամ,- Այսօր պետք է նախ ես հարց տամ. ինչպե՞ս կարելի է բառերով արտահայտել մեկուկես միլիոն անմեղ մարդկանց ողբերգական կորուստը։ Այնուհետև ցեղասպանության իրական փաստը այնքան անըմբռնելի է, որ այն ակամա ստիպում է արտահայտվել, հիշել և հարգել հիշատակը հայերի ողբերգության։ Լռել և ուրանալը առավել ծանրացնում է մարդկության դեմ ուղղված այդ ոճրագործությունը, որը գործադրվել է 1915-1923 թվականներին Օսմանյան կայսրության կողմից։ Միմիայն այն դեպքում, երբ բոլոր կողմերը կճանաչեն հայերի ցեղասպանության ծավալն ու խորությունը, մենք կկարողանանք հաստատել ճշմարտությունն ու խաղաղությունը այդ տագնապալի տարածքում (Asbarez, April 30, 1994, p. 9)։

ՎԻՊ ԴԵՅՎԻԴ ԲՈՆԻԵՐ, ԱՄՆ-ի գոնկրեսի մեծամասնության պալատի անդամ,- Գոնկրեսի մակարդակով ցեղասպանության նշումը հատկապես անհրաժեշտ է այն միտումով, որ Թուրքիան հետագա տարիներին մերժում է ընդունել այդ ահավոր արարքները։ Որպեսզի կանխենք այդ մոլեգնության կրկնությունը, մենք երբեք չենք թույլատրելու նրանց, որոնք ձգտում են թագցնել հայերի ցեղասպանությունը կամ իրականացնել որևէ այլ ցեղասպանություն։ Եվ քանի մենք շարունակենք միատեղ հիշել հայերի ցեղասպանությունը, նրանց երբևէ չի հաջողվելու անելու այդ (Asbarez, April 23, 1994)։

ՄԱՐԻՈ ՔՎՈՄՈ, Նյու Յորքի նահանգի կառավարիչ,- Այսպիսի առիթներով երբ կհամախմբվինք հիշատակելու Մեծ Եղեռնը, մենք պետք է նաև պահ մը կանգ առնենք տոնելու հայկական ոգին վերապրումը։ Այդ ոգին զորավոր է այսօր որպես կենսական մասը ներկա Ամերիկայի և առավել չափով պիտի զորանա առաջիկա տարիներուն։ Նահատակներու և վերապրողներու զավակները, թոռներն ու ծոռները

կենդանի վկաները կհանդիսանան հայ ժողովրդի քաջության և ապրելու անընկճելի կամքին: Նաև անոնք երաշխիքը կներկայացնեն ձեր ապագա կարելիություններուն՝ ոչ միայն այս երկրի մեջ, այլև Մայր Հայրենիքին մեջ (Նոր Օր, մայիս 18, 1994):

ԱՆՆԱ ԻՇՈՒ, ԱՄՆ-ի գոնկրեսի ներկայացուցիչների պալատի անդամ,- 1915 թ. ապրիլի 24-ը այն օրն էր, երբ հարյուրավոր հայ ղեկավարներ ձերբակալվեցին և սպանվեցին Ստամբուլում և այլ վայրերում: Այդ իրադարձության 79-րդ տարելիցին մենք մեր հարգանքի տուրքն ենք մատուցում այդ նահատակների, ինչպես նաև Օսմանյան կայսրության կողմից կոտորածի ենթարկված մեկուկես միլիոն հայերի հիշատակին: Մենք անում ենք այս, որովհետև այդ մեր բարոյական պարտականությունն է աշխարհին հիշեցնելու, որ մի ծանր ողբերգություն տեղի ունեցավ մեր ժողովրդի հանդեպ, որ հայերի կոտորածը մի աղետ էր աշխարհի բոլոր ազգությունների համար, որ նման անակնկալ ագրեսիան ի վերջո հասցնում է դաժանության (Asbarez, April 30, 1994, p. 9):

ՋԻՄ ՔՈՍՏԱ, կալիֆորնիայի նահանգի խորհրդաժողովի և Ծերակույտի անդամ,- Մենք ոչ միայն պետք է ցեղասպանության ճանաչումը կատարենք իբրև ծրագրված եղեռն, այլև նահատակները հիշելով և մեղավորները դատապարտելով պետք է աշխատենք անիրավության դեմ, որոնք կխախտեն մարդկային հիմնական իրավունքները (Ասպարեզ, մայիս 11, 1994):

ՋՈՆ ԿԱՐԱՄԵՆԴԻ, կալիֆորնիայի նահանգի կառավարիչի ընտրության դեմոկրատ թեկնածու,- Ես կընդունիմ հայկական ցեղասպանության ճանաչումը (Ասպարեզ, մայիս 13, 1994):

ԲԱՐԲԱՐԱ ԲՈՔՍԵՐ, ԱՄՆ-ի գոնկրեսի ծերակուտական,- 1915 թ. Օսմանյան կայսրությունը սկսեց ցեղասպանության արշավ ծավալել հայ ժողովրդի նկատմամբ: Հայերը բռնի տեղահանության ենթարկվելով իրենց տներից կոտորվեցին միլիոններով: Հայ ղեկավարները ձերբակալվեցին թուրքերի կողմից և սպանվեցին զանգվածաբար: Այդ սարսափներից վերապրողները՝ կանայք, երեխաները և ծերունիները պարտադրվեցին քայլել դեպի Սիրիայի անապատները: Այդ բռնագաղթի ընթացքում տանջանքից, սովից և հիվանդությունից զոհվեց մոտ մեկուկես միլիոն մարդ (Asbarez, April 30, 1994, p. 9):

ԿԱՏԵՐԻՆ ԿԱՄԵՐՈՆ ՓՈՐԹԵՐ, Մարդկային իրավունքների միության հիմնադիր և նախագահ,- ... Քանի որ հայերի ցեղասպանությունը դեռևս չի ճանաչված, ուստի անարդել շարունակվում է տևական ագրեսիան Հունաստանի դեմ, տևական ագրեսիան Կիպրոսի մեջ և ցեղասպանություն գործադրվել քրդերի դեմ: Ահա թե ինչո՞ւ, ես ակնարկում եմ հայերի ցեղասպանությունը:

Եվ երբ ես տեսնում եմ, թե ի՞նչ է կատարվում քրդերի հետ, ես սկսում եմ հասկանալ, թե որտեղ է դրա ելակետը: Այդ բոլորը սկիզբ են առնում հայերի ցեղասպանությունից: Ես կարծում, որ նրա շարունակելիությանը պետք է վերջ դնել և կանգնեցնել: Այս երկուսը առնչվում են իրար և մեկը մյուսի շարունակությունն է:

Փաստ է, որ այսօր այս վայրկյանիս թուրքական զորքերը այնտեղ են, իսկ կատաղի կռիվները հարավ արևելյան մասում ուղղակի կապված են նախորդ տարիների հայերի սպանությունների հետ (Ասպարեզ, օգոստոս 31, 1996):

ՊԻԹԵՐ ԲԼՅՈՒՏ, գոնկրեսմեն,- Շատ կարևոր է, որ գոնկրեսի երկու թևերով աշխարհին ցույց տանք, թե պիտի չմոռնանք և թույլ պիտի չտանք, որ աղավաղվի ադիկա նենգամիտ պատմաբաններու կողմե, թե պիտի չարտոնենք իրենց ստելու, որովհետև ցեղասպանությունը իսկապես պատահեցավ և պետք է վստահ ըլլանք, որ աշխարհը տեղյակ

ըլլա ադկե (Ասպարեզ, մայիս 11, 1996)։

ՌՈՒՍ ՖԵՅՆԳՈԼԴ, ծերակուտական,- Մենք որպես ամերիկացիներ պետք է աչալուրջ հսկենք մեր աշխարհին, որպեսզի այն սարսափները, որոնք 82 տարի առաջ տեղի ունեցան Հայաստանում, երբեք և երբևէ չկրկնվեն։ Պատմությունը անիմաստ կլինի, եթե դասեր չքաղենք նրանից։ Մենք տևապես պիտի հիշենք, թե ինչո՞ւ համար ենք պաշտպանում և պիտի ձգտենք, որ ԱՄՆ-ը շարունակի լինել ուժի և հույսի խորհրդանշանը այն հերոսների համար, որոնք այդ դաժանությունները կրելով հանդերձ պայքարեցին և գոյատևեցին։ Այդ մահերը չպետք է, որ ապարդյուն անցնեն (Ասպարեզ, մայիս 3, 1997)։

ՋԵԿ ՌԻԴ, ծերակուտական,- Այսօր մեծն ու փոքրը աշխարհում հիշում են հայկական կոտորածները։ Մենք հիշում ենք, որ 1915 թ. Օսմանյան կայսրությունը և նրա ժառանգը հանդիսացող թուրքական ազգայնական վարչակարգը ինչպես գործադրեցին տեղահանության և կոտորածի դաժան քաղաքականությունը։ Այդ և հաջորդ 8 տարիների ընթացքում թուրքերի ձեռքով կոտորվեցին մեկուկես միլիոն հայեր, իսկ մոտ հինգ հարյուր հազարի ունեցվածքն էլ հափշտակվելով բռնի տեղահանվեց իր հայրենիքից։ Աշխարհը ժամանակի հոգսերով տարված, շատ քիչ բան է արել բնակչության, կորստի հանդեպ (Ասպարեզ, մայիս 3, 1997)։

ՆԻՏԱ Մ. ԼՈՎԻ, Ծերակուտի ներկայացուցիչ,- Այսօր մենք վերհիշում ենք հայկական ցեղասպանությունը և սգում նրա զոհերին։ Մենք խոստանում ենք նաև բոլոր հնարավորություններով պաշտպանելու հայ ազգին հետագա ճնշումներից, լինի այն Հայաստանի Հանրապետությունում, Լեռնային Ղարաբաղում կամ այլուր (Ասպարեզ, մայիս 3, 1997)։

ՋՈՆ ԷԴՈՒԱՐԴ ՓՈՐԹԵՐ, գոնկրեսմեն,- Թուրքերու կողմե ցեղասպանություն գործադրվեցավ հայ ժողովրդին դեմ 1915-1923 տարիներուն... Մեկուկես միլիոն հոգի

բնաջնջվեցավ ցեղասպանության հետևանքով և եթե նույնիսկ պահ մը միայն մենք մեզի արտոնենք մոռնալ ադիկա, պիտի շարունակվի կրկնվիլ (Ասպարեզ, մայիս 11, 1996)։

ՖՐԵՆԿ ՊԱԼՈՆ, գոնկրեսմեն,- Գոնկրեսը այնպիսի օրենսդիր մարմին մըն է, որ ոչ միայն կընդունի ցեղասպանության փաստին արձանագրությունը, այլ նաև կանդրադառնա Հայաստանի Հանրապետությանը օժանդակելու և Հայաստան-Ամերիկա կապերու սերտացման անհրաժեշտության (Ասպարեզ, մայիս 11, 1996)։

ՓՈԼ ՍԱՑՄՈՆ, ծերակուտական,- Մարդկության և ոչ միայն հայության համար կարևոր է արձանագրելը, որ երբ ցեղասպանություններ տեղի ունենան, պետք չէ կրկնել այդ սխալները։ Հետևաբար արդեն իսկ շատոնց եկած է ժամանակը գոնկրեսի համար, որպեսզի ճանչնա ցեղասպանությունը (Ասպարեզ, մայիս 11, 1996)։

ԴԵՑԼ ԿԻԼԴԻ, գոնկրեսմեն,- ... Միշտ զորակցած եմ բանաձևին, որովհետև կհավատամ, որ կառավարության մը պարտականությունն է զարկ տալ, պաշտպանել և առաջ մղել մարդկային արժանապատվությունը և հայկական ջարդերը ճակատային հարձակում մըն էին մարդկային արժանապատվության դեմ (Ասպարեզ, մայիս 11, 1996)։

ՋՈՐՋ ՌԱԴԱՆՈՎԻՉ, ԱՄՆ-ի ներկայացուցիչների Տան հանրապետական գոնկրեսմենների խմբավորման նախագահ,- 1915 թվականից Օսմանյան կայսրությունը սկսեց կանխամտածվածորեն իրագործել հայ ժողովրդին բնաջնջելու մի ծրագիր, ոչնչացնելու նաև նրա 3 հազար տարվա մշակույթն ու պատմությունը։ Հետևանքը եղավ այն, որ կոտորվեցին մեկուկես միլիոն հայեր, իսկ բախտի բերմամբ ողջ մնացածները աքսորվեցին իրենց պատմական հայրենիքից։ Վերապրողներից շատերը իրենց նոր տունը չինեցին Ամերիկայի Միացյալ Նահանգներում։ Հակառակ այդ բոլորին, առ այսօր Թուրքիայի կառավարությունը հրաժարվում է ճանաչել

հայերի ցեղասպանությունը և այդ ժամանակվա պատմությունը վերաշարադրելիս փորձում է նենգափոխել ճշմարտությունը (մարտ 7, 1996 թ., իր պաշտոնակիցներին ուղարկած նամակից հատված)։

ԸԿԱՍԹԱ ԲԵՐՆՈ, Նյու Յորքի "Vacuum Oil" ընկերության ներկայացուցիչ. 1915-1916 թթ. Թուրքիայում ականատես է եղել ամբողջ Եփրատ գետի երկայնքով տեղահանված հայերի ողբերգական վիճակին,- կառավարությունը, որը հանձնարարել էր տեղափոխել այս ժողովրդին անապատի միջով, բոլորովին մտադրություն չուներ կերակրելու նրանց։ Նույնիսկ ակնհայտ էր, որ կառավարության ծրագրով նրանք պետք է մահանային սովից...։ ... Այս բոլորը, որ ես տեսա ու լսեցի վեր էր բոլոր երևակայությունից։ Որպես Դանտեյի Դժոխքի դուռ, հետևյալը պետք էր գրվեր այդ նզովյալ ճամբարի մուտքի վրա. «ԴՈՒ, ՈՐ ՄՏԱՐ ԱՑՍՏԵՂ, ՄՈՌԱՑԻ՛Ր ԲՈԼՈՐ ՀՈՒՑՍԵՐԴ»։ Հատվածը բերված է 1916 թ. սեպտեմբեր 21-ին Հալեբում ԱՄՆ-ի հյուպատոս Ջ. Բ. Ջեկսոնին ուղղված զեկուցագրից (Տե՛ս, "Stanley E. Kerr, The Lions of Marash, New York, 1973, p. 273)։

ՀԵՐԲԵՐՏ Ա. ԿԻԲԲՈՆՍ, պատմաբան, հրապարակախոս,- 1915 թ. ապրիլից Օսմանյան կառավարությունը ամբողջ Թուրքիայում սկսեց սիստեմատիկաբար կենսագործել հայ ժողովրդի բնաջնջման նախամտածված ծրագիրը։ Վեց ամսվա ընթացքում ապանվել է մեկ միլիոն հայ։ Ջորքերի քանակը և նրանց ջարդելու միջոցներն անօրինակ են նորագույն պատմության մեջ (Հերբերտ Ադամս Կիբբոնս-Վերջին ջարդերը Հայաստանում, փաստեր և պատասխանատվություններ, թարգմանություն անգլերենից, Պետրոկրատ, 1996, (ռուսերեն)։

ԺՈԶԵՖ ԳՈՒՏՄԱՆ, պատմաբան,- Ես նկատի ունեմ 30 տարի առաջ հայերի հանդեպ կատարված թուրքական կոտորածները։ Սակայն ոմանք պետք է ընդունեն, որ այդ մասին չեն մտահոգվում։ Ահա այդ է մեր ժամանակների ողբերգությունը։ Մենք շատ արագ ենք մոռանում։ Երեկ զոհ գնացին «միայն» հայերը, այսօր՝ «միայն» հրեաները, ինչպես նաև լեհերը և այլ եվրոպական ժողովուրդներ, իսկ վաղը՞ (The Beginnings of Genocide, an Account of the Armenian Massacres in World War 1, by Joseph Guttman, AHRA, 1965)։

ՖՐԱՆԿ ՎԵԲԵՐ, պատմաբան,- Այնքան էլ հավանական չէ Անտանտի (համաձայնականների) պրոպագանդիստների հաճախակի այն մեղադրանքները, որ գերմանացիներն են տուրք տվել և գործնականապես կատարել պատերազմի ընթացքում տեղի ունեցած հայկական կոտորածները։ Գերմանիայի մեղավորությունը, որը բավականին ծանր է, կայանում է նրանում, որ նա վճռականապես և խստագույնս չզսպեց իր դաշնակցին (Frank G. Weber. Eagles on the Crescent. New York- london, 1970, p. 145)։

ՌԻՉԱՐԴ Ֆ. ՆԱՅՐՈՊ, պատմաբան,- 19-րդ դարի վերջերին հայերը ենթարկվեցին Օսմանյան իշխանությունների գործադրած պարբերական կոտորածների։ 1890 թվականների ահաբեկչական գործողությունների հետևանքով մոտ 100.000 հայեր արտագաղթեցին երկրից։ Հայ ժողովրդի պատմության մեջ ծանրագույն ողբերգությունը տեղի ունեցավ 1915-1916 թթ., երբ Օսմանյան կառավարությունը, Ռուսաստանի հետ համագործակցելու մտավախությունից, նախաձեռնեց ոչնչացնել և բռնի ուժով տեղահանել ամբողջ հայ բնակչությունը։ Տեղահանվեցին մոտ 600.000 հայեր, որոնցից մեծ մասը հարկադրաբար քշվեցին դեպի Սիրիա, նույնքան և նույնիսկ ավելի թվով հայեր կոտորվեցին (Turkey. a country study "Area handbook series". Edited by Richard F. Nyrop. Washington, 1980, p. 88)։ Ռիչարդ Նայրոպը նշում է նաև, որ 1894-1895 թթ. կոտորածներին զոհ գնացին 300.000 հայեր (էջ 39). Իսկ իր գրքի 42-րդ էջում, խոսելով 1915 թ.հայկական կոտորածների մասին, մատնանշում է, որ

կոտորվել են մեկ միլիոն հայեր։

ՋՈՆ ԴՈՒԳԼԱՍ, պատմաբան, հասարակական գործիչ,- Ցեղասպանության առաջին ամիսներին Թուրքիայի հայ բնակչության համարյա կեսը ոչնչացվեց։ Իսկ Հոկտեմբերի վերջերին Անատոլիան և Կիլիկիան կատարելապես մաքրազրկվեց հայերից։ Վերապրողները քշվեցին Սիրիայի անապատները։ Այս յուրորինակ անապատը ընտրված էր որպես առավել տրամաբանական վայր, որտեղ վերջակետ էր դրվելու նրանց գոյությանը։ Երբ Փետրվարին ծրագրվում էր ցեղասպանության հարցը, կանխատեսված էր նաև այն, որ վերապրողները, իհարկե եթե նրանց հաջողվեր վերապրելու երջանկությունը, մահանալու էին սովից, ուժասպառությունից և հիվանդություններից անապատ հասնելուց հետո։ Թուրքերի կանխատեսումը ճիշտ դուրս եկավ (Jhon M. Douglas, The Armenians, New York, 1992, p. 336)։

ԴԵԲՈՐԱՀ Ի. ԼԻՊՍՏԱԴ, ՌՈԲԵՐՏ ՋԵՑ ԼԻՖՏՈՆ, պատմաբաններ,- Հայկական ցեղասպանությունը հիմնավորված է աշխարհի տարածքին պաշտոնական արխիվներու հազարավոր փաստաթղթերով, Օսմանյան Ռազմական Դատարանի արձանագրություններով, ութ տասնամյակ տևած գիտական աշխատասիրություններով և այդ տարիներու իրադարձությունների մասին «Նյու Յորք Թայմս»-ի մանրազնին տեղեկագիրներով (New York Times, June 2, 1996)։

ՌՈՋԵՐ ՍՄԻԹ, «ՎԻԼՅԱՄ ԷՆԴ ՄԵՑՐԻ», Կոլեջի պրոֆեսոր,- ... Ոչ ոք կրնա բառերով, օրենսդրությամբ, ուսումնասիրությամբ կամ այլապես փոխել այն կեցվածքները, որոնք այս ահավոր ուրացումին պատճառ դարձած են... Այս ուրացումը թույնի ներգործություն կունենա հայության վրա... Աշխարհի վրա յուրաքանչյուր հայ դեռ կտառապի այս վերքերեն, որոնք ուրացումե առաջ կուգան (Ասպարեզ, Մայիս 11,1996)։

ՋԵՑՄՍ ՍԻՄԵՆՏ, պատմաբան,- Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում թուրքական և քրտական ուժերը կոտորածի ենթարկեցին մոտավորապես 1,5 միլիոն հայերի։ 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն էր։ Մյուսները փախուստի դիմեցին ռուսական սահմաններում գտնվող Հայաստանի տարածքը (հետագայում Հայաստանի Խորհրդային-սոցիալիստական հանրապետություն, իսկ այժմ Հայաստանի անկախ հանրապետություն) (The Kurds. State and Minority in Turkey, Iraq and Iran, New York, 1996, p. 84)։

ՍԱՄՎԵԼ Թ. ԴԱՏՈՆ, «Հայերի և Սիրիացիների Ամերիկյան Օգնության Կոմիտե»ի քարտուղար (1915), «Ամերիկյան Կոմիտե»-ի ամենահավաստի վկայություններով ստացած տեղեկությունները, որոնք լիովին համապատասխանում են իրականության, մեկ տարի առաջ Թուրքիայում բնակվող 2.000.000 հայերից 1.000.000-ը սպանվել է կամ բռնի ենթարկվել մահմեդական կրոնափոխության, կամ պարտադրված փախուստ է տվել երկրից, կամ մահացել է աքսորի ճանապարհին, կամ հյուսիսային Արաբիայի անապատներում աքսորի ճանապարհին, կամ արդեն այնտեղ է։ Զոհերի թիվը տևապես աճում է (The New York Times, December 15, 1915)։

ՕՍԿԱՐ Ս. ՀԵՑՋԵՐ, Տրաբիզոնում ԱՄՆ-ի հյուպատոս,- Պատիվ ունեմ որպես հաղորդագրություն ներփակ դեսպանատուն ուղարկելու Տրաբիզոնի հասարակական վայրում տեղական իշխանությունների կողմից փակցված հայտարարություններից մի օրինակ, որտեղ հայտնվում է, որ Տրաբիզոնի և շրջակայքի բոլոր հայերը՝ տղամարդիկ, կանայք և երեխաները նշված տարեթվից 5 օրերի ընթացքում պարտավոր են կառավարությանը հանձնելու այն բոլոր իրերը, որոնք չեն կարող իրենց հետ վերցնել, քանի որ հինգշաբթի հուլիս 1-ին տեղափոխվելու են երկրի խորքերը, հավանաբար Էրզրումեզիրե կամ Մուսուլ, որտեղ նրանք մնալու են մինչև պատերազմի ավարտը։ Պատերազմից հետո իբր տվյալ իրերը վերադարձվելու են իրենց տերերին(°)։ Դժվար է հաղորդել,

թե ինչպիսի հուսահատության և ահ ու սարսափի մատնեց հայերին այդ հայտարարության բովանդակությունը... (Հատվածը քաղված է 1915 թ. հունիս 28-ին Կ. Պոլսի դեսպան Հենրի Մորգենթաուին ուղղված զեկուցագրից։ Տե՛ս, The Armenian Genocide, compiled and edited by Libarid Azadian, Armen Donoian, Los Angeles, 1987, p. 25)։

ՀԵՆՐԻ ՀԱՐՐԻՍՈՆ ՌԻԳՍ, ականատես, Խարբերդի ամերիկյան «Եփրատ» կոլեջի նախագահ,- Տարբեր աղբյուրներից մենք տեղեկացանք, որ աքսորականները կոտորածի են ենթարկվում Խարբերդի հարավ-արևելյան ճանապարհի ամբողջ երկայնքով։ Եվ այս հաղորդման ճշմարտությունը ստուգելու և իրենց աչքերով տեսնելու համար նշանակվեցին երկու ամերիկացիներ՝ հետևելու աքսորականների թափորին...

Այս երկու ամերիկացիները, որոնք ձիերով հետևել էին թափորին ասացին ինձ, որ մի օր նրանք տեսել էին ոչ պակաս քան 10.000 (տասը հազար) մարդկային անթաղ դիակներ։ Նրանք նկատել էին նաև, որ մեկ կամ երկու վայրերում փորձեր են եղել դիակների կույտերը վառելու, որպեսզի վերացվի տվյալ չրջանի մթնոլորտի անտանելի ապականումը... (Հատված «Ողբերգական օրեր Հայաստանում» գրքից։ Days Of Tragedy In Armenia. Տե՛ս, Ասպարեզ, ապրիլ 24, 1996, էջ 20-21)։

ԱԴԱ ՋԵՄԲԵՐՍ, Պարտիզակի ամերիկյան դպրոցի ուսուցչուհի, ականատես,- Թուրքիայի գոյությունը ապահովելու պատրվակով կառավարող խմբակը ձեռնամուխ եղավ հայերի ազգային անարգմանն ու հալածանքներին։ Պատերազմը դրա համար միայն հնարավորություն էր և ոչ թե պատճառ։ Նա մերկացրեց թուրքական կառավարության խորագույն գաղտնիքները (Ada Piers Chambers. In an Anatolian valley. New York, 1955, p. 221)։

ԷԴՈՒԱՐԴ Ս. ԼԻԴԵԼ, քաղաքական և զինվորական

գործիչ ԱՄՆ-ի Կանզաս նահանգից,- 1915 թ. հազար հազարավոր մարդիկ մորթվեցին, հազար հազարավոր կանայք անապատվեցին։ Կոտորածն ու ջարդը հաճախ սկսվում էին չեփորների ազդանշանով։ Հարյուր հազարավոր հայ տղամարդկանց, կանանց ու երեխաների, բոլորն էլ բարի ու ազնիվ ընտանիքներից, դուրս քաշեցին և ստիպեցին ոտքով քայլել առանց սննդամթերքի կամ ուտելիքի անհայտ ուղղություններով դեպի բնաջնջում, դեպի ոչնչացում։ Բազմաթիվ կանայք իրենք իրենց նետեցին Եփրատ գետը՝ անպատվությունից փրկվելու համար։ Մի քանի տարի առաջ Ուրֆա քաղաքում երեք հազար հայերի հավաքեցին, լցրին եկեղեցի ու կրակ տվին։ Վերջին մի քանի տարիներին դրությունը այնպիսին էր, որ դժոխքն ավելի լավ ապրելավայր էր, քան Հայաստանը. դժոխքում չեն պատվազրկում կանանց։ Ես չեմ կարծում, որ հայերի ոչնչացումը օգուտ կբերի քաղաքականության (Տե՛ս հայության առնչվող զեկուցումը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների ներկայացուցիչների պալատում 1918 թ. փետրվար 7-ին։ Թարգմանությունը Գուրգեն Սարգսյանի։ Նոր Օր, ապրիլ 23, 30, մայիս 3, 7, 1997)։

ՆՈՐԱ ՎԱԼՆ, «Հոշոտված Հայաստան» գրքի առաջաբանի հեղինակ,- 1917 թ. հոկտեմբերին, երբ Հայ-սիրիական նպաստամատույցի ամերիկյան գործադիր կոմիտեն ինձ նախաճաշի հրավիրեց, այնտեղ ներկա էին նաև ամերիկյան 17 հյուպատոսներ և միսիոներներ։ Նրանք նորերս էին վերադարձել Թուրքիայից, ականատես լինելով երկու տարվա ջարդերին ու տեղահանություններին։ Ես այնպիսի մարդկանց էի լսում, որոնց հայտարարությունների ճշմարտացիությունը չէի կարող կասկածի տակ առնել։ Նրանք պատմում էին, թե ինչպես հայ քրիստոնյա կանանց և երեխաների զգեստները նավթով թրջելուց հետո, նրանց լցրել են մի եկեղեցի, դուռը փակել և կրակ տվել։ Հիանալի ընտանիքների, ինչպես իմը կամ ձերը, նրբագեղ, կրթված աղջիկները վաճառվում էին

Արևելքի շուկաներում («Հոշոտված Հայաստան», անգլերեն բնագրից թարգմանությունը՝ Գուրգեն Պ. Սարգսյանի, Լոս Անջելոս, 1995 թ., էջ 2)։

ՌԻՉԱՐԴ ՔՈՒՇԻՆԿ, կարտինալ, Բոստոնի Արքեպիսկոպոս,- Հայերու դեմ շղթայազերծված թրքական վայրագությունները տևեցին 1915-են մինչև 1918։ Թուրքերու կողմե սպանվեցավ կամ տարագրվեցավ 2.000.000 միլիոն հաշվվող ժողովուրդ մը։

Հայկական կոտորածները իրապես ցեղասպանություն են։ Կատարվեցավ ազգ մը ամբողջ բնաջնջելու փորձը։ Իսկ այս նահատակ ազգին միակ հանցանքը ա՛յն էր, որ անոր զավակները հայեր են (Բոստոն, 24 ապրիլ, 1965)։

ՄԵՐԻ ՔԵՑ ԼՈՆԴՈՆ, լրագրող,- Թուրքերի կողմից 1915-ին իրագործված հայ ժողովրդի ցեղասպանությունը, որի հետևանքով զոհվեց ավելի քան 1,5 միլիոն մարդ, մինչև հիմա պաշտոնապես չի ճանաչված որոշ կառավարությունների կողմից, այդ թվում և մեր կառավարության (ԱՄՆ-ի) կողմից։ Բայց փաստը մնում է փաստ. Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Թուրքիայի արևելյան շրջաններում և Արարատ լեռան մերձակայքում բնակվող հայերի թիվը երկու միլիոնից ավելի էր։ Այժմ այնտեղ իրականում հայեր չկան։ Ո՞ւր են նրանք անհետացել (City. April, 1980, San Francisco)։

ՌՈԲԵՐՏ ՋՈՐԴԱՆ, լրագրող,- Ամեն անգամ, երբ վերհիշում եմ իմ ճանապարհորդությունս դեպի Հայաստան, ես ինձ հարց եմ տալիս, թե դարերի ընթացքում արդյո՞ք սրանից ավելի ծանր ողբերգություն ապրած ուրիշ որևէ ժողովուրդ եղել և հարատևել է։ Հայերը ցրվեցին աշխարհով մեկ և գոյատևեցին (Robert Paul Jordan. The Proud Armenians, "National Geographic" June, 1978)։

ԹԱՄՍ ԴԱՑՆ, ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության պաշտոնյա,- Անցյալը ոգեկոչելը և հայությունը

բնաջնջելու փորձերը խոր թաղված են ներաշխարհիս մեջ։ Եվ իբրև հրեա կատեմ այն փաստը, որ 20-րդ դարու առաջին ցեղասպանությունը սկսավ հայերով, անոնցմե անցնելով ու հասնելով նացիներուն կողմե մեր ժողովրդի դեմ կատարված արարքներուն (Ասպարեզ, մայիս 11, 1996)։

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ
ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ռուսաստանի դաշնության Պետական Դուման դատապարտում է 1915-1922 թթ. հայերի բնաջնջման կազմակերպիչներին: Արտահայտում է իր խոր կարեկցանքը հայ ժողովրդին և ապրիլ 24-ը դիտում է որպես ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

Ռուսաստանի Դումայի բանաձևից: ապրիլ 14, 1995 թ.

***Ա. ՄԱՆՏԵԼՇԴԱՄ**, դիվանագետ, իրավաբան, պատմաբան,- Այո, Էնվերը և Թալեաթը կայսրության երկու դիկտատորները համարվում են հայկական կոտորածների գլխավոր մեղավորները: Շատ հավանական է նաև, որ նրանք դրդված լինեն հանցագործության չարանենք դոկտորներ Բեհաեդդին Շաքիրի և Նազիմ բեյի կողմից: Բոլոր դեպքերում վերջին երկու հրեշների համագործակցությունը չի վերացնում Թուրքիայի երկու տիրակալների վրա ծանրացած մեղադրանքը* (A. Mandelstam. Le sort de l'Empire Ottoman. Lausanne-Paris. 1917, p. 278):

***Ս. Մ. ԿԻՐՈՎ**, քաղաքական գործիչ,- Աներևակայելի սարսափներ և տառապանքներ ապրած հայ բնակչության բարբարոսաբար թափված արյունը որոշ հեռավոր պատկերացում է տալիս հայ ժողովրդի Գողգոթայի մասին (Ս. Մ. Կիրով, Թերեք, 14 փետրվար, 1916, ռուսերեն):*

***Վ. ՍՈՖԻՆՍԿԻ**, դիվանագետ,- Թուրքիայի այն ժամանակվա կառավարողների կողմից հայերի դեմ կատարված հրեշային ցեղասպանությունը ոչնչով չի կարող արդարացվել:* (Իզվեստիա, նոյեմբեր 18, 1985, ռուսերեն):

***Ա. Ա. ՆՈՒԿԻՆ**, «Վիբոր Ռոսիի» (Ռուսաստանի ընտրություն) ընտրական միավորման պատգամավոր,- Ավարտվող 20-րդ դարը կարող է մարդկության պատմության մեջ մնալ որպես արյունալի հարյուրամյակ, բնաջնջումներով: Այդ կարգի առաջին գործողությունը 1915 թվականի հայերի ցեղասպանությունն է: Օսմանյան կայսրության պանթուրքական կառավարությունը լիովին ոչնչացրեց Արևմտյան Հայաստանի բնիկ ազգաբնակչությանը* (Ասպարեզ, ապրիլ 26, մայիս 4, 1994):

***ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌՈՒՅԿՈ**, քաղաքական գործիչ,- Հայ ժողովրդի հետ միասին սգում եմ 1915 թվականի հրեշավոր ցեղասպանության զոհերի համար: Այդ ահավոր չարագործությունը, որը դատապարտվել է բոլոր նրանց կողմից, որոնց համար թանկ են մարդասիրության և մարդու հանդեպ հարգանքի սկզբունքները, այսօր կրկին ստիպում է խորհել և ամեն ինչ անել, որպեսզի նման բան այլևս չկրկնվի* (1994 թ. ապրիլի 20-ի Ռուսաստանի Պետական Դումայի նստաշրջանի սղագրական արձանագրությունից):

***Ա. Մ. ԴՈՐՈՎՍԿԻԽ**, Լիբերալ- Ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ,- 1915 թվականն է. Առաջին համաշխարհային պատերազմ: Ռուսաստանը Անդրկովկասում պատերազմում է Թուրքիայի հետ, քանզի վերջինս հանդես է գալիս Գերմանիայի կողմից:*

Եվ ահավասիկ, ռուսասիրական կողմնորոշումների համար, կարճ ժամանակաընթացքում ոչնչացվում է մեկուկես միլիոն հայ: Հայերը վաղուց ի վեր ապրում էին ռուսական կայսրության կազմում, սակայն նրանց մյուս մասը գտնվում էր Թուրքիայի հպատակության տակ: Հայերը մշտապես ձգտել են ուղղափառ Ռուսաստանին, ցանկացել են ապրել մեր ժողովրդի հետ միասին: Վերոնշյալ պատճառներով թուրքական իշխանությունները իրագործեցին բարբարոսության այդ ակտը (1994 թ. ապրիլի 22-ի Ռուսաստանի Պետական Դումայի նստաշրջանի արձանագրությունից):

***Ս. ՄԻՆՑ**, պատմաբան,- Արևմտյան Հայաստանի բնակչությունը զոհ գնաց աշխարհի նոր շրջանի առաջին*

ցեղասպանության, որը կատարվեց երիտթուրքերի կառավարության կողմից, կայսերական Գերմանիայի բացահայտ թույլտվությամբ (Ս. Ստեփանյան. Հայաստանը գերմանական իմպերիալիզմի քաղաքականության մեջ, Երևան, 1975, էջ 3, ռուսերեն)։

Մ. ԿՈՎԱԼԵՎՍԿԻ, պատմաբան, իրավաբան,- Ինչպես մատնանշեցինք 1894 և 1896 թվականների ջարդերը զանգվածային բնույթ ընդունեցին և գործադրվեցին համարյա թե ամբողջ կայսրության մեջ։ 1909 թ. այդ կոտորածները ավելի նվազ ահավոր չէին, այլ քիչ թե շատ տեղայնացված բնույթ էին կրում։ Ավելի ակնառու է Ադանայի կոտորածը, որին զոհ գնացին ավելի քան 20 հազար (ճշգրտված թիվը 30 հազար) հայեր (Եվրոպայի լրաբեր, 1915 հունիս, էջ 258, ռուսերեն)։

Վ. Ա. ԳՈՐԴԼԵՎՍԿԻ, արևելագետ, թուրքագետ,- Ես տեսա թե ինչպես 1916 թ. ամառը թուրքերը հայերի ամբոխին քշեցին Բիթլիս... Սարսափելի ողորմելի վիճակում էին հայերը՝ պատառոտված, հյուծված։ Նրանց դեմքերին արտահայտվում էին սարսափները, որ հենց նոր ապրել էին նրանք... Հարյուր հազարավոր անմեղ հայեր Թուրքիայում դարձան գազանությունների զոհ (Վ. Ա. Գորդլևսկի, ընտիր երկեր, Մոսկվա, 1962, հատոր 3, էջ 130, ռուսերեն)։

Ե. Վ. ՏԱՐԼԵ, պատմաբան, հրապարակախոս,- Թուրքիայում տեղի ունեցած հայկական կոտորածները հանդիսացան մի չտեսնված և միանգամայն բացառիկ երևույթ համաշխարհային պատմության մեջ, սկսած Ջինգիզ Խանի ժամանակներից (Ե. Վ. Տարլե, Եվրոպան իմպերիալիզմի ժամանակաշրջանում, 1871-1919 թթ., Մոսկվա, Լենինկրադ, 1928, էջ 387, ռուսերեն)։

Ա. Ս. ՍԻԼԻՆ, պատմաբան,- Արևմտյան Հայաստանի բնակիչներ՝ հայերը ենթարկվեցին անողոք կեղեքման և դաժան հետապնդումների ոչ միայն տեղի թրքական իշխանությունների և ավատատերերի, այլև մահմեդական տարագիրների կողմից, որոնք այստեղ էին վերաբնակվել Եվրոպական Թուրքիայի 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո (Ա. Ս. Սիլին, Գերմանիայի ծավալապաշտությունը Մերձավոր Արևելքում 19-րդ դարի վերջին, Մոսկվա, 1971, էջ 206, ռուսերեն)։

Ա. Ֆ. ՄԻԼԼԵՐ, պատմաբան,- Այդ տարիներին հայ ժողովուրդը ողբերգական իրադարձություններ ապրեց Թուրքիայում։ Սուլթանական-երիտթուրքական իշխանությունները օգտվելով պատերազմից, որոշեցին ամբողջացնել արյունոտ սուլթան Աբդուլ Համիդի սկսած չարագործությունը։ 1915 թ. մայիսին ռուսական զորքերի կողմից Վանի գրավումից անմիջապես հետո Օսմանյան կառավարությունը օրենք հրապարակեց, այսպես կոչված, տեղահանության մասին։ Իրականում տեղահանությունը փոխարինվեց անմարդկային կոտորածներով։ Մեկուկես միլիոնից ավելի հայեր վտարվեցին իրենց գյուղերից և քաղաքներից, և պարբերաբար քշվեցին Սիրիայի և Միջագետքի համակենտրոնացման ճամբարները (Ա. Ֆ. Միլլեր. Թուրքիայի նորագույն պատմության ուրվագծեր, Մոսկվա-Լենինգրադ, 1948, էջ 63, ռուսերեն)։

Ա. Դ. ՆՈՎԻՉԵՎ, պատմաբան,- Հայերի հետապնդման քաղաքականությունը մեծ վնաս հասցրեց երկրին։ Կոտորածին զոհ գնացին մոտ մեկուկես միլիոն հայեր։ Մեկ միլիոն 200 հազար տարագրվեցին Սիրիա և Իրաք։ Մեծ թվով հայեր փախան Ռուսաստան, Իրան և այլ երկրներ։ Հայերի հետապընդման քաղաքականությունը հասցրեց այն բանին, որ ամբողջ Արևելյան Անատոլիան և այլ շրջաններ ավերվեցին և անմարդաբնակ դարձան (Ա. Դ. Նովիչև. Թուրքիա, համառոտ պատմություն, Մոսկվա, 1965, էջ 131, ռուսերեն)։

Ե. ԳՐԱՆԴ, պատմաբան, լրագրող,- Ձախողում կրելով հայկական ցեղասպանության հարցում համաշխարհային հանրության խաբելու գործում, Անկարան և նրա քարոզչա-

կան շրջանակները վերջերս փորձում են աշխարհը ցնցել գգայացունց «մերկացումներով», իբր այդ նույն տարիներին հայերն են իրականացրել խաղաղ թուրք բնակչության զանգվածային սպանությունները (Խորհրդային Ռուսաստան, փետրվար 18, 1987, ռուսերեն)։

Օ. ԿԱՑԴԱՆՈՎԱ, ականատեսի նամակից,- 1896 թ. Օգոստոս 14 և 15-ին մենք կանգնած էինք Կ. Պոլսի նավահանգստում։ Մենք ականատես եղանք թուրքերի կողմից կատարվող հայկական կոտորածներին։ Այդ ահավոր տեսարանները այսօր էլ աչքիս առաջ են։ Հազիվ թե հավատաս այն բանի, որ դա իսկապես տեղի է ունեցել իրականում և ոչ թե մենք այդ սարսափները տեսել ենք երազում (Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին, Մոսկվա, 1897, էջ 75, ռուսերեն)։

ՑՈՒՐԻ ՎԵՍԵԼՈՎՍԿԻ, գրականագետ, բանաստեղծ,- 1890 թվականին Էրզրումում տեղի ունեցավ հայերի կոտորած, ըստ որում հայ բնակչության դիմադրության փոքր փորձերը թրքական զինվորներն ու չինովնիկները խեղդեցին արյան մեջ (Ցուրի Վեսելովսկի. Թրքահայաստանի ողբերգությունը, 1915, էջ 18-19, ռուսերեն)։

ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎ, գրականագետ,- Ընդհանրապես ֆանտաստիկ չեն այն հաշվումները, որ ցույց են տալիս թե սույն պատերազմի սկզբներում Թուրքիայի տիրապետությունում կախաղանի միջոցով, սպանություններով, սովամահությունից, հյուծվածությունից, հրկիզումներից, դեպի անապատներն աքսորի ճանապարհներին և այլն ոչնչացվել է մեկ միլիոնից ավելի հայ ժողովուրդ։ Այլ աղբյուրներ ցույց են տալիս մինչև երկու միլիոն մարդ (Հայ ժողովրդի պատմության ճակատագրի տարեգրություն, 1940, էջ 115, ռուսերեն)։

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ, գրող,- Հիշողությունը հարություն է տալիս 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբի ողբերգական պատմության, Կոնստանտնուպոլսի, Սասունի կոտորածներին, «մեծ մարդասպանին», «Կուլտուրական Եվրոպայի» զզվելի անտարբերության, որով նա վերաբերվեց իր «քրիստոնյա եղբայրների» կոտորածին, միապետական կառավարության կողմից Հայաստանի եկեղեցական գույքերի թալանի ամոթալի գործին, վերջին տարիների (1918-1920 թթ.) թուրքական արշավանքների սարսափներին, դժվար է հիշել ողբերգությունները, որ ապրել է այդ եռանդուն ժողովուրդը (Ռուս գրողները Հայաստանի մասին, 1946, էջ 115-116, ռուսերեն)։

ՖՐԱՆՍԻԱՑԻՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

> Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է 1915 թ. հայերի ցեղասպանությունը։
> Ֆրանսիայի Ազգային ժողով, մայիս 29, 1998 թ.

ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈ, գրող,- Բնաջնջվում է մի ամբողջ ժողովուրդ, այս փաստն ունի՞ վկաներ. ամբողջ աշխարհը։

ՖԵԼԻՔՍ ՇԱՌՄԱՆ,հրապարակախոս,- Մենք չենք կարծում, որ ազգերի պատմության նույնիսկ ամենամռայլ էջերում կարելի է գտնել ավելի սահմռկեցուցիչ փաստեր, քան այն, ինչ երկու տարիե ի վեր տեղի է ունենում մեր աչքի առաջ (F. Charmetant, Tableau officiel des massacres d'Armenie. Տե՛ս Սովետական Հայաստան, 1987, Նոյեմբեր 9, էջ 32)։

ԺԱՆ ԺՈՐԵՍ, ֆրանսիական և միջազգային սոցիալիստական շարժման գործիչ,- Ես ուզում եմ միանալ քաղաքակիրթ աշխարհի մարդկանց զգացումներին և բողոքարկել այն նողկալի վարչակարգի դեմ, որի իշխանության տակ գտնվում են հայերը, և նրանց տևապես անպատիժ մնալու դեմ, որոնք պատասխանատու են այն մեծ հանցագործության համար (Report of the International Conference on the situation in the Near East held in London on 29-th June, 1904, p. 23)։

ԷՄԻԼ ԴՈՒՄԵՐԳ, աստվածաբան, փիլիսոփա,- Իսկ մենք, ի՞նչ արեցինք մենք, երբ Աբդուլ Համիդի արյունոտ ճանապարհով գնացին նաև երիտթուրքերը։ Անցյալի դաժան ջարդերի, ինչպես նաև այսօրվա սահմռկեցուցիչ կոտորածների համար առանց բացառության պատասխանատու են նաև Եվրոպայի բոլոր ժողովուրդները։ Իհարկե նրանցից յուրաքանչյուրը պատասխանատու է ոչ հավասարաչափ, սակայն աննշան պատասխանատվությունն էլ անգամ շատ մեծ է դառնում... (Emile Doumergue, l'Armenie, les massacres et la question d'Orient, Conferences, Etude, Documents, Paris, 1917, p. 34)։

ԺԱԳ ԴԸ ՄՈՐԿԱՆ, հնաբան, պատմաբան,- Երբ ուշադիր կարդում ես հայերի կոտորածին վերաբերյալ փաստաթղթերը, շշմում ես երիտթուրքերի կառավարության կազմակերպած չարագործության հմտության և հեռատեսության վրա։ Կանխատեսվել էր ամեն ինչ. զոհերի զինաթափումը, դիմադրության կարող երիտասարդության մեկուսացումը, զանգվածային տեղահանումն ու տանջանքները ուղևորության ընթացքում, տղամարդկանց ոչնչացումը ճանապարհին, կանանց և աղջիկների ընտրությունը մահմեդական դարձնելու համար... (J. de Morgan, Contre le barbares de l'Orient, Etudes sur la Turquie, Paris, 1918, p. 182)։

ԱՆԹՈՒԱՆ ՄԵՅԵ, լեզվաբան, հասարակական գործիչ,- Անցած ամառվա և աշնան 1915 թ. զանգվածային ջարդը, որն իր ծանրությամբ և ահավորությամբ գերազանցում է համիդյան վարչաձևի վայրագությունների, կատարվել է տեղում գտնվող գերմանացի պաշտոնյաների աչքի առաջ և նրանց թույլտվությամբ և որոշ դեպքերում՝ փութկոտ օժանդակությամբ (Անթուան Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1979, էջ 513)։

ՀԱՆՐԻ ԲԱՐԲԻ, լրագրող, ականատես,- Նրանք թալանում ու հրդեհում են հայերի տները, սպանում տղամարդկանց, դիակները թողնում փողոցներում ընկած, իրենց հետ տանում գեղեցիկ աղջիկներին և բախտի քմահաճույքին են թողնում հացից ու բնակարանից զուրկ կանանց ու երեխաներին (Հանրի Բարբի, Սարսափի երկրում, Տառապյալ Հայաստան, Թիֆլիս, 1919, էջ 131, ռուսերեն թարգմանություն)։

ՌԵՆԵ ՊԻՆՈՆ, պատմաբան, հրապարակախոս,- Հայերի տեղահանումը, կանանց, երեխաներին և ծերերին՝ միայն նենգորեն քողարկված մահվան դատապարտում էր։ Տեղվույն վրա կատարված կոտորածը ավելի մարդկային կլիներ։ Այն

կազատեր մարդկանց դաժան տանջանքներից (Rene Pinon, La Suppression des Armeniens, Methode Allemand, travail turc, Paris, 1916, p. 27)։

ԱՆԱՏՈԼ ՖՐԱՆՍ, գրող, հրապարակախոս,- Մենք Հայաստանին պատիվ ենք տալիս ոչ թե նրա մշտական տառապանքների համար, այլև դրանք կրելու տոկունության համար...։ Հայաստանը մեռնում է, բայց նա կվերածնվի։ Նրան մնացել է շատ քիչ արյուն, որից կծնվի մի հերոսական սերունդ։ Այն ժողովուրդը, որ չի ուզում մեռնել, երբեք չի մահանա (La Revue des "Amities franco-etrangeres", No. 4, 1916, Mai-Juin, p. 33-35)։

ԼՈՒԻ ԱՐԱԳՈՆ, գրող, քաղաքական գործիչ,- Ցեղասպանության առաջին ոճիրն իր սեփական երկրում ապրող մի ժողովուրդի դեմ գործադրվեց 20-րդ դարի սկզբին, 1914-1918 թթ. պատերազմի ընթացքում։ Եվ այդ ոճիրը բոլորովին չդատապարտվեց (L'Humanite, 23 Avril, 1965)։

ԵԼԵՆԱ ԴԸ ԼԱ ՍՈՒՇԵՐ, պատմաբան,- 20-րդ դարի արշալույսին հայերի ջարդը գլխավոր մի փորձ էր զանգվածային այն սպանությունների, որոնք շուտով այդ բոլորը բարձրացուցին կառավարման արվեստի աստիճանին (Elena de la Soucher, le Racisme en emille images, Paris, 1967, p. 217)։

ԺՈԶԵՖ ՖՐԱՆՉԵՍԿԻ, Փարիզի Ալֆորվիլի շրջանի քաղաքագլուխ,- Թուրքական կառավարությունը մերժելով ընդունել 1915 թ. ցեղասպանությունը, ջնջում է Հայաստանի պատմական իրականությունը... լրության դավադրությունը չի կարող արդարացվել։ Բոլոր նրանց, որոնք համառում են լռությամբ քողարկել 1915 թ. ջարդերը, մենք ասում ենք համոզումով. «Զսպե՞լ եք արդյոք ձեր սխալի ծանրությունը, ձեր բռնած դիրքը ոչ միայն չի խաղաղեցնում կրքերը, այլև ընդհակառակը, բորբոքում է դրանք» (Էջմիածին հանդես, 1984, թիվ 7-9, էջ 11-12)։

ԺՈՐԺ ՄԱՐՇԵ, Համայնավար կուսակցության Գլխավոր քարտուղար,- Սկսած 1920 թվականից, Ֆրանսիայի համայնավար կուսակցությունը պարզ ու հստակ դիրք է ընդունել՝ արտահայտելով ի նպաստ հայ ժողովրդի դատի արդարացի լուծման, հայտարարելով, որ մոռացությունը դառնում է հանցագործություն այն պահից, երբ հարցը վերաբերում է 1915-ի ջարդերի քողարկման, ամբողջ մի ժողովրդի ոչնչացմանը՝ իր սեփական տարածքում... (Armenia, 1977, Num. 6-7, Marseille)։

ԺԵՍՔԱՐ Տ'ԵՍԴԵՆ, Ֆրանսիայի նախագահ,- Հայկական հարցը պատմականորեն անհերքելի ճշմարտության մի օրինակ է, իսկ 1915 թ. հայ ազգի դեմ գործադրված դեպքերը անկասկած ցեղասպանության արարք է (The Armenian Genocide, Compiled and edited by Libarid Azadian and Armen Donoyan, Los Angeles, 1987, p. 94)։

ՖՐԱՆՍՈՒԱ ՄԻՏԵՐԱՆ, Ֆրանսիայի նախագահ,- Անհնար է ցեղասպանության հետքը ջնջել։ Այն պետք է արձանագրվի մարդկության հիշողության մեջ (The Armenian Genocide, Compiled and edited by Libarid Azadian and Armen Donoyan, Los Angeles, 1987, p. 94)։

ԺԱԿ ՇԻՐԱԿ, Ֆրանսիայի նախագահ,- Ֆրանսիայի խորհրդարանի որոշումը պատմական իրողության ու արդարության վրա հիմնված վճիռ է՝ հեռու ամեն տեսակի քաղաքական նկատառումներից ու զգացական արտահայտություններից։ 1915-ին ավելի քան մեկ միլիոն հայեր են կոտորվել Թուրքիայում։ Ինչ մեկնաբանություն էլ տան այս ջարդին՝ այն պատմական իրողություն է։ Խորհրդարանի որոշումը դալիս է հաստատելու այդ պատմական իրողությունը (Նոր Հայաստան, հունիս 3, 1998, էջ 4)։

ԼԻՈՆԵԼ ԺՈՍՊԵՆ, Ֆրանսիայի վարչապետ,- Ոգեկոչման այս օրը Ֆրանսիայի կառավարությունը առանձնահատուկ զգացումով է հիշում նախկին Օսմանյան կայսրությունում 1915-1916 թթ. հայ ժողովրդի մի ստվար զանգվածի բռնա-

դաղթը և ոչնչացումը։ Սա մեր հարգանքի տուրքն է հայկական ծագումով մեր բոլոր հայրենակիցների հանդեպ, որոնց նախնիները 84 տարի առաջ այդ կոտորածներին զոհ գնացին կամ մազապուրծ եղան (Նոր Հայաստան, ապրիլ 23, 1999)։

ԻՎ ԹԵՌՆՈՆ, պատմաբան,- Պատմական ճշմարտությունը սակարկության առարկա չէ։ Չկա այնպիսի մի ժամանակաշրջան, երբ չարժե խոսել հայերի ցեղասպանության մասին։ Դա կարող է վնաս հասցնել այդ քաղաքականության շահերին։ Ցեղասպանությունը տեղի է ունեցել որպես ցեղասպանություն և հայ ազգը ջնջելու Օսմանյան կառավարության հետևողականությունը այդ հարցում ապացուցված է։ Որպես ցեղասպանություն այն սպառնալիք է համայն մարդկությանը, որովհետև պատմության մեջ չի կարելի հանդուրժել մի այնպիսի ոճրագործ պետության, որը կարող է բնաջնջել մի ժողովուրդ և այդ երևույթը խեղաթյուրել՝ ելնելով իր նեղ ու նենգ շահախնդրությունից և իրեն ներկայացնել որպես տուժված մի պետություն (Ives Ternon, La verite de L'Histoire n'est pas Negociable. Հայերեն թարգմանությունը տե՛ս Նոր Օր, ապրիլ 23, 1994, էջ 5)։

ԺԱՆ ՄԱՐԻ ԳԱՐԶՈՒ, լրագրող, գրող, պատմաբան,- Այս տեղահանությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ ցեղասպանության կիրառումը կյանքում, վիթխարի մի գործողություն, որին պարտադիր կարգով իրենց մասնակցությունն էին ունեցել պետության բոլոր պաշտոնական անձինք՝ ինչպես քաղաքացիական, այնպես էլ զինվորական (Jean Marie Carzou, Un genocide exemplaire, Armenie,1915, Paris, 1975, p. 123)։

ՄԱՐԿ ՖԵՐՈ, ֆրանսիացի գործիչ,- Մեկուկես միլիոն հայեր մեռան Թուրքիա 1915-ին։ Եթե կառչինք բառերու ճշգրիտ սահմանումին, հարցը կվերաբերեր ոչ թե տևական ցեղասպանության մը, այլ զանգվածային բնաջնջման, ինչ որ չի բացառեր դեպքին ոճրային բնույթը (Նոր Օր, հուլիս 15,1998)։

ՌԵՆԵ ՌՈՒԲԵ, Ֆրանսիայի արտաքին գործերի հանձնախմբի բամբեր, Ալֆորվիլի քաղաքապետ,- Այս վայրկյանին ես կմտածեմ այս բարեկամ ժողովրդի մասին, որ բարբարոսության երեսեն ցիրուցան եղած մարդոց անունեն այն կպահանջե, որ արդարության վճիռ արձակվի, որ վերջապես գոցվի դարուս սկիզբը բացված վերքը, երբ Օսմանյան կայսրությենեն ներս ապրող հայերու երկու-երրորդը բնաջնջվեցավ կամ աքսորվեցավ «Երիտասարդ Թուրքերու» կառավարության հրամանով (Հատվածը բերված է 1998 թ. մայիսի 29-ին Ֆրանսիայի Խորհրդարանում հայերի ցեղասպանության առթիվ ունեցած ելույթից, Նոր Օր, հունիս 15, 1998)։

ԿԻ ՀԵՐՄԻԵ, Ֆրանսիայի խորհրդարանի համայնավար անդամ,- 83 տարվա լռությունից հետո, մեր պարտականությունն է հստակորեն ասել, թե ովքեր են պատասխանատուները մարդկության դեմ գործադրված այս ոճրին։ Ոմանք ասում, թե այս որոշումը կվնասի Թուրք-ֆրանսիական հարաբերությունները։ Ընդհակառակը, ճշմարտությունը ծածկելով, չենք կարող թուրքերին օգնած լինել։ Թուրքական կառավարությունները մեկը մյուսի ետևից մերժեցին ընդունել ճշմարտությունը և ծրագրված ձևով փորձեցին ջնջել հայ ժողովրդի բոլոր հետքերը Թուրքիայի հայապատկան հողերից (Նոր Կյանք, հունիս 4, 1998)։

ԺԱՆ ՊԻԵՌ ՄԱՍՐԵ, պետական քարտուղար,- Օսմանյան կայսրության մեջ 1915-ին և 1916-ին կատարված հայերու ջարդերը և տեղահանությունները վերջին սասանումի օրերուն, այս դարուս ամենեն զարհուրելի ողբերգություններեն մին է։ Դեպքերը հայտնի են և անժխտելի։ Պետք է, որ մեր մտքին առջև ունենանք այս ժողովուրդներուն պատկերը ճամփաներու վրա, չարչրկված, ջարդված՝ ամենադաժան պայմաններու մեջ (Նոր Կյանք, հունիս 12, 1998)։

ՄԻՇԵԼ ԴԵՍՏՈՆ, Գրենոբլի քաղաքապետ, Ֆրանսիայի

Ազգային ժողովի պատգամավոր,- Այս հուշարձանը կդառնա աշխարհում խաղաղության և ազատության համար պայքարի դրոշ: Այն կխորհրդանշի հայկական ցեղասպանության զոհերի հիշատակը: Ցեղասպանությունների ճանաչումը միակ հատուցումը չէ, որ աշխարհը կարող է առաջարկել մարտիրոսացված ժողովուրդներին: Դրա տրամաբանական շարունակությունը պահանջում է պայքարել ցեղասպանության ժխտողականության դեմ (հատված Գրենոբլի քաղաքապետարանի առջև հայոց ցեղասպանության նվիրված խաչքար-հուշարձանի բացման արարողության ընթացքում ունեցած ճառից- հունիս 5, 1999 թ., Նոր Հայաստան, հունիս 10, 1999 թ.):

ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Է. ԲԵՌՆՇՏԱՅՆ, փիլիսոփա, հրապարակախոս,- Ս. Բարթողոմիոսի Գիշերաջարդը, Տրոկետայի կոտորածը, 1792-ի, 1848-ի, 1871-ի արյունահեղ կռիվները, նույնիսկ Կիոսի, Լիբանանի և Բուլղարիայի ջարդերը նսեմանում են սուլթանի պաշտոնյաների հովանավորությամբ կամ նրանց հրամանով Հայաստանի մեջ գործված արյունռուշտ չվայտությունների առջև՝ կատարված մի ժողովրդի դեմ, որի միայն հանցանքն է հակառակվել հարստահարության (Էդ. Բեռնշտայն, Հայկական տանջանքները և Եվրոպան, ԺՆև, 1906, էջ 26):

ՄԱՐՏԻՆ ՆԻՊԱԳԵ, ուսուցիչ, ականատես,- Տեղահանության նպատակը ամբողջ հայ ժողովրդին գլխովին ոչնչացնելն է: Այդ մտադրությունը բացահայտ երևում է այն փաստից, որ կառավարությունը կանոնավոր կերպով հակազդում էր այն միսիոներներին, դթության քույրերին և այլ եվրոպացիներին, որոնք գտնվելով երկրում ձգտում են օգնել հայերին (Quelques documents sur le sors des Armeniens en 1915. Fasicul III, Geneve, 1916, p. 161):

ԲՐՈՒՆՈ ԷՔԱՐՏ, Ուրֆայի (Եդեսիա) Գերմանիայի միսիայի ներկայացուցիչ,- Այս փաշաներն ու բեյերը որտեղի՞ց էին ստացել մեկուկես միլիոն անմեղ կանանց ու երեխաներին կողոպտելու կամ դաժանորեն ոչնչացնելու իրավունքը: Շատ բարձրաստիճան թուրքերի, այսպես կոչված «քաղաքակիրթների» դիրքորոշումը հայերի բնաջնջման նկատմամբ համաշխարհային պատմության մեջ կմնա որպես անջնջելի խայտառակ բիծ (Bruno Eckart, Meine Erlebnisse in Urfa, Potsdam, 1922. Բրունո Էքարտ, Ապրածս օրերը Ուրֆայում, Երևան, 1990, էջ 37):

ՇՈՅԲՆԵՐ ՌԻԽՏԵՐ, Էրզրումում գերմանական հյուպատոս (1915 թ. հունիսի 2-ի զեկուցագրից),- Իմ բանակցու-

թյունները գլխավոր հրամանատարի հետ հայերի տեղահանության վերաբերյալ դրական արդյունքի չհանգեցրին։ Հայ ազգային բնակչությունը դաշտային բոլոր շրջաններից, հավանական է և Էրզրումից, պետք է արտաքսվի Տեր Զորի կողմերը։ Մեծ ծավալի այս տեղահանությունը հավասարազոր է զանգվածային ոչնչացման, քանի որ փոխադրական լրիվ միջոցների բացակայության պատճառով տեղահանվածների հազիվ կեսը ողջ կհասնի նշանակված վայրերը. և, հավանական է այս տեղահանությունը իր հետ կբերի ո՛չ միայն հայերի, այլև ամբողջ երկրի քայքայում (Dr. Johannes Lepsius. Deutschland und Armenien 1914-1918, Potsdam 1919, s. 80)։

ՇՆՈՊՐ-ՐԻԽՏԵՐ, Էրզրումի հյուպատոս,- Բոլոր անոնք, որոնք կքաջալերեին «Միություն և առաջադիմություն» կուսակցության կարծր քաղաքականությունը, իրականության մեջ բնա՛վ չտատամսեցան գործադրելու իթթիհատի իսկական նպատակը հայերուն հանդեպ, որ կհետապնդեր հայոց ամբողջական բնաջնջումը։ «Պատերազմեն վերջ հայու ո՛չ մեկ հետք պետք է մնա Թուրքիո մեջ». այս խոսքերը սովորական դարձած էին և հաճախ կկրկնվեին իթթիհատական ղեկավարներուն կողմե (28 հունիս 1915, Բագին, երբ օտար դիվանագետները կվկայեն, հոկտեմբեր-դեկտեմբեր, 1995, Բէյրութ, էջ 27)։

ՌՈՍԼԵՐ, Հալեբի հյուպատոս,- Այն իրողությունը, թե Եփրատ գետի ջուրերուն վրա ծփացող դիակները զույգ-զույգ կապված են իրարու, կբացահայտե, որ հայերը չկանխամտածված բնաջնջումի մը զոհերը չեն, այլ՝ իշխանություններուն կողմե բծախնդրորեն կազմակերպված սպանդի մը զոհերը։ Կըսվի, թե - և շատ հավանաբար ա՛յս է իրականությունը- դիակներ Թուրք զինվորներուն կողմե գետը նետված են Ատըյամանի մոտ (հունիս, 1915, Բագին, նույն տեղում)։

ՀՈԼՍՏՈՆ, Մուսուլի հյուպատոս,- 614 հայերը, որոնք

Դիարբեքիրեն դեպի Մուսուլ լաստերով ղրկված էին, ճամբուն ընթացքին Թուրքերու կողմե խեղդամահ եղած են. լաստերը դատարկ հասան Մուսուլ (10 հունիս, 1915) (Բագին, նույն տեղում)։

ԿԱՐՐԻ ՇԹՑՈՒՐՄԵՐ, լրագրող, հասարակական գործիչ, 1915-1916 թթ. կ. Պոլսում «Քյոլնիայչը Ցայտունկ» թերթի թղթակից,- Թող հայտնի լինի, որ այդպիսի հնարամիտ գազանությամբ մեկուկես միլիոն մարդկանց ոչնչացումը, այն էլ բարձր մշակույթով ամբողջ մի ժողովրդի, համընկավ Թուրքիայի վրա Գերմանիայի ունեցած ամենաազդեցիկ մի ժամանակաշրջանում (H. Stuermer, Zwei Kriegsjahre in Konstantimopel, Skizzen deutsch-jungturkischer Moral und Politik, Lausanne, 1917, s. 14)։

ՇՏԻՐ ԷՎԱԼԴ, հրապարակախոս, պատմաբան, կրոնավոր,- Ամբողջ աշխարհը մեզ պատասխանատու համարեց Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների համար։ Ազգային ու կրոնական դրդապատճառները վերլուծելով, մենք պետք է մեզ պատասխան տանք քրիստոնյա ժողովրդի ոչընչացման պատճառների համար, որը 1600 տարի է ինչ գտնվելով Արևելքի առաջավոր դիրքերում և իսլամով շրջապատված հորձանուտում, խիզախորեն և անձնվիրաբար պահպանում է իր հավատքը (Stier Ewald. vernichtung der Armenier in in der Turkei. "Die Cristliche Welt". Evangelisches Gemeindeblatt fur Gbildete aller Stande, 1919, no. 12)։

ՅՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՍ, հոգևորական, հասարակական գործիչ, արևելագետ,- Կայսրության բոլոր կողմերում ցրված մեկուկես միլիոն բնակչության տեղահանությունը չի կարող ոչ մի ռազմական նկատառումներով արդարացվել։ Միակ բացատրությունը, որը թույլ չի տալիս այդ կառավարական միջոցառման մեջ տեսնել խելացնորության արարքը, այն է, որ խոսքը գնում էր ներքին քաղաքականության ծրագրի մասին, որը հետապնդում էր նախօրոք կանխամտածված

որոշումով, սարնասիրտ հաշվարկով ոչնչացնել էթնիկական հայ տարրը (Յ. Լեփսիուս, Գաղտնի տեղեկագիր հայկական ջարդերի մասին. ֆրանսերեն, Ռընե Փինոնի նախաբանով, Փարիզ, 1918, էջ 259)։

ՅՈՉԵՖ ՄԱՐԿՎԱՐՏ, գիտնական, արևելագետ,- Նույնիսկ Սահմանադրության հռչակումից հետո էլ օսմանյան քաղաքականության հիմնական նշանաբանն էր՝ «Եթե չլինեն հայերը, ուրեմն չի լինի նաև հայկական հարցը»։ Ադանայի դաժան կոտորածը ցույց տվեց, որ երիտթուրքերը, որոնք զարմանալիորեն Եվրոպայում իրենց համար լիբերալ (ազատական) համբավ ունենալու հասարակական կարծիք էին ստեղծել, իրենց դաժանությամբ ոչնչով չզիջեցին մեծ մարդասպան Աբդուլ Համիդին (Dr. Marquart. Die Entstehung und Wiederherstellung der Armenische Nation, Berlin. 19193 s. 45)։

ՀԵՆՐԻԽ ՖԻՐԲՅՈՒԽԵՐ, ականատես, 1915-1918 թթ. եղել է Մարշալ Լիման ֆոն Սանդերսի համհարզն ու թարգմանիչը Թուրքիայում,- Հաճախ այն կարծիքն է հայտնվում, որ մեկ միլիոնից ավելի հայերի կոտորածը կատարվել է ոչ թե կանխամտածված ծրագրով, այլ որոշակի չարաբաստիկ հանգամանքների բերումով, որոնք իբր չեն կանխատեսվել կառավարության կողմից։ Մեզ հասած թալեաթի հրամաններից պարզորոշ նկատվում է, որ կառավարության նպատակը ոչ թե հայերի վերաբնակեցումն է եղել, այլ նրանց ոչնչացումը (Heinrich Vierbucher, Armenien 1915 Die Abschlachtung eines kulturvolkes Durch die Turken, Bremen, 1987, Տե՛ս ռուսերեն թարգմանությունը, Արմենիա, 1915, Երևան 1991, էջ 48)։

ԳՈԼՑ, ԿԱԼՄԱՐ ՖՈՆ, ֆելդմարշալ, հրամանատար գերմանական ռազմական առաքելության Թուրքիայում,- Ինչպիսի ահավոր ժողովրդական ողբերգություն. նրանք առանց սննդի, առանց մատակարարման, անօգնական, հազարներով քշվում են դեպի անհայտություն։ Շատերը մահանում են ճանապարհներին և երկար ժամանակ մնում անթաղ։ Ամբողջ սրտով

ցավակցում ես, բայց օգնել չես կարող (Heinrich Vierbucher. Armenien 1915, Hamburg-Bergedorf, 1930, s. 71)։

ՖՈՆ ՎԱՆԳԵՆՀԱՅՄ, Կայսերական Գերմանիայի դեսպան Թուրքիայում 1912-1915 թթ.,- Միանգամայն ակնհայտ է, որ հայերին աքսորելը կապված չէ միայն ռազմական նկատառումների հետ։ Վերջերս ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը առանց քաշվելու հայտարարել է կայսերական դեսպանության աշխատակից Դոկտ. Մորտմանին, որ Բարձրագույն Դուռը ճգնում է օգտագործել համաշխարհային պատերազմը, որպեսզի վերջնական դատաստան տեսնի իր ներքին թշնամիների-տեղական քրիստոնյաների-հետ, առանց ուշադրություն դարձնելու արտասահմանյան դիվանագիտության միջամտություններին (Deutschland und Armenien 1914-1918.Sammlung diplomatischer Aktenstucke. Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius. Potsdam 1919 s. 84)։

Մ. ԷՐՅԲԵՐԳԵՐ, կաթողիկե հոգևորական առաջնորդ,- Երկրի խորքից, ազգությամբ ոչ հայ ականատեսներից ստացվող հաշվետվություններն այն աստիճան սարսափելի են, որ դրանք հնարավոր չէ արտահայտել թղթի վրա։ Կարելի է ենթադրել, որ աքսորն ավելի մեղմ պատժիչ միջոց է, քան սպանությունները. իրականում սակայն, մեկը մյուսից շատ քիչ է տարբերվում։ Այն դեպքում, երբ համընդհանուր ջարդի ժամանակ ոմանց հաջողվում է փախչել, թաքնվել կամ փրկվել լեռներում, տեղահանման պայմաններում կյանքը պահպանելու հույսը չափազանց աննշան է (Մ. Էրցբերգեր, Գերմանիա և Անտանտ-Համաձայնականները, Մոսկվա-Լենինգրադ, 1923, էջ 83, ռուսերեն)։

ՖԵՑ ՅՈՒԼԻՈՒՍ, լրագրող, պատմաբան,- Հոծ բազմությամբ խեղճ ժողովրդին առանց սննդի և ջրի քշեցին դեպի անապատները, որտեղ նրանց բզկտեցին այնպիսի ահավոր ձևով, որ անդամահատված ձեռքերը դարսակույտված էին ամենուրեք։ Միայն մեկ երրորդ մասը խուսափեց

այդ ճակատագրից։ Մեկուկես միլիոն մարդ կորցրեց այն ինչ ուներ։ Իսկ թուրքերը սպանված հայերի թիվը հաշվում են կես միլիոն (Fey Julius, Armenische Frage. "Der Deutschen-Spiegel" Politische Wochenschrift, 19. Heft Wom II. Mai, 1928, s. 810)։

ԿՐԱՖՏ-ԲՈՆՆԱՐԴ, ԱՆՏՈՆԻ, հասարակական գործիչ, կրոնավոր,- Քաղաքական իրադրությունը վաղուց ի վեր վճռական եղավ հայ ժողովրդի ճակատագրի համար. ինչպես որ սպասվում էր Օսմանյան կայսրությունը կրկին վերադարձավ Աբդուլ Համիդի մշակած այս քրիստոնյա ժողովրդի ոչնչացման ծրագրին, որպեսզի կատարելապես իրականացնի այն։ Ահավոր կոտորածը սկսեց 1915 թվականին (Krafft Bonnard, Die Etappen eines Dramas. 1878-1943. Vandererverlag, Zurich, 1944. Գերմանական աղբյուրները հայերի ցեղասպանության մասին, էջ 77, ռուսերեն)։

ԱՐՄԻՆ ՎԵԳՆԵՐ, գրող, հրապարակախոս, ականատես,- Մթության մեջ իջնում եմ դեպի գետը, ձորում հայտնաբերում եմ իրար վրա դարսած մարդկային դիակների մի բլուր՝ սպիտակ գանգեր, որ դեռևս ծածկված են մազով, մեկի կոնքը, մի մանկան կրծքոսկրը՝ նրբորեն ճկված, ինչպես աղեղ։ Մի ակնթարթ ինձ տիրում է բութ հուսահատություն, որ աչքերիցս արտասուք է քամում. թվում է, թե ցնդում են բոլոր հույսերը, սիրո բոլոր սաղմերը, որ երբևէ ինձ կապել են կյանքին (Սովետական Հայաստան, 1986, նոյեմբեր 9, էջ 27)։

ԿԱՐԼ ԼԻԲԿՆԵԽՏ, գերմանական և միջազգային բանվորական շարժման գործիչ,- Թուրքական կառավարությունը կազմակերպեց հայկական զարհուրելի կոտորածները, ամբողջ աշխարհ այդ գիտե և ամբողջ աշխարհն այդ ոճրագործության համար հանցավոր է համարում նաև Գերմանիային. չէ՞ որ Կ. Պոլսում թուրքական կառավարությունը ղեկավարում են գերմանական սպաները։ Ոչ մի բան

չգիտեն Գերմանիայում, որովհետև գերմանական մամուլի բերանի մեջ դրված է գելարանակ (Կարլ Լիբկնեխտ, Հատընտիր ճառեր, նամակներ ու հոդվածներ 1961, Մոսկվա, էջ 334, ռուսերեն)։

ԲԵՐԵՆԴԱ ՄՅՈՒՆՆԻՇ, գիտնական,- Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին, Օսմանյան կայսրության կառավարողները կազմակերպեցին 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը, որին զոհ գնացին մոտ 1,5 միլիոն հայեր։ Բազմաթիվ վավերագրեր վկայում են այն մասին, որ այսպես կոչված «առաջադեմ» թուրքերի կատարած դաժանությունները անհամեմատ գերազանցեցին սուլթանների կատարած բռնություններին և այդպիսով սահմանադրական Թուրքիան առավել ևս հեռացավ Եվրոպայից (Զերկալո Միրովոյ Պրեսսի, օգոստոս, 1990, ռուսերեն)։

ՎԵՐՆԵՐ ԷՐՆԵՍՏ, արևելագետ,- Թալեաթի և Էնվերի գլխավորությամբ արմատական թևը հաղթանակ տարավ և մահվան դատապարտեց ամբողջ մի ժողովրդի։ Դրանով նրանք գործնականի վերածեցին իրենց ազգայնամոլական տեսությունը, ընդ որում հայերի ոչնչացումը միայն սկիզբն էր, քանի որ հնարավոր կարճ ժամկետում դրան պետք է հետևեր Փոքր Ասիայի հույների կոտորածը (Werner, Ernest, Die Armeniergreuel 1915-16. ein armenisches Greuelmarchen? "Zeitschrift fur Geschichtswissenschaft" XXI, Jahrgang, 1973, Heft 2, Veb Deutscher Verlag der Wissenschaft. Berlin. Տե՛ս, Գերմանական աղբյուրները հայերի ցեղասպանության մասին, էջ 67-68, ռուսերեն)։

ԹԵՍՍԱ ՀՈՖՄԱՆ, պատմաբան,- Բայց չէ՞ որ հոգեկան ցնցումից բացի, որ հայ ժողովրդին հասցրեց 1915 թ. ցեղասպանությունը, առկա են նաև ցեղասպանության անմիջական նյութական և քաղաքական հետևանքները, որոնցից հայ ժողովուրդը շարունակում է տառապել առ այսօր (Dr. Tessa Hofmann. Volkermord und Historiographie. Rede auf der dursh den

armenischen Welkongress veranstalteten Versummlung zum Gedenken an die Opfer des Cenozides an den Armenien, gehalten am 28 April, 1990 in Bonn. *Տե՛ս, Գերմանական աղբյուրները հայերի ցեղասպանության մասին, էջ* 115, *ռուսերեն*):

ԷԼԻԶԱԲԵՏ ԲԱՈՒԵՐ, պատմաբան,- 1915 *թ. ապրիլի* 24-*ի գիշերը, պարզնկա կապույտ երկնքի տակ ձերբակալվեցին Կ. Պոլսի հայ մտավորականության և մշակույթի հանրահայտ դեմքեր՝ քաղաքագետներ, գրականագետներ, երաժիշտներ, բժիշկներ, դերասաններ, պրոֆեսորներ և ուսուցիչներ, որոնք սպանվեցին, տարագրվելով դեպի երկրի խորքերը: Ամբակազմ մարդիկ առանձնացվեցին և այնուհետև նույնպես աքսորվելով դեպի ամայի վայրեր, զինաթափվեցին և գնդակահարվեցին իրենց ձեռքերով փորված գերեզմանների փոսերի առաջ:*

Կանանց, երեխաներին և ծերունիներին բռնի գաղթեցրին դեպի Սիրիական անապատները, հետիոտն ու դաժան պայմանների տակ, որպեսզի այնտեղ կրեն իրենց տանջալից և սարսափելի մահը:

Մի ժամանակ կոտորածներ էին տեղի ունենում Կիլիկիայում, Սիրիայի հյուսիսային մասում, Անատոլիայի արևելյան և արևմտյան մասերում, ինչպես նաև Կովկասում: Իսկ մյուս կողմից Թուրք հասարակության բոլոր խավերը իրենց ուզածի պես կողոպտում և յուրացնում էին հայերի բոլոր ունեցվածքը (Elizabeth Bauer, Armenia, past and present, New York, 1981, p. 148-149):

ԿՈՒՆՆԱՐ ՀԱՅՆՍՈՆ, պատմաբան, Բրեմենի համալսարան՝ Ռաֆայել Լեմկինի անվան ինստիտուտի տնօրեն,- Դուք բոլորդ գիտեք, որ մենք գերմանացիներս ընդունեցինք մեր պատասխանատվությունը ֆաշիստների կատարած ոճրագործությունների համար: Բայց մենք լուռ մնացինք նախկինում հայերի նկատմամբ կատարված ցեղասպանության մեր պատասխանատվությունից...: Խնդրում եմ իմ ժողովրդի

կողմից ընդունեք իմ խորը վշտակցությունը և վստահ եղեք, որ ես կանեմ ամեն ինչ ուժիս ներածի չափ, որպեսզի Գերմանիայում տարածեմ ճշմարտությունը այդ փաստի մասին (Այս խոսքերը ասված են հունիս 11-13, 1997 *թ. Մոնթրեալում տեղի ունեցած ցեղասպանության նվիրված միջազգային գիտաժողովում: Տե՛ս,* Nor Or, Dec. 31, 1998, p. 7/9):

ՀԻԼՄԱՐ ԿԱՅԶԵՐ, պատմաբան,- ...Որևէ կիրթ անձնավորություն գիտի, որ այն ցեղասպանություն էր: Նույնիսկ Թուրքիայում եղան մարդիկ, որ հաստատեցին այս: Եթե դուք զրուցեք Վանի շրջանի քուրդ գյուղացիների հետ, որտեղ ես ճանապարհորդեցի, նրանք ձեզ կասեն, որ այն ցեղասպանություն էր: Նրանք կպատմեն ձեզ, թե ինչու սպանեցին նրանց (հայերին): Նրանք գիտեն հայոց հնագույն եկեղեցու նշանակությունը:

Եվ քուրդերը ինձ ասացին հետևյալը. «Սկզբում մենք սպանեցինք բոլոր մեր եղբայրներին (նկատի ունի հայերին,- Ա. Փ.), իսկ հետո նրանք (Թուրքերը) սպանեցին մեզ»: Այս մասին ինձ պատմեց 1938 *Տերսիմի կոտորածներից վերապրող քուրդերից մեկը* (From interview: Historian Hilmar Kaiser discusses Armenian Genocide Recognition. Asbarez, August 22, 1998, p. 3):

ԱՌՆՈ ՀԱՄԵԼԵՆ, ԺԱՆ-ՄԻՇԵԼ ԲՐՈՆ,- պատմաբան-հրապարակագիրներ,- Ցեղասպանությունը ժխտելով, այժմյան Թուրքական կառավարությունը շարունակում է իր նախնիների ոճիրը: Ինչպես կարող է մի ժողովուրդ առանց հողի, հայրենի օջախի գոյատևել երկար ժամանակ, պահպանել իր ազգային նկարագիրը: Հայերին թեկուզ ներքին ինքնավարության սկզբունքով իրենց երկիրը վերադառնալու իրավունքը մերժելով, Թուրքիան հեռակա կարգով երկրորդ անգամ է բնաջնջում նրանց (Բնօրրան, Թիվ 1-2 (2-3), *Երևան,* 1966):

ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՋՈՐՋ ԲԱՅՐՈՆ, բանաստեղծ,- Թերևս դժվար է գտնել որևէ այլ ազգի կենսագրություն, որն առավել զերծ լինի առատավորող ոճիրներից, քան հայերինը, որոնց առաքինությունները խաղաղասիրության արգասիք են, իսկ թուլությունները՝ բռնադատման հետևանք: Սակայն ինչպես էլ լինի նրանց ճակատագիրը ապագայում, նրանց հայրենիքը պիտի մնա աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը (Սովետական Հայաստան, ապրիլ 24,1989):

ՎԻԼՅԱՄ ԿԼԱԴՍՏՈՆ, պետական գործիչ, 1880-1894 թթ. վարչապետ,- Որտեղով էլ որ անցնում էին, արյան լայն ուղիներ էին մնում նրանց հետքերից և որտեղ որ տարածվում էին նրանց տիրույթները, քաղաքակրթությունը ջնջվում էր աշխարհի երեսից (Խորհրդային Հայաստան, 1988 նոյեմբեր 4, էջ 14):

ՄԱԼԲՈԼՄ ՄԱԲՈԼ, պատմաբան, արևելագետ,- 19-րդ դարի վերջին անմիջապես Թուրքիայում կազմակերպված հայկական կոտորածները բոլորովին տեղի մոլեռանդության բռնկման արդյունք չէին, այլ կանխամտածված քաղաքական դրսևորումներ, որոնք տևապես գործադրվում էին Սուլթանի և նրա խորհրդականների հրամաններով (Անգլիայի պատասխանատվությունը Հայաստանի հանդեպ. Հայերի դրությունը Թուրքիայում, էջ 173, ռուսերեն):

ՋԵՅՄՍ ԲՐԱՅՍ, պետական գործիչ, իրավաբան, պատմաբան,- Քրիստոնյա հայերի կոտորածը մահմեդականների ցասման բռնկումը չէր: Ամեն ինչ տեղի ունեցավ կառավարության կամքով և համաձայնությամբ քաղաքական նկատառումներով, այլ ոչ թե կրոնական մոլեռանդության հետևանքով: Կառավարությունը ձգտում էր ազատվել ոչ-մահմեդական ժողովուրդներից, որոնք խախտում էին կայ-

սրության միատարրությունը և միշտ չէ, որ պատրաստակամ էին հնազանդվելու բռնատիրության (A speech delivered by Lord Bryce in the House of Lords, Arnold I.Toynbee, Armenian Atrocities, p. 6, The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916, p.653):

ԱՌՆՈԼԴ ԹՈՅՆԲԻ, պատմաբան, փիլիսոփա,- Ամբողջ այդ ահաբեկումները, բոլոր այդ հանցագործությունները գործադրվեցին հայերի նկատմամբ նույնիսկ առանց հաշվի առնելու նրանց կողմից ամենաչնչին մարտահրավերի բացակայությունը (Arnold Toynbee, Armenian Atrocities, The Murder of the Nation, New York-London, 1915, p. 69):

ԼԼՈՅԴ ՋՈՐՋ, պետական գործիչ, 1916-1922 թթ. վարչապետ,- Հայաստանը զոհ գնաց մեր կանգնեցրած հաղթական զոհասեղանին: Հատկապես մենք հնարավորություն տվինք Թուրքերին կատարելու այդ հանցագործությունը: (Լլոյդ Ջորջ, Ճշմարտությունը խաղաղության պայմանագրերի մասին, 1957, Մոսկվա, Հատոր Բ. էջ 390, ռուսերեն):

ՎԻՆՍՏՈՆ ՉԵՐՉԻԼ, պետական գործիչ, 1940-1945, 1951-1955 թվականներին վարչապետ,- Թուրքական կառավարությունը 1915 թվականին փոքր Ասիայում բնակվող հայերի նկատմամբ սկսեց իրականացնել անխնա զանգվածային ջարդերի և արտաքսումների քաղաքականություն: Կասկած չկա, որ այդ հանցագործությունները կանխամտածվել են քաղաքական նկատառումներով (Վինստոն Չերչիլ, Համաշխարհային ճգնաժամ, Մոսկվա 1932, էջ 27, ռուսերեն):

Օ'ԳՈՆՈՐԻ, Անգլիական խորհրդարանի անդամ,- Ես գերմանացիներին համարում եմ լիովին պատասխանատու հայերի կոտորածի համար: Բեռլինից ասված մի քանի խոսքը կարող էր վերջ դնել կոտորածին 24 ժամվա ընթացքում (Cause, Held at the Central Hall, Westminster on Thursday, June 19th, 1919, London, p. 23):

ՎԻԼԻԱՄ ՋԵԿՍ, միսիոներ,- Ես ականատես եղա մի

ամբողջ ժողովրդի ոչնչացման և այն մասին, որ ես գրում եմ հիմա, հանդիսանում է մի փոքր ամփոփագիր, մի պարզ ընդհանրացված նկարագրություն, տեղի ունեցած դեպքերի մասին, որը չի կարող պատկերացում տալ իմ ամբողջ հազարապատիկ տեսածների և ապրումների մասին (Հայկական Լրատու, Մոսկվա 1916, թիվ 3, էջ 7, ռուսերեն)։

ԴԵՅՎԻԴ ՄԱՐՇԱԼ ԼԵՆԿ, պատմաբան, կովկասագետ,- Առավել ողբերգական ու սարսափելի էր քաղաքացիական հայ ազգաբնակչության վիճակված ճակատագիրը։ Երեխաները բռնի կերպով խլվել էին իրենց ընտանիքներից և ուղարկվել «որբանոցներ», որոնք ըստ էության գետնի մեջ փորված փոսեր էին, ուր ողջ-ողջ նետում էին մանուկներին։ Կանանց ու ծերունիներին հավաքում էին քարավաններում, ստիպելով ոտքով քայլել հարյուրավոր մղոններ Հալեբի և Սիրիայում կազմակերպված համակենտրոնացման կետերի ուղղությամբ։ Ճանապարհին նրանց սպասում էին մարդասպանները, որոնց կառավարությունը ձեռքի ազատություն էր տվել... մոտ մեկուկես միլիոն արևմտահայ ֆիզիկապես ոչնչացվեց ընդհանուր երեք միլիոնից, որ ապրում էր Թուրքիայում պատերազմից առաջ (David Marshall Lang, Armenia. Cradle of Civilization, London, 1980, p. 288-289)։

ԼՈՐԴ ԿԻՆՐՈՍ, պատմաբան,- Հայ ժողովրդի մոտիկությունը ռուսերին կամ կովկասյան ճակատին, հարմար առիթ հանդիսացավ այնպիսի ծավալով հալածանքների համար, որոնք մեծապես գերազանցում էին Աբդուլ Համիդի գազանությունները և դա արվեց մեկ միլիոն հայերի տեղահանության միջոցով, որոնց կեսը զոհվեց (Lord Kinros. The Ottoman Centuries, The rise and the fall of the Ottoman Empire... London, 1980, p. 607)։

ԿԱՐՈԼԱՅՆ ԿՈՔՍ, Մեծ Բրիտանիայի Լորտերի Պալատի անդամ,- Հայերը պայքարում են այն ամենի համար, որոնց իրենք հավատում են՝ գոյատևում, հայրենիք, լեզու, ընտանիք

և իրենց հնագույն հոգեկան ժառանգության համար։ Ինքնիրենց պաշտպանելու համար պայքարել են անհավատալի խիզախությամբ։ Այդ մի պատմություն է, որը պետք է արձանագրվի պատմության գրքերում (Հայ Կյանք, դեկտեմբեր 22-28, 1994, էջ 52)։

ՔՐԻՍՏՈՖԵՐ ՎՈՔԵՐ, պատմաբան,- Երբ ես սկսեցի հայերի ցեղասպանության վերաբերյալ նյութերի ուսումնասիրությունը, ճիշտն ասած, պարզապես ուզում էի լրացնել իմ գիտելիքների պակասը։ Բայց երբ մտա այդ ասպարեզը, տեսա որ կա մի, այսպես կոչված «ծածկ» հայկական հարցի նկատմամբ. այդ «ծածկ»ը գոյություն ուներ ամեն տեղ, որտեղ ուսումնասիրում են Մերձավոր Արևելքի պատմությունը։ Եվ ստեղծվեց անհրաժեշտություն ճեխքելու այդ «ծածկ»ը, բանալու հայկական հարցի նկատմամբ եղած անտարբերության, լռության քողը (Խորհրդային Դպրոց, 1989, հունիս 15)։

ՌՈԲԻՆ ՔՈՒՔ, Ագլիայի արտգործ նախարար,- Երբ Հիտլերը հիմնում էր կենտրոնական ճամբարները, շատ սառնարյուն կերպով էր մտածում, որ այլևս ոչ ոք չի հիշում, թե ինչպես են սպանդի ենթարկվել հայերը։ Կես դար անց, այժմ կրկին գտնվում ենք նույն կացության դեմ առ դեմ։ Սակայն այս անգամ պատերազմական հանցագործությունների դատարան հանձնվեցին Բոսնիայի և Կարաղաղի սպանդների պատասխանատուները։ Պետք է ամեն ինչ անենք, որպեսզի դատարանին հանձնվեն այն բոլոր սպանդների ու վայրագությունների հեղինակները, որոնք գործում են աշխարհի զանազան կողմերում (Նոր Հայաստան, հունիս 18, 1998)։

ՋՈՆԱԹԱՆ ՌԱԿՄԱՆ, լրագրող,- Հայաստան փոքր և հին երկիր մըն է, հարուստ իր քրիստոնյական մշակույթով, սակայն այն, ինչ որ պատահեցավ 1915-ին, սև ամպի մը նման կախված է հայերու հոգեբանության վրա որպես չխաղաղեցված ուրվական մը։ Ութսուն տարիե ի վեր Թուրքերը

ներողություն չեն խնդրած իրենց ի գործ դրած ջարդերուն համար, մինչ Արևմուտքի մեջ շատերը քիչ բան գիտեն և կամ ոչինչ չգիտեն... (Jonathan Rugman, Memory of Slaughter Haunts a Nation,- The Guardian-8, 26, 95)։

ՖԻԼԻՊ ՄԱՐՍՏՈՆ, գրող,- ... Մինչ լեռները կպարպվեին հայերե, սուրիական անապատները կլեցվեին։ Կ. Պոլսեն հրաման եկած էր մաքրագործելու շրջանը։ Որդեգրված էին ամեն տեսակի միջոցներ։ Գնդակահարումը դանդաղ էր։ Ոմանք կքշվեին դեպի գետը։ Շատերը պարզապես կմեռնեին հիվանդություններե, սովե և ծարավե։ Շատատիեն (քարայր) կապահովեր իր սեփական բնական գործիքը։ Անոր անցքը շատ երկար և տարածուն էր։ Զինվորները հոս կբերեին հայերը և հալածանքներով ներս կհրեին։ Որքան բազմանային ներս ինկողները, այնքան առաջին նետվածները կխրվեին անցքեն վար։ Ապա զինվորները մացառներ քաշեցին դեպի քարայրին մուտքը և կրակի տվին (The Crossing Place- «Ճանապարհորդային ուսումնասիրություններ» գրքից)։

ՀՈՒՆԱՍՏԱՆԸ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1996 թ. ապրիլ 25-ին Հունաստանի խորհրդարանը պաշտոնապես ճանաչեց հայերի ցեղասպանությունը, «1915 ապրիլ 24-ը ընդունելով Թուրքիայի կողմից ցեղասպանության ենթարկված հայերի հիշատակի օր»։

Ա. ԱԴՈՍԻԴԵՍ, ֆրանսահպատակ լրագրող,- Ադանա քաղաքում հրո ճարակ են դարձել 1190 տուն, 6 եկեղեցի և ամբողջ հայկական շուկան։ Մենք տեսանք, որ Տարսոնում հրկիզել էին 800 տուն, Հասանբեյլիկում՝ 416, Բախչեում՝ 115, Լապաձլիում՝ 120, Ինջիրլիքում՝ 145, Օսմանիեյում՝ 200 տուն։ Տեսանք, որ շատ ավաններում, գյուղերում և քաղաքներում ոչ մի անվնաս տուն չէր մնացել։ Հենց միայն Ջեբել Բերեքեթի մարզում այրել-մոխրացել էին 915 բնակելի տուն, 6 եկեղեցի, 12 դպրոց, չհաշված կրպակներն ու խանութները (A. Adossides, Armeniens et Jeunes Turcs. Les Massacres De Cillicie, Paris, 1910, P. 115-116)։

ՄԻԽԱԼԻՍ ԽԱՐԱԼԱՊԻՏԻՍ, ընկերաբան-քաղաքականագետ, ժողովուրդների իրավունքների և ազատության միջազգային ընկերության գործադիր կոմիտեի անդամ,- Մեկուկես միլիոն հայեր և Սև ծովի ափերի 350 հազար հույն պոնտացիներ ոչնչացվեցին Օսմանյան պետության ու քեմալական շարժման կողմից սիստեմատիկ մշակված ու ծրագրված բռնությունների, կոտորածների, բռնագաղթերի ու ցեղասպանության հետևանքով (Փյունիկ, Բ. տարի, թիվ 5-14, 1991, հուլիս 3)։

ՄԻՅՈՍ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈՒԼՈՍ, գրող, գրականագետ,- Ճակատագիրը հայերին դրել է դժվար մի տարածքի վրա։ Հնուց մինչև մեր օրերը շատերը փորձեցին խժռել նրանց և շատ անգամ խժռեցին, բայց բազմաթիվ շնորհներով օժտը-

ված այս արթուն ցեղը կարողացավ վերապրել (Միցոս Ալեքսանդրոպուլոս, Հայերը, Երևան, 1984, էջ 5)։

ԱՊՈՍԹՈԼՈՍ ՔԱԿԼԱՄԱՆԻՍ, Հունաստանի խորհրդարանի նախագահ,- Հայ ժողովրդի դեմ Թուրքերու կողմե գործադրված ցեղասպանությունը պատմության ամենագեշ էջերեն է։ Ազատ խիղճ ունեցող յուրաքանչյուր մարդ, որ հավատք ունի կյանքի արժեքներուն հանդեպ, կցնցվի Թուրքերու վայրագություններու ծավալեն, հայ ազգին հանդեպ։

Իբրև մարդ իմ սրտիս ամբողջ ուժով հարկ կզգամ դատապարտել գործված բարբարոսությունները։ Այլ նաև իբրև Հունաստանի խորհրդարանի նախագահ կգնահատեմ, թե Հայկական Ցեղասպանության ճանաչումը մեր խորհրդարանեն պատվո պարտք մըն էր, այլև զորակցություն՝ հպարտ ազգի մը հանդեպ, որուն հետ մենք հույներս դարավոր բարեկամական կապեր ունեցած ենք (Հատվածը բերված է հունալեզու «Արմենիքա» երկամսյա հանդեսի խմբագրության հարցազրույցից։ Տե՛ս, Ասպարեզ, ապրիլ 9, 1999)։

ՍՏԵՖԱՆՈՍ ՍՏԵՖԱՆՈՊՈՒԼՈՍ, Հունաստանի խորհրդարանի Աթենքի պատգամավոր,- Երկու միլիոն 26 հազար հայերից, որոնք միչև 1914 թ. ապրած էին Թրքական լծի տակ, հազիվ 100 հազար հոգի ողջ մնաց Թուրքիայի հողի վրա։ Մեկուկես միլիոնը մորթվեց զորքի, չեթեների և ժանդարմների կողմից, Թուրք ղեկավարության հրահանգով։ Այդ ջարդերին մասնակցում էին նաև զինված Թուրքերի խաժամուժ ամբոխներ։ ... Հայոց Ցեղասպանության 81-րդ տարելիցը ծայրահեղ պահ է, որպեսզի վերջապես վերականգնվի պատմական արդարությունը, որպեսզի չխամրի անմեղ զոհված մեկուկես միլիոն հայերի հիշատակը, բայց և որպեսզի ապագայում կանխվեն նման հանցագործությունները այլ ժողովուրդների դեմ... Հունաստանի Խորհրդարանը դատապարտում է հայոց ցեղասպանությունը (Տե՛ս, Օտարերկրացիները Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության մասին,

Երևան, 1997, մատենաշար թիվ 2, էջ 4, 10։ Հունարենից թարգմանությունը Սիմոն Գրքաշարյանի)։

ՆԻԿԻԴԱՍ ԱԿՐԻԴԻՏԻՍ, Թեսալոնիկեի պատգամավոր,- 1915 թ. ապրիլի 24-ին սկսվում է բռնության և սարսափների այնպիսի մի շրջան համայն հայ ազգի դեմ, որն ապրում էր Փոքր Ասիայի արևելյան հատվածում, ինչը հանգեցրեց մեկ ամառվա ընթացքում մեկուկես միլիոն հայերի բնաջնջմանը և կանգ չառավ ո՛չ երեխաների, ո՛չ ծերերի ու անպաշտպանների, ո՛չ էլ կանանց առաջ...։ ... Քաղաքական պարտք է,- առաջինը և գլխավորը,-որպեսզի մենք մեր իրավասությունների ու իրավունքների սահմաններում դատապարտենք այս ոճիրը, մեր հարգանքի տուրքը հատուցենք զոհերին և ամրապընդենք մեր դիրքն ու մեր կամքը այդ զոհաբերության արդար ճանաչման համար և դատապարտենք այն միջոցները, որոնց դիմել է Թուրքիան և այսօր էլ շարունակում է գործադրել (Օտարերկրացիները Հայկական Հարցի և Հայոց Ցեղասպանության մասին, էջ 20)։

ՍՊԻՐԻԴՈՆ ՅԱԴՐԱՍ, խորհրդարանի Էվբիայի պատգամավոր,- Թուրքական վարչակարգի կողմից հայոց եղեռնը ժամանակագրական տեսակետից 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն էր։ Թուրքական կառավարության հատուկ հրահանգը տեղական իշխանություններին՝ հայերի ոչնչացման մասին ոչ մի բացառություն չէր ընդունում։ Երեխաներ, պատանիներ, ծերունիներ, վիրավորներ և հաշմանդամներ ոչնչացվեցին Թուրքական ազգայնամոլության զոհասեղանի վրա։ Ամբողջ մի ժողովուրդ կոտորվեց ամենաբարբարոս և անասնական եղանակով մի իշխանության կողմից, որը սառնասրտորեն ու նպատակադիր ծրագրեց նրա բնաջնջումը։ Այս բնաջնջումը մեծ ոճիր էր (նույն տեղում, էջ 10)։

ԱՆԱՍՏԱՍԻՈՍ ՆԵՐԱՆՁԻՍ, խորհրդարանի Պիրեյայի պատգամավոր,- ... քաղաքական արարք է անցյալն արժեքավորելը, դաղանությանը ժամանակին հակազդելը, որպեսզի

ապագայում կանխվեն նման փորձերը։ Մեկուկես միլիոն հայեր ձեռբակալվեցին, եղեռնագործության ենթարկվեցին և բռնությամբ տարվեցին անգթության ուղիներով։ Նրանց կեսը ոչնչացավ չարչարանքներից, սովից, զրկանքներից, Ասիայի կիզիչ արևից, տանջանքներից, իսկ մյուս կեսը չկարողացավ տեղ հասնել, որոհետև սպանվեց (նույն տեղում, էջ 14)։

ԻՏԱԼԻԱՆ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Իտալական 12 քաղաքապետարաններ ճանաչել են հայերի ցեղասպանությունը։ Այդ քաղաքներն են՝ Բանիոկավալլո, Լուկո, Ֆուզինիանո, Ս. Ակաթա Սուլ, Սան Թերնո, Կոդինիոլա, Սոլարոլո, Ռուսի, Կոնսելիչե, Կամբոնոկարն, Փադովա, Միլան։

ՋԱԿՈՄՈ ԳՈՐԻՆԻ, 1915 թ. Իտալիայի գլխավոր հյուպատոսը Տրաբիզոնում,- ... Հայկական հարցը մեռած չէ։ Ավելին, այն նոր շունչ է առել և պահպանում է իր կենսունակությունը։ Միջազգային արդարադատությունը թեև ուշանում է, հավատում եմ, որ կհաղթանակի...։ Հույսով եմ՝ բաղձալի իրողությունը վաղ թե ուշ իրականություն կդառնա, ես դա ցանկանում եմ ամբողջ սրտով և հույսով Իտալիայի ներդրման շնորհիվ (Նոր Օր, հունիս 11, 1997)։

Գ. ՍԲՈՐԴՈՆ, դիվանագետ, ականատես,- Գյուղերում կոտորածները սկսեցին Վանի իրադարձություններից շատ առաջ։ Այդ կոտորածների թիվը հասնում է մինչև 16.000 մարդու։ Թեև հայ գյուղացին զինված էր, բայց պաշտպանվելու փոխարեն իր զենքը հանձնեց իշխանություններին և դրանով կործանեց իրեն։ Բոլոր այդ չարդերը կատարվեցին աննախադեպ դաժանությամբ։ Պատռում էին երեխաների փորերը, մերկացնում կանանց և աղջիկներին և այդպես քշում դեպի լեռները՝ վայրի գազանների նման (Հայերի Ցեղասպանությունը Օսմանյան Կայսրությունում, Փաստաթղթերի և Նյութերի ժողովածու, խմբագրությամբ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, Երևան, 1982, էջ 285, ռուսերեն)։

ԳԱՐԼՈ ԼԵՈՆԻ, Իտալիայի խորհրդարանի պատգամավոր,- Դարասզբին՝ 1915 թ. ապրիլի 24-ին մարդկությունը ճանաչեց իր պատմության ամենասարսափելի էջերից մեկը՝ հայ ժողովրդի՝ մշակույթով, ավանդույթներով, արտակարգ

ներուժով հարուստ մի ժողովրդի բռնագաղթը, կոտորածը, ցեղասպանությունը (Նոր Օր, հունիս 11, 1997, էջ 3)։

ԱՆՏՈՆԻՈ ՍՏԱՆԳՈ,- Հելսինքիի իտալական կոմիտեի քարտուղար, «Լա Նովոա Ֆրոնտիերա» ամսագրի գլխավոր խմբագիր,- Իտալիան դեռ չի ճանաչել հայերի ցեղասպանությունը և հետևաբար չի նշում ապրիլի 24-ը իբրև հայերի ցեղասպանության ոգեկոչման օր։ Անհրաժեշտ է հասնել դրան։ ... Մենք բաժանում ենք նաև այն կարծիքը, որ ճանաչելով ցեղասպանությունը, անհրաժեշտ է համոզել, հատկապես Թուրքիային, ընդունելու այն (Նոր Օր, հունիս 11, 1997, էջ 3)։

ՄԱՐԻՈ ԴԵ ՍՏԵՖԱՆՈ, «Մարդու նոր իրավունքներ» ընկերակցության նախագահ,- Մարդու իրավունքների և առհասարակ իրավունքի առումով քաղաքակրթության համար մեծ նվաճում հանդիսացող հրեաների ցեղասպանության ճանաչման փաստի կողքին կա մի այլ ծայրահեղ ծանր դեպք, որ արձանագրվել է հայ ժողովրդի պատմության մեջ ոչ միայն մարդկային զոհերով, այլև այդ ժողովրդի մշակույթի և ազգային ինքնության ոչնչացման փորձով (Նոր Օր, հունիս 11, 1997)։

ՏՈՒԼԻԱ ԶԵՎԻ, Իտալիայի Հրեական Միության Եվրոպայի հրեական համայնքների Միության փոխ նախագահ,- Երբ մի ազգ, մի փոքրամասնություն դառնում է ամբողջական բնաջնջումի՝ դա ժողովուրդների միջև եղբայրության և համերաշխության զգացում է ծնում, որն անքակտելի պետք է լինի։ Մինչ այս ասում էի Հայաստանի Հանրապետության ներկայացուցչին, որ եթե որևէ խնդրագիր, որևէ առաջարկ ներկայացվի Իտալիայի խորհրդարանին հայերի ցեղասպանության ճանաչման վերաբերյալ, ապա կցանկանայի այն ստորագրողների մեջ լինել (Նոր Օր, հունիս 11, 1997)։

ԱՇԽԱՐՀԻ ԶԱՆԱԶԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1965 թ. ապրիլի 20-ին, Ուրուկվայի Արևելյան Հանրապետության ծերակույտի և ներկայացուցիչների Պալատի միացյալ ժողովում ընդունվեց օրենք Հայ նահատակների հիշատակի օրվա առթիվ։

xxx

1989 թ. նոյեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհուրդը դատապարտեց Օսմանյան Թուրքիայում 1915 թ. հայերի ցեղասպանությունը։

xxx

1996 թ. ապրիլի 23-ին, Կանադայի Խորհրդարանը, մեկուկես միլիոն զոհ խլած 1915թ. ապրիլի 24-ի հայերի ողբերգության 81-րդ տարելիցի առիթով և ի հիշատակ մարդկության դեմ կատարված ոճիրների՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 20-ից 27-ը հռչակեց «Մարդկության դեմ գործադրված ոճիրի հիշատակի շաբաթ»։

xxx

1997 թ. ապրիլի 3-ին, Լիբանանի Հանրապետության Խորհրդարանը բանաձև ընդունեց, Ապրիլ 24-ը հռչակելով հայ ժողովրդի դեմ գործադրված կոտորածների հիշատակի օր։

xxx

1997 թ. ապրիլի 24-ին, Ավստրալիայի Նյու Սաութ Վեյլզ Նահանգի Խորհրդարանը հատուկ բանաձևով դատապարտեց 1915 թ. հայերի ցեղասպանությունը և ապրիլի 24-ը հռչակեց 20-րդ դարի առաջին ցեղասպանության զոհ՝ մեկուկես միլիոն հայ նահատակների հիշատակի օր։

1998 թ. ապրիլի 23-ին, Արգենտինայի ծերակույտը դատապարտեց հայերի ցեղասպանությունը, այն որակելով՝ «Թուրքիայի կողմից իրականացված 20-րդ դարի առաջին ցեղասպանություն»։

xxx

1998 թ. մարտի 27-ին, Բելգիայի ծերակույտը ձայների մեծամասնությամբ բանաձև ընդունեց, ճանաչելով հայերի ցեղասպանությունը։

xxx

ԼՈՒԻԶ ԱԼԲԵՐՏՈ ԼԱԳԱԺԵ, Ուրուկվայի հանրապետության նախագահ,- Հայ ժողովուրդի դեմ գործված ցեղասպանության ոգեկոչման այս ձեռնարկին մենք կմասնակցինք հանրապետության կառավարության անունեն։ Կմասնակցինք ոչ միայն այն պատճառով, որ ազգովին կդատապարտենք ամբողջ 20-րդ դարի ընթացքին տեղի ունեցած և տակավին այսօր մեզի տառապանք պատճառող նմանօրինակ գործողությունները, որոնք կշարունակվին Եվրոպայի, Ափրիկեի մեջ և այլուր, այլ մեծարելու համար հայ համայնքը, որուն այնքան պարտական է մեր երկիրը։ Այն համայնքը, որ մեր երկրին տված է իր ժողովուրդին տաղանդն ու աշխատանքը։ Նույնիսկ այսքան տխուր տարելիցի այս օրը մենք ուրախ ենք, որ մեր հայրենակից հայերը գտած են խաղաղություն, ազատություն և բարյացակամություն (հատվածը քաղված է 1994 թ. ապրիլի 24-ին Մոնթեվիտեյոյի անկախության հրապարակում արտասանած ելույթից։ Ասպարեզ, մայիս 4, 1994)։

ՈՒԼՌԻԽ ՏՐԱՄՊԵՆԵՐ, կանադացի պատմաբան,- Իրականում տրամադրության տակ առկա ապացույցների մեծամասնությունը այն հետևությանն է բերում, որ արևելյան նահանգներում հայ բնակչության սիստեմատիկ ջարդերը արդեն որոշված էին «Իթթիհատ»ի վարչակարգի կողմից և հուզումները Վանում և այլ վայրերում լոկ հարմար առիթ

ծառայեցին զանգվածային տեղահանումների ծրագրի իրականացման և մեծ չափանիշով ոչնչացման համար (Trumpener Ulrich. Germany and the Ottoman Empire 1914-1918. Princeton, New Jersey. 1968, p. 203)։

ԻՎԱՆ ԲՈՐԴԼԼՈ, Կանադայի Քեբեք նահանգի երեսփոխան,- Հայ ժողովուրդին պատմությունը մեզի ցույց կուտա, թե հարյուրավոր տարիներե ի վեր այս ազգը զոհը եղած է բազմաթիվ հալածանքներու։ Մեր այսօրվան հիշատակածը այն է, թե ինչպես խելահեղ ոչնչացում մը տեղի ունեցավ 1.500.000 հայ քաղաքացիներու՝ այրեր, կիներ և երեխաներ 1915-են 1917-ի շրջանին։ Հիշենք, որ դարուս սկիզբը նեղմիտ տեսություն մը Թուրքիո ապագային մասին, մղեց այդ ժամանակվա թրքական կառավարությունը գործադրելու ծայրահեղորեն ծանր վերաբերմունք հայերու հանդեպ։(Հատվածը բերված է 1994 թ. ապրիլ 24-ին, հայերի ցեղասպանության 76-րդ տարելիցի առթիվ ունեցած ելույթից։ Journal des De'bats, Avril 24, 1991, p. 7571)։

ՇՈՒՔՐԻ ՔՆԵՑԴԵՐ, Հալեբում հրատարակվող «Ալ Թագադոմ» օրաթերթի խմբագիր,- Ադանայի Թուրքերուն մոտ գոյություն ուներ արյունահեղություն պատճառելու նախատրամադրվածություն և, ուրեմն, բավական էր փոքր կայծ մը տալ, որպեսզի տեղի ունենան համընդհանուր ջարդեր, իսկ կառավարությունը ո՛չ միայն չճնշեց ու չկասեցուց այդ ըմբոստությունն ու ջարդերը, այլև ավելի բորբոքեց անասնական այդ կիրքերը և արդյունքը եղավ այն, որ կոտորածները ստացան ավելի համատարած բնույթ (Դոկտ. Ալեքսան Քեշիշյան։ Վավերագրական էջեր «Ալ Թագադոմ» օրաթերթեն, 1909 թ., թիվ 26։ Տե՛ս, «Բագին» ամսագիր, 10-11-12, 1995 թ., Բեյրութ, էջ 75)։

ՖԱՑԵԶ ԷԼ ՂՈՍԵՑՆ, արաբ իրավաբան,- Հայերի դեմ գործադրված բռնության համար պատասխանատվությունն ընկնում է «Միություն և առաջադիմություն» (Իթթիհատ

վե Թերաքքի) կուսակցության կենտկոմի անդամների վրա, որոնք իրենց ձեռքում պահելով երկրի կառավարումը, առաջնորդվում էին ոչ այլ ինչով, քան հայերի նկատմամբ ունեցած ցեղապաշտական մոլեռանդությամբ (Fayez el Ghossein, Temoignage d'un Arab Musulman sur L'innocence et le massacre des Armeniens. Արաբերենե թարգմանված A. el G.-ի կողմե, Բոմբեյ, 1917, էջ 44)։

ԱՄԻՆ ՍԱՅԻԴ, արաբ պատմաբան,- Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը ղեկավարեց հայերին ոչնչացնելու արշավը։ Այդ արշավի կազմակերպչի ծրագիրը կայանում էր նրանում, որ արտաքսի հայերին արևելյան Անատոլիայի տարածքեն և զինվորների հսկողությամբ նրանց հետիոտն քշի արաբական անապատ, որտեղ նրանց անխուսափելի մահ էր սպասում (Ամին Սայիդ, Արաբների ապստամբությունը 20-րդ դարում, Մոսկվա, 1964, էջ 79, ռուսերեն)։

ՖՈՒԱԴ ՀԱՎԵԶ, արաբ պատմաբան,- Հայերի 1915 թ. ցեղասպանության պատասխանատվությունը ընկնում է նախ և առաջ Օսմանյան պետության կառավարության վրա և առաջին հերթին Թալեաթ փաշայի՝ ներքին գործերի նախարարին, հետագայում՝ վարչապետ և նրա գործընկերների՝ Էնվեր փաշայի և Ջեմալ փաշայի վրա (Ֆուադ Հաֆեզ, Հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Կահիրե, 1986, էջ 315, արաբերեն)։

ԽԵՑՐԻ ՀԱՄԱ, արաբ պատմաբան,- 1915-1916 թթ. ընթացքում Թուրքերն իրագործեցին մոտ մեկ միլիոն հայերի կոտորածը և արտաքսեցին հարյուր հազարավորների (Խեյրի Համա, Հայկական Հարցի լուսաբանումը, «Ալ Մունադլ». Դամասկոս, 1983, էջ 22, արաբերեն)։

ՍԱՄԻՐ ՌԻՖԱՏ, արաբ մտավորական և քաղաքական գործիչ,- Հայկական ցեղասպանությունը նաև միջազգային ոճիր մըն է. Թուրք պետությունը, փոխանակ ինքզինք արդարացնել փորձելու, պետք է ստանձնե իր պատասխանատվությունը և հրաժարվի պատրվակներու խաղեն, թե Թուրք պետությունը շարունակական չէ...։ Այս պատասխանատվությունը գլխավոր կերպով իրեն կպարտադրե պաշտոնական ճանաչումը այս ոճիրին և անկե բխած հանձնառություններուն, այսինքն՝ հատուցումը ցեղասպանության հետևանքով հայերուն կրած վնասներուն (Ս. Ռիֆատ, Մենք և դուք ժառանգորդներն ենք մե՛կ և նույն դատին, տե՛ս «Բագին» ամսագիր, հոկտ. դեկտ., 1995, Բեյրութ, էջ 142)։

ՀԱՍԱՆ Մ. ՅՈՒՍԵՖ, սիրիական, «Հողի Եղբայրներ» ֆիլմաշարի հեղինակ,- Ես անձնապես «Հողի Եղբայրներ»ուն մեջ քննության հարց դարձուցի Թուրքերուն ի գործ դրած 1915-ի հայկական ջարդը, որովհետև խորապես զգացած եմ, որ սիրիական անապատի տարածքին Թափված հայու անմեղ արյունը խառնվելով հայրենիքիս հողին, խառնվելով հարազատ երկրիս ընդերքին մեջ կուտակված՝ նույն դահիճին Թափած արաբ ժողովրդի արյունին հետ, առավել ևս կհաստատե այս հողի արյունավառ պատմությունը (Նոր Օր, ապրիլ 24, 1996)։

ՎԻԼՅԱՄ ԴԱԼՐԻՄՊԼԷ, ավստրալիացի լրագրող,- Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում արևելյան Թուրքիայում մեկ միլիոն հայերի կոտորածից հետո, միայն նրանց հնագույն եկեղեցիներն են վկայում այն մասին, որ նրանք մի ժամանակ ապրել են այստեղ (Extra. 22 April, 1989)։

ՋՈՆ ԴՈՎՏ, Միջազգային իրավաբանների միության Ավստրալիայի բաժանմունքի նախագահ,- Կասկած չկա, որ անցած 83 տարիների ընթացքում, աշխարհը առավել իրազեկ դարձավ Թուրքիայի կողմից հայոց ցեղասպանության գործադրման խնդրում։ Իրոք որ այդ բոլորը մենք տեսնում ենք անմիջականորեն մեր տներում հեռուստատեսային հաղորդումների միջոցով։ Այնուհանդերձ, դեռևս ոչ մի փաստ չկա, որ ցեղասպանությունը կանխելու խնդրում աշխարհի ժողովուրդները որևէ բան արած լինեն (Մասիս, դեկտ. 19,

անգլերեն բաժին)։

ՄԱՐՔՈՒՍ ԱՅՆՖԻԼԴ, Ավստրալիո դաշնակցային պարանի դատավոր,- Ահավոր անմարդկայնությանց նոցեն ցեղասպանությունը մարդկային քանդողականուամենեն սարսափելի դրսևորումն է։ Իրողության մեջ խի ահավոր ոճիր մըն է, որ գրեթե աներևակայելի է։ պես երրորդ սերունդի ավստրալիացիներուն համար ը է նույնիսկ երևակայել, որ անիկա կրնա պատահիլ։ Բան մարդ կուսումնասիրե 1915-ի դեպքերը, այնքան ատես կըլլա քարշելի և տմարդի պատմության մը (Մ. ելդ, «Հայկական ցեղասպանությունը կարելի չէ ուրատե՛ս «Բագին» ամսագիրը, հոկտ. նոյ. դեկ., 1995, Բեյ- էջ 129)։

ԲՈԲ ՔԱՐ, Ավստրալիո հարավային Վեյլզ նահանգի սպետ,- Սիդնիի մեջ ապրող հայ գաղութի զավակներեն յքարի և հերոսության բազմաթիվ պատմություններ մ իրենց ծնողներու մասին, թե անոնք ինչպես կարողերապրել այդ զարհուրելի դեպքերեն, երբ ծրագրված ով ազգովին իրենց պապենական հողերեն դուրս ին։ Աչխարհը երբեք չի մոռանա հայկական ցեղասպաունը, որ ամբողջ ազգի մը սպանդն էր։ Դեպքը ուրանալոց գոյություն չունի։ Արդեն Եվրոխորհրդարանը ն քվեարկեց հայկական ցեղասպանության վավերակաունը ընդունող բանաձև մը (Ասպարեզ, մայիս 2, 1996)։

ԻՆՐԻ ԼԱ ՖՈՆՏԵՆ, բելգիացի ծերակուտական, 1920-թվականներին Ազգերի Լիգայի Բելգիայի ներկայացուՆպե՞ս մենք խոր կարեկցանք չզգանք այս աննկարագրելի ողբերգության համար և ամեն հնարավորը չձեռնարորպեսզի վերջ տրվի բոլոր ողբերգություններից սարսափելին։ Մարդկության պատիվը բախտախաղի ած։ Ժամը լուրջ է։ Կառավարությունները պետք է ակեն բոլոր հնարավորությունները, որպեսզի հաջորդ

սերունդների կողմից չամբաստանվեն։ Հայաստանի փրկությունը պետք է լինի միջազգային օրինականության, պատվի ու խղճի խնդիրը (տե՛ս Անտոնի կրաֆտ-Բոննարդ, Մի ողբերգության հինգ փուլերը, Ցյուրիխ, 1944, թարգմանությունը Ստեփան Ստեփանյանի, Բնօրրան, թիվ 2(7), 1997, էջ 13)։

ԻՍՐԱՅԵԼ ԶԱՐՆԻ, Երուսաղեմի ողջակիզման և ցեղասպանության ինստիտուտի տնօրեն,- Անհրաժեշտ է կազմակերպել մի ֆորում, որպեսզի այդ ուրացողների առաջ բացահայտվի և ապացուցվի, թե ինչպես են նրանք վարկաբեկում, նվաստացնում ու վիրավորում իրենց զոհերին։ Պետք է մատնանշվի նրանց մոլեռանդությունը, որ նրանք ոտնահարում են մարդկային իրավունքների երաշխիքը։ Ցույց տրվի, թե ինչպես են նրանք փորձում առարկել, վերափոխել, կեղծել և աղավաղել պատմական իրադարձությունների տարեգրությունը (Armenian Life, May 25, 1994, p. 25, Los Angeles)։

ՆԱԴԵԺԴԱ ՊԱՆՉԻԿ, Հրեա հրապարակախոս, բանաստեղծ,- Երազում եմ, որ վերջապես իրականանա 20-րդ դարում հայ ժողովրդի հանդեպ կատարված բոլոր հանցագործությունների պաշտոնական, լիակատար և անբեկանելի ընդունումը հանրագումարով՝ որպես միջազգային հանցագործություն, կրկնակի ցեղասպանություն։ Երազում եմ, որ հնարավորին չափ շատ հրեա քաղաքագետներ ծանոթանան այդ հանցագործությունների վավերական պատմությանը և պաշտպանեն հայերի արդարության ձգտումը այդ ողբերգական խնդրում (Նադեժդա Պանչիկ, «Ցեղասպանության Վիհով Դեպի Բիբլիական Ակունքներ», ռուսերենից թարգմանությունը Ստեփան Թոփչյանի, Ասպարեզ, ապրիլ 24, 1998)։

ՅՈՍԻ ԲԵՑԼԻՆ, Իսրայելի արտաքին գործերի նախարար,- ... Ըլլա Եվրոխորհրդարանի մեջ, ըլլա Եվրոպայի մեջ կամ ուրիշ տեղեր, երբեմն մինչև Միացյալ Նահանգների մեջ Թուրքերը կփորձեն դեմ կենալ այս կամ այն հիշեցումնե-

1998, անգլերեն բաժին)։

ՄԱՐՔՈՒՍ ԱՅՆՖԻԼԴ, *Ավստրալիո դաշնակցային դատարանի դատավոր,- Ահավոր անմարդկայնության գինանոցեն ցեղասպանությունը մարդկային քանդողականության ամենեն սարսափելի դրսևորումն է։ Իրողության մեջ այնպիսի ահավոր ոճիր մըն է, որ գրեթե աներևակայելի է։ Ինծի պես երրորդ սերունդի ավստրալիացիներուն համար դժվար է նույնիսկ երևակայել, որ անիկա կրնա պատահիլ։ ... Ո՛րքան մարդ կուսումնասիրե 1915-ի դեպքերը, այնքան ականատես կըլլա քարշելի և տմարդի պատմության մը (Մ. Այնֆիլդ, «Հայկական ցեղասպանությունը կարելի չէ ուրանալ», տե՛ս «Բագին» ամսագիրը, հոկտ. նոյ. դեկ., 1995, Բեյրութ, էջ 129)։*

ԲՈԲ ՔԱՐ, *Ավստրալիո հարավային Վեյլզ նահանգի վարչապետ,- Սիդնիի մեջ ապրող հայ գաղութի զավակներեն ես պայքարի և հերոսության բազմաթիվ պատմություններ լսած եմ իրենց ծնողներու մասին, թե անոնք ինչպես կարողացան վերապրել այդ զարհուրելի դեպքերեն, երբ ծրագրված կերպով ազգովին իրենց պապենական հողերեն դուրս կքշվեին։ Աչխարհը երբեք չի մոռանա հայկական ցեղասպանությունը, որ ամբողջ ազգի մը սպանդն էր։ Դեպքը ուրանալու միջոց գոյություն չունի։ Արդեն Եվրոխորհրդարանը 1987-ին քվեարկեց հայկական ցեղասպանության վավերականությունը ընդունող բանաձև մը (Ասպարեզ, մայիս 2, 1996)։*

ՀԵՆՐԻ ԼԱ ՖՈՆՏԵՆ, *բելգիացի ծերակուտական, 1920-ական թվականներին Ազգերի Լիգայի Բելգիայի ներկայացուցիչ,- Ինպե՞ս մենք խոր կարեկցանք չզգանք այս աննկարագրելի ողբերգության համար և ամեն հնարավորը չձեռնարկենք, որպեսզի վերջ տրվի բոլոր ողբերգություններից ամենասարսափելին։ Մարդկության պատիվը բախտախաղի է դրված։ Ժամը լուրջ է։ Կառավարությունները պետք է ձեռնարկեն բոլոր հնարավորությունները, որպեսզի հաջորդ սերունդների կողմից չամբաստանվեն։ Հայաստանի փրկությունը պետք է լինի միջազգային օրինականության, պատվի ու խղճի խնդիրը (տե՛ս Անտոնի կրաֆտ-Բոննարդ, Մի ողբերգության հինգ փուլերը, Ցյուրիխ, 1944, թարգմանությունը Ստեփան Ստեփանյանի, Բնօրրան, թիվ 2(7), 1997, էջ 13)։*

ԻՍՐԱՅԵԼ ԶԱՐՆԻ, *Երուսաղեմի ողջակիզման և ցեղասպանության ինստիտուտի տնօրեն,- Անհրաժեշտ է կազմակերպել մի ֆորում, որպեսզի այդ ուրացողների առաջ բացահայտվի և ապացուցվի, թե ինչպես են նրանք վարկաբեկում, նվաստացնում ու վիրավորում իրենց զոհերին։ Պետք է մատնանշվի նրանց մոլեռանդությունը, որ նրանք ոտնահարում են մարդկային իրավունքների երաշխիքը։ Ցույց տրվի, թե ինչպես են նրանք փորձում առարկել, վերափոխել, կեղծել և աղավաղել պատմական իրադարձությունների տարեգրությունը* (Armenian Life, May 25, 1994, p. 25, Los Angeles)։

ՆԱԴԵԺԴԱ ՊԱՆՉԻԿ, *Հրեա հրապարակախոս, բանասեր,- Երազում եմ, որ վերջապես իրականանա 20-րդ դարում հայ ժողովրդի հանդեպ կատարված բոլոր հանցագործությունների պաշտոնական, լիակատար և անբեկանելի ընդունումը հանրագումարով՝ որպես միջազգային հանցագործություն, կրկնակի ցեղասպանություն։ Երազում եմ, որ հնարավորին չափ շատ հրեա քաղաքագետներ ծանոթանան այդ հանցագործությունների վավերական պատմությանը և պաշտպանեն հայերի արդարության ձգտումը այդ ողբերգական խնդրում* (Նադեժդա Պանչիկ, «Ցեղասպանության Վիհով Դեպի Բիբլիական Ակունքներ», ռուսերենից թարգմանությունը Ստեփան Թոփչյանի, Ասպարեզ, ապրիլ 24, 1998)։

ՅՈՍԻ ԲԵՑԼԻՆ, *Իսրայելի արտաքին գործերի նախարար,- ... Ըլլա Եվրոխորհրդարանի մեջ, ըլլա Եվրոպայի մեջ կամ ուրիշ տեղեր, երբեմն մինչև Միացյալ Նահանգների մեջ թուրքերը կփորձեն դեմ կենալ այս կամ այն հիշեցումնե-*

րուն, ըլլա թանգարաններու կամ այլ միջավայրերու մեջ հայերու հանդեպ գործադրված ջարդին, որ տեղի ունեցավ թուրքերու ձեռքով գրեթե ութսուն տարի առաջ։ ... Ադիկա իսկական ջարդ էր։ Ցեղասպանություն էր։ Եվ մենք պիտի քաջալերենք հիշատակությունը, որովհետև այս դեպքը այնպիսի պարագա մըն է, որ ամբողջ աշխարհը պետք է հիշե (հատվածը Քաղված է Իսրայելի խորհրդարանի 209-րդ նիստից. բանավոր հարցաքննություն թիվ 305։ Ասպարեզ, մայիս 10, 1994)։

ԲԱՐՈՒԽ ԲԵՆ ՆԵՐԻԱ, Իսրայելի դեսպան Վրաստանում և Հայաստանում,- մենք ամենուրեք հաստատակամորեն կպայքարենք այդ ժամանակներում տեղի ունեցած դեպքերն անտեսելու բոլոր փորձերի դեմ։ Սիոնիզմ այստեղ գործ չունի։ Մեզ համար ընդունելի չեն այն պարզունակ բացատրությունները, թե կատարվածը պատերազմական իրավիճակով պայմանավորված դեպքեր էին։ Ո՛չ, դա պատերազմ չէր, դա անկասկած կոտորած էր։ Դա ցեղասպանություն էր և մենք աջակցելու ենք, որ այդ դեպքերը հիշատակվեն, քանզի նրանք այնպիսիք են, որ աշխարհը պետք է հիշի (հատվածը բերված է 1994, մայիս 6 թվակիր, ՀՀ արտաքին գործերի նախարար Վահան Փափազյանին ուղղված նամակից)։

ՑԱՒՐ ՕՐՈՆ– հրեա պատմաբան,- Բարոյական, դաստիարակչական, քաղաքական և այժմեական առաջնահերթ պատասխանատվություն մըն է ճանչնալ հայերու ցեղասպանությունը։ Մենք պատմությամբ կզբաղինք ոչ թե միայն անցյալը պարզելու, այլ նաև ներկայի ու ապագայի վրա անոր ազդեցությունը տեսնելու համար։ Ցեղասպանությունները պիտի շարունակեն գործադրվիլ և ոճրագործները գիտեն, թե կարելի է սպանել, ժառանգել այդ անցյալը և ուրանալ։ Իսրայելի ճանաչումը հատուկ նշանակություն ունի, հատկապես այն պատճառով, որ այն ցեղասպանության մը վերապրողների երկիրն է (Նոր Կյանք, հուլիս 23, 1998, էջ

42)։

ԱՆՏՈՆԻ ԿՐԱՖՏ-ԲՈՆՆԱՐԴ, Շվեցարացի հոգևորական, միսիոներ, «Հայ Բարեկամների Շվեցարական Միության» կոմիտեի գլխավոր քարտուղար, Մերձավոր Արևելքի Միջազգային Ընկերակցության փոխնախագահ,- Քաղաքական իրավիճակը դեռևս վաղ անցյալից հայ ազգի ճակատագրի համար վճռորոշ դեր է խաղացել։ Ինչպես և սպասվում էր, Օսմանյան կայսրությունը կրկին ձեռնամուխ եղավ քրիստոնյա ժողովրդին բնաջնջելու Աբդուլ Համիդի ծրագրի լիովին իրագործմանը։ Սարսափելի ջարդը սկսվեց 1915 թվականին (Մի ողբերգության հինգ փուլերը, Բնօրրան, թիվ 2(7), էջ 13, 1997)։

ՍՊԻՐՈՎ Դ. Ա., Բուլղար պատմաբան, հրապարակախոս,- Հավաստի աղբյուրները վկայում են, որ Փոքր Ասիայի բոլոր հորիզոնականներում և ծովափնյա քաղաքներում, որտեղ հայեր կան ենթարկվում են կոտորածի, բռնաբարության և կողոպուտի։ Դեռևս Իզմիրում, Ռոդոստոյում և այլ քաղաքներում հայերի վրա գործադրված դաժանությունները չի կարելի համեմատել Կ. Պոլսում եղած դեպքերի հետ։ Դրժբախտ հայ ժողովուրդ. 19-րդ դարի հրաշքում, ուր մենք ապրում ենք, ամոթ և անարգանք այս դարաշրջանին։ Ամոթ անհոգի Եվրոպային, այդ խայտառակ և ծաղրելի քաղաքականության, որին պետք է ջնջել աշխարհի երեսից։ Ինչո՞ւ համար է այդ դաժան ճակատագիրը, ո՞ր ծանր հանցանքների համար է, որ ենթարկվում է ժողովուրդը այդ ծանր կեղեքումներին (Դ. Ա. Սպիրով, Հայերի սոսկալի ջարդը. Հայաստան և Սուլթան Աբդուլ Համիդ, Սոֆիա, 1897, էջ 57, Բուլղարերեն)։

ԴԵԼՋՈ ԲԱԼԱԲԱՆՈՎ, Բուլղար դիվանագետ,- Անառարկելի փաստերը վկայում են, որ հայ ժողովրդի հանդեպ գործադրվող կոտորածների ու զանգվածային ցեղասպանության տարիներին երիտթուրքերի կառավարությունը ձգտում էր ոչնչացնել հայկական քաղաքակրթության ամեն մի նյութե-

ղեն ապացույց։ Հենց այդ քաղաքականության տրամաբանական հետևանքն էր հայ ժողովրդի ցեղասպանությունն ու մշակույթի, արվեստի շատ արժեքներ ոչնչացնելը (Սովետական Հայաստան, 1987, No. 4, էջ 25)։

ՕՌԼԻՆ ԶԱԳՈՐՈՎ, բուլղար պատմաբան, հրապարակախոս,- 1870 թվականին Թուրքերի ընդհանուր թիվը հայերի ընդհանուր թվին գերազանցում էր ընդամենը մեկ միլիոնով։ Այժմ այդ հարաբերակցությունը 6.5 անգամով ավելին է։ Ուրեմն, բթամիտ կամ անազնիվ պետք է լինել չհասկանալու համար, որ այդ հրեշավոր տարբերությունը առաջացել է ջարդերի հետևանքով (Օռլին Զագորով, Ճշմարտությունը. Սոֆիա-Պրես, 1987, բուլղարերեն)։

ՎԱՍԻԼ ԿՈԼԱՐՈՎ, բուլղարական և միջազգային բանվորական շարժման գործիչ, տնտեսագետ,- Հայ ժողովուրդը իզուր բազմիցս դիմեց այսպես կոչված քաղաքակիրթ պետությունների մարդկային զգացումներին։ Նրա այդ աղերսանքին հետևեց նոր արյունահեղություններ։ Վերջին անգամ եվրոպական պատերազմի ընթացքում հայ ժողովուրդը ձգտեց Անտանտի (Համաձայնողականների) պետություններին ցուցաբերած օժանդակության դիմաց ձեռք բերել իր ազատագրությունն ու ապրելու իրավունքը, սակայն նա խափվեց իր սպասումների մեջ և կրկին զոհ գնաց մոլեռանդության (Վասիլ Կոլարով, Համաշխարհային կոմունիստական Ինտերնացիոնալիզմի 3-րդ վեհաժողովը, Պետրոկրատ, 1922, էջ 469, ռուսերեն)։

ՑՎԵՏԱՆԱ ՊԱՍԿԱԼԵՎԱ, բուլղարուհի լրագրող, հրապարակագիր,- Բուլղարիան էլ Թուրքիայի հետ կապված շատ խնդիրներ ունի, մանավանդ Բուլղարիայի Թուրք բնակչության հետ։ Կան դիվանագիտական պահեր, դժվարություններ։ Եթե հայերի ցեղասպանության ընդունումը ինձանից կախված լիներ, ես կընդունեի... Իմ ուշադրության կենտրոնում ղարաբաղյան պատերազմն է և դա մենք դիտում ենք որպես

ցեղասպանություն Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ (Ասպարեզ, օգոստոս 28, 1998, էջ 2)։

ՇԱՆԴՈՐ ՆՈՎՈԲԱ, հունգարացի լրագրող,- Տեղահանվածներն ամբողջ ճանապարհը ստիպված էին անցնել ոտքով, ոտաբոբիկ, քարքարոտ ճանապարհներով, կիզիչ արևի տակ, առանց տարրական սննդի։ Հասկանալի է, որ մեծ մասը չհասավ վերջնակետին։ Իսկ նրանք, ովքեր հասան, ցնցոտիների մեջ էին, գրեթե մերկ, մինչև ոսկորները հյուծված (Interpress Magazin, "Budapest, 1985, No. 8. Հայերեն թարգմանությունը տե՛ս, «Սովետական Հայաստան» ամսագիր, 1986, թիվ 7, էջ 21)։

ՕԼԿԱ ՌՈՎԵՆԿԱ, չեխ գրականագետ, թարգմանիչ,- Եղեռնի կազմակերպիչները կարծում էին, որ հայ ժողովրդին ոչնչացնելուց հետո աշխարհը կմոռանա այդ դեպքերի մասին։ Սակայն հայերը հակառակ ահավոր տառապանքների, չհանձնվեցին, ժողովուրդը պահպանեց իր ոգու կորովը։ Իսկ եղեռնի զոհերի հիշատակը ընդմիշտ կպահպանվի մարդկության հիշողության մեջ (Սովետական Հայաստան, 1985, թիվ 8 էջ 7)։

ԴԱՆԱ ՄԱԿԱԼՈՎԱ, չեխ շարժանկարիչ,- Հայաստանը և հայ ժողովրդին սիրում եմ վաղուց։ Սրանից չորս տարի առաջ Հ. Շտեփինայի հետ եղանք Արևմտյան Հայաստանում, ցանկանում էինք նյութեր հավաքել 20-րդ դարի առաջին ցեղասպանության մասին, սակայն մեր մտահղացումները հօդս ցնդեցին։ Թուրքական իշխանությունները մեզ ձեռբակալեցին և երեք շաբաթ բանտում պահելուց հետո արտաքսեցին Թուրքիայից (Խորհրդային Հայաստան, 1989, հունիս 20)։

ԲՈԳԴԱՆ ԳԵՄԲԱՐՍԿԻ, լեհ հրապարակախոս, արևելագետ,- Այլմանը եղել է ձեր ուշիմ աշակերտը, միայն թե ինչ որ նա անում էր 1942-44 թվականներին հրեաների նկատմամբ կրկնությունն էր ավելի մեծ աստիճանի վրա այն բանին,

որ քո հայրենակիցները գործել էին հայերի նկատմամբ դեռևս 1915 թվականին։ Իսկ դա եղել է-խնդրում եմ հիշել-մարդկության գործունեության մեջ առաջին ծրագրված, աշխատանքի կազմակերպման գիտական հիմքերի դրված, ամբողջ ժողովրդի ոչնչացում (Նայիրի, թիվ 46-50, մայիս, 1975)։

Ա. ԼԵԴՆԻՑԿԻ, լեհ հասարակական գործիչ,- Լեհ ժողովուրդը չի կարող անտարբեր անցնել մի ժողովրդի սարսափելի, ողբերգական պատմության կողքով, որը մեր մշակույթի մեջ ներդրել է իր շնորհքի և ազդեցության ծաղիկը, մի ժողովրդի, որը վերաբնակվելով մեր լեհական հողի վրա մեզ տվել է հայրենասիրությամբ և ինքնազոհությամբ համակված մարդիկ։ Եվ մենք ցանկանում ենք տեսնել այդ ժողովրդի ազատագրման մոտալուտ արշալույսը, որն իր հին մշակույթով ունի ինքնուրույն կյանքի բոլոր իրավունքները (Հայերը և պաերազմը, ամսագիր, պատկերազարդ հանդես հայ կյանքի մասին, Օդեսա թիվ 2-3,1916, էջ 38, ռուսերեն)։

ՀԵԴՎԻԳ ԲՅՈՒԼ, Եղեռնի ականատես, հայ գաղթականներին և որբերին հովանավորող էստոնացի գթության քույր,- Ծրագիրը դժոխային էր ու մարդկային բառեր անկարող են նկարագրելու այն խոշտանգումներն ու խժդժությունները, որոնք ի գործ դրվեցան։ Հայ ժողովուրդը ինքնապաշտպանության բոլոր միջոցներե մերկացնելով և անոնց բոլոր առաջնորդները արգելափակելով՝ հանձնեցին զանոնք թուրք բարբարոս խուժանին և գազանաբարո ուժերուն...։ Արյան գետեր հոսեցան և միլիոնե ավելի հայեր ապրեցան ու մեռան իբր հավատարիմ հետևորդներ Քրիստոսի (Նուրիցա վարժուհի Լևոնյան, Օր. Հեդվիգ Բյուլ, Հալեբ, 1957, էջ 35)։

ԱԼՄԱ ՑՈՀԱՆՍՈՆ, շվեդացի միսիոներուհի, ականատես,- Դեռ մինչև օրս անկարելի է ըմբռնել, թե մի ամբողջ ժողովրդի դեմ թուրքերի կողմից ձեռնարկված բնաջնջման մեծածավալ «պատերազմ»ը տեղի ունեցավ առանց բողոքի՝ բոլոր քաղաքակիրթ երկրների աչքերի առջև (Հայաստանի Աշխատավորուհի, 1989, նոյ. 3, էջ 18)։

ԲԵԱ ՀՈԼՄԿՎԻՍՏ, շվեդացի կինոռեժիսոր, կինո վավերագրող,- Շատ եվրոպացիներ գիտեին Երկրորդ Աշխարհամարտի տարիներին հրեաներին վիճակված ողբերգության մասին, բայց սակավ էին տեղյակ հայերի ցեղասպանության։ Եվ մենք մեր առջև հստակ խնդիր դրեցինք՝ ստեղծել այնպիսի ֆիլմ, որը վերականգներ ժողովուրդների մոռացված հիշողությունը։ Եվ շարժանկարի ենթավերնագիրը՝ «Մոռացված եղեռն. Երազանք վերադարձի մասին, հայեր» մեր այդ ձգտման վկայությունն է (Հայրենիքի Ձայն, 1990, հունվ., թիվ 1(1274)։

ԿԱՐԵՆ ԵՓՓԵ, դանիացի միսիոներուհի, ականատես,- Իմ կողքին մահվան ճիրաններում թպրտում էր իր պատմությամբ, մշակույթով, լեզվով հարուստ քրիստոնյա մի ժողովուրդ։ Մահվան դուռ էր հասել ոչ միայն դրսի ու ներսի իր թշնամիներից, այլև քրիստոնյա իր բարեկամների խաբեություններից (Սովետական Հայաստան, 1985, նոյեմբեր 4, էջ 13)։

ՄԱՐԻԱ ՅԱԿՈԲՍՈՆ, դանիացի բուժքույր, 1907-1915 թթ. Խարբերդում ականատես,- Ես չեմ կարող բառեր գտնել նկարագրելու համար այս ժողովրդի ցավերն ու տառապանքները, հալածանքներն ու սարսափը։ Ինչպիսի երկիր, ինչ ժողովուրդ և ինչ դժբախտություն (Լրաբեր, 13 հոկտ., 1984)։

ՖՐԻԴՅՈՖ ՆԱՆՍԵՆ, նորվեկացի ճանապարհորդ, բևեռախույզ, հասարակական գործիչ,- Թրքական գազանությունները իրենց չափերով ու նողկալի դաժանությամբ գերազանցում են պատմության հայտնի բոլոր գազանությունները և հայ գողգոթան իր նմանը չունի պատմության մեջ (Fridjof Nansen, Betrogenes Volk, Leipzig 1928, s. 313)։

ԷՄԻԼ ԴԻԼՈՆ, իրլանդացի լրագրող և գիտնական,- Այժմ ապացուցված է, որ Սասունի կոտորածը (1985) Բարձրագույն Դռան ներկայացուցիչների կողմից կատարված մի-

տումնավոր գործ էր, մի արարք, որը նախապատրաստված էր խնամքով և գործադրվեց անողոքաբար։ Զնայած, որ այդ սարսափելի ողբերգությունը սառսրացրեց ոչ միայն քուրդ ավազակներին, այլև խղճահարություն առաջացրեց Թուրք զինվորների սրտերում (Հայերի դրությունը Թուրքիայում 1895-ին մինչև մեծ տերությունների միջամտությունը, Մոսկվա, 1896, էջ 332, ռուսերեն)։

ՄԱՐԻԱ ԱՆՋԵԼՍ ԱՆԿԼԱԴԱ, կատալոնացի (Իսպանիա) ժամանակակից գրականագետ,- Նախօրոք ես տեղեկություններ ունեի Հայաստան պատահածին մասին և երբ սկսա Աուշվիցի կենտրոնացումի ճամբարի մասին տեղեկություն փնտռել, գտա, որ հայերի ցեղասպանությունը 20-րդ դարու առաջինն է։ Եվ ըստ ոմանց ասիկա հիտլերին ներշնչած է իր սեփական ցեղասպանությունը (հատվածը բերված է հեղինակի «Աուշվիցի ջութակը» գրքից։ Տե՛ս Նոր Կյանք, մարտ 19, 1998)։

ԿՈՆՐԱՏ ԿԱՑԶԵՐ, Եկեղեցիների Համաշխար-հային Խորհրդի (ԵՀԽ) ընդհանուր քարտուղար,- ... Հայաս-տանում անցկացրած մի քանի օրերին ես կարողացա այցելել խորապես տպավորիչ ազգային հուշարձանը (Միծեռնակա-բերդ) և ծաղկեպսակ դնել ԵՀԽ-ի անունից՝ ի հարգանս ցեղասպանության զոհերի հիշատակի։ Կանգնելով հավեր-ժական կրակի առջև կամ թանգարանում ականատես լինելով բացահայտ փաստերին, ոչ ոք չի կարող սրտով ու մտքով խորապես չհուզվել և չազդվել։

Այսօր ցեղասպանության ոգեկոչումը ազատ Հայաստանի մեջ մեզ մղում է նայելու ավելի անդին, քան այս երկրի ողբերգության ժառանգությունը (Նոր Հայաստան, մայիս 2,1996)։

ԷՐՎԻՆ ԲՈՑԻՆ, կարմիր Խաչի միջազգային կոմիտեի անդամ,- ... Հայաստանը շատ դժվար ապրեց 20-րդ դարը։ Դարասկզբում Եղեռնն էր, ուր նահատակվեց նրա ժողովրդի

մեծ մասը և 2.5 տարի ազատ պետություն լինելուց հետո, Հայաստանն ընկավ լճացման մեջ, որը տևեց 70 տարի։

Անկախությունը պատերազմի և տնտեսական տառա-պանքների ստվերի տակ էր գտնվում և միայն այժմ՝ 20-րդ դարի վերջում, երկիրը նորից դանդաղ ոտքի է կանգնում (Նոր Հայաստան, մայիս 2, 1996)։

ՑԱՆ ՌԱՑՆԻՍ- լատվիացի բանաստեղծ, հասարակական գործիչ,- Թրքական ամենազարհուրելի բարբարոսության ժամանակ, 1895-1896 թթ. մոտ մեկ միլիոն հայ կոտորվեց, իսկ ներկա պատերազմի տարիներին նորից մեկ միլիոն հայ ոչնչացվեց, բայց լավ ուշք դարձրեք, նրանք ոչ թե մարտում ընկած, այլ սիստեմատիկ կերպով բնաջնջված խաղաղ բնակչություն են (Ցան Ռայնիս, Ընտիր Երկեր, Երևան, 1957, էջ 633)։

ԷԴՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՑԴԻՍ, լիտվիացի բանաստեղծ, հասարակական և պետական գործիչ,- Երկիր մոլորակի համար սահմռկեցուցիչ մի դաս եղավ Առաջին համաշխար-հային պատերազմը, և հենց այդ նույն ժամանակ էլ ծայր առավ մի ողբերգություն, որպիսին մինչ այդ չէր տեսել աշխարհը՝ անզեն մարդկանց, կանանց, երեխաների ու ծերու-նիների սառնարյուն, հետևողական, բարբարոս դաժանու-թյամբ անբերևակայելի մի ջարդ (Սովետական Հայաստան, 1985, թիվ 4 հունիս 15)։

Գ. Կ. ՕՐՋՈՆԻԿԻՁԵ, վրացի քաղաքական գործիչ,- Նոր պատմության մեջ քիչ կան այնպիսի ժողովուրդներ, որոնք տված լինեն այնպիսի մեծ զոհեր, ինչպես հայերը, և քիչ կան այնպիսի երկրներ, որտեղ թափված լինի այնքան արյուն, որքան Հայաստանում (Գ. Կ. Օրջոնիկիձե, Հոդվածներ և ճառեր, հատոր 1, Մոսկվա, 1956, էջ 45, ռուսերեն)։

ՄՈՀԱՄՄԵՏ ԱԼԻ ՋԱՄԱԼԶԱԴԵ, պարսիկ գրող, նովե-լիստ,- Ես ականատես եղա մի շարք դաժանաբարո տանջանք-ների ու խոշտանգումների, որոնք գործադրում էին Թուրք

զինվորները հայերի գլխին Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և որի հետևանքը, ինչպես գիտենք, եղավ միլիոնավոր հայերի ջարդը...: Հարյուրավոր հայ տղամարդկանց, կանանց ու երեխաների, որոնք արդեն անզոր էին քայլելու, մտրակի և զենքի ուժով հետիոտն ու անզոր, անխնա քշում էին առաջ: Տղամարդկանց մեջ երիտասարդներ չկային: Նրանց ուղարկել էին ռազմաճակատ կամ կասկածելով, որ կարող են միանալ ռուսական բանակին, կոտորել էին: Ես զարհուրելի օրեր անցկացրեցի, օրեր, որոնք ահռելի մղձավանջի պես ծանրացել են հոգուս վրա: Մղձավանջ, որ երբեմն տարբեր առիթներով ճնշում է ողջ էությունս, անհանգստացնում ու տանջում է ինձ (ՊԲՀ, 1987, նոյ. 2(117), էջ 232-233):

ՔԵՄԱԼ ՄԱԶՀԱՐ ԱՀՄԵԴ, քուրդ պատմաբան, հասարակական գործիչ,- Բազմաթիվ պատմական փաստեր ապացուցում են, որ կոտորածների չարագործ կազմակերպիչը և պատասխանատուն Բարձրագույն Դուռն էր: Հայերի ջարդը մի շարք շրջաններում իրագործվում էր թուրք ժանդարմների և ոստիկանության ձեռքով: Ուրֆայի և Արաբկիրի հայերի բնաջնջման գործը հանձնարարված էր 30 հազար ժանդարմների և ոստիկանների: Հայկական արյունահեղ կոտորածները հիմնականում ոչ միայն քրդերի կույր մոլեռանդության և հետամնացության արդյունքն էին, այլ Օսմանյան կայսրության և տերությունների կողմից նրբորեն մշակված մի ծրագրի հետևանք... (Քեմալ Մազհար Ահմեդ, Քուրդիստանը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին. Բաղդադ, 1977, ՀԽՍՀ ԳԱ, Գիտա-ինֆորմացիոն բյուլետեն, թիվ 8, Երևան, 1983, էջ 23):

ԹՈՒՐՔ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐՆ ՈՒ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԸ 1894-1896 ԵՎ 1915-1916 ԹԹ. ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1995 թ. հունիսի 27-ին Ստամբուլի էսենյուրթ շրջանի քաղաքագլուխ Գյուրբյուզ Զափանը առաջին անգամ լինելով ծաղկեպսակ դրեց Միծեռնակաբերդի Մեծ եղեռնի հուշակոթողին:

ՕՍՄԱՆ ՆՈՒՐԻ, զինվորական, պատմաբան,- Անատոլիայից (իմա՝ Արևմտյան Հայաստան, խոսքը 1894-96 թթ. կոտորածների մասին է: Ա. Փ.) հասած տեղեկությունները չափազանց աղետալի էին: Ջարդը շարունակվում էր սոսկալի չափերով: Քաղաքային և զինվորական իշխանությունների տված հրամաններով քրդերը հարձակվել էին գյուղերի վրա, բայց ետ էին մղվել, որից հետո զինվորական ուժեր ուղարկելու անհրաժեշտություն էր առաջացել: Այդ ժամանակ զինվորները այրել էին գյուղերը և կոտորել բազմաթիվ մարդկանց... Այս ջարդը բոլոր պարագաներում մի ահարկու եղեռն էր մարդկության դեմ: Իսկ այս եղեռնի պատճառ հանդիսացողը անկասկած, նույն Աբդուլ Համիդ Երկրորդն էր, որը ղեկավարում էր Ցբլտրզի այդ հրոսակախումբը և կոտորում էր ոչ միայն հայերին, այլև դեպի կործանում էր տանում ամբողջ հայրենիքը (Osman Nuri, Abdul Hamid Sani ve devri sultanati. Istanbul, 1327, էջ 828, 858, 866, արաբատառ թրքերեն):

ՄԵՀՄԵԴ ՔՑԱՄԻԼ ՓԱՇԱ, 1884-1812 թթ. չորս անգամ վարել է մեծ վեզիրի պաշտոնը,- Լոնդոնում տեղի ունեցած մեծ ժողովներում հայերը արդարացվել են իրենց ապստամբության համար, իսկ Օսմանյան կայսրության պաշտոնյաները ենթարկվել են խիստ պարսավանքի: Հայերի ապստամբությունը գնահատվել է վատ կառավարման և հատկապես կրոնական խտրականության հետևանքով կառավարության

կողմից հայերի հանդեպ ցուցադրված դաժանության արդյունք (Hatıratı Sadri esbak Kamil paşa. Istanbul , 1329, s. 181, արաբատառ թրքերեն)։

ՍԱՅԻԴ ՓԱՇԱ, ՄԵՀՄԵԴ ՇԱՓՈՒՐ ՋԵԼԵԲԻ, մեծ վեզիր,- Այս տարի (1896 թ.) «Համիդիե» հեծելագնդերի զորախաղերի ծախսերը և նրանց ռոճիկը ապահովելու համար ռազմական նախարարությունը 35 հազար լիրա տրամադրելու զեկույց էր ներկայացրել։ Ես չեմ հասկանում, թե այս տարի ինչ դրդապատճառների հիման վրա է ցանկություն առաջացել անցկացնել «Համիդիե» հեծելագնդերի զորախաղեր։ Հայերի աղետից հետո Անատոլիայի դրությունը բավականին նրբացել է և եթե քրդերը իրենց այս տեղաշարժերով բնակչության ունեցվածքին և անասուններին նոր բռնություններ գործադրեն, որը ավելի հավանական է, դա առաջ կբերի մի նոր աղետ (Said paşanın hatıratı. Istanbul, 1328, c. 2, s. 372, արաբատառ թրքերեն)։

ԴԱՄԱԴ ՖԵՐԻՏ ՓԱՇԱ, 1919 թ. մեծ վեզիր,- ... Հայերի կոտորածները ծնունդ չեն եղել ցեղային բախումների և կամ կրոնական մոլեռանդության։ Ես իմ առջև նպատակ եմ դնում փաստերը ձեռքիս ցույց տալ ամբողջ աշխարհին, թե ո՞ւմ վրա է ընկնում իսկական պատասխանատվությունը այդ սարսափելի հանցագործությունների համար (Լլոյդ Ջորջ, Ճշմարտությունը խաղաղության դաշնագրերի մասին, հատոր 2, Մոսկվա, 1957, էջ 200, ռուսերեն)։

ՋԵԼԱԼ ՆՈՒՐԻ, երիտթուրքական գործիչ, իրավաբան,- Բոլոր դեպքերում հայերի հարցը կարելի է շտապ լուծել՝ բոլորին կոտորելով...։ Թուրքերի մի շարք վատ սովորությունները բնատուր են և գալիս են անցյալի վնասակար բնազդից։ Մենք յուրայինների հանդեպ ևս գթություն ցուցաբերելու հատկությունը չունենք։ Թուրքերը ոչ միայն հայերի կամ ուրիշների, այլ միմյանց նկատմամբ էլ դաժանություն են ցուցաբերում (Celal Nuri, Tarihi Istikbal,

Istanbul,1331, s, 184. Osmanlı Imparatorluğunun tarihi tedennisi, Istanbul. 1913,s.99, արաբատառ թրքերեն)։

ԱՀՄԵԴ ՌԵՖԻԿ, պատմաբան, ականատես,- ... Այս ողբերգությունն իմանալով հնարավոր չէր չվշտանալ։ Կասկած չկար, որ մի օր սրա պատասխանը պահանջվելու էր։ Այս բոլորը մարդկության դեմ ուղղված հանցագործություններ էին։ Երբևէ ոչ մի կառավարություն այսքան դաժան չի գործել։ Արյունով ուղեկցվող հայերի տեղահանումները երկիրը զրկեցին կարևոր մի տարրից (Ահմեդ Ռեֆիկ, Երկու կոմիտե՝ երկու ոճիր, Երևան, 1997, էջ 52. Թարգմանությունը Սամվել Մուրադյանի)։

ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱ ՄԵՀՄԵԴ, ներքին գործերի նախարար,- Ըստ էության զինվորական նախազգուշական միջոցառում հանդիսացող տեղահանումը անխիղճ, աննկարագիր մարդկանց պատճառով ստացել է ողբերգական կերպարանք։ Ես նպատակ չունեմ թաքցնելու այդ գործերի տգեղությունը...։ Ես այն համոզմանն եմ, որ այնքան ժամանակ, որ մի ազգ իր սեփական շահերի համար անում է ամեն ինչ և հաջողվում է, աշխարհը ընդունում է այդ։ Ես պատրաստ եմ մեռնելու այն բանի համար, ինչ կատարեցի և ես գիտեմ, որ կմեռնեմ դրա համար (Talaat paşanın hatıraları. Istanbul, 1946, p. 72-73։ Memoires of Halide Edip, New York, London, p. 387.)։

ՋԵՄԱԼ ՓԱՇԱ, ծովային նախարար, թրքական 4-րդ բանակի հրամանատար,- Երիտթուրքերը դատապարտելով 1894-96 թթ. հայկական դեպքերը, այն համարեցին Աբդուլ Համիդի քաղաքական սխալը, քանի որ նա դաժան միջոցներով ձգտում էր երկարաձգել իր բռնապետությունը...։ Հայկական կոտորածների ընթացքում ես և այլ հեղափոխականներ գտնվելով Թուրքիայում նույնպես դատապարտեցինք Աբդուլ Համիդին, քանի որ նրա այդ քաղաքականությունը վնասաբեր էր ոչ միայն թուրքերի, այլև ամբողջ օսմանների համար (Behcet Cemal, Cemal paşanin hatıraları, Ankara, 1959, p. 340)։

ՄԵՎԼԱՆ ԶԱԴԵ ՌԻՖԱԹ, հասարակական գործիչ, լրագրող, պատմաբան,- «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը որոշում կայացրեց (1915 թ.) ոչ մի մարդ կենդանի չթողնելու պայմանով սպանել և ոչնչացնել հայերին։ Այս հրամանը իրականացնելու համար նախագահությունը ստեղծեց Բեհաէդդին Շաքիր, Դոկտ. Նազըմ և հանրակրթական նախարար Շյուքրյու բեյերից կազմված մի հանձնաժողով՝ տալով «Երեքի Գործադիր կոմիտե» անվանումը (Mevlan zade Rifat. Türkiye inkilabının iç yüzü. I c., Halep, 1929, s. 108. *արաբատառ թրքերեն*)։

ՆԵՄՐՈՒՏ ՄՈՒԹԱՖԱ ՔԵՄԱԼ ՓԱՇԱ,- Մեր քաղաքացիները անհավատալի ոճիրներ գործեցին հայերուն հանդեպ և դիմեցին բռնատիրական տարբեր միջոցներու, որոնք կարելի չէ երևակայել. անոնք կազմակերպեցին ջարդերն ու տեղահանությունները, նորածինները այրեցին՝ զանոնք քարյուղով օծելե ետք, կիներն ու աղջիկները բռնաբարեցին կալանավորված ծնողներուն դիմաց, մայրերեն ու հայրերեն զավակները խլեցին, հայերու շարժուն և անշարժ ինչքերը գրավեցին և թշվառ ու անօգնական վիճակի մեջ զանոնք դեպի Միջագետք աքսորեցին, իսկ աքսորի ճանապարհին՝ անարգեցին զանոնք և վայրագությամբ վարվեցան անոնց հետ...։ Մեկ խոսքով հայերը ենթարկեցին այնպիսի՛ պայմաններու, որոնց ո՛չ մեկ ժողովուրդ ծանոթ էր իր պատմության ընթացքին (Los Angeles Herald, 20 January, 1919)։

ՎԵՀԻԲ ՓԱՇԱ, Թուրքական երրորդ բանակի հրամանատար (1915 թ.),- *Հայերի նկատմամբ կատարված վայրագություններն ու կոտորածները, նրանց ունեցվածքի թալանն ու կողոպուտը որոշված էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից։ Եվ այդ կոտորածների, ինչպես նաև բոլոր գազանությունների իրագործման համար, Բեհաէդդին Շաքիր բեյը երրորդ բանակի շրջանում պատրաստել էր հատուկ մարդասպաններ*

և անձամբ ղեկավարել նրանց (Takvim-i Vekai, 27 Nisan 1335 (1919). *Թուրքական պաշտոնական թերթի հավելված, արաբատառ թուրքերեն*)։

ՄՈՒՍԹԱՖԱ ՆԵԴԻՄ, Աբդուլ Համիդի քարտուղարներից,- Իմ տկար գրիչը անզոր է նկարագրել Տեր Զորի դեպքերն ու ոճիրները, նրանց նմանները չկան պատմության գրքերում և չեն էլ լինի։ «Ալլահը ձեզ ներեց» ասելով Եփրատի ափն անցկացրին քառասուն հազար դժբախտների և այնտեղ խպառ կոտորեցին։ Փոսը լցրին տասը հազարից ավելի երեխաների, նավթ թափեցին նրանց վրա և այրեցին։ Աներևակայելի ոճրագործությունների մի շղթա (*Մուսթաֆա Նեդիմ, «Հայ Եղեռնը. իմ վկայություններս, թուրքերենից թարգմանեց Արշակ Ս. Շալջյան, Կահիրե*, 1925, *Սոֆիա* 1936)։

ՖԱԼԻՀ ՌԸՖԿԸ ԱԹԱՅ, երիտթուրքական գործիչ,- ... Որոշ ժամանակ անց լսեցինք, որ Զոհրաբն ու Վարդգեսը ճանապարհին սպանվել են Զերքեզ Ահմեդ և Նազըմ չեթեների կողմից։ Ջեմալ փաշան հրամայեց, որ երկուսն էլ անմիջապես ձերբակալվեն։ Սակայն Զերքեզ Ահմեդը և Նազըմը, տեղեկանալով այդ մասին, առաջին իսկ գնացքով փախել էին Ստամբուլ, քանի որ Ստամբուլից հովանավորում էին նրանց (Falih Rıfkı Atay, Zeytindağı, Istanbul, 1957, p. 78-80)։

ՆԱՅԻՄ ԲԵՅ, երիտթուրքական գործիչ,- Հայոց եղեռնական տարագրության ու սպանության խնդիրը, որ թուրք անունը մարդկության անեծքին արժանի կդարձնե, անանկ կկարծեմ, թե համաշխարհային պատմության մինչև այսօր արձանագրած զարհուրելի դեպքերեն ոչ մեկին կնմանի։ Թուրքիո ընդարձակ հողամասին որ անկյունն ալ որոնվի, որ ամենամութ խորշն ալ խուզարկվի, ամենաանգութ կերպով խողխողված հազարավոր հայերի դիակներ և կմախքներ պիտի գտնվին (*Արամ Անտոնյան, Մեծ Ոճիրը, Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Բոստոն*, 1921, *էջ* 19-20)։

ՋԵԼԱԼ ԲԵՅ, *Կոնիայի և այնուհետև Հալեբի նահանգապետ (Հայերին տեղահանելու հրահանգը առնելուց հետո, երբ հրաժարվել էր կատարել այն, հեռացվել էր պաշտոնից),- Ես այս նահանգի նահանգապետն եմ և չեմ կարող նրա դահիճը դառնալ (Ռուբեն Սահակյան, ցեղասպանության պատմությունից, Երևան*, 1990, *էջ* 20):

ՇԵՐԻՖ ՓԱՇԱ, *«Համաձայնություն և ազատություն» կուսակցության ղեկավարներից,- Երբ որ մի ժողովրդի, որը կարող էր Թուրքական կայսրության վերածննդի երաշխիքը հանդիսանալ, ոչ միայն կեղեքում են, այլև ոչնչացնում, նույնիսկ անզգա մարդու սիրտը կտոր-կտոր է լինում: Ես ցանկանում եմ արտահայտել իմ զայրույթը դահիճների դեմ և իմ կարեկցանքը՝ մեռնող ժողովրդին (Ռ. Սահակյան, Ցեղասպանության պատմությունից, էջ* 120-136):

ԻՍՄԱՅԻԼ ՀԱՔՔԸ, *ընդդիմադիր կուսակցության ղեկավարներից,- Ամեն մի հալածանք, անկախ այն բանից, թե բնակչության որ խավի դեմ է այն ուղղված, աններելի հանցագործություն է: Անտարբեր անցնել նրա կողքով, նշանակում է հանցագործության մեղսակիցը դառնալ: Հեռավոր ծայրամասերում սպանում են հայերին: Ամբողջ սրտով ես կարեկցում եմ մեր աղետյալ հայրենակիցներին (Ռ. Սահակյան, Ցեղասպանության պատմությունից, էջ* 121):

ՄՈՒՍԹԱՖԱ ԱՐԻՖ, 1918 *Թ. Ներքին գործերի նախարար,- Ցավալի է, որ մեր այն ժամանակվա ղեկավարները ներշնչված ավազակությունից, տարագրությունը կիրարկեցին այնպիսի ձևով, որ նույնիսկ ամենից հանդուգն և արյունարբու ավազակները պետք չէ կարողանային այդպես ընել... Կառավարությունը, որ հրամայեց հայերին դեպի Տեր Զոր աքսորել, չէր էլ մտածել և՛ նրանց արաբական ցեղերի մեջ տեղավորելու և՛ սնունդ հայթայթելու մասին* (La Renaissance. No. 6, (12, 14), 1918):

ՄՈՒՍԹԱՖԱ ՆԱՋԸՄ ՓԱՇԱ, 1919 *Թ. կազմված ռազմական ատյանի հանձնախմբի նախագահ,- Իրականությունն այն է, որ տեղահանության քողի տակ կոտորած են սարքել* (Takvimi Vekayi, 28 Haziran , 1335 (1919), No. 3596, *արաբատառ Թուրքերեն*):

ՄՈՒՍԹԱՖԱ ՆԱՋՄԻ ԲԵՅ, 1919 *Թ. ռազմական ատյանի դատախազ,- Սահմանադրության հռչակումից հետո «Միություն և առաջադիմություն» (Իթթիհատ վե Թերաքքի) կուսակցության Թելադրանքով կատարված սպանությունները, ավերածությունները, վայրագությունները, չարաշահումները ծանր հետևանքներ Թողեցին ժողովրդի վրա: Օսմանյան պետության համար մեծ աղետ եղան նաև համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած արյունահեղություններ՝ ու կոտորածները* (Takvimi Vekayi, 27 Nisan, 1335 (1919), No. 3540, *արաբատառ Թրքերեն*):

ԱԲԴՈՒԼ ՄԵՋԻԴ, *Թագաժառանգ*, 1918-1924 *ԹԹ. եղել է խալիֆ,- Կոտորածները ամենաանջնջելի արատներն են, որոնք նսեմացրին մեր ազգն ու ժողովուրդը: Կոտորածը Թալեաթի և Էնվերի գործն էր* (La Renaissance, 18 Dec. . 1918):

ԱԼԻ ՔԵՄԱԼ, *Սապահ Թերթի խմբագիր,- Աչխարհ գիտե և սա է ճշմարտությունը, որ հայերի կոտորածները կազմակերպվեցին կենտրոնական կոմիտեի հրամաններով: Այս հրամանները հաղորդվեցին առանձին պատվիրակների միջոցով և գործադրվեցին ավազակների ձեռքով իր իսկ կենտկոմի հսկողությամբ* (La Renaisssance, 15 Dec. 1918, Num. 7):

ՄՈՒՍԹԱՖԱ ՔԵՄԱԼ ԱԹԱԹՅՈՒՐՔ, *Հանրապետական Թուրքիայի առաջին նախագահ,- Նախկին երիտԹուրքական կուսակցության այդ մնացորդները, կուսակցություն, որը պետք է պատասխան տար մեր միլիոնավոր քրիստոնյա հպատակների կյանքի համար, որոնք անգԹորեն քշվեցին զանգվածաբար իրենց բնակավայրերից և ոչնչացվեցին...* (Los Angeles Examiner, 1926, August 1):

ԱԼԻ ՖՈՒԱԴ ԷՐԴԵՆ, *զորավար, ականատես,- Հարյուր*

հազարավոր մարդկանց հազարավոր քիլոմետրերով հեռավորությունների վրա, առանց նախապատրաստման և կազմակերպման տարագրելը նմանվեց հնագույն դարերում տեղի ունեցած ցեղերի գաղթին։ Ճանապարհները լցվեցին վարակիչ հիվանդություններով։ Գաղթականների թշվառ վիճակը շատ նպաստավոր էր բծավոր և վորովայնային դիֆի տարածման համար (Ali Fuad Erden. Birinci dünya harbinde Suriya hatıraları, 1 cild, Istanbul, 1954, p. 221)։

ՆԱԶԻՄ ՀԻՔՄԵԹ, գրող, հասարակական գործիչ,- Թուրքերը մեծագույն սխալ կատարեցին բնաջնջելով ազգաբնակչությանը, Թուրքիայի ամենաշինարար ժողովրդին։ Դրանով թուրք ջարդարարները թուլացրին ամենից առաջ իրենց երկիրը (Նայիրի Զարյան, Երևան, 1965, էջ 379)։

ՀԱՄԻԴ ՋԵՅՆԱԼԱԲԴԻՆ ՕՂԼԻ ԱԼԻԵՎ, պատմաբան, ազգությամբ ադրբեջանցի,- «Տեղահանության» օրենքը նշանակում էր՝ հայերին հարազատ վայրերից վտարումն ու նրանց զանգվածային կոտորածը, որին զոհ գնացին 1,5 միլիոն հայեր։ «Տեղահանությունը» կատարվեց զինվորական իշխանությունների անմիջական հսկողությամբ։ Այն հապճեպ գործադրվելու հետևանքով հայ բնակչության ունեցվածքը պետական մարմինների, ինչպես նաև գերմանական սպաների ձեռքն անցավ չնչին գներով, շատ դեպքերում էլ պարզապես ենթարկվեցին կողոպուտի։ Տղամարդիկ տարագրվեցին կանանցից ու երեխաներից անջատ, այդ իսկ պատճառով հազարավոր ընտանիքներ նույնիսկ չկարողացան իմանալ իրենց հարազատների ճակատագրի մասին։ Այդ դժբախտները սննդից և բժշկական օգնությունից զուրկ լինելով, լեռնային ճանապարհներով խմբերով քշվեցին Սիրիայի և Միջագետքի «հատուկ ճամբարները»։ Մեծ մասը զոհվեց ճանապարհներին սովից, ծառավից, հիվանդություններից, ինչպես նաև ավազակային հարձակումներից։ Նրանք, ովքեր հասնում էին ճամբարները, մահանում էին վարակիչ հիվանդություններից

(Հ. Զ. Ալիև, Թուրքիան երիտթուրքերի կառավարման ժամանակաշրջանում 1908-1918 թթ., Մոսկվա, 1972, էջ 277, ռուսերեն)։

ՄՈՒՀԱՄՄԵԴ ՎԱԼԻԷԴԴԻՆ ՅԵԿԵՆ, ծագումով թուրք, բանաստեղծ և հրապարակագիր,- Հայերը տառապեցին խլամներու և բռնակալ կառավարության զուլումներեն, մանավանդ Անատոլուի շրջանին մեջ։ Անոնք ա՛նքան տառապեցան, որ մարդկային սիրտը չի կրնար համբերել նման տառապանքներու և կրեցին այնպիսի՛ հալածանքներ, որոնց կարելի չէ դիմանալ։ Բայց Արևելքի զավակներ են և վեհ է հոգին Արևելքի զավակներուն (Մ. Վալիէդդին Յեկեն, «Ազատության նահատակ մեր հայ եղբայրներուն ջարդերը», տե՛ս Բագին ամսագիր, հոկտ.-դեկտ., 1995, Բեյրութ, էջ 22)։

ՀԱՄՏԱԼԼԱՀ ՍՈՒՊՀԻ ԲԵՅ, գրականագետ և հասարակական գործիչ,- Ես այն մեկն եմ թուրք հայրենակիցներից, որը հայերի կրած դժբախտությունների համար վերին աստիճանի ազդվել և նրանց տարած տառապանքների համար խորապես ցավակցել է (Pars Tuğlacı, Ermeni Edebiyatından Seçkiler, Istanbul, 1992, s. 89)։

ԹԱՆԵՐ ԱՔԶԱՄ, պատմաբան,- Պրպտումների ընթացքում ես դեմ առա երևույթի ամենաահավոր դրսևորման՝ հայերի զանգվածային բնաջնջման փաստին ու որոշեցի խորանալ այդ երևույթի ուսումնասիրման բնագավառում։ Իմ ուշադրությունն արդեն գրավել էր թուրքական ազգային ինքնության ձևավորման գործում բռնության դերը։ Եկա այն եզրակացության, որ հայերի ցեղասպանությունը անմիջական կապ ունի թուրքական ազգային ինքնության ձևավորման հետ և որոշեցի զբաղվել այդ խնդրի ուսումնասիրմամբ (Նոր Օր, մայիս 6, 1995)։

ՌՈՒՐ, ՖԻՆՔԲԵԹ ԱԴԱՄԻՐ, Գերմանիայի Բոհում (Bochum) համալսարանի դասախոս, պատմաբան, ծագումով թուրք,- Երիտթուրքական ղեկավարները, օգտագործելով

ռուսական կայսրության թաթար-մահմեդական մտավորականության գաղափարախոսությունը, գործադրեցին մի մեծ ողբերգություն՝ կոտորելով և տեղահանելով հայերին Թուրքիայից։ Այդ դեպքերը պետք է նկատի առնվեն որպես ցեղասպանություն հայ ժողովրդի հանդեպ (Asbarez, Oct. 1994)։

ԻԼՀԱՆ ՍԵԼՋՈՒԿ, լրագրող,- Մարդկային զգացումների տեր ամեն մարդ վախով կհիշե Անատոլուի (իմա՝ Արևմտյան Հայաստան,-Ա. Փ.) անցյալի ողբերգությունը և կմտածե անոր պատճառաբանության մասին...

Մոտավոր անցյալին մեր տարածքաշրջանին մեջ կատարված են բազմաթիվ սպանդներ։ Հույները իրենց փափագո՞վ գաղթեցին Ստամբուլեն։ Հայերը իրենց հաճույքին համա՞ր լքեցին այս գեղեցիկ երկիրը (Մասիս, օգոստոս 26, 1995)։

ՍԵԼՋՈՒԿ ԹԵՋԳՅՈՒԼ, մտավորական,- Ես երբեք հավատք չեմ ընծայել և չեմ վստահել իմ երկրի պաշտոնական պատմության և գաղափարախոսության։ Եվ երբ ես հետազոտեցի և ուսումնասիրեցի արժանահավատ և ճշմարտացի պատմաբաններին, ես դեմ առա արյուն սառեցնող ճշմարտության։ Անցնող դարում տեղի ունեցած հայերի մեծ ցեղասպանությունը սարսափելի էր։ Այո՛, իսկապես մեկուկես միլիոն անմեղ, բարձր զարգացում ունեցող մի ժողովուրդ՝ համեմատած քոչվոր-բարբարոս իրենց ջարդարարների հետ, սպանդի ենթարկվեց թռչնեղենի նման, թուրքական զինվորների և ժողովրդի կողմից, որոնց հետ ապրել էր դարերից ի վեր կողք կողքի (Las Vegas Review-journal, April 28, 1996)։

ՄՈՒՍԹԱՖԱ ՋԻՖՏՋԻ, մտավորական,- Ի տարբերություն իմ հայրենակիցների մեծ մասին ես առանց դժվարության ընդունում եմ, որ Օսմանյան կայսրության վերջին տարիներին մեծագույն անարդարությունը գործադրվեց հայերի նկատմամբ, երբ մեծ թվով հայեր բռնի տեղահանվեցին իրենց բնօրրանը հանդիսացող հայրենիքից և որոնց դերակշռող մասը մահացավ ճանապարհին (Տե՛ս "Who gained the most from Talaat's Death". Armenian Life, December 23, 1993)։

ՅԵԼԴԱ ԳԱՋԵԹԵՋԻ, Թուրքիայում մարդկային իրավունքը պաշտպանող մտավորական,-Թուրքիայում հերքվում է հայերի ցեղասպանությունը և Թուրք նոր սերունդը հարկ եղածի պես տեղյակ չէ այդ մասին։ Նահանգային նախարարությունում գտնվող թուրքական արխիվներից օգտվելը արգելված է։ Ես փորձեցի, բայց իմ պահանջը մերժվեց։ Արխիվները բաց են միայն ընտրյալ այն մարդկանց համար, որոնց ուսումնասիրությունները համընկնում են թուրքական կառավարության հայերի ցեղասպանությունը հերքող քաղաքականության հետ (Murat Acemoglu, M. D., "Minority Rights Discussion on Turkish Television", The Armenian Reporter Int'l, June 1, 1996, p, 2)։

ՀԵՎՐԱ ՔՈՄ, Հրաչյա Քոչարի «Կարոտ» պատմվածքի թուրքերեն թարգմանության առաջաբանի հեղինակ,- 1915 թվականին «Միություն և առաջադիմություն» (Իթթիհատ վե Թերաքքի) կուսակցության կողմից կոտորվեցին մեկ միլիոնից ավելի հայեր։ 20-րդ դարի այս առաջին ցեղասպանության ընթացքում մոտավորապես 600 000 հայեր փրկվեցին մահից։ Նրանցից կեսը ապաստան գտավ այդ ժամանակվա Արևելյան Հայաստան կոչված երկրում, որտեղ հետագայում իշխանության գլուխ եկան բոլշևիկները (Hraçya Koçar, Özlem, Istanbul, Birinci Basim, Temmuz 1994)։

ԱՀՄԵԴ ԱԼԹԱՆ, լրագրող և վիպասան,- Ճիշտ է, որ հայերը ապստամբեցան Օսմանյան կայսրության դեմ, սակայն Օսմանյան կայսրությունը ընտրեց ամենեն արյունարբու միջոցը հայ ժողովրդի տեղահանման։ Այս տեղահանման ընթացքին անկասկած ջարդեր տեղի ունեցան։ Այդ իրողության հերքումը ոչ մեկ նպատակի կծառայե։ Մենք թուրքերս կրնանք զայն գաղտնի պահել միայն մեր ժողովուրդեն։ Բայց նախ ինչո՞ւ պետք է վախնանք։ Իրականություն է, որ այսպի-

սի բան մը իրապես պատահած է Օսմանյան շրջանին (Հարութ Սասունյան,- «Թուրք գրագետ մը կընդունի հայկական ցեղասպանությունը հեռատեսիլեն», Հայ Կյանք, հուլիս 16-22,1998):

ՕԶԴԵՄԻՐ, Բունդեստակի կանաչների խմբի գերմանացի պատգամավոր, ծագումով Թուրք,- Գերմանիան ընդհանուր պատասխանատվություն է կրում հրեաների հանդեպ և ես էլ պետք է ստանձնեմ պատասխանատվության իմ բաժի-նը: Ավելին, ես պատասխանատու եմ երկու ցեղասպանությունների համար՝ իբրև գերմանացի-հրեականի, իսկ իբրև ծագումով Թուրք-հայոց ցեղասպանության համար (Նոր Հայաստան, նոյ. 4, 1998):

ԱԼԻ ԷՐՏԵՄ, Գերմանիայում ստեղծված «Միություն ընդդեմ ցեղասպանության» Թուրք-քրդական ընկերակցության նաախագահ,-Թուրք ժողովուրդը իր ուսերին կրում է ցեղասպանության ծանր բեռը և միայն այդ փաստի ընդունումը թույլ կտա նրան մաքրագործվել: Մեզ համար ցավալի է, որ մենք մի ժողովրդի զավակներն ենք, որը ցեղասպանություն է իրականացրել և մենք մեր ուսերին կրում ենք մեղքի բեռ (Նոր Հայաստան, ապրիլ 27, 1999):

ՌԱՖԸԼ ՉԱՐԱՖՈԼՈՒ, Թուրք լրագրող,- Կան շատ հուշարձաններ, որոնք ծայրահեղականներու կողմե քանդված են: Մասնավորապես թիրախ կդառնան հայկական և հունական միջնադարյան եկեղեցիները: Այսօր զուգահեռ կա մշակութային մաքրագործման ծրագրված քաղաքականություն մը: Անոնք կուզեն Անատոլուն մաքրել ոչ Թուրքական պատմական ժառանգութենեն, ինչպես որ ըրին և կը շարունակեն ընել հայերու և հույներու պարագային: Ցեղասպանությունը սկսավ մարդկային կյանքի ոչնչացումով, որ մինչև հիմա կը շարունակվի պատմական հուշարձաններու քանդումով: Փաստորեն ողբերգությունը կը շարունակվի (Տե՛ս Ասպարեզ, հոկտեմբեր 22, 19993 էջ 5):

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԻՑ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում և նախօրեին տեղի ունեցած արևմտահայության զանգվածային բռնի տեղահանություններն ու կոտորածները անմիջական իրենց արձագանքն են գտել և դատապարտվել տվյալ ժամանակվա համաշխարհային մամուլում:

Հակառակ այսօրվա Թուրքական ուրացումներին, այդ թերթերում և ամսագրերում բերված վկայությունները լիովին հաստատում են 20-րդ դարի սկզբին տեղի ունեցած հայերի ցեղասպանությունը:

Փաստերը ցույց են տալիս, որ զանգվածային բռնագաղթերն ու ջարդերը Արևմտյան Հայաստանի քաղաքներում և գյուղերում, ինչպես նաև Փոքր Ասիայի տարածքում գտնվող հայաբնակ վայրերում, չէին առնչվում ռազմական նկատառումներով կատարվող միջոցառումների հետ, քանի որ հայության բնաջնջման ծրագիրը նախօրոք մշակված և որոշված էր «Իթթիհատ վե Թերաքքի» (Միություն և առաջադիմություն) կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից: Հայկական հարցը լուծելու համար երիտԹուրքերն ընտրել էին արևմտահայությանը խպառ բնաջնջելու ճանապարհը:

Իր ժամանակին և հետագայում համաշխարհային մամուլը ճշմարտացիորեն արձագանքել է ամբողջ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող հայերի կոտորածների մասին:

Ստորև տրվում են առանձին քաղվածքներ այդ հրապարակումներից, որոնք անմիջական և հավաստի պատկերացում են տալիս արևմտահայության նկատմամբ կատարված ցեղասպանության մասին:

xxx

Այսպիսով, հայկական հարցի էությունը ներկայումս կայանում է ոչ թե նրանում, որ երեք շաբաթվա ընթացքում տեղի են ունեցել 70 բռնաբարություն և սպանություն, այլ նրանով, որ մեր հավատակից քրիստոնյաների անձնական անձեռնմխելիության դեմ կատարվող այդ հանցափորձերը տեղի են ունենում կենտրոնական երիտթուրքական կառավարության բարեհաճ թույլտվությամբ և գիտությամբ (Նովոյե Վրեմյա, մայիս 22, 1915, Սան Պետերբուրգ, ռուսերեն)։

xxx

Ներկայումս այնպիսի մի սարսափելի գործ է կատարվում, որի համեմատությամբ նսեմանում է այն ամենը, ինչ մարդկությունը տեսնում է ահա արդեն մեկ տարի շարունակ. տեղի է ունենում մի ամբողջ ժողովրդի բիրտ և կանոնավոր ոչնչացում։ Այս իրադարձությունը գուցե և աննախադեպ է համաշխարհային պատմության մեջ։ Աբդուլ Համիդի օրոք հայերի կոտորածը սահմանափակվում էր որոշ տեղանքով։ Այսօր խոսք է գնում ամբողջ ժողովրդի ոչնչացման մասին՝ Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում, ամենուրեք, որտեղ էլ որ ապրելիս լինեն նրանց ներկայացուցիչները (Journal de Geneve, September, No. 9,1915)։

xxx

Ադրիանապոլսի բոլոր հայերը՝ մոտ 1.600 հոգի, ձեռբակալվել են, տղամարդիկ անհապաղ աքսորվել են Փոքր Ասիա, իսկ կանայք ու երեխաները երկու օր պահվել են բանտում՝ ենթարկվելով բանտապանների կոպիտ հարձակումներին։ Նրանցից ոմանց հետագայում նստեցրել են առագաստանավերը, որպեսզի տեղափոխեն Փոքր Ասիա։ Երկու նավակներ սուզվել են Ռոդոսդոյի մոտ և դրանցում եղածների մեծ մասը խեղդվել է (The Times, December 21, 1915)։

xxx

... Թուրքերը սկսեցին (Էրզրումի հայերին) թալանել,

բռնաբարել կանանց, սպանել երեխաներին և ի վերջո դժբախտները գլխովին բնաջնջվեցին։ Դիակները նետում էին գետերը և ինչպես հաղորդում են ականատեսները, դիակների կույտից ջուրը կանգ էր առնում։ Ամբողջ տեղի ունեցածը անհնար է նկարագրել։ Կարելի է ենթադրել, որ ամեն ինչ կազմակերպվել էր խստիվ ծրագրով և տվյալներ կան կարծելու, որ այդ ծրագիրը հուշել էին գերմանացիները (Արմյանսկի Վեստնիկ, թիվ 7, 1916, ռուսերեն)։

Ծանոթագրություն (Ա. Փ.),- Այստեղ տեղին է նշել, որ հայերի ցեղասպանության գլխավոր հանցագործ Թալեաթը երբ 1917 թ. նշանակվեց Օսմանյան կայսրության մեծ վեզիրի պաշտոնում, Գերմանիայի Կայզերը նրան շնորհեց կարմիր արծվի առաջին կարգի շքանշան։

xxx

Հայ երեխաներին ծովն էին նետել շան լակոտների պես, մեծահասակ հայերին դուրս էին հանել քաղաքի սահմաններից և խումբ-խումբ գնդակահարել. ջահել աղջիկներին վաճառել էին հարեմների համար, իսկ հարուստ հայերի ունեցվածքը վաճառքի համար աճուրդի էր հանվել Տրաբիզոնի տաճարում... (Le Temps, 7.V. 1916)։

xxx

... Թուրքերը մի առանձին համառությամբ ու վայրագությամբ են ավերում հայկական եկեղեցիները։ Եվ այդպես է ամենուրեք։ Մուշում փրկվել է միայն մեկ եկեղեցի այն էլ այն պատճառով, որ նրանում տեղավորված էր թուրքերի ալյուրի պահեստը։ Սրբապատկերները ամենուր և միշտ ապականված են ու պղծված ամենանողկալի, ամենաբարբարոսական ձևով։ Թուրքն ասես ուզում է աշխարհի երեսից ջնջել այն ամենը, ինչ հայկական է (Կավկազսկոյե Սլովո, հունվար 22, 1917, թիվ 18, ռուսերեն)։

xxx

(Տրաբիզոնում) թուրքերը գնդակահարեցին, ջրամույն

արեցին կամ ողջակիզեցին ոչ միայն հետ մնացած ռուս զինվորներին, որոնց ճանկել էին իրենց առաջխաղացման ընթացքում, այլև խոշտանգում էին իրենց ձեռքն ընկած հայերին։

Տրաբիզոնում հայ երեխաներին լցրեցին պարկերը, բերանները կապեցին ու նետեցին ծով (L'Asie Francaise, Janvier-April, Paris, 1918, No. 172, p. 23)։

xxx

Եթե խաղաղության շարժումը պայքարում է այն բանի համար, որպեսզի վաղեմության ժամկետ չլինի մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար, ապա դա արվում է այն հաշվով, որպեսզի ապագայում սարսափելի այդ երևույթները չկարողանան անգամ ծնվել որոշ խելագարների ուղեղներում։ Այդ գործը արդար է և այն պետք է հաղթանակի։ Ահա թե ինչո՞ւ ենք մենք հիշում հայերի Ջարդի մասին (L'Humanite, 23 Avril, 1965)։

xxx

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱՋՆՋՈՒՄԸ

Մեկ հազարամյա ժամանակաշրջանում քրիստոնյաների նկատմամբ ամենադաժան, ամենավայրագ և աննկարելի, համատարած կոտորածներն են տեղի ունենում Հայաստանում, արյան մեջ հեղեղելով տղամարդկանց, կանանց և երեխաներին։ Ամբողջ գյուղեր ջնջվում են երկրի երեսից հրի ու սրի, բռնագաղթի միջոցով։ Ակնհայտ է, որ հայերի նկատմամբ կատարվող այս շարժումը, Թուրքիայի ոչ-թուրք և քրիստոնյա բնակչության դեմ գործադրվող փոխհամաձայնեցված ծրագրի մի մասն է կազմում (The Missionary Review of the World. November 1915)։ Այս և հաջորդ քաղված նյութերի համար տե՛ս՝ The Armenian Genocide-First 20-th Century Holocaust. by Richard Diran Kloian, Richmond, CA, 1980, p. 85.

xxx

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերջին հրատարակություններում մի քանի անգամ համառոտակի մեր ուշադրությունը բևեռեցինք Թուրք-գերմանական իշխանության տակ հայերի կրած տառապանքների մասին։ ԱՄՆ-ում բրիտանական նախկին դեսպան Վիսքոնտ Բրայսը "Associated Press"ի միջոցով մի ազդեցիք հայտարարություն կատարեց, որպեսզի Ամերիկան ջանք գործադրի կանգնեցնելու հայերի կոտորածները։ Լորդ Բրայսը այն անձնավորությունը չէ, որ փաստերը չափազանցի և սխալ հայտարարություն կատարի։ Այլ վկայություններով մեկտեղ նա նշում է հետևյալը. Տրաբիզոն քաղաքում, ուր հայության թիվը անցնում է 10.000-ից, հրամաններ են եկել կ. Պոլսից, որպեսզի ձեռբակալվեն բոլորը։ Զինվորական ջոկատները հալածելով բռնել են հայերին և քշել դեպի ծովեզերք։ Այդտեղից նավերով տարել են ծովի խորքերը և շպրտել ջրի մեջ։ Եվ այդպես խեղդամահ են արել բոլոր տղամարդկանց, կանանց և երեխաներին։ Այս արարքը անձամբ տեսել և հայտնել է Իտալիայի հյուպատոսը ("The Outlook". An illustrated Weekly Journal of current events,September 29, 1915)։

xxx

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱՋՆՋՈՒՄԸ

Հայ քրիստոնյաների կոտորածի, տանջանքի ու բռնագաղթի ցնցող լուրերը կոչ են անում Ամերիկային, որպեսզի օգնություն և պաշտպանություն ցուցաբերի հայերին։ Թուրքիայից ստացված բազմաթիվ և հավաստի աղբյուրները ցույց են տալիս, որ այդ կոտորածները տեղական անկարգություններ կամ անհիմն ճնշման հետևանքով կատարվող գործողություններ չեն, այլ նպատակադրված ծրագրով հայ ազգի ոչնչացումը։ Հազարավոր ընտանիքներ քշվել են իրենց տներից, սովահարվելով ճանապարհին։ Գյուղերն ու քաղաք-

ները դատարկվել են իրենց բնակիչներից։ Բռնության ու տանջանքի ազդեցության տակ շատերը ուրացել են իրենց քրիստոնյա հավատքը։ Կանայք տարվել են հարեմներ, իսկ երեխաները վաճառվել որպես ստրուկ (The Independent, September 27, 1915)։

xxx

Այս տարվա կոտորածները իրականում առ ավելի առաջ գնացին, քան 1895-96 թվականներինն էր։ Արևմտյան Եվրոպայից հասած տեղեկությունները կամ այլ աղբյուրներից ստացված վկայությունները լիովին համընկնում են իրար հետ։ Ճշմարտությունն այն է, որ փոքր Ասիայի արևելյան և հյուսիսային շրջանների, ինչպես նաև Հայաստանի՝ քրիստոնյա բնակչությունը կանխամտածվածորեն բնաջնջվում է ամբողջությամբ։ Զինվորական տարիք ունեցող մարդիկ սպանվել են, իսկ երիտասարդ կանայք մտել են թուրքական հարեմները և երբեմն իրենց զավակների հետ բռնությամբ ընդունել մահմեդականություն (The New York Times, October 10, 1915)։

xxx

Մինչև այսօր թուրքական կառավարությունը ուրանում է ցեղասպանությունը։ Նախահաշիվները տարբեր են, թե քանի՞ հայեր մահացան։ Ոմանք այդ թիվը գնահատում են կես միլիոն, ոմանք՝ մեկ միլիոն։ Ինչ էլ որ լինի թիվը, հայերի ցեղասպանությունը հանդիսանում է Մեծ պատերազմի ամենամռայլ էջերից մեկը (Լոս Անջելոսի PBS հեռուստակայանի «Մեծ պատերազմը և 20-րդ դարի ձևավորումը» վավերագրական ֆիլմաշարի մեկնաբանությունից։ Նոր Օր, նոյեմբեր 20, 1996, էջ 2)։

xxx

Սասունից մինչև Տրաբիզոն, Օրդուից՝ Այնթապ, Մարաշից՝ Էրզրում ահավոր ոճրագործություններ են տեղի ունեցել։ Մարդկանց սառնասրտորեն գնդակահարել, խաչել ու

խեղանդամ են արել և բռնի ուժով դավանափոխել։ Երկրի ներսում կանայք բռնաբարվել, ստրկացվել, սպանվել են կամ էլ իրենց երեխաների հետ քշվել անապատ, Մուսուլից արևմուտք, որտեղ ո՛չ ջուր և ո՛չ էլ ուտելիք կա։ Նրանցից շատերը տեղ չեն հասել ու մահացել են ճանապարհին՝ պահակախմբերի հալածանքներից (տե՛ս «Էլ Պլատա», հոկտեմբեր 15, 1915, Ուրուգվայ)։

xxx

Իրականության մեջ խղճախայթն է Հայաստանի հետ Թուրքիո ունեցած դժվարության արմատը և ոչ թե քաղաքականությունը։ 1895 թ. նվազ տարողությամբ (բազմահարյուր հազարավոր հայերի կյանքի գնով) և 1915-1923 թվականներին մեկուկես միլիոն հայերուն մահվան պատճառ դառնալով, Թուրքիա ցեղասպանություն գործեց, ինչ որ տակավին մնաց չճանչցված։ Այս արարքին դեմ կանգնելու կամ զայն նշմարելու զլացումը աշխարհին կողմե Հիտլերին հավատիացուց թե հրեաներուն համար իր (վերջնական լուծումը) անկաշկանդ պիտի ընթանա։ Հիմա օրինակ ունենալով Իսրայելին հետ իր ունեցած լավ կապերը, Թուրքիա զգալու է իր վրա ազդեցությունը անոնց, որոնք կհավատան, թե պարկեշտությունն իր դերն ունի միջազգային կապերու մեջ, մոտենալու Հայաստանին որպես սովորական դրացի, վերջապես դարմանելու համար իր խիղճը (The jewish advocate, September 17, 1999, Boston. Հայերեն թարգմանությունը՝ տե՛ս. Հարութ Սասունյան-Հրեական թերթ մը Թուրքիան կը մղե ճանչնալու հայոց ցեղասպանությունը, Հայ Կյանք շաբաթաթերթ, հոկտեմբեր 21, 1999, էջ)։

Հայոց Մեծ Եղեռնի կենդանի պատկերը արտահայտելու տեսանկյունից խիստ կարևոր նշանակություն ունեն թուրքական ջարդերից մազապուրծ փրկված վերապրողների աղիողորմ պատմածներն ու դառը հուշերը: Մի կողմից իրենց վրա կրելով թուրքական արյունոտ յաթաղանի մահասարսուռ վտանգները և ականատես լինելով իրենց հարազատների ահավոր սպանդին, վերապրողների համար այնքան էլ հեշտ չի եղել հետագայում վերհիշել 1915 թ. սարսափները: Այնուհանդերձ, չնայած հոգեբանական ծանր վիճակին, նրանցից շատերն իրենց նամակներում և հուշագրություններում անդրադարձել են դեպի Տեր Զորի աքսորի ճանապարհին կրած տանջանքների, ինչպես նաև մոտիկ հարազատների դառը կորստի մասին:

Իսկ ոմանք միայնակ մնալով իրենց գերդաստանից, նույնիսկ ընկել են խորը հուսահատության և հոռետեսության մեջ և անիմաստ համարել շարունակելու Աստծո պարգևած կյանքը: Եվ իզուր չէ, որ ստորև խոսակցության նյութ դարձող գրքի հեղինակը իր առաջաբանում հետևյալ բնութագրումն է տվել նրանց ծանր վիճակի մասին.

«Նոքա ապրեցան միշտ իրենց երևակայության հանդեպ պատկերացած ունենալով իշխող թուրքերի խելագար անգթության զոհ ընկած իրենց ազգակիցների հուսահատական մահվան տեսարանը: Նոցա կյանքի դառը բաժակը շատ ավելի դառնացավ, որովհետև կոտորածների վերապրյալ իրենց շրջապատի թշվառ բաղտակիցների մահվան փոթորիկն ընկերացավ իրենց մինչև գերեզման»:

Այո՛, այսօր ըստ արժանվույն և բարձր պետք է գնահատել Պետրոս Տոնապետյանի իր ժամանակին կատարած քրտնաջան աշխատանքը, Եղեռնից վերապրողների նամակները հավաքելու և հրատարակելու գործում, քանի որ նա առաջինն էր, որ լծվեց դրանք կորուստից փրկելու նվիրական գործին:

«Ինձ վիճակվեցավ,- գրում է նա,- կորստյան հորձանքի մեջեն հարություն տալ ոչնչացյալին՝ անմահացնելով իմ այս բազմատանջ պարզ հեղինակների անուններն...»:

Եվ այդպես 1922 թվականին Պետրոս Տոնապետյանը Փարիզում հրատարակում է Ձայն Տառապելոց (Այս է արձան հայ տանջանաց 1915-1918) խորագիրը կրող նամակների ժողովածուն, որտեղ ընդգրկված են բռնագաղթից և ջարդերից հրաշքով ազատված տարբեր տարիքի և սերի հայ տառապյալների թվով 280 սրտամորմոք նամակները: Ժողովածուն սկսվում է համառոտ առաջաբանով, իսկ վերջում զետեղված է պատմագիտական ընդարձակ մի ուսումնասիրություն հայկական հարցի և հայոց ցեղասպանության խնդրի շուրջ «Անդունդ անդունդ» վերնագրով

Հարկ է նշել, որ Պետրոս Տոնապետյանի «Ձայն տառապելոց» ժողովածուն, այսօր մատենագիտական հազվագյուտ ճարվող գրքերից է:

Հետևաբար, առանց տարակուսելու կարող եմ նշել, որ մեզանից շատերը, հատկապես նոր սերունդը ծանոթ կամ տեղյակ չէ այս գրքի մասին:

Բնականաբար Մեծ Եղեռնի հորձանուտներից անցած վերապրողների հարցով հետագայում զբաղվել են թե՛ հայրենի և թե՛ սփյուռքի գիտնականներն ու մտավորականությունը: Հատկապես վերջին տասնամյակներում Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի հասարակական գիտությունների գիտական տեղեկատվական բաժնում այդ հարցով հատուկ զբաղվում է արաբագետ պատմաբան դոկտ. Նուբար Ջալքմյանը, որը վերապրողներին տեսագրելու և նրանց հուշերը գրի առնելու գործում կատարել է զգալի աշխատանք:

Գոհունակությամբ պիտի նշենք նաև, որ ՀԳԱԱ

Հնագիտության և Ազգագրության ինստիտուտի աշխատակից Վերժինե Սվազլյանը, դեռևս 1950-ական թվականների սկզբից սկսել էր անձամբ շրջագայել Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, հանդիպումներ ունեցել Եղեռնից հրաշքով փրկված վերապրողների հետ և գրի առել նրանց աղիողորմ նկարագրությունները։ Վերժինե Սվազլյանը ևս հետագա սերունդների համար կորստից փրկեց Մեծ Եղեռնի սահմռկեցուցիչ տեսարաններին և Տեր զորյան կիզիչ արևի տառապանքներին ականատես վերապրողների հուշապատումները։ Մեծ Եղեռնի 80-ամյակի օրերին Երևանում լույս տեսավ նրա երկու ստվարածավալ աշխատությունները. 1. Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Երևան, «Գիտություն հրատարակչություն», 1994։ 2. Մեծ Եղեռն, Արևմտահայոց բանավոր վկայություններ, Երևան, Գիտ. հրատ., 1995։

Իսկ «Զայն Տառապելոց» գրքում ընդգրկված վերապրող նամակագիրների կամ նրանց ազգականների տեղը հայտնաբերելու, իսկությունը հաստատելու և ընդհանրապես ավելի ընդարձակ տեղեկություններ քաղելու նպատակով Զորյան ինստիտուտը դեռևս ապրիլ 11, 1987 թ. «Ասպարեզ» օրաթերթի անգլերեն բաժնում հրատարակել էր նամակների հեղինակների անուններն ու գրված վայրերի ցանկը։ Կարծում ենք, որ այդ ուղղությամբ ինստիտուտը հասել է ակնկալված դրական արդյունքների։ Մենք մեր հերթին մանրամասն ուսումնասիրեցինք այդ նամակները և աշխատեցինք ընտրություն կատարել դրանցից մի քանիսը հրատարակելու համար, որպեսզի ընթերցողը անմիջական պատկերացում կազմի թե՛ նամակների բովանդակության և թե՛ հայոց Մեծ Եղեռնի ընթացքում երիտթուրքերի արևմտահայության նկատմամբ կիրառած ցեղասպան քաղաքականության մանրամասնությունների մասին։ Իհարկե, ընտրություն կատարելը այնքան էլ հեշտ չեղավ, որովհետև բոլորն էլ կարևոր են և ճշմարտացիորեն են արտահայտում այն ժամանակվա դառը

իրավիճակը։ Այնուհանդերձ, այսօրվա ընթերցողին ծանր հոգեկան ապրումներ չպատճառելու միտումով մենք այստեղ խուսափեցինք ընդգրկել կոտորածի ահավոր պատկերները նկարագրող նամակները։ Իսկ ընդհանուր առմամբ այդ նամակներում խոսվում է հետևյալի մասին. բռնագաղթի և բարբարոսային ջարդերի, խոշտանգումների նկարագրություններ, կանանց և երեխաների բռնի հափշտակման ու թրքացնելու քաղաքականության բազմաթիվ փաստեր, Դեպի Տեր Զոր աքսորի ճանապարհին, կիզիչ անապատներում սովի, ծառավի, վարակիչ հիվանդությունների հետևանքով տեղի ունեցող մահացություններ, իրենց երեխաների, ծնողի և հարազատ ազգականների կորստյան ողբ, օգնության աղերսներ որբ երեխաների և ծայրաստիճան հյուծված ու ոսկրացած մարդկանց կյանքը փրկելու համար, կարոտը կորցրած հայրենիքի հանդեպ և անհուն կսկիծով վերհիշումը իրենց բնակավայրերի՝ տան, գյուղի, քաղաքի, եկեղեցիի, վանքի, օդի, ջրի Լայլնի մասին և հավատքով ու հույսով ներշնչված կրկին հայրենիք վերադառնալու պատրանքը։ Եվ վերջապես մի կողմից տրվում է ինքնապաշտպանական կռիվների հերոսական դրսևորման գովքը, իսկ մյուս կողմից դառը մեղադրանքի խոսքեր՝ առանձին վայրերում տեղի ունեցած անկազմակերպվածության մասին և այլ հարցեր։

Ստորև «Զայն Տառապելոց» գրքից քաղված ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում վերապրողների նամակներից ամբողջական և առանձին հատվածներ. դրանք թվով 12-ն են և գրված են 1916-1917 թթ.

Նամակ 1

Կարին, Դեկտեմբեր 10, 1916

Եղբայրս,

Ցավալի է մեր վիճակը վերքերով լեցուն մեր սրտերը. ո՜հ որքան ցավալի և տխուր է մեր անցուցած կյանքը, որ բաժանված ենք մեր սիրելիներեն. ո՜հ որքան արցունքներ

թափած եմ և պիտի թափեմ մինչև վերջ որ կորուսեր եմ և պիտի չտեսնեմ. և աչքերես թափած արցունքներ մաշեցին երեսս և խոր ակոսներ բացին այտերուս վրա։ Ինչպես գրեմ և ինչպես հասկցնեմ, չչորած ապչած կմնամ թե ինչպես գրեմ մեր սիրելի մայրի մասին կամ մեր ազնիվ քույրի համար կամ մեր մյուս ազգականաց համար թե ուր մնան կամ ուր մնացին...։

ԶԱՐԹԻԿ ՍՈՂԻԿՅԱՆ

էջ (1)

Նամակ 2

Տեր Զոր

Աղբարիկս,

Արյունի ճամբեն սկսանք քալել հառաջանալով դեպի Մալաթիա ուր Կարինեն մեզ ընկերացող թուրք պաշտոնեությունը հանձնեց մեզի Մալաթիո կառավարության։ Այս վերջինս ալ Ատիամանի գայմագամին որուն հրամանին ներքև կգտնվեր բավական ժանդարմներ ինչպես բաղեշցի հրամանատար էմին էֆենդի և Աշեյնալ անուն մի քյուրդ բեյ իր գազանաբարո արբանյակներով։ Հոս մեր դժբախտ կարավանեն խլվեցան հարյուր յոթանասունե ավելի այրեր, որոնք ամենն ալ վերոհիշյալ քյուրդ բեյի հրամանով չարաչար մահվամբ փակեցին իրենց աչքերն իրենց սիրելիներու ներկայությամբ իսկ։ Մեր ընտանիքեն մենակ ես կամ. մնացած մեկ առ մեկ աչքովս տեսա ամեն մեկուն սոսկալի սպանվիլը կամ տառապանքե ու անոթութենե մեռնիլը, ես ալ նույն ճակատագիրը պիտի ունենամ։ Ինչ կերազեր մեր ազգը և ինչ եղանք։

Թշվառ քույրդ
ՍԱԹԵՆԻԿ

էջ (5)

Նամակ 3

Էրզրում, Ջիթող գյուղ, Նոյմ. 10, 1917

Սիրելի Հովհաննես,

... Թուրք և քյուրդ զինվորներով մեր գյուղը պաշարեցին այնպես որ ազատելու հնար չկար. սուրը դեռ մեր վրա չբարձրացած մեր մահը կտեսնեինք. և ժողովուրդի աղաղակի ձայնը երկինք կթնդացներ. մայրերու, քույրերու և փոքրիկ երեխայաց հեկեկանքը բոլորովին երկիր կշարժեր, և երբ հոս ու հոն մարդիկ կզարնվեին ու վար կիյնային և արյունը կվազեր ամեն ոք խելքերնին կորսված կփախչեր, եղբայրը քույրը կձգեր, մայրն յուր երեխան գետինը կթողուր կամ ջուրը կնետեր և անանկ մը կու գա ինձ թե ամենքս խելագարածի նման եղած էինք սարսափեն. ինչպես փախա և ինչպես ազատեցա չգիտեմ, բայց ինձ նման ազատած հայերու շատ հանդիպեցա ձորերու և լեռներու մեջ ուրիշ գյուղերե...։

ՎԱՀԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Նամակ 4

Ումուտում գյուղ, Կարնո, Ապրիլ 10, 1917

Գրիչս ձեռք առնելով չեմ գիտեր թե ինչ պետք է գրել, նկարագրել հասարակ դե՞պք մը, նկարագրել ցեղի մը բնաջնջումը, նկարագրել անմեղ կամ մատաղատի երեխայից քարաջախջախո՞ւմը, թե՛ մանկամարդ և փափկասուն օրիորդաց բռնաբարումը, լկո՞ւմը և խեղդամա՞հը. ասոնց և ոչ մեկը չեմ կարող նկարագրել, որոհետև միայն ու միայն Քղիի շրջանեն 50.000 հայ ժողովուրդ կոտորված է, այլազան տեսակներով և չարչարանքով որով յուրաքանչյուր մարդ կամ անհատ, ունի իրեն առանձինն երկար և ցավալի դեպքերով պատմությունը. որո՞ւ պատմությունը աղեխարշ և անլսելի ու ցավելու արժանի չէ։ Վաթսուն տարեկան հասակեն հետո հոգեկան անմխիթար վիճակի մը հասա և կենդանի մեռածի

մը նման կապրիմ առ այժմ. չկան զավակներս, չկան եղբայր, եղբորորդիներս, չկա ընտանիք և սիրելիներս։

ՆԱԶԱՐԵԹ ՓՈՍՏՈՅԵԱՆ

(էջ 116)

Նամակ 5

Խնուս, Հունվար 1917

Սիրելիք,

... (Քղիի) գավառի 18000 հայ բնակչությունը խումբ խումբ իրար ետևէ կարավանի նման կբռնեին մարտիրոսության անծայրածիր ճանապարհը։ Հունիս 1-ին (1915 թ.) տեղահանվեցան քաղաքի հայ բնակչության մի մեծ մասը և Խուբսի, Սերկևիլի, Ճըպըրգյուղի հայերը։ Օր մը հետո Առեքցիներն, հետո Թեմրանցիներն, հետո Ծերմաք, Օսնակ, Ապողնաք, Սեղանք, Աստղաբերդ, Զարիբաշ և Օրոր գյուղերու հայերն և այսպես շարունակաբար...։

Երեք օր վերջը, մինչ գավառի հայ ազգաբնակչության կարավանի մեկ ծայրը հերթի կսպասեր ճանապարհորդվելու, տեղահանումների առաջին խումբը կհասներ Ագփունղարի ձորերը, կանխապատրաստված ողջակեզի սեղանի վրա։ Հոն հրացաններով և թուրերով՝ կսպասեին դահիճները հայերու բարի դրացի քյուրդերն՝ ղեկավարությամբ կառավարութենեն նշանակված պարագլուխներու։ Տեղահանվածներու կարավանին կհրամայվի կանգ առնել։ Տանջանքի, հոգնածության բեռան տակ ճնշված կիներն, երեխաները կփռվին գետին պահ մը հանգստանալու. և տղամարդիկ ալ պահակներու նման գլխիկոր կհսկեն անոնց վրա... Վիշապն հանկարծ կշարժի, դժոխքը կորոտա և դժոխքի դռներեն կրակ կտեղա զոհերու գլխին... Ահաբեկած երեխաներու ճիչն ու լացը, խելակորույս մայրերու ողբն ու կոծը, սարսափած և նվաղող կույսերու աղաղակն ու շիվանը, անզեն տղամարդկանց գոռում գոչումը, խառնվելով հրացանների որոտումներուն հետ կստեղծեին երկնային գահը սասանեցնող մարդկային փոթորիկը։ Բնազդը գերադույն թափով երևան կուգար զոհերուն մեջ և բանականությունը հաղթահարված տեղի կուտար. մայրը իր մանուկը կձգեր, սիրահարն՝ իր սիրուհին, ամուսինն իր կինը և իրար կոխոտելով կվազեին, կփախչեին, մոլեգին հսկա ալիքներու նման բաղխելով մեկ կրակե շըրջապատեն մյուսը... Զենք գիտեր քանի վայրկյան տևեց այս վիճակը, որու ընթացքին զոհերու շարքերը զգալի չափով կնոսրանային։ Ապա քյուրդերը սկսան իրենց դիրքերեն ցած վազել իրենց զոհերուն մեջ։ Քյուրդ կիներն ալ անոնց կհետևեին զինված մանգաղով և թոնրի շիշերով։ Փախչելու չհաջողած տղամարդիկ կպանվեին, գեղեցիկ կիներն ու աղջիկները կառևանգվեին, երեխաները կհափշտակվեին, դիակները կկողոպտվեին, և կեսողջերն կմերկացվեին... Վե՞ր ջը։ Երեսի վրա մնացած մի քանի կիներ, մանուկներ կիներ կհավաքվեին շարունակելու իրենց ընդմիջված ճանապարհը։ Կտարվեին անոնք, ավելի ճիշտը կհալածվեին փայտերով և հրացաններով մինչև հարվածների տակ բոլորովին անզորներն, հղի կանայք, կիսնային կես ճանապարհին այլևս չկանգնելու համար...։

ՊՈՂՈՍ ՂՈՒԿԱՍԵԱՆ

(էջ 259-260)

Նամակ 6

Բաղդադ, Ապրիլ 3, 1917

Սիրելի եղբայր Վահան

... Նախճիրներու պատմությունը չպիտի ընեմ քեզ, որովհետև վստահ եմ, թե բավական ծանոթություն ունիս ու կորուստին մեծությունը կզգաս։ Իբրև ազգ գոյություն չունենք այլևս Թուրքիո մեջ. վեց կուսակալություններու ժողովուրդը անխնա աքսորվեցավ և իրենց քաղաքեն հազիվ 1-2 օրվան ճամփա, բոլոր այրերը դժոխային միջոցներով

սպանվեցան իսկ, Թուրքիո մյուս կողմերը գտնվող հայերը աքսորվեցան, ջարդվեցան մինչև որ հասան իրենց համար որոշված աքսորավայրը...:

Ս. ՇԻՐՎԱՆԵԱՆ

(էջ 128)

Նամակ 7

Երևան, հոկտ. 10, 1917

Մարգար ջան,

... Մուշը բոլորովին տուն չէ մնացած. քաղաքը բոլորովին դաշտի է նման. իսկ այդ սոսկալի կոտորածից ազատված հատ ու կտոր ժողովուրդն էլ հիմա ապրում է Կյումրի և Ղարս...:

Մի տարի առաջ որ Մուշ գնացի, մի օր ելա տեսնելու գյուղերուն վիճակն. ահա քեզ արդյունքը. մինչ Մոկունք հասնելուս անկարելի էր որ ձիս մի քայլ առներ առանց կնոջ կամ երեխայի ոսկորներուն դպելու: Վերջապես հասա գյուղն ինչ տեսնեմ, փողոցներ, տուներ և ձորեր լիքն են հայերու անթաղ ոսկորներով. շատ չկրցա հոն մնալ, անցա Սոխգոմ ուր տարված և վառված էին Մուշո բոլոր կին ու երեխեքը. մի 30 հատ մեծ մարաքներ այրված. երբ փայտով կխցես մարաքը ալ հոտից պետք է ժամերով փախիս. է՛հ Մարգար ջան էլ էդ մասին ներե որ երկար չպիտի կրնամ գրել, աչքերս նորից լեցվեցան, արյունս գլուխս թռավ...:

Արյունոտ սրտով

Եղբայրդ ՀԱՅԿ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

(էջ 164-165)

Նամակ 8

Երուսաղեմ, Դեկտ. 17,1917

Վեհափառ Տեր կաթողիկոս

Ամենայն Հայոց,

... Ժողովուրդը ուղիղ գծով Սուրիո անապատները չէն քշած, այլ խոտոր ճամփաներով անմատչելի լեռներե, անդնդախոր ձորերե և անանցանելի գետերե առաջնորդելով, անոնց մեծ մասը ճամփուն վրա մեռած, գետերու մեջ խեղդված, անոթության և համաճարակ հիվանդությունների զոհ դացած են:

Հայ աքսորականները ամբողջ մեկուկես տարի հանգիստ առնելու հաստատուն կայան մը չեն ունեցած նույնիսկ Սուրիո ամայի անապատներուն մեջ: Դահիճները խարազան ի ձեռին հալածած են զանոնք տեղե տեղ, մերկ, հիվանդ, սոված վիճակի մեջ: Հայու բնաջնջումին գլխավոր ազդակներեն մեկը այդ տևական թափառումին մեջ պետք է փնտռել...:

Պատրիարքական փոխանորդ

Հայոց Կ. Պոլսո՝

ԵՐՎԱՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ

(էջ 248)

Նամակ 9

Կաթողիկոսական Դիվանատուն

Դեկտ. 8, 1917 Ս. Էջմիածին

Սիրեցյալ Պետրե,

... Եվրոպական գաղութը կարծես մոռցավ Ս. Էջմիածինն ու գաղթականական գործը: Կարճ պիտի գրեմ: Սովը իր ահռելի բերանը բացած կեցած է դիմացնիս հայության փրկված բեկորները կլանելու: Եթե կարող եք՝ անմիջապես դրամական օգնություն հասցրեք թե այդ տեղիցն թե Մանչեսթրրից և այլ տեղերից... դրությունը սոսկալի է, ապագան մութ, դաժան ու հուսահատ աստիճանի: Մեր մտաց աչքերի առաջ հայության մահվան խաչարձանն է կանգնած: Մնացածը դուք իքնին կկռահեք:

Կաթող. Դիվանապետ

(էջ 211-212) ՏԻՐԱՑՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Նամակ 10

Թիֆլիս, Նոյեմբեր 12, 1917

Հեղափոխական ընկերս,

... Այդ ամեն մեծաբանութիւններե հետո, երբ կարդը եկավ ժողովուրդը պաշտպանելու անխուսափելի կոտորածեն կամ գեթ ինքնապաշտպանութիւն ընելու, մեջտեղը մարդ չմնաց։ Միթե այս դավաճանել չէր մեր նվիրական պարտականութեան։ Բայց ինչ արած, մեր մեջ ամեն ինչ խոսք՝ ոչ թե գործ...։

ԲԵՆԻԱՄԻՆ ՏԵՐ ՀԱԿՈԲՅԱՆ

(էջ 194)

Նամակ 11

Իգդիր, Ապրիլ 8, 1917

Սիրելի եղբայրս,

Կգրես թե միտք ունիս Ամերիկայեն դառնալով Պոլիս հաստատվիլ երբ պատերազմը վերջանա։ Բայց արդյոք բավական չէ որ փոխանակ Պոլիս երթալու հավաքվինք Հայաստանի հողի վրա։ Մենք որ փոքրութենե վարժված և սնած ենք հայրենիքի նախանձախնդրութիւններով, մինչև ե՞րբ պանդխտութեան ճիրաններուն մեջ տառապինք. չէ՞ որ օտար երկրի հարուստը իր հայրենիքեն զրկված աքսորյալ մը կսեպվի. հապա ո՞ւր մնաց մեր նախանձախնդրությունը, որ ուրիշներուն Հայաստանը կքարոզենք։ Մտածենք և հետո խոսինք։ Ո՞վ պիտի լեցնե ավերակ և հայե ամայացյալ Հայաստանը եթե մենք չորոշենք մեր կյանքը տնկելու անոր սուրբ հողին վրա։

ՔԱՂԵԲ ՇԱՀՊԱԶՅԱՆ

(էջ 11-12)

Նամակ 12

Երուսաղեմ, Դեկտ. 21, 1917

Սիրելի աղջիկս,

... Այլևս չունինք տուն տեղ, չունինք ինչք և ապրանք, չունինք պատիվ և բարոյական։ Ասոնց ամենն ալ կորուսինք։ Տուներնիս հափշտակվեցավ. պատիվնիս և բարոյականնիս բռնաբարվեցան. իսկ ընտանեկան և կրոնական սրբութիւններս խսպառ և խսպառ պղծվեցավ. եվ որ ամենեն ահռելին և սոսկալին է, այն է որ միլիոն ու կես հայ անմեղ հայ հոգիներ ոչնչացան. սպանվեցան, խողխողվեցան, սրո և հրո ճարակ եղան, ողջ ողջ գետերը թափվեցան։ ո՛ր մեկն ըսեմ և որ մեկը թողում։ Մենք ալ մեր կարգին բաժին ունեցանք խմելու այս դառն բաժակեն. ամեն բան կորցնելե վերջ մեծ զավակս և հարսս ալ նահատակվեցան բարբարոսներեն. միայն ես և երկու աղջիկ թոռներս նախախնամութեան վերին տնորինութեամբ ազատվելով տարիե մը ավել Երուսաղեմ կգտնվինք հայոց Ս. Հակոբա վանքը, բոլորովին աղքատ տնանկ, մերկ և բոբիկ, անոթի ծառավ...։

Սնուցիչ կաթնամայրդ
ԲՐԱԲԻՈՆ ԿՏԱԿՅԱՆ
Իզմիրցի

(էջ 294-295)

ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

20-րդ դարի սկզբում տեղի ունեցած հայերի քստմնելի ցեղասպանության օրերին տվեցինք մեկուկես միլիոնից ավելի անմեղ մարդկային զոհեր: Կորցրինք մեր դարավոր բնօրրանը, մեր հայրենիքը, իսկ հրաշքով ողջ մնացածները սփռվեցին ամբողջ աշխարհով մեկ: Սա հայերի ցեղասպանության ծանրագույն ողբերգության միայն մեկ կողմն էր:

Հապա՞ հայության անչարժ և շարժական գույքերի կորուստը: Հապա՞ հոգևոր և բարոյական նյութական արժեքների կորուստը՝ մագաղաթյա հազարավոր ձեռագրային մատյանները, մանրանկարչության հազվագյուտ նմուշները, քանդակագործական հնագույն արվեստի գլուխ գործոցները, որոնք ամենայն սրբությամբ պահվում էին վանքերում, եկեղեցիներում և մատուռներում: Դրանց մեծ մասը ամբողջապես ավերվեց, կողոպտվեց, հրկիզվեց և ոչնչացվեց առհավետ:

1974 թվականի ՅՈՒՆԵՍԿՈ-յի տվյալներով Օսմանյան կայսրությունում Հայաստանի եկեղեցական շինությունների ընդհանուր թիվը 1914թ. եղել է 2549: Հայերի ցեղասպանությունից հետո կանգուն մնացած 913 կառույցներից 464-ը ամբողջապես հավասարվել էր հողին և անհետացել, 252-ից մնացել էր ավերակներ, իսկ 197-ը գտնվում էր կիսավեր վիճակում և կարիք ուներ վերանորոգման:

Մի խոսքով Պատմական Հայաստանի տարածքից չքացան հայկական հնագույն ճարտարապետության գլուխգործոցները: Ինչպես օրինակ. Ս. Թեոդորոս եկեղեցին (17-րդ դ.) Բագարանում, Մշո Ս. Կարապետ եկեղեցին (7-դ.), Ս. Վարագա վանքը (10-րդ դ.), Շիրակավանի եկեղեցին (9-րդ դ.), Խծկոնքի վանքային համալիրը (9-րդ դ.) և այլ բազում եկեղե-ցիներ ու վանքեր:

Ահա այսպիսի ողբերգական վախճան ունեցավ միջնադարից սկսած հայ մշակութային արժեքների ոչնչացման գործընթացը:

Հարկ է նշել, որ միջնադարի հայկական և թուրքական պատմագիտական աղբյուրներում կան բազմաթիվ փաստեր եկեղեցիների քանդման կամ մզկիթի ձևափոխման մասին:

Հայտնի է, որ Կ. Պոլսի գրավման 1453 թ. հաջորդ օրը Ս. Սոֆիա տաճարը վերածվեց մզկիթի: Նույն ճակատագրին արժանացավ նաև Ս. Առաքյալների տաճարը և այլ եկեղեցիներ: Սուլթանական հրովարտակով արգելվեց նոր եկեղեցիների կառուցումը:

Այս չարաբաստիկ երևույթը շարունակվեց նաև հետագա դարերում ոչ միայն Կ. Պոլսում, այլև Պատմական Հայաստանի քաղաքներում և գյուղերում: Միջնադարի հայ պատնիչներն ու ժամանակագիրները սրտի խորը կսկիծով նկարագրել են թուրք տիրակալների կողմից քրիստոնյա եկեղեցիները քանդելու, թալանելու, հրդեհելու փաստերը, ինչպես նաև աշխատավոր ժողովրդի դառը բողոքն ու տառապանքները[1]:

Հայկական կրոնական կառույցների, ձեռագիր մատյանների և հին անփոխարինելի մասունքների մասին վերջին տարիներին լույս տեսան խիստ շահեկան ուսումնասիրություններ: Դրանցից հիշատակության արժանի են 1995 թ. հայերի ցեղասպանության 80-ամյակի կապակցությամբ Վենետիկի Ս. Ղազար վանքում հրատարակված Հայր Տաճատ Վրդ. Եարտըմյանի «Հայաստանի վանքերուն մշակութային կորուստը 1894-1896 և 1915-1925 տարիներին» խորագիրը կրող աշխատությունը, ինչպես նաև Փրոֆ. Սուրեն Գոլանջյանի «Հայկական ցեղասպանությունը և մեր ձեռագրական կորուստները» աշխատությունը[2]:

Հայր Տաճատ Վրդ. Եարտըմյանը պատմական և վիճակագրական փաստերով հանրագումարի է բերել 19-րդ դարի վերջերին Աբդուլ Համիդյան կոտորածների և մեծ եղեռնի օրերին հայկական վանքերի, եկեղեցիների, մատուռ-

ների և ընդհանրապես սրբավայրերի քանդումն ու ավերումը, ինչպես նաև դարերի ընթացքում դրանց մեջ կուտակված մշակութային թանկագին հավաքածուների կողոպուտն ու հրկիզումը։ Հեղինակը հանգամանալից կանգ առնելով անփոխարինելի հայ ձեռագիր մատյանների և հին մասունքների բարբարոսական ոչնչացման մասին, նշել է հետևյալը. «Եթե մարդկային ու մտավորականության կորուստը կարելի է մասամբ ու ժամանակի ընթացքին դարմանել ու համառ աշխատանքով վերականգնել նաև կորված հարստությունները, սակայն աքսորն ու վայրագությունները, կողոպուտը, քանդումներն ու ցեղասպանությունը մեզի պատճառեցին մշակութային ու քաղաքակրթական չափանիշ հանդիսացող այնպիսի արվեստի մեծ կորուստ, որ անկարելի է վերականգնել»[3]։

Փրոֆ. Սուրեն Գոլանջյանը իր հետազոտության մեջ բազմաթիվ փաստեր է բերել, թե ինչպես հայերի հալածանքների ընթացքում Թուրք ամբոխը վանքերի և եկեղեցիների թաքստոցներից հայտնաբերելով դարերի ընթացքում պահպանված ձեռագրական հարուստ հավաքածուները, հանձնել են կրակի բոցերին և վայրագորեն ոչնչացրել։ Այս շահեկան ուսումնասիրության հենքը հայկական ձեռագրերի և հնագույն գրքերի ճակատագիրն է, բայց դրանց հետ մեկտեղ խոսվում է նաև վանքերի, եկեղեցիների բարբարոսային ավերման մասին։

Մյուս կողմից կան հետաքրքիր տվյալներ, թե ինչպես առանձին վանքերի գաղտնարաններից մի կերպ փրկված ձեռագրերը տարբեր ճակատագրով հասել են էջմիածին և այնուհետև հանգրվանել՝ Մաշտոցյան Մատենադարանում։ Այս կապակցությամբ հեղինակը գոհունակությամբ նշում է, «որ Երևանի Մաշտոցյան Մատենադարանի ցուցասրահին մեջ այժմ 7729 թիվին տակ եղողը հրաշքով փրկված Մուշի ճառընտիր հսկան է, մեր ժողովրդի պատմական ճակատագրի

մեծագույն վկան ու Մեծ Եղեռնեն վերապրող մեր մշակույթի ու արվեստի լավագույն խորհրդանիշը»[4]։

Մի այլ տեղ խոսում է հայ ժողովրդի ստեղծած մի այլ հրաշալիքի մասին։ Այն Ս. Առաքելոց վանքի քանդակազարդ դուռն է, որը փրկվելով հրկիզումից մեծ դժվարություններով հասել է Հայաստան և այսօր գտնվում է Թանգարանում։

Ահա այսպիսին է մոտ անցյալում հայ ժողովրդի կրած մշակութային ծանր կորուստի պատմությունը։ Դժբախտաբար մեր օրերում էլ շարունակվում է այդ տխուր և ցավալի գործընթացը։

Այսօր, մեծ թվով հայկական վանքերն ու եկեղեցիները քարուքանդ, ավերված վիճակում են կամ վերածված են մզկիթի, թանգարանի, բաղնիքի և արհեստանոցների։

Այս մասին մենք անմիջական պատկերացում ենք կազմում հայ և օտար մամուլի հաղորդումներից, ինչպես նաև Թուրքիա այցելած հայ ուխտավոր զբոսաշրջիկների տպավորություններից։

Մեր հայրենակիցներից շատերը, նույնիսկ օտար հետազոտողներ և հնագետներ, տարբեր ժամանակներ այցելել են մեր նախահայրերի բնօրրանը և եթե մի կողմից հիացմունքով նկարագրել են նրա քարեղեն կառույցների ճարտարապետական գեղեցկությունները, ապա մյուս կողմից տեսնելով ավերված վանքերն ու եկեղեցիները, արտահայտել են իրենց խորը հուզմունքն ու տառապանքը։ Նրանց տպավորությունները լույս են տեսել մամուլում և թե առանձին գրքերով, կամ պատկերվել են տեսաժապավենի վրա։

Այսպես, ֆրանսիական «Ժեո» հայտնի աշխարհագրական ամսագրում լույս տեսած «*Հիշատակություն բնաջնջված երկրի մասին*» հոդվածում Կլոդ Մութաֆյանը, որը շրջագայել է Թուրքիայի Արևելյան շրջաններում, գրում է. «... Անիի հյուսիսում գտնվող 10-րդ դարի կաթողիկոսանիստ կենտրոն Արգինայի 60-ական թվականներին դեռևս կանգուն եկեղեցին,

1977-ին պարզապես մի քարակույտի էր վերածվել... Այլևս չկան Խծկոնքի եկեղեցիները... Ներկայումս Վանից մնացել են սոսկ քարակույտեր: Կարծես թե քաղաքը քանդված է հազարավոր բուլդոզերներով: ... Կիլիկիայի տարածքում դրությունը նույնն է[5]:

1987 թ. հուլիս ամսին Մաշտոց գոլեճի տնօրեն Կարպիս Տեր-Եղիայանին առիթ էր ստեղծվել այցելելու Պատմական Հայաստան և Կիլիկիա: Նա ականատես էր եղել իր նախահայրերի բնօրրանի գեղատեսիլ վայրերին, լուսանկարել կիսավեր եկեղեցիները, վանքերը, ժամանակի հայկական վարժարաններն ու զանազան պատմական հուշակոթողներ: Այդ ուխտագնացությունը մանրամասն գրի առնելով հրատարակել է առանձին գրքով 1998 թ. «Զրույց լուության մեջ» խորագրով: Վարդգես Տեր-Եղիայանի այցելած վայրերն են՝ Ադանան, Այնդապը, Մարաշը, Մալաթիան, Խարբերդը, Մուշը, Դատվանը, Վանը, Ախթամարը, Կարսը, Էրզրումը և վերջապես Անիի ավերակները:

Այս շահեկան գրքում հեղինակը նախ պատմական տեղեկություններ է տալիս տվյալ վայրի, քաղաքի կամ գյուղի հայկական ճարտարապետական կառույցների մասին և այնուհետև ականատեսի աչքով նկարագրում է, թե ի՞նչ է մնացել, ի՞նչն է փոխվել կամ անհետացել:

Ահա մի քանի նմուշ նրա բերած փաստերից. «Ադանայի Ս. Ստեփանոս եկեղեցին թրքական վարժարանի վերածված էր, իսկ Աբգարյան վարժարանը այժմ շուկային մաս կկազմեր: Այցելեցի Ս. Եղիա եկեղեցին, «Եաղ ճամի» անունով մզկիթի վերածված: ... Երբ Նոր Մալաթիա վերադարձա, այցելեցի մեկուսացած հայ Առաքելական Ս. Երրորդության եկեղեցին: Երբ եկեղեցվո մոտեցա նշմարեցի, որ խաչը հանված էր արդեն և մուտքը փակված էր գամված տախտակներով: Աղավնիներ և այլ թռչուններ ազատորեն մուտք կգործեին անոր բաց պատուհաններեն ներս»[6]:

Այստեղ ուզում ենք մատնանշել հետևյալ կարևոր փաստի մասին: Վերևում նշեցինք, որ Կարպիս Տեր-Եղիայանի այցելության թիվը 1987 թվականն էր: 1994 թվականին Արմեն Արոյանի կազմակերպած ուխտագնացության տեսաերիզներից մեկը դիտելիս նկատեցինք, որ վերոհիշյալ Նոր Մալաթիայի Հայ Առաքելական Ս. Երրորդություն եկեղեցուց մնացել էին միայն չորս պատերը, առանց ծածկի:

Այնուհետև Կարպիս Տեր-Եղիայանը Մուշ ու Դատվան այցելության մասին գրում է. «Ս. Առաքելոց մենաստանը ավերված է այսօր, բայց անոր վայրը կմնա մեր պատմության մեջ իբրև բարբառուն վկան մեր հնության. ռազմական դիրքին և իր ունեցած պատմական նշանավոր հոգևոր դպրոցին համբավով»[7]:

Կարպիս Տեր-Եղիայանը առկա փաստերի վրա հիմնվելով, իրավամբ նշում է, որ «հայկական կոթողների նկատմամբ եղած մշակութային ցեղասպանությունը տակավին կշարունակվի Կիլիկիո և Արևմտյան Հայաստանի մեջ»[8]:

Հայկական պատմական հուշարձանների պահպանության հիմնադրամի նախագահ՝ Մեսրոպ Արք. Աշճյանը 1997 թ. մայիսի 28-ին, մի խումբ հայորդիների ընկերակցությամբ այցելեց Ստամբուլ և այնուհետև եղավ Պատմական Հայաստանի և Կիլիկիայի գրեթե բոլոր կարևոր կենտրոններում[9]:

Պատմագիտական այդ ուղևորության ընթացքում խումբը դառը ապրումներով ականատես էր եղել, թե ինչպես Պատմական Հայաստանի մի շարք վանքերն ու եկեղեցիները անհետացել են հողի երեսից կամ վերածվել մզկիթի:

Ահա մի քանի օրինակներ խմբի տպավորություններից:

«Խումբը այցելեց Սիս քաղաքը, ուր իզուր փնտռեց կաթողիկոսարանի ավերակները...»: Խումբը այցելեց Նարեկ գյուղը, ուր սակայն ոչինչ կար, քանի Նարեկա վանքին ճիշտ միևնույն տեղը մզկիթ մըն էր կառուցված»:

«Այս ուղևորության ամենատրտում պահերեն մին եղավ

Վարագա վանքի այցելությունը, երբ զբոսաշրջիկները իրենք զիրենք գտան ահավոր տեսարանի մը առջև։ Վարագա վանքի միակ կանգուն (կիսականգուն-բայց այդ ալ ընդունած էինք) եկեղեցվո փակած՝ նոր մզկիթ մը կբարձրանար։ անտանելի տեսարան էր[10] ...»։

Նույնիսկ թուրքական թերթերը չեն թաքցնում հայկական եկեղեցիների և հուշարձանների քանդման և երկրի երեսից վերացման չարաբաստիկ փաստերը։ Թուրքական «Իքիբինե դողրու» (դեպի երկու հազարը) շաբաթաթերթում «Հայերո՞ւ կպատկանի, փլցուցեք ուրեմն» խորագիրը կրող հոդվածում նշվում է, որ 16-րդ դարի կրթական և ուսման կենտրոն Ցոթ եկեղեցիները և Վարագա վանքը այժմ ավերակ են և այլ նպատակների են ծառայում։ «Վանի Շատախի շրջանի այս եկեղեցիները միտումնավոր քանդումի հետևանքով երկրագնդի վրայեն սրբվելու վրա են։ Գաչբթի եկեղեցին քարակույտ մը դարձած է, Էլմաճըդ գյուղի եկեղեցին աղբանոց դարձած է, Շատախ գետի Թաշքյոփրու կամուրջի վրայի հայերեն գրերը սրբված են Պատմական հնությունների պաշտպան կոմիտեի կողմից»[11]։

Ստամբուլի «Հյուրրիեթ» թերթի 1997 թ. հուլիսի 23-ի համարում նշվում է, որ Բեյօղլուի քաղաքապետությունը հիմնահատակ փլցուց Խասգյուղի և Օգմեյտանի միջև գտնվող Ջըքսալանի հայ բողոքականաց եկեղեցին։

«Ջումհուրիեթ» թերթի տվյալներով Ստամբուլի Էյուբ թաղամասում 1997 թ. փետրվարի 13-ին և 15-ին երկու անգամ ռմբահարվել է հայոց Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին։ Իսկ նույն թվականի ապրիլի 18-ին և 22-ին անհայտ անձանց կողմից նորից ռումբ է պայթեցվել նույն թաղամասում գտնվող հայոց Ս. Եղիա եկեղեցու առջև։

Թուրքական «Յենի Յուզյըլ» (նոր դար) թերթում «Նախ հայերը մեկնեցան» խորագիրը կրող հոդվածում նշված է. «Թալասի մեջ 1800-ական թվականներեն մնացած քարաշեն

հայկական տուներ ու եկեղեցի մը կա, որ ներկայիս իբրև մզկիթ կգործածվի»[12]։

Ի միջի այլոց նշենք, որ վերոհիշյալ Թալաս գյուղը գտնվում է Կեսարիայի մոտակայքում։ Հայ ուխտավորները Արմեն Արոյանի գլխավորությամբ 1994 թ. լինելով այս վայրերում, տեսաերիզի վրա պատկերել էին Թալասի հայկական վանքի ավերակները։ Ավերակների մոտ բնակվող տեղաբնակներից մեկը թուրքերեն լեզվով պատմեց հետևյալը. «Եկեղեցին արտակարգ գեղեցիկ տեսք ուներ և կառուցված էր այնքան ամուր, որ թուրք բանվորները չկարողացան բահով ու բրիչով քանդել այն։ 60-ական թվականներին Նազմի Թոքեր անունով նահանգապետը վառոդով պայթեցրեց եկեղեցին, որպեսզի հայկական մշակույթից ոչ մի հետք չմնա այս վայրերում»։

Պատմական Հայաստանի քաղաքներն ու գյուղերը շրջագայելիս, արևմտահայերի կանխամտածված և ծրագրված բռնագաղթի ու կոտորածների վերաբերյալ շատ դիպուկ մեկնաբանություն է կատարել Տիկ. Վարդիդեր Գոջոլզյանը։ 1995 թ. հուլիս ամսին մի խումբ հայ ուխտավորների հետ այցելելով իր և ամուսնու՝ Փրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանի ապ ու պապերի ծննդավայրերը, Տիկ. Վարդիդերը իր զարմանքն է հայտնում, թե «Մարդկանց տեսադաշտից հեռու, այդ կորած-մոլորած խուլ վայրերում, դարերից ի վեր ապրող հայկական գյուղերի բնակչությունը ինչ վտանգ կարող էր սպառնալ թուրքական բանակին»։

Այո, Տիկ. Վարդիդեր, դուք ճիշտ եք. ոչ մի վտանգ չէին ներկայացնում, բայց երիտթուրքերի կուսակցությունն ու կառավարությունը որոշել էին մեկընդմիշտ նվաճել մեր երկիրը և բնաջնջել հայությունը ամբողջ Օսմանյան կայսրության տարածքում։

Դիտելով Արմեն Արոյանի ղեկավարությամբ կազմակերպված և ուխտավորների նկարահանած այդ տեսաժապավենը

նկատում ենք, թե ինչպես Տիկ. Վարդիդերն ու մյուս ուխտավորները խորը հուզմունքով և ծանր ապրումներով ականատես են լինում քարուքանդ եղած եկեղեցիների, թե ինչպե՞ս եկեղեցիների սրբատաշ քարերով մարդիկ ցանկապատ և այլ շինություններ են կառուցել գյուղերում[13]:

Իսկ ինչպիսի՞ն է վիճակը Արցախում:

Հայտնի է, որ 1921 թ. մարտի 16-ին «Եղբայրություն և բարեկամություն» քողի տակ կնքված տխրահռչակ պայմանագրով Հայաստանի անբաժանելի մասը կազմող Արցախը բռնի կերպով մտավ Ադրբեջանի կազմի մեջ:

Բնականաբար, Արցախը Հայաստանի հետ ոչ մի միջանցք չունենալով, հարկադրաբար կղզիացավ Ադրբեջանի ճիրանների մեջ:

Եվ այդպես հետագա տարիներին աստիճանաբար փակվեցին հայկական դպրոցները, ավերվեցին պատմական հուշարձանները, խեղաթյուրվեց հայ ժողովրդի պատմությունը:

1994 թ. Արցախի ազատամարտիկները երբ հաղթանակով մտան Ֆիզուլի, այնտեղ հայտնաբերեցին 10-րդ դարի մի հինավուրց եկեղեցի, որը կառուցված էր Տիզակի հայ իշխանների կողմից: Մինչ այդ, այն թաղված էր արհեստական հողաթմբով: Պարզվում է, որ 1960-ական թվականներին ազերի իշխանությունները նախաձեռնել են ընդհանրապես քանդել այդ եկեղեցին, բայց նկատի ունենալով, որ տվյալ արարքը կարող է մեծ աղմուկ բարձրացնել, ուստի որոշել են այն ծածկել հողաշերտով: Այդ օրերին հայտնաբերվեցին նաև բազմաթիվ չիրմաքարեր, խաչքարեր և այլ հուշարձաններ:

Ըստ պաշտոնական հաշվառման Արցախի տարածքում մարտական գործողությունների ընթացքում ադրբեջանական զորքերի կողմից ոչնչացվել և սրբապղծվել են 1000-ից ավելի հայկական պատմաճարտարապետական հուշարձաններ: Ներկայումս ԼՂՀ տարածքում արձանագրված է 1600 պատմաճարտարապետական հուշարձան: Այդ թվում՝ ավելի



Բռնի տեղահանություն

Վերապրածներ



Կտակարան

Վերևում՝ Հայ մարդու ՝ Վերևում՝ Ամերիկյան մարդատեսակ ՝ ՀՈՒՆԱՑԻԱՅԻ ԿՈՂՄՈՎ Լոմինդինգ մարդատեսակ լիքոտաչափ ՝ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կամանդաց



Մշո Ս. Կարապետ վանքը (7-17-րդ դդ.), ավերված



Մշո Առաքելոց վանքի ընդհանուր տեսքը, ավերված



Վարագա վանքի ընդհանուր տեսքը (10-13-րդ դդ.), ավերված



Դեկորի վանքը (10-13-րդ դդ.), ավերված



Խծկոնքի վանքային համալիրը (9-10-րդ դդ.), ավերված



Ագուլիսի (Նախիջևան) Ս.Երրորդության և «Ամարային» եկեղեցիները (17-րդ դ.) ավերված

քան 60 վանքային համալիր և 500-ից ավելի եկեղեցի։ Գոհունակությամբ պիտի նշենք, որ ԼՂՀ կառավարությունը անկախության 8 տարիների ընթացքում որոշակի աշխատանքներ տարավ հայկական հնագույն պատմաճարտարապետական հուշարձանների մի մասի վերականգնման ուղղությամբ։

Վերոհիշյալ Մոսկվայի դաշնագրի 3-րդ կետով Նախիջևանը ևս դարձավ Ադրբեջանին ենթակա ինքնավար տարածք։ Դրանով սկսվեց հայերի սպիտակ ջարդը և Նախիջևանը լիովին հայաթափվեց։ Աստիճանաբար վերացվեցին հայկական 44 գյուղեր, ուր 1913 թ. մարդահամարով ապրում էին 54 000 հայեր։ Մի խոսքով, կանխամտածվածորեն հայկական բնակավայրերի հետ երկրի երեսից ավերվեցին և հողին հավասարվեցին Նախիջևանի հայկական հնագույն ճարտարապետական հուշարձանները, վանքերը, եկեղեցիները, մատուռները, ինչպես նաև հազարավոր խոյեր և խաչքարեր։

1998 թ. դեկտեմբեր ամսին խիստ մտահոգիչ լուրեր ստացվեցին հին Ջուղայի գերեզմանատան մասին։ Ականատեսների վկայությամբ հաստատվեց, որ Նախիջևանի Ջուլֆայի շրջանում ադրբեջանցիները սկսել են սրբապղծել հայկական գերեզմանները, շիրմաքարերն ու խաչքարերը, քանդելով և տեղափոխելով մի այլ վայր։

Այս բարբարոսական արարքը կանխելու համար, 1999 թ. փետրվարի սկզբին Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանը հատուկ նամակով դիմել էր ՅՈՒՆԵՍԿՈ-յի նախագահ՝ Ֆեդերիկո Մայորին, որպեսզի կտրուկ միջոցներ ձեռնարկվեն Նախիջևանի տարածքում գտնվող հին Ջուղայի գերեզմանատունը՝ միջնադարյան այդ հազվադյուտ հուշարձանը ոչնչացումից փրկելու համար։

Ահա այսպիսի անմխիթար, ավերված ու կորստյան մատնված ողբալի վիճակում են գտնվում ոչ միայն Նախիջևանի, այլև Պատմական Հայաստանի ամբողջ տարածքում

գտնվող հայոց հինավուրց կոթողները։

Հարկ է նշել, որ միջազգային իրավասու մարմինները հաճախ զգուշացնելով, դիմել են Թուրքական իշխանություններին, որպեսզի կանխվի հայոց սրբավայրերի ավերումը և կամ մզկիթի վերածվելը, սակայն այն դեռևս սպասված արդյունքը չի տալիս։

Այսպես. 1987 թ. հունիս 18-ին Ստրազբուրգում Եվրոպառլամենտի կողմից ընդունված որոշման 6-րդ կետում մատնանշվում էր, որ Թուրքական կառավարությունը բարեխնամ վերաբերմունք դրսևորի հայ ժողովրդի լեզվին, կրոնին, մշակույթին, ինչպես նաև խնամքով պահպանի Թուրքիայի տարածքում գտնվող հայ ճարտարապետական հուշարձանները։

Այնուհետև 1990 թ. ապրիլ ամսին կրկին Ստրազբուրգում տեղի ունեցավ միջազգային գիտաժողով «Հայկական ճարտարապետական ժառանգության պաշտպանությունը» նշանաբանով։ Ընդունված բանաձևում (այն ուղղված էր ՅՈՒՆԵՍԿՈ-ին, ինչպես նաև Թուրքական և Խորհրդային Միության կառավարություններին) հատուկ շեշտվում էր «փրկել և վերականգնել հայկական հուշակոթողները»։

Ինչպես հայտնի է 1996 թ. բավականին խոսվեց և դատապարտվեց Էրզրումի մեջ գտնվող հայկական եկեղեցին մզկիթի վերածելու Թուրքիայի մշակույթի նախարարության որոշումը։

Ամերիկահայ ճարտարապետների և գիտնականների ընկերակցությունը անմիջապես նամակով դիմեց ՅՈՒՆԵՍԿՈ-յի նախագահին, իր վրդովմունքը հայտնելով Էրզրումի մոտակայքում Յաքութիե հայոց եկեղեցին մզկիթի վերածելու ծրագրի դեմ։

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը ևս անհապաղ դիմեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին, որպեսզի միջոցներ ձեռնարկի այն կանխելու համար։

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 10 հունվար

1997 թվակիր գրությամբ, որն ուղղված էր ՄԱԿ-ի Թուրքիայի ներկայացուցչին, մասնավորաբար ասվում էր, որ «Թուրքիա-յի մշակութային նախարարությունը կարևորությամբ նկատի ունենա ի սիյուռս աշխարհի գտնվող հայ եկեղեցվո ու հայ ժողովրդին մտահոգությունը, որպեսզի պատմական այս եկե-ղեցին մնա անվթար ու անփոփոխ»։

1974 թ. թուրքական զորքերը կիպրոս ներխուժելու ընթացքում, թալանվեց և ավերվեց 800 տարվա հնություն ունեցող հայկական Ս. Մակարի վանքը։ Իսկ 1997 թ. սկզբին, երբ թուրքական իշխանությունները որոշեցին այն վերածել պանդոկի, Կիպրոսի հունական խորհրդարանը իր հատուկ նիստում (մարտ 5, 1997 թ.) դատապարտեց և բողոքի նամակներ հղեց ՄԱԿ-ի եվրոպական պետությունների համապատասխան մարմիններին, որպեսզի կանխվի և պաշտպանվի Կիլիկիայի թագավորների ժառանգությունը հանդիսացող այդ գեղատեսիլ կառույցը։

Եվ վերջապես 1996 թ. մայիսին, Հայաստանի Ազգային Ակադեմիայի առաջարկին հակադրվելով Թուրքական իշխանությունները չթույլատրեցին հայ գիտնականներին և հնագետներին, որպեսզի նրանք ուսումնասիրեն և հետազոտեն Պատմական Հայաստանի տարածքում գտնվող կրոնական ճարտարապետական հուշակոթողները։ Ի պատասխան այս արգելակման, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա.-ը ասաց, որ «Մեր հիմնական նպատակն է պահպանել Արևմտյան Հայաստանի տարածքում գտնվող բոլոր հուշարձանները։ Եվ այդ ուղղությամբ պիտի ձեռնարկենք անհրաժեշտ միջոցները, որպեսզի կանգուն մնան մեր հոգևոր ժառանգության արժեքները[14]։

Եզրակացնելով նշենք, որ մեր օրերում Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի տարածքում պատմական հնություն ունեցող վանքերն ու

եկեղեցիները, սրբատեղիները և այլ հուշարձանները տարեցտարի քանդվում են ու անհետանում: Թուրք պատմաբաններն ու պետական գործիչները պետք է լավ իմանան, որ պատմամշակութային արժեքների ոչնչացումը նույնպես ցեղասպանություն է համարվում:

Այս առումով ողջունելի էր, որ Հայաստանի Հանրապետության Պատմության և Մշակույթի հուշարձանների պահպանության վարչությունը 1999 թ. «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնի շրջանակներում կազմակերպեց միջազգային գիտաժողով, օրակարգում ունենալով «Արտերկրի հայկական պատմամշակութային անշարժ ժառանգության ուսումնասիրության և պահպանության խնդիրները» թեման:

Այնպես, որ յուրաքանչյուր հայի սրբազան պարտքն է հնարավոր բոլոր միջոցներով տևապես մասնակցել և աջակցել այս կարևորագույն հայրենանվեր գործի իրականացմանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այս կապակցությամբ մենք խոսել են 1996 թ. Լոս Անջելոսում հրատարակված «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» գրքում. տե՛ս էջ 3-7 և առանձին գիտական հոդվածներում: Բնականաբար փաստեր ենք բերել նաև թուրք պատմագիրների և տարեգիրների երկերից:

2. Այն պարբերաբար լույս է տեսել «Ասպարեզ» օրաթերթում. 1991-ին՝ ապրիլ 23-24, 1992-ին՝ ապրիլ 24-25, 1994-ին՝ ապրիլ 23, 1996-ին՝ ապրիլ 23, 1998-ին՝ ապրիլ 24-25, ինչպես նաև «Իջնիածին» հանդեսում:

3. Հ. Տաճատ Վրդ. Եարտըմյան. Հայաստանի վանքերուն և եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 և 1915-1925 տարիներուն, Վենետիկ, Ս. Ղազար, 1995, էջ 80-81:

4. Տե՛ս «Ասպարեզ» 1992, ապրիլ 24-25, էջ 33:

5. ՊԲՀ, 1988, թիվ 1, էջ 215:

6. Կարպիս Տեր-Եղիայան. Զրույց լուության մեջ, Լոս Անջելոս, 1993, էջ 40,90:

7. Նույն տեղում, էջ 134:

8. Նույն տեղում, էջ 194:

9. Այս այցելության մասնակից Հրանդ Մարգարյանը 1998 թ. հրատարակեց խիստ հետաքրքիր և բովանդակալից իր ականատեսի տպավորությունները «Քարաձայն պատարագ» խորագրի տակ, նկարազարդ, հայերեն և անգլերեն լեզուներով: Տե՛ս Հրանդ Մարգարյան, Քարաձայն պատարագ, Նյու Յորք, 1998, 269 էջ:

10. Տե՛ս «Ասպարեզ», հուլիս 19, 1997, էջ 14-15:

11. ՊԲՀ, 1988, թիվ 1, էջ 215:

13. Այս տեսաերիզի վերնագիրն է. «keeping the Faith» (Հավատքի պահպանումը), Balabanian Vidio production.

14. «Ասպարեզ», մայիս 31, 1996, էջ 11:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՊԱՅՔԱՐ





ԶԵՅԹՈՒՆԻ 1895-96 ԹԹ. ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Զեյթունի հայ լեռնականները 17-րդ դարից սկսած բազմիցս պայքարի մեջ են եղել պահպանելու համար իրենց կիսանկախ արտոնյալ վիճակը Օսմանյան կայսրությունում և թույլ չեն տվել օտարների մուտքը իրենց սահմաններից ներս: Հետագա դարերին սուլթանական իշխանությունները երբեք չեն հաշտվել նման կարգավիճակի հետ և ձգտել են ընկճել լեռնագավառի ըմբոստ բնակիչներին: Հատկապես Մարաշի կառավարիչները տևապես ջանացել են ասպատակել և իրենց ենթարկել գավառը, բայց զեյթունցիները ամեն անգամ պատասխանել են ապստամբությամբ և հերոսական ինքնապաշտպանությամբ:

Միայն 1865 թ. սուլթան Աբդուլ Մեճիտին հաջողվեց վերջ տալ այդ կիսանկախության և նշանակել առաջին թուրք կառավարիչը Զեյթունում: Այնուհանդերձ 1877-78 թվականների ռուս-թուրքական պատերազմի ավարտին, Ենիտունյան տոհմի Պապիկ իշխանի գլխավորությամբ զեյթունցիները կրկին ապստամբելով 3 տարի վերականգնեցին իրենց նախկին արտոնյալ վիճակը: Սակայն քաղաքին հսկող բարձունքում թուրքերը զորանոց կառուցելով սկսեցին օրնիբուն հետևել լեռնականներին:

Իսկ Զեյթունի 1895-96 թվականների ապստամբությունը տեղի ունեցավ Աբդուլ Համիդյան բռնատիրության հայերի հալածանքների և զանգվածային կոտորածների պայմաններում:

Մի փոքր հետադարձ հայացք գցելով, նշենք, որ Բեռլինի վեհաժողովից հետո, երբ հայոց հարցը միջազգային բնույթ ընդունեց, սուլթանական կառավարության ազգային և կրոնական հալածանքները, կյանքի ու գույքի անապահովությունը, հարկային ծանր դանձումներն ու դավառային պաշտոնյաների չարաշահումներն ավելի մեծ չափերի հասան:

Արգելվեց «Հայաստան» բառի օգտագործումը, հայկական դպրոցներում հայոց պատմության դասավանդումը: Ոչնչացվեցին Վարդան Մամիկոնյան, «Մայր Հայաստան» նկարները: Այդ օրերին Աբդուլ Համիդը հայտարարում էր, որ քարտեզի վրայից պետք է ջնջել Զեյթունը:

Առանձին թուրք պետական գործիչներ բացահայտ հայտարարում էին Օսմանյան կայսրությունում հայ ազգը վերջնականապես բնաջնջելու մասին:

1891 թ. Աբդուլ Համիդի նախաձեռնությամբ կազմակերպվեցին հիմնականում քրդերից կազմված «Համիդիե» անկանոն զորագնդերը, որոնց գլխավոր նպատակներից մեկն էր հալածել ու կոտորել հայ բնակչությանը:

Մյուս կողմից հայ ժողովուրդը, Բեռլինի վեհաժողովից հետո, նկատելով մեծ պետությունների անտարբեր վերաբերմունքը Հայկական Հարցի նկատմամբ, իր փրկության համար բռնեց սեփական ուժով պայքարելու ուղին:

Այդ օրերին հայ հասարակական գործիչ՝ Գարեգին Սրվանտձյանը գրում էր «Օտարեն պետք չէ բան հուսալ, ջանանք մենք զմեզ հոգալ, պատրաստվիլ ու ցույց տալ ազգաց, մենք ալ ազգ մի ենք...»:

Բուռն վերելք ապրեց Օսմանյան բռնակալության լծից հայ ժողովրդի ազատագրման շարժումը: Աստիճանաբար սկսեցին ձևավորվել հայրենասիրական, ազատագրական գաղտնի խմբակներ ու կազմակերպություններ: 1887 թ. Հնչակյան և 1890 թ. դաշնակցություն կուսակցությունների ստեղծումով աննախադեպ պայքար սկսվեց հայ ժողովրդին զենքի ուժով ազատագրելու ծրագրի իրականացմանը:

Տվյալ ժամանակ Աբդուլ Համիդի վարչակարգի հայահալած քաղաքականության դեմ ուղղված ժողովրդական հուզումները լայն թափ ստացան հատկապես Սասունում: 1890-

ական թվականներից սկսած սասունցիները ինքնապաշտպանական կռիվներ մղեցին թուրք բռնակալների դեմ և շեշտակի հակագրոհներով ետ շպրտեցին թուրքական զորագնդերի հարձակումները։ Սակայն թշնամու գերակշռող մարտական սպառազինության դեմ չկարողացան մինչև վերջ դիմակայել և ազատագրական պայքարը հասցնել իր հաղթական ավարտին։ Հերոսական ինքնապաշտպանական կռիվներ տեղի ունեցան նաև Վանում, Մուշում, Ուրֆայում, Շապին Գարահիսարում, Զարսանջակում, Մալաթիայում և այլուր։

Թուրքական զորքերի դեմ անհավասար պայքարի դուրս եկավ նաև Տավրոսյան անառիկ լեռնաշխարհի Զեյթունի ազատատենչ հայ բնակչությունը։

Ահա այդ բարդ իրավիճակում, 1895 թ. ամռանը Զեյթունի ինքնապաշտպանությունը կազմակերպելու նախաձեռնությամբ Զեյթուն են ժամանում Հնչակյան կուսակցության գործիչներ՝ այդ թվում՝ Աղասին (Կարապետ Թուր-Սարգիսյանը), Ապահը (Պետրոս Գմգմյան), Զելլաթը (Կարապետ Ղրփանոսյան), Հրաչյան (Գրիգոր Ղարիբյան), Մլեհը (Ասատուր Տամղաճյան)։ Բնականաբար, սրանց հետ գործակցում էին այլ հայդուկներ և անվանի գործիչներ ևս, ինչպես օրինակ. Հաջընցի Ջին Թորոսը, Մուշի նշանավոր հայդուկ Մեսո Շահենը, Միհրան Գայանը, Ասլանը (Մինաս Էլմակյան), Կարապետ Սուքիասյանը, Նշան Ղազարոսյանը և ուրիշներ։

Մի խոսքով Սուլթանական կառավարության ջարդարարական քաղաքականության դեմ պայքարելու, իրենց կյանքը, պատիվն ու հայրենի հողը պաշտպանելու համար զենքը ձեռքերնին ոտքի կանգնեցին Զեյթունի բոլոր քաջամարտիկները։

Իսկ զեյթունցիների շարժումը ղեկավարում էին զեյթունցի իշխան Ղազար Շորվայանը, Արեգին գյուղի տանուտեր՝ Խաչեր Կարապետյանը, Ավագակալի գյուղապետ Հարությունն Գոճայանը, Ս. Կարապետ վանքի փոխ վանահայր Բարդուղիմյոս Վարդապետ Թագաճյանը և ուրիշներ։

1895 թ. հոկտեմբերի 12-ին Արեգին գյուղի մոտ, Մութ Ձոր կոչված վայրում ապստամբության ղեկավարները ժողով գումարելով որոշեցին՝ «տնտեսական ու քաղաքական ազատություն ձեռք բերելու համար կենաց մահու պայքար մղել թրքական բռնակալության դեմ. երկու օր անց ապստամբական ուժերը շարժել դեպի Զեյթուն և գրոհել թրքական զորանոցի վրա»։

700-ի հասնող զեյթունցիների ջոկատը հոկտեմբերի 15-ին լույս 16-ի գիշերը մոտեցավ զորանոցի պարիսպներին։ Թուրքական զորանոցի գրավումը խիստ կարևոր էր այն տեսակետից, որ նախ ձեռք էին բերելու զինամթերք և երկրորդ բարձրանալու էր ապստամբների մարտական ոգին, որոնց թիվը համալրվելով հասավ 2000-ի։

Մարաշից ժամանած թուրքական զորամասերը ամեն կերպ փորձում էին մոտենալ զորանոցին, բայց իզուր։ Պաշարման ընթացքում Նազարեթի հորեղբոր որդի Նշան Նորաշխարհյանը իր փոքրիկ ջոկատով գրավել էր կառավարչատունը և կալանքի տակ առել թուրք բոլոր պաշտոնյաներին։ Գերված գայմագամն ու քաղաքապահ ջոկատի հրամանատարը, զեյթունցի ղեկավարների պահանջով, նամակով դիմեցին զորանոցի պարետին՝ անձնատուր լինելու մասին, հակառակ դեպքում սպառնացին պայթեցնել զորանոցը։ Եվ այդպես հոկտեմբերի 17-ի երեկոյան պաշարված կայազորը անձնատուր եղավ ապստամբներին։

Զորանոցի վրա բարձրացավ ապստամբների կարմիր դրոշը, որի վրա գրված էր՝ «*Զեյթունի անկախ իշխանություն*»։ Հոկտեմբերի 19-ին ստեղծվեց Զեյթունի հեղափոխական ժամանակավոր կառավարություն, ինչպես նաև զինվորական խորհուրդ։

Ապստամբության պաշտոնական ղեկավարությունը ստանձնել էր Աղասին և բոլոր պաշտոնական գրությունները

կրում էին նրա ստորագրությունը: Սակայն ապստամբության իրական ղեկավարը Նազարեթ Չավուշն էր, որը ռազմավարական փայլուն հմտություն ցուցաբերեց մարտերի ընթացքում:

Թուրքական զորանոցի գրավումը մեծ իրարանցում առաջացրեց Կ. Պոլսի թուրքական իշխանությունների մոտ, որոնք անհապաղ միջոցների դիմեցին ճնշելու ապստամբությունը:

Մարաշից դեպի Զեյթուն շարժվեց զորավար Ռեմզի փաշայի Արևելյան կոչված բանակը, իսկ Ադանայի կողմից՝ Ալի Բեկի արևմտյան զորագունդը: Այս երկու բանակներում կային 30 հազարից ավելի զինվորներ: Պատրաստվելով առաջիկա ահեղ մարտերին, զեյթունցիները միևնույն ժամանակ դիմումներ հղեցին եվրոպական հյուպատոսներին, ինչպես նաև Կ. Պոլսի հայոց պատրիարքին:

Հայերին զինաթափելու և զորանոցը հանձնելու ուղղությամբ բանակցությունները մնացին անհետևանք, քանի որ զեյթունցիները մերժեցին իրենց ղեկավարներին և թուրք գերիներին հանձնելու պահանջները ու թրքական բանակը անցավ հարձակման:

Դեկտեմբերի 2-ին թուրքերը Ս. Փրկիչ վանքի մերձակա շրջանում հարձակվեցին զեյթունցիների պաշտպանության վրա և անընդմեջ գրոհներից հետո, հրետանու կրակի տակ թուրքերին հաջողվեց գրավել վանքը և հրդեհել զայն: Այնուհետև շարունակվեց Զեյթունի 49 օրյա հերոսամարտը: Զեյթունցիները անձնազոհ կռվելով և իրենց հանդուգն մտահղացումներով ու հնարամտությամբ ամեն կերպ խափանում էին թշնամու առաջխաղացումը: Ահա մի դրվագ զեյթունցիների ձեռնարկած հանդուգն մի սխրանքի մասին: Դեկտեմբերի 21-ին թուրքական համազգեստ հագած ապստամբների փոքրիկ մի ջոկատ Եղիա Նորաշխարհյանի ղեկավարությամբ գիշերով աննկատ բարձրանում է Բերզնկայի բարձունքները

և այնտեղից գրոհով մխրճվում թուրքական զորաբանակի շարքերը: Հարձակվողներին չտարբերելով յուրայիններից, թուրքերը սկսում են անողոքաբար խողխողել միմյանց:

Հատկանշական է, որ մարտերի ընթացքում մեծ ու փոքր, հատկապես զեյթունցի խիզախ կանայք լծված էին պաշտպանական գործին: Ովքեր կռվել չէին կարող, մեծ եռանդով սննդամթերք ու վառոդ էին մատակարարում կռվողներին:

Չնայած թշնամու լավ սպառազինության և թնդանոթների հարվածներին, զեյթունցիները մեծ դժվարությամբ և զգալի կորուստների գնով, կարողացան կանգնեցնել թուրք զինվորների ամենօրյա ու անընդմեջ գրոհները:

Զեյթունի հարցը շտապ կարգավորելու խնդիրն անհետաձգելի էր դարձել Բ. Դուռն համար, քանի որ խիստ սրվել էին հարաբերությունները Հունաստանի հետ և անհրաժեշտ էր 5-րդ բանակը կենտրոնացնել նրա սահմանի մոտ: Այս իրադրության մեջ Բ. Դուռը անսալով Կ. Պոլսի եվրոպական դեսպանների ու հայոց պատրիարքարանի միջնորդությանը, իր համաձայնությունը հայտնեց, որպեսզի մեծ պետությունների Հալեբի հյուպատոսները իրենց երկրների անունից միջնորդի դեր ստանձնեն Զեյթունի ապստամբների և թուրքական կառավարության միջև: Հրաման տրվեց նաև թուրքական բանակի հրամանատարության՝ դադարեցնելու ռազմական գործողությունները:

Հունվարի վերջերին Հալեբից թուրքական բանակատեղի եկան ռուսական, անգլիական, ֆրանսիական և իտալական հյուպատոսները՝ Ցակիմանսկին, Բարնհայմը, Բարթելեմին և Հենրիկո Վիտտոն: Գերմանական և ավստրիական հյուպատոսները չէին ժամանել: Նրանց ներկայացնում էր Վիտտոն:

9 օր տևած թեժ քննարկումներից հետո բանակցությունները ավարտվեցին և հունվարի 30-ին Զեյթունի ապստամբների, թուքական կառավարության և վեց տերությունների ներկայացուցիչների միջև ստորագրվեց մի համաձայնագիր:

Ըստ որի ընդհանուր ներում էր շնորհվում բոլոր ապստամբներին, իսկ Հնչակյան դրսեկ գործիչներին արտոնվում էր պետական ծախսով հեռանալ արտասահման։ Փախստական գյուղացիներն ու աշխարհազորայինները անարգել և անպատիժ պետք է վերադառնային իրենց բնակավայրերը։ Զեյթունում նշանակվելու էր քրիստոնյա կառավարիչ, ոստիկանական և կառավարչական պաշտոններում նախապատվությունը տրվելու էր զեյթունցիներին։ Գրավված զենքերը պիտի վերադարձվեին, իսկ բանակը պետք է հեռանար, թողնելով միայն մեկ զորամաս։ Զեղյալ հայտարարվեցին նախկինից մնացած բոլոր ապառքները։

Նույն օրը Զեյթունի եկեղեցիների զանգերի երկարատև զողանջով ազդարարվեց ապստամբության հաղթական ավարտը։ Դժբախտաբար այս համաձայնագիրը, ինչպես նաև բարենորոգումներին վերաբերող մյուս ծրագրերը մնացին թղթի վրա։ Խոչընդոտներ եղան նաև հնչակյան գործիչների Եվրոպա մեկնելու խնդրի շուրջ։ Այնուամենայնիվ նրանց հաջողվեց Մերսինի նավահանգստից մեկնել Եվրոպա։

Զեյթունցիները իրենց այդ ըմբոստ արարքով կասեցրին հայկական ջարդերը իրենց շրջանում և հատկապես Ադանայում։ Իր ժամանակին Արշակ Զորանյանը բարձր գնահատելով Զեյթունի իրադարձությունները, ասել է, որ «ամբողջ Հայաստանի ավերումը լուռ ու մունջ դիտող Եվրոպան միջամտեց Զեյթունի գործերին. քանզի լեռնականները զենքով էին պաշտպանել ապրելու իրենց իրավունքը[1]։

Եվ դա իրոք, որ այդպես էր։ Ինչպես գիտենք նույն կարծիքին էր նաև Խրիմյան Հայրիկը և այլ հայ գործիչներ։ Նա դեռևս Բեռլինի վեհաժողովում նկատելով եվրոպական պետությունների խարդավանքները, զենքի կոչեց հայ ժողովրդին։ Թույլ տվեք այստեղ իր իսկ խոսքերով բերել նրա պատկերավոր խորհրդածությունները այդ մասին. «Բեռլինի մեջ հոգեճաչ հարիսա կցրվեին, բոլոր հպատակ ազգերին,

ինձի դրկեցիք, որ հայերին ընկած մասը առնեմ բերեմ, ես ալ պտուկն առի ու վազեցի։ Բոլորը երկաթե շերեփներով վերցրին և տարան իրենց բաժինը։

Դուք ինձի շերեփի տեղ թուղթ տվիք։ Այդ թղթի կտորը որչափ որ խոթեցի տաք հարիսայի մեջ, թուղթը թացացավ, լկեցավ, մեջն ընկավ, ես ալ պարապ թողի ետ եկա. մոռացա առաջուց մի քանի հատ զեյթունցի տանեի հետս, անոնք շերեփ ունեին, կարելի է ամանին տակեն, քովերեն բան մը փրցնեին[2]։

Ինչպես նշեցինք վերևում, 1895-96 թթ. զեյթունցիների մղած հերոսական ընդվզումը, հայ ժողովրդի ազատագրական պայքարի և անկախության ձգտման ամենափայլուն դրվագներից մեկն է։ Զեյթունի քաջամարտիկները հասան ոչ միայն բարոյական, այլև գործնական հաղթանակի, ստիպելով թուրքերին նստել հաշտության սեղանի շուրջ, ռազմադաշտում հաղթանակած հայ ապստամբների հետ։

Հայ ժողովուրդը բազմաթիվ հայրենասիրական երգեր հյուսեց հայրենիքի ազատության համար պայքարող այդ անձնազոհ քաջերի մասին։ Հետագայում, 1915 թ. զեյթունցիների ազատատենչ ոգին թևածում էր Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում՝ Մուսա Լեռից մինչև Վան, Շաբին Գարահիսարում, Ուրֆայում, Հաջընում, Յոզղաթում և այլուր ինքնապաշտպանական կռիվներում զենքը ձեռքերին հերոսաբար մարտնչած հայ քաջերի սրտերում։ Այն ամենայն խորությամբ թևածեց նաև մեր օրերում։ Արցախի զինվորը մարտի էր գնում զեյթունցիների, սասունցիների և մյուսների մասին հյուսված խրոխտ երգերը շուրթերին։

Դժբախտաբար այլ ելք ունեցավ 1915 թ. Մեծ Եղեռնի ընթացքում Զեյթունի հայ ազգաբնակչության ճակատագիրը, քանի որ այն չկարողացավ պետք եղածին պես կազմակերպել ինքնապաշտպանությունը, տեղի տալով Կիլիկիայի Սահակ Կաթողիկոսի թուրքական զորքերին չդիմադրելու հորդորնե-

ին։

Այնուհանդերձ ինքնապաշտպանական մարտեր տեղի ունեցան։ Զեյթունի լեռներում ապաստանած քաջամարտիկները պայքարեցին և ինքնապաշտպանական կռիվներ մղեցին, բայց ապարդյուն։

1915 թ. մայիսին թուրքական զորքերին հաջողվեց գրավել Զեյթունը և հաշվեհարդար տեսնել տեղում մնացած հայ բնակչության հետ ու բռնությամբ տեղահանելով քշել Տեր Զորի անապատները, իսկ մայիսի 31-ին Սուլթան Մեհմեդ Ռեշադի հատուկ հրամանագրով Զեյթունի գավառի անունը դարձավ Սուլեյմանլը[3]։

1918 թ. Թուրքիայի պարտությունից հետո Ֆրանսիան գրավեց Կիլիկիան։ Մոտ 1500 զեյթունցիներ վերադարձան իրենց բնակավայրերը։ Սակայն 1921 թ. երբ Ֆրանսիան Կիլիկիան հանձնեց թուրքիային քեմալիստների ճնշման տակ Զեյթունը վերջնականապես դատարկվեց հայերից։ Այդպես արմատախիլ եղավ նաև արծվաբույն Զեյթունը։

Իսկ Մեծ Եղեռնից հետո աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի բեկորները ի հիշատակ իրենց ծննդավայրի, իրենց կարոտագին հայրենիքի ու պատմական անցյալի հավերժացման, կենցաղի, սովորությունների, բարիքների, մշակույթի հարատևման, ինչպես նաև այն սուրբ գործին, որին «Հայապահպանություն» ենք ասում, այստեղ այնտեղ սկսեցին հիմնել հայրենակցական միություններ, որոնք ժամանակի ընթացքում ամրապնդվեցին և ընդարձակվեցին։ Հայաստանում նույնիսկ առանձին թաղամասեր, շրջաններ սկսվեցին կոչվել հայրենի երկրի կորցրած քաղաքների, գյուղերի և մղված հերոսամարտերի վայրերի անվանումներով։ Կառուցվեցին և կառուցվում են վեհ հուշարձաններ և կոթողներ։ Իսկ 1946 թ. մի խումբ զեյթունցի հայրենադարձներ, այդ թվում՝ Փանոս Նորաշխարհյանը, Եղիա Ալաջաջյանը, Կարապետ Կիրակոսյանը, Սահակ Բոյամյանը, Տեվլեթ

Գարանֆիլյանը դիմում են Երևանի քաղաքային խորհուրդ, խնդրելով իրենց մի հաղատարածք հատկացնել Երևանում, Նոր Զեյթուն ավանը հիմնելու համար։ Զեյթունցիների պահանջը ընդունվում է և ինչպես գիտենք Երևանի հյուսիսային մասում հիմնադրված է բոլորիս հայտնի Նոր Զեյթուն թաղամասը։ Հայի դառը ճակատագրի բերումով, 1977 թ. մի խումբ զեյթունցի հայրենասերներ, այս հեռավոր ափերում՝ ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգում, հիմնում են Զեյթունի հայրենակցական միությունը։

Գոհունակությամբ պետք է նշել նաև, որ նորանկախ Հայաստանում, ի մի բերելով իրենց ուժն ու եռանդը 1993 թ. օգոստոսի 23-ին, լիիրավ ու ազատ համագործակցության սկզբունքով Երևանում հիմնեցին Հայաստանի Հանրապետության «Հայրենակցական Միությունների Խորհուրդ». հիմնադիրներն էին Զեյթունի, Այնդապի, Հայաստանի Եղեսահայերի (ուրֆացիների), Մուսա լեռի, Նոր Արաբկիրի, Նոր Կյուրինի, Սեբաստիայի, Վասպուրականի և վերածնված Հաջընի հայրենակցական միությունները։

Թերթելով Հայաստանի Հայրենակցական Միությունների Խորհրդի հրատարակած «Բնօրրան» հանդեսը, գոհունակությամբ և հպարտությամբ նկատում ենք, թե ինչպես այսօր հայրենակցական միությունները լծված են նորանկախ Հայաստանի հանրապետության բարգավաճման, նրա պետականության և տնտեսության զարգացման, ինչպես նաև արցախյան գոյամարտին և անկախության թև ու թիկունք կանգնելու սուրբ գործին։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս «Անահիտ», 1899, թիվ 10։

2. Հայ ժողովրդի պատմություն, 6-րդ հատոր, Երևան, 1981, էջ 122-123։

3. Dustur, Tertip-i sani, C. I, Dersaadet, 1336, s. 615, արաբատառ թուրքերեն (օրենքների ժողովածու)։

ԲԵԴԵՎԻԻ ՏԱՐԱԶՈՎ ՀԱՅԸ ԿԱՄ ՈՐԲԱՀԱՎԱՔԻ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՆՎԻՐՅԱԼԸ

Ամեն անգամ, երբ բացում և թերթում էի տևապես գրասեղանիս վրա գտնվող Լիպարիտ Ազատյանի «Հայ Որբերը Մեծ Եղեռնի» խիստ շահեկան աշխատությունը, 192-րդ էջում ուշադրությունս էր գրավում արաբական բեդևիի տարազով մի խորհրդավոր մարդու մեծադիր նկարը, որի կողքին կար հետևյալ ծանոթագրությունը. «Փառնակ Շիշիկյան բեդևիի տարազով Սուրիո անապատներեն հայ որբեր կհավաքեր»։ Իսկ գրքի առանձին էջերում մատնանշվում է նաև, որ Փառնակ Շիշիկյանը Տեր Զորի անապատներում մահվան ճիրաններից հավաքել և փրկել է 500 հայ որբեր։

Օրերից մի օր հետաքրքրությանս հագուրդ տալու համար վերոհիշյալ գիրքը վերցրեցի և գնացի Հոլիվուդում գտնվող «Զեյթուն» նպարատունը։ Լսել էի, որ խանութի սեփականատերերը նույնպես կրում են այդ հազվագյուտ ազգանունը։ Մի տեսակ անակնկալի եկա, զարմանքը պատեց ինձ, երբ Աստուրն ու Ստեփանը նայելով նկարին միաբերան ասացին, որ դա իրենց պապն է։

Որպես պատմաբան հետաքրքրությունս ավելի խորացավ և երբ սկսեցի հարցումներ տալ իրենց պապի խիզախ գործունեության մասին, ասացին, նրա մասին մի գիրք է լույս տեսել Երևանում և խոստացան այն բերել, հանձնել ինձ։

Հաջորդ օրը տղաների հայրը՝ Փառնակ Շիշիկյանի հարազատ որդին, Զեյթուն Շիշիկյանը, ինձ հանձնեց խնամքով պահված գիրքը, որը լույս էր տեսել 1991 թ. «Հայաստան» հրատարակչության կողմից, հանրածանոթ հրապարակախոս Շաքե Վարսյանի առաջաբանով։

Այսպես սկսվեց Հակոբ Ճղլյանի հեղինակած «Մովերում մնացած կյանք» գրքի հետ առաջին ծանոթությունս։ Բնակա-

նաբար վերադառնալով տուն, այն կարդացի մեկ շնչով, խորը հետաքրքրությամբ և հաճախ չորացնելով հուզմունքից լցված աչքերս։

Կրկին ալեկոծվեցի հոգեպես, քանի որ գրքի բովանդակությունը ընթերցողին տանում էր դեպի 1915 թվական, Մեծ Եղեռնի ողբերգության վերջնական հանգրվանը՝ դեպի Սիրիայի կիզիչ անապատներն ու սահմռկեցուցիչ քարանձավները, ուր անողոքաբար քշվեցին հայերի մահվան կարավանները։

Եվ որբեր, որբեր ամենուր։ Իսկ հրաշքով ազատվածները մի կտոր հաց գտան և պատսպարվեցին վրանաբնակ արաբ բեդևիների մոտ։

Ահա այդ դժնդակ օրերին եղան մարդիկ, որոնք աչքի առաջ առնելով ամեն մի վտանգ փորձեցին ազատել և կրկին իր ժողովրդի գիրկը վերադարձնել որբ հայ երեխաներին։

Դրանցից մեկն էլ Փառնակ Շիշիկյանն էր, նույն ինքը՝ Ահմեդ էլ Զեզզան։

Ելնելով գրքի բովանդակությունից պետք է ասել, որ հիմնականում գործող անձինք զեյթունցիներն են, այն զեյթունցիները, որոնք իրենց բնօրրան Զեյթունի գավառում դարեր շարունակ ապրելով կիսանկախ վիճակում, հերոսական ինքնապաշտպանական մարտեր մղեցին սուլթանական կանոնավոր զորքերի դեմ և զենքը ձեռքերնին անձնուրաց պաշտպանեցին իրեց կյանքը, պատիվն ու հայրենի հողը։

Սակայն 1915 թվականին զեյթունցի տղամարդիկ դառը խաբեությամբ զոհ գնացին Թուրքական ջարդարարական քաղաքականությանը, իսկ կանայք, ծերերն ու երեխաները անողոքաբար քշվեցին դեպի Սիրիայի անապատները՝ դաժան տառապանքներով կրելու իրենց մահը։

Այդ որբ երեխաների տխուր ճակատագիրն ունեցավ նաև զեյթունցի Փանոս Շիշիկյանի որդին՝ Փառնակը։ Նա հազիվ 13 տարեկան էր երբ դաղթի ճանապարհին իր աչքերի

առաջ թուրք զինվորները սպանեցին մորը՝ Մարաշի կենտրոնական վարժարանի ուսուցչուհի օրիորդ Խանումին։ Օրերով իր մոր դիակի շուրջ խորը թախիծով ու ցասումով դեգերելու ընթացքում, որբացած պատանուն պատահաբար փրկում է մի արաբ ձիավոր։ Եվ այդպես Փառնակը աստիճանաբար ընտելանում է անապատի նիստ ու կացին, դառնում հովիվ և կրում իր փրկարարի տոհմի անունը՝ դառնալով Ահմեդ էլ Ջեզզա։

Անցնում են տարիներ, բայց երիտասարդ հովիվը չի մոռանում իր ինքնությունն ու հայերեն լեզուն։ Ոչխարները արածացնելու ընթացքում հաճախ նկատում է, որ վրանաբնակ ցեղախմբերի մոտ արաբացած հայ երեխաներ կան, ուստի ուխտում է ինչ գնով լինի փրկել նրանց և վերադարձնել իր ժողովրդի գիրկը։ Եվ այդպես սկսում է գաղտնաբար քարտեզագրել անապատի աշիրեթների բնակավայրերը, ուր հայ որբեր էին գտնվում։ Ինչպես նշվեց վերևում, դրանց թիվը աստիճանաբար հասնում է 500-ի։ Փառնակի այս հայրենանվեր աշխատանքը իզուր չի անցնում... Օրերից մի օր, ոչխարի առևտրի գործով որպես ավագ հովիվ հայտնվում է Հալեբ քաղաքում և պատահաբար հանդիպում զեյթունցի Փանոս Նորաշխահյանին։ Պարզվում է, որ վերջինս կոշկակարի արհեստով զբաղվելով հանդերձ նաև արաբների և քրդերի մոտ ապաստան գտած հայ երեխաների որոնման հանձնաժողովի նախագահն է։ Փառնակը իր ծոցում պահված ցուցակը հանձնում է նրան՝ առաջարկելով, հնարավորության սահմաններում անապատի հարմար մի վայրում հիմնել մի գյուղ, որպեսզի կարողանային հավաքել և պատսպարել բոլոր որբերին։

Հետագայում Հալեբի Ազգային Խորհրդի ջանադիր աշխատանքի շնորհիվ իրականանում է Փառնակի այս երազանքը։ Սիրիայի հեռավոր Ջեզիրե նահանգի Գամիշլի և Հասաքե քաղաքների միջև գտնվող մի տարածքում հիմնվում է Թել

էլ Բրակ գյուղը։ Փառնակը նշանակվում է գյուղապետ գյուղի Վարի հատվածում, իսկ Վերի հատվածում՝ Աբրահամ Ղուրտջյանը։

Ի միջի այլոց նշենք, որ Ահմեդ էլ Ջեզզան իր ձեռներեցությամբ և խիզախ արարքներով աստիճանաբար մեծ համբավ է ձեռք բերել անապատային արաբների և պետական պաշտոնյաների մոտ։

Եվ ահա բուռն թափ է ստանում որբ երեխաներին հավաքելու և Հալեբ տեղափոխելու դժվարին գործը, որին անձնվիրաբար լծվում են նաև Եղիա Ալաջաջյանը (անվանի գրող Ստեփան Ալաջաջյանի հայրը), Աբրահամ Շիշմանյանը, Սինանյան եղբայրները և շատ այլ նվիրյալներ։

Հատկապես Եղիա Ալաջաջյանը, Վերին գյուղի գյուղապետ Աբրահամ Ղուրտջյանի հետ մեկնում են անապատի առավել վտանգավոր վայրերը՝ հայ երեխաներին հավաքելու ու օր առաջ Հալեբ հասցնելու համար։

Դեռևս երիտասարդական տարիներին Փառնակը արաբացած իր ընկերներին հորդորում է ամուսնանալ միայն հայ աղջիկների հետ, որպեսզի շարունակվի Զեյթունցիների դյուցազնական ոգին։ Այս ծրագիրը բուռն կերպով կյանքի է կոչվում Թել էլ Բրակ գյուղում։ Մյուս կողմից, նա միաժամանակ աշխատում է որոնել նաև արաբացած հայ որբերի հարազատները՝ երեխաներին նրանց հանձնելու նպատակով։ Այդ բոլորը անուն-ազգանուններով և մանրամասնությամբ հիշատակված են Հակոբ Ճղլյանի կողմից վերոհիշյալ գրքում։

Այդ տարիներին Փառնակը կատարել է նաև մի այլ կարևոր և պատասխանատու առաջադրանք։ Բեյրութի Անթիլիասի մայրավանքի բակում կառուցված հատուկ մատուռի համար հավաքել է 1915 թ. Եղեռնի զոհերի աճյունները Տեր էլ Զորի անապատից, հատկապես Շետտետիեյի քարանձավից։

Ահա, այդ առթիվ Ազգային Խորհրդի կողմից, նրան ուղարկված նամակը (տե՛ս էջ 36).

«Հարգարժան Պրն. Փառնակ, դուք շատ մեծ ծառայություններ եք մատուցել հայ ժողովրդին: Այժմ էլ ձեր օգնության կարիքն ունենք: Ազգային Խորհուրդը որոշել է Եղեռնի ճամբարներից հավաքել թուրքական յաթաղանի զոհերի ոսկորները՝ Բեյրութի Անթիլիասի վանքում ցուցափեղկի մեջ պահելու համար՝ ի տես աշխարհի, ի վկայություն մեռնողաց և ի հիշողություն ապրողաց: Զոհված մեկուկես միլիոնի գոնե մի մասի նշխարները պետք է սրբացնենք: Մենք համոզված ենք, որ միայն դուք ի վիճակի եք այդ գործը գլուխ բերել»:

Բարևներով՝
Ազգային Խորհուրդ

Այս սուրբ գործում խոչընդոտներ կարող էին լինել և եղել են: Բայց Փառնակը շատ լավ տեղյակ էր վրանաբնակ արաբ ցեղերի բնավորություններին և սովորություններին ու գիտեր ինչպես վարվել վտանգի դեպքում: Առանց հապաղելու, Միսակ Քոթուկյանի և Հակոբ Տեիրմենջյանի հետ ձեռնամուխ է լինում այդ դժվարին առաջադրանքի իրագործման և կարճ ժամանակում կատարում այն: 15 օր հետո կատարված այդ սխրանքի համար Փառնակը արժանանում է շնորհավորական նամակի:

Զարմանալի է, որ այսօր թուրք պատմաբաններն ու պետական գործիչները շարունակում են ժխտել հայերի ցեղասպանությունը: Բայց չէ՞ որ ամբողջ Տեր էլ Զորի անապատը նահատակված անմեղ հայերի մի համայնական գերեզմանոց է՝ երիտթուրքերի կողմից գործադրված ցեղասպանության մի անժխտելի փաստ:

Փառնակ Շիշիկյանը հայ որբերին դեպի իրենց ազգային պատկանելիությունը վերադարձնելու գործին զուգընթաց եռանդագին աշխատանք է կատարում նաև Թել էլ Բրակ

գյուղը շենացնելու, ընդարձակելու և բնակչությանը կատարյալ հայեցի դաստիարակություն տալու գործում: Նրա անմիջական նախաձեռնությամբ Թել էլ Բրակում բացվում են հայկական դպրոցներ: Աշխուժանում է մարզական կյանքը: Հիմնվում է «Բաղրամյան» մարզական ակումբը: Այս գրքի հեղինակ՝ Հակոբ Ճղլյանի և Հարություն Մելիքյանի գլխավորությամբ ստեղծվում է սկաուտական խումբ: Եվ ամենակարևորը օրըստօրե շատանում են գյուղի հայկական օջախները:

Ահա այս մթնոլորտում 1946 թ. հնչում է հայրենադարձության ազգահավաքի սուրբ կոչը՝ անհուն ուրախություն պատճառելով Թել էլ Բրակի «հազիվ հայեցի դարձած» բնակչության շրջանակում: Երկու գյուղապետները՝ Փառնակ Շիշիկյանն ու Աբրահամ Ղուրտջյանը առաջիններից էին, որ ողջունեցին հայրենադարձության վեհ գաղափարը, որպեսզի առ ավելի եռանդով վերաշինեն և շենացնեն իրենց մայր հայրենիքը:

«Օտար հողը ազգ չի պահի: Իսկ հայրենի հողը հավիտենական ծնող է» ասելով, Փառնակը լծվում է հայրենադարձության գործին և կարճ ժամանակ անց իր բազմանդամ ընտանիքով տեղափոխվում է Հայաստան, իր հետ տանելով նաև համագյուղացիների մեծ մասին: Եվ իրոք, որ հայրենիքում ևս իր սրտակից ընկերներով վերակառուցում ու շենացնում է Էջմիածնի շրջանի Մրգաշատ գյուղը:

Սույն հոդվածը ուզում եմ ավարտել Հակոբ Ճղլյանի գրքից ստորև բերված խոսքերով և ապա տալ իմ եզրակացությունը այս գրքի և հեղինակի մասին:

«Հիմա չկա Փառնակ Շիշիկյանը, նահապետական այդ մեծ մարդը և մեծ հայը, չկա նաև բազմազավակ մայր Սիրանույշը, սակայն նրանց տասը զավակներն իրավամբ արժանի են նրանց ժառանգները կոչվելու: Կասկած չունեմ, որ նրանց թոռներն ու ծոռները ևս կշարունակեն իրենց պապիկի և տատիկի տոհմական արժանիքները, հայրենասի-

րությունը: Բայց ինչո՞ւ միայն զավակները: Նրա զավակներն են նաև նրա ջանքերով փրկված հազարավոր հայ որբերը, որոնք սփյուռքում և հայրենիքում անհուն երախտագիտությամբ են հիշում նրան...: Ես հույս ունեմ, որ օրերից մի օր, երբ վեպ գրվի Մեծ Եղեռնի մասին, նա կդառնա գլխավոր հերոսներից մեկը» (էջ 83):

Իսկ մենք եզրակացնելով նշենք, որ վեպի հերոս դառնալով հանդերձ, պետք է մտածել նաև այս գրքի վրա հիմնված մի շարժանկար պատրաստելու հարցի շուրջ: Հաճախ ենք մամուլում կարդացել Մեծ Եղեռնին նվիրված մի լիարժեք շարժանկար ստեղծելու մասին, բայց ցավով պիտի նշենք, որ դեռևս լուրջ քայլ չի կատարված այդ ուղղությամբ:

Շուտով կլրանա երկրորդ հազարամյակը և հեռու չէ այն օրը, երբ մենք կկանգնենք Մեծ Եղեռնի 100-ամյա տարելիցի նախաշեմին: Այնպես որ մեր մասնագետներն ու համապատասխան մարմինները պետք է այսօրվանից մտածեն այդ ուղղությամբ և ստեղծեն ըստ պատշաճի, խորհրդաստ մի շարժանկար, որպես հարգանքի տուրք և անմահացում մեր անմեղ նահատակների հիշատակին:

Այդ կարևորագույն նպատակի համար պետք է օգտագործվի ոչ միայն Հակոբ Ճղլյանի այս զգայացունց գիրքը, այլև որպես վավերագրական մատյան Լիպարիտ Ազատյանի «Հայ Որբերը Մեծ Եղեռնի» գրքի Ա. և Բ. հատորները:

Բարձր գնահատելով «Սակերում մնացած կյանք» գրքի բովանդակությունը, ուզում ենք մատնանշել, որ հեղինակը իրոք հայրենասիրական մեծ գործ է կատարել հայ որբերի խիզախ պաշտպան Փառնակ Շիշիկյանի հերոսական կյանքն ու գործունեությունը իր ժողովրդի հիշողության հանձնելու ուղղությամբ: 84 էջերից բաղկացած այս գիրքը պետք է թարգմանվի և հրատարակվի եվրոպական և այլ լեզուներով ևս:

Ես իմ սրտի պարտքն եմ համարում նաև մի երկու

խոսք ասել հեղինակի՝ Հակոբ Ճղլյանի մասին, քանի որ ինքն էլ հայի դառը ճակատագրի բերումով ականատես ու մասնակից է եղել Փառնակ Շիշիկյանի հայրենասիրական վեհ գործերին:

Դժբախտաբար այսօր մեզ հետ չէ նաև Հակոբ Ճղլյանը, քանի որ նա իր մահկանացուն կնքեց 1996 թ. Երևանում:

«Անժամանակ մահը մեզանից խլեց մեր սիրելի գործընկերոջ, բարի մարդուն, անկեղծ հայրենասերին, իր ժողովրդի, նորանկախ հայրենիքի և Արցախի հաջողություններով և հոգսերով ապրող սկզբունքային մտավորականին»:

Կարդում ենք նրա հիշատակին նվիրված այս տողերը Հայաստանի Հայրենակցական Միությունների Խորհրդի հանդես «Բնօրրան»ի թիվ 4-5, 1996, 140 էջում:

Իրոք, Հակոբ Ճղլյանի գերդաստանը 1947 թ. Թել էլ Բրակ գյուղից ներգաղթելով Հայաստան, լծվել է հայրենիքի վերաշինության վեհ գործին: Նա վերջին տարիներին նվիրվել էր հայրենակցական շարժմանը հիմնադրելով «Կյուրին» հայրենակցական միությունը, որի անփոխարինելի նախագահը էր մինչև իր կյանքի վերջը: Գրել է բազմաթիվ լրագրային հոդվածներ, ակնարկներ, բանաստեղծություններ և պատմվածքներ: Նրա գրչին են պատկանում նաև «Դեպի Սիբիր», «Երդվյալ մարդը» գրքերը:

Հակոբ Ճղլյանը օժտված էր մարդկային բարձր առաքինություններով: Եղել է սկզբունքային և ճշտախոս անձնավորություն:

Ահա մի հետաքրքիր դրվագ, որ տեղի է ունեցել 1995 թ. ապրիլի 23-ին Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի Մեծ դահլիճում Հայերի ցեղասպանության 80-ամյա տարելիցին նվիրված միջազգային գիտաժողովում:

Նիստերի ընթացքում նա միակ անձնավորությունն է եղել, որ համարձակորեն խոսք վերցնելով օրվա նախագահից, թուրք պատմաբան Թաներ Աքչամին թուրքերեն ասել է

հետևյալը (բերում ենք կրճատումներով։ Տե՛ս «Բնօրրան», թիվ 2-3, 1996, էջ 127)։

«Հարգարժան Փրոֆ. Թաներ Աքչամ, բարով եք եկել հայոց երկիր և հաճելի հյուր եք մայրաքաղաք Երևանում։ Հայ ժողովուրդը 80 տարի սպասել է, թե պիտի հայտնվի՞, արդյոք, մի թուրք պատմաբան, որը 1915 թ. Թուրքիայում կատարված ցեղասպանության ոճիրը խոստովանի։ Ահա այսօր, այս հոյակապ դահլիճում, միջազգային գիտաժողովում, լսեցինք երկար տարիներ սպասված խոստովանությունը։ Դա ցույց տվեց ձեր ազնիվ ու անաչառ պատմաբան լինելը»։

Այնուհետև Հակոբ Ճղյանը Թուրքիայում պատրաստված երկու հակահայկական՝ «Պատերին սփռված արյուն» և «Վարագույրի ետևը» ֆիլմերի մասին ակնարկելով ասել է.

1). «1914 թվականին Թուրքիայի կառավարությունը 18-45 տարեկան հայ տղամարդկանց հավաքագրեց և բոլորին տարավ «ամելե թապուրը»՝ բանվորական ջոկատներ, և նրանք նույնիսկ չհասան 1915 թվականի Եղեռնի օրերին, սովից մահացան կամ սպանվեցին։ Ո՞վ պետք է սպաններ «անտեր» թուրքերին՝ տատիկնե՞րը, պապիկնե՞րը, անպաշտպան երեխանե՞րը, թե՞ նրանց մայրերը...

2). Երբ վարագույրը բացվում է, հայտնվում են կմախքների կույտեր։ Դրանք ներկայացվում են իբրև հայերի ձեռքով սպանված թուրքերի դիակներ։ Ասացեք, խնդրեմ, թուրքերի սպանած հայերի կմախքները հավաքելով և աշխարհին ցույց տալով՝ կարծում եք, թե կխաբվե՞ն մարդիկ։ Ո՛չ, ո՛չ, չե՛ն խաբվի։ Դուք ունեիք պետություն, բանակ, ո՞վ կարող էր թուրքերին մորթել։ Հարյուրավոր տարիներ թուրքական լծի տակ հեծող, թալանվող մի անզեն ժողովո՞ւրդ։ Ո՛չ, ո՛չ, չե՛ն հավատա այդ ստերին, որովհետև դուք էլ ընդունում եք, որ ստի ոտքերը կարճ են, իսկ մենք էլ հավատում ենք, որ արդարությունը կհիվանդանա, բայց չի մեռնի։ Ոճիրը ուրանալը ինքնին ոճիր է»։ Այսքան։

ԱՐՑԱԽ

(Պատմա-աշխարհագրական համարոտ ակնարկ)

Ղարաբաղը Հայաստանի անբաժանելի մասն է։
Ադրբեջանը ոչ մի կապ չունի Արցախի հետ,
թե տարածքային, թե էթնիկական, թե իրավական առումով։

Ակադեմիկոս Անդրեյ Սախարով

1998 թ. փետրվարին լրացավ Արցախի ազգային ազատագրական շարժման 10-րդ տարեդարձը։

1988 թվականի փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի պատգամավորական խորհուրդը, հենվելով ազգերի ինքնորոշման սահմանադրական սկզբունքին, որոշում կայացրեց ԼՂԻՄ-ը դուրս բերելու Ադրբեջանի կազմից և միացնելու Հայաստանին։

Սկսվեց արցախյան ազատագրական բուռն շարժումը։ Ամբողջ հայ ժողովուրդը, լինի հայրենիքում, թե սփյուռքի զանազան գաղթօջախներում, միահամուր սատար կանգնեց արցախցիների արդար պահանջին։

Երևանում և Հայաստանի մյուս քաղաքներում տեղի ունեցան համատարած ցույցեր, միտինգներ ի պաշտպանություն Արցախի բնակչության Հայաստանին վերամիավորելու պայքարին։

Դժբախտաբար Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ինքնորոշման հասնելու արդարացի ձգտումը, Ադրբեջանի ազգայնամոլների կողմից դիմավորվեց սվիններով և Աբդուլ համիդյան ջարդարարական քաղաքականության կրկնօրինակով։

1988 թ. փետրվարի 27-ից 29-ը Սումգայիթ քաղաքում ադրբեջանցի ստահակները կանխամտածված բարբարոսային հաշվեհարդար տեսան տեղի հայ բնակչության նկատմամբ,

որին զոհ գնացին բազմաթիվ հայ անմեղ ընտանիքներ։ Սումգայիթյան արյունոտ դեպքերից հետո, սոսկալի ջարդեր տեղի ունեցան նաև Բաքվում, Կիրովաբատում, Շամխորում, Գետաշենում, Խանլարում և Ադրբեջանի հայաբնակ այլ վայրերում։ Այնուհետև սկսվեց հայության զանգվածային արտաքսումն ու բռնագաղթը։

Հարց է առաջանում. կարելի՞ էր արդյոք իր ժամանակին կանխել այդ զարհուրելի կոտորածներն ու հալածանքները բազմաչարչար հայ ժողովրդի բեկորների նկատմամբ։ Այո՛, կարելի էր եթե Խորհրդային Միության ղեկավարությունը Միխայիլ Կորպաչևի գլխավորությամբ, առանց տատանողականության արդարացի որոշում ընդունելով, ձեռք առներ անմիջական և վճռական միջոցներ այդ խնդրում։ Դժբախտաբար վերադաս մարմինները մտադրություն չունեին ղարաբաղյան հիմնահարցը դրականորեն լուծելու, քանի որ արցախահայերի ազատության հասնելու ընդվզումը նրանց կողմից որակվեց որպես «ծայրահեղականների» և «ազգայնականների» շարժում։ Մինչդեռ, իրենց իսկ կողմից հռչակված վերակառուցման ու հրապարակայնության սկզբունքի վրա հենվելով, նրանք պարտավոր էին շտապ վերանայել և ուղղել անցյալի կոպիտ սխալները։

Բնականաբար, ադրբեջանցիների գործադրած կոտորածներն ու բռնությունները չահաբեկեցին հայ ժողովրդին և հետ չկանգնեցրին նրան իր արդար պահանջից։ Արցախյան համաժողովրդական շարժումը կազմակերպելու և ղեկավարելու համար ստեղծվեց «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե»։

Եվ այդպես հորդեց հայ ժողովրդի համբերության բաժակը։ 70 և ավելի երկարաձիգ տարիների ընթացքում արցախահայը դառը համբերությամբ տարել էր ազգային խտրականության անհանդուրժելի պայմաններն ու եկել էր ժամանակը պորթելու և դրժելու ազգային ճնշման ծանր հալածանքները, ինչպես նաև Ղարաբաղը հայաթափելու ադրբեջանական իշխանությունների նենգ քաղաքականությունը։ Իսկ այդ առումով ամեն ինչ արվում էր, որպեսզի հայերը մոռանան իրենց հայ լինելը։ Լեռնային Ղարաբաղ չէր մտնում ոչ մի հայաստանյան թերթ։ Արցախահայի համար անհասանելի էր նաև ռադիո-հեռուստատեսային հաղորդումները։ Հայ պատանին չպետք է սովորեր իր անցյալի պատմությունը, այլ միայն թուրք-ադրբեջանականը։ Ստեփանակերտի թատրոնում արգելվում էր պատմական ներկայացումները։ Հայաստանցի մտավորականը, բանաստեղծը իրավունք չուներ առանց Բաքվի թույլտվության մուտք գործելու Ղարաբաղ։ Կառուցվում էին նոր մզկիթներ, իսկ հայկական եկեղեցիներն ու վանքերը պայթեցվում կամ ծածկվում էին հաստ հողաշերտերով։ Ոչնչացվում էին նաև հին գերեզմանատները։

Թույլ չէր տրվում, որպեսզի Խորհրդային Հայաստանում հրատարակվեին Արցախին վերաբերող գիտական ուսումնասիրություններ։ Մի խոսքով բոլոր կապերը խոչնդոտվում էին վերևից եկած հատուկ հրամաններով։ Ամենազարմանալին ու տարօրինակը այն էր, որ Խորհրդային Միությունում բոլոր ինքնավար մարզերը անվանվում էին իրենց ազգային պատկանելիությամբ, իսկ Լեռնային Ղարաբաղը այդ տեսակետից բացառություն էր կազմում։

Ազերի թուրքերը իրենց հրատարակություններում անընդհատ շեփորում էին, որ Ադրբեջանը գոյություն է ունեցել դեռևս 9-րդ դարից, որ հայերը երբեմնի աղվաններն են, որ այդ եկեղեցիները կառուցել են աղվանները կամ հույները, որ խաչքարերը, այսինքն՝ «խաչտաշ»երը թուրքերի գործն է։ Նույնը կրկնվում էր նաև արցախյան հնամենի գորգերի մասին, որ դրանք թուրք կանանց ձեռքի աշխատանքներն են։ Մի խոսքով Արցախի պատմությունը կեղծվում էր իր բոլոր կողմերով, ապացուցելու համար, որ այն հայկական չէ, այլ ադրբեջանական։

Իսկ ո՞րն է պատմական ճշմարտությունը Արցախի մասին։

Եկեք մի պահ գնանք Արցախի անցյալի պատմության հետքերով, մի համառոտ հայացք գցենք արցախահայերի անցյալի պատմության հարուստ և փոթորկահույզ էջերին։

Պատմագրական փաստաթղթերը ցույց են տալիս, որ Արցախ աշխարհի տարածքը անհիշելի ժամանակներից ամբողջապես եղել է հայաբնակ։

«Մեծ Հայք» կոչվող հայկական միասնական թագավորությունը իր ժամանակ բաղկացած էր 15 նահանգներից, որոնք կոչվում էին «աշխարհներ»։ Այդ աշխարհներից 10-րդը Արցախն էր, որը տարածված էր փոքր կովկասյան լեռնաշղթայի հարավ-արևելյան մասում՝ Աղստևի ավազանից մինչև Արաքսի հովիտը։ Նշենք, որ ֆիզիկաաշխարհագրական առումով Արցախը ավելի ընդարձակ տարածություն էր գբաղեցնում, քան Լեռնային Ղարաբաղը։ Փաստորեն Լեռնային Ղարաբաղը կազմում էր պատմական Արցախի միայն հարավային մասը։ Մեծ Հայքի 12-րդ նահանգը՝ Ուտիքը ձգվում էր Արցախի հյուսիս-արևելյան մասով, հիմնականում գտնվելով Կուր և Արաքս գետերի միջև ընկած հարթավայրային մասում։

Առաջին անգամ Արցախը Ուրտեխե կամ Ուրտեխինի անվանումներով հիշատակվել է Հայաստանի ուրարտական ժամանակաշրջանի սեպագիր արձանագրություններում։ Հին հունական, Հռոմեական, ինչպես նաև միջնադարյան հայ պատմիչների երկերում միահամուռ հիշատակվել է, որ Արցախը Մեծ Հայքի անքակտելի մասն է։

Դեռևս 4-րդ դարում, 387 թ. Հռոմեական Կայսրության և Սասանյան Պարսկաստանի հակամարտությունների հետևանքով, Հայաստանի նահանգների մի մասը ընկավ պարսկական գերիշխանության տակ։ Պարսկաստանը հայկական Արցախ և Ուտիք նահանգները միացնելով անդրկուրյան Աղվանքին, ստեղծեց «Աղվանքի մարզպանությունը», որն ու-

ներ ազգային խառը կազմ։

Արաբական տիրապետության ժամանակ Արցախը, Ուտիքը և Աղվանքը մտան խալիֆայության ստեղծած Արմինիա փոխարքայության մեջ։

Ինչպես տեսնում ենք ժամանակի ընթացքում փոխվել են վարչական միավորների անուններն ու սահմանները, բայց Արցախի երկրամասը գրեթե ամբողջությամբ մնացել է նույնը՝ իր հոծ հայկական բնակչությամբ և քաղաքակրթական նշանակությամբ։ Հայությունը այնքան միատարր է եղել, որ արաբական տիրապետության ժամանակ և դրանից հետո 11-րդ դարից սկսած Հայաստանը նվաճող սելջուկ թուրքերը, թաթար-մոնղոլները և ուրիշները չեն կարողացել խախտել Արցախի էթնիկական միասնությունը։

10-րդ դարից սկսած Արցախի երկրանունը փոխարինվել է Խաչենով, իսկ 15-րդ դարից էլ՝ Ղարաբաղով։ Ղարաբաղ երկրանունը թուրքերեն է, որը նշանակում է Սև Այգի։ Կարծիք կա, որ թուրք նվաճողները Ղարաբաղ անվանումը տվել են երկրամասում շատ տարածված սև և ճերմակ թթենիների հարուստ անտառների առկայության հիման վրա։ Ըստ պարսկական աղբյուրների Արցախի հարթավայրային մասերը կոչվել են Բաղ-ի Սաֆիա (Սպիտակ Այգի), իսկ լեռնային հատվածը՝ Բաղ-ի Սիաղ (Սև Այգի), որը թուրքերեն կլինի Ղարաբաղ։

Այս հարցին առավել ճիշտ գիտական հիմնավորում է տվել Արթուր Նավասարդյանը։ Ղարաբաղ տեղանունը նա ստուգաբանել է պատմագիտական, ինչպես նաև հայերեն և հնդեվրոպական համեմատական լեզվաբանության հիմունքների վրա։ Նա եկել է այն եզրակացության, որ ՂԱՐԱԲԱՂ նշանակում է. ՂԱՐԱ (ԿԱՐԱ)- ցեղ կամ ժողովուրդ, իսկ ԲԱՂ (ԲԱԼ)- ԱՑԻ՝ հայկական էթնոսին պատկանող միավոր, այսինքն՝ ԲԱԼԱՑԻՆԵՐԻ ՑԵՂ կամ ԺՈՂՈՎՈՒՐԴ։ Երկրորդ դարի հունահռոմեական աշխարհագրագետ Կլավդիոս

Պողոմիոն իր Աշխարհագրության 5-րդ գրքում Ղարաբաղն անվանում է ԿԱԼԱԲԱԼԼԱ։ Տես «Ասպարեզ», օգոստոս 13, 1999։

10-ից 16-րդ դարերում գոյություն ունեցող Խաչենի իշխանությունը աստիճանաբար տրոհվեց մանր իշխանությունների։ Պատմական կարևոր նշանակություն ունեցան 17-18-րդ դարերում Խաչենի տարածքում գոյացած 5 հայկական մելիքությունները. Գյուլիստան, Ջրաբերդ, Խաչեն, Վարանդա, Դիզակ, որոնք հայտնի են Խամսայի մելիքություններ ընդհանուր անունով։

Այդ 5 իշխանությունների ստեղծած զինական դաշնակցությունը կարևոր դեր խաղաց հայ բնակչության անվտանգությունն ու ապահովությունը պաշտպանելու թուրքական և պարսկական բռնություններից։

19-րդ դարի սկզբում շեշտակի փոփոխություններ եղան արցախահայության կյանքում։ 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո Գյուլիստանի պայմանագրով, Հայաստանի արևելյան մի շարք գավառների հետ Ռուսաստանի կողմն անցավ նաև Ղարաբաղի Խանությունը։ Ղարաբաղը մտավ Ելիզավետպոլի (նախկին Գյանջա, Գանձակ) նահանգի մեջ։

Հարկ է նշել, որ այս կամ այլ վարչական սահմանագծումների ընթացքում ցարական Ռուսաստանը անտեսում էր տվյալ տարածքի բնակչության էթնիկական կազմը։ Վերևում նշեցինք արդեն, որ Արցախի երկրամասի ամբողջ պատմության ընթացքում գերակշռող տարրը միշտ էլ եղել է հայ բնակչությունը։ 20-րդ դարի սկզբում այն կազմում էր բնակչության 90 տոկոսը։ Արցախի քաղաքներում և գյուղերում գործում էին բազմաթիվ հայկական դպրոցներ, եկեղեցիներ, հրատարակվում էին հայկական գրքեր և պարբերականներ։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ հնարավորություն ստեղծվեց Անդրկովկասում երեք ազգային հանրապետությունների կազմավորման, ադրբեջանցի ազ-

գայնամոլները ամեն կերպ ձգտեցին կյանքի կոչել իրենց ծավալապաշտական նկրտումները։ Նրանք Ադրբեջան էին համարում ոչ միայն ադրբեջանցիներով բնակեցված տարածքը, այլև դարերից ի վեր Պատմական Հայաստանի հայերով բնակեցված այնպիսի նահանգներն ու բնակավայրերը, գյուղերն ու քաղաքները, ինչպես օրինակ Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը, Գանձակը և այլն, նկատի ունենալով, որ ցարիզմի օրոք դրանք մտել էին Ելիզավետպոլի նահանգի մեջ։ Հասկանալի է, որ համաթուրքական գաղափարախոսությամբ համակված թուրքիան մեծ դեր էր խաղում այդ տարածքները հայերից խլելու խնդրում։

Իրականում, նրանք մոռանում էին, որ ամբողջ պատմության ընթացքում երբևէ Ադրբեջան անվան տակ հողատարածք կամ պետականություն գոյություն չէր ունեցել։ Իսկ այդ ազգաբնակչության հավաքականությանը, որոնց ցարիզմի ժամանակ թաթարներ էին անվանում, դրանք ուղղակի սելջուկ-թուրքերի, թաթար-մոնղոլների նվաճողական քաղաքականության ընթացքում բնակություն հաստատած քոչվոր-անասնապահ տարրերն էին, որոնք աստիճանաբար բազմանալով տեր էին դարձել Պատմական Հայաստանի արևելյան հողատարածքներին։

Այս կապակցությամբ դեռևս 1919թ. ռուս նշանավոր բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկին իր «Ղարաբաղ» հոդվածում գրել է.

«Այնտեղ Ղարաբաղի անառիկ բարձունքներում, ավելի քան երկու հազար տարիների ընթացքում հայ ժողովուրդը դիմացել է քոչվոր ցեղերի գրոհներին՝ պահպանելով իր մշակույթը, պահպանելով իր ազգային դեմքը»։

Ազերի թուրքերը հայկական տարածքները յուրացնելու քաղաքականությունը շարունակեցին նաև այդ հանրապետություններում համայնավար կարգեր հաստատվելուց հետո։ Չնայած, թվում էր թե ազգերի ինքնորոշման լենինյան սկզբ-

բունքով արդարացի լուծում պիտի ստանային նման հարցերը։ Այսպես՝ Ադրբեջանի ղեկավարության 1920 թ. նոյեմբերի 30-ի ընդունած որոշումով Զանգեզուրի և Նախիջևանի գավառները դառնալու էին Խորհրդային Հայաստանի անբաժանելի մասը, իսկ Լեռնային Ղարաբաղը ստանալու էր ինքնորոշման իրավունք։ Սակայն կարճ ժամանակ անց այդ որոշումը դրժվեց ռուս-թուրքական դիվանագիտության խարդավանքի ազդեցության տակ, երբ 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքվեց բարեկամության և եղբայրության տխրահռչակ պայմանագիրը, ուր կոպտորեն ոտնահարվեցին Հայաստանի կենսական շահերը։ Նախիջևանը անցավ Ադրբեջանին, իսկ Լեռնային Ղարաբաղի հարցը դրվեց Ռուսաստանի խորհրդային համայնավար կուսակցության կովկասյան բյուրոյի քննարկման, ուր Ստալինի անմիջական նախաձեռնությամբ հուլիսի 5-ին որոշում կայացվեց Լեռնային Ղարաբաղի տարածքը Ադրբեջանին հանձնելու մասին։

Այսպիսով, ոտնահարվելով ազգերի ինքնորոշման սկզբունքը, Հայաստանի անբաժանելի մաս կազմող Արցախն ու Նախիջևանը բռնի կերպով մտան Ադրբեջանի կազմի մեջ։ Նախիջևանը հայաթափվեց, իսկ Ղարաբաղը Հայաստանի հետ ոչ մի միջանցք չունենալով հարկադրաբար կղզիացավ Ադրբեջանի ճիրանների մեջ։ Եվ այդպես հետագա տարիներին աստիճանաբար սկսեցին փակել հայկական դպրոցները, մշակույթի կենտրոնները, եկեղեցիները։ Ավերվեցին պատմական հուշարձանները, խեղաթյուրվեց հայ ժողովրդի պատմությունը։ Ստեղծված ծանր դրության հետևանքով 95 տոկոսը կազմող հայ բնակչության որոշ մասը ստիպողաբար հեռացավ իր բնակավայրից, իսկ մյուս կողմից քաջալերվեց ադրբեջանցիների ստվարացման քաղաքականությունը մարզում։

Այս կապակցությամբ ուզում եմ բերել ուշադրության արժանի հետևյալ վկայությունը. տողերիս հեղինակը 70-ական թվականներին հանգստանալու նպատակով մի քանի

անգամ եղել է հայկական Ջերմուկ քաղաքում, որը ինչպես գիտեք գտնվում է ոչ այնքան հեռու Ադրբեջանի սահմանամերձ գոտուց։ Երբ զրույցի էի բռնվում տեղի հայերի հետ, բոլորն էլ զայրույթով բողոքում էին, որ շուտով՝ Ջերմուկը դառնալու է ադրբեջանական քաղաք։ «Իսկ ինչո՞ւ համար» իմ հարցումին, նրանք պատասխանում էին, որ ադրբեջանցիները բուռն կերպով շատանում են Ջերմուկում, հարկաբաժիններ, առանձնատներ, տնամերձ հողամասեր գնելով, գալիս են տեղավորվում ու բազմանում։

Հասկանալի է, որ այս կանխամտածված դավադիր գործարքը միայն Ջերմուկով չէր վերջանում։ Եզրակացությունը միանշանակ էր. ադրբեջանցիները այդպես «քաղաքավարի», «կիրթ» ձևով մտնում էին հայկական տարածքները, սեփականացնելու ու տիրելու միտումով, իսկ մյուս կողմից անքաղաքավարի ձևով, բռնությամբ հայաթափում էին դարերից ի վեր հայերով բնակեցված հայկական հողատարածքները։ Այդ տեսակետից, ինչպես նշեցինք, լավագույն օրինակը Նախիջևանի հայաթափումն է։

Այսօր Լեռնային Ղարաբաղի հարցը գտնվում է միջազգային հանրության և մեծ տերությունների ուշադրության կենտրոնում և ուղիներ են որոնում այն կարգավորելու համար։ 1991 թ. սկսած Լեռնային Ղարաբաղի հիմնահարցով զբաղվում է Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ)։ Դժբախտաբար, բանակցությունները դեռևս շոշափելի արդյունք չտվեցին։

Ադրբեջանը պնդում է ԵԱՀԿ-ի կողմից ընդունված միջպետական սահմանների անխախտելիության սկզբունքի վրա, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հենվում է միջազգային հանրության կողմից ընդունված ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վրա։

Արցախի ազգային ազատագրական պայքարի 10-ամյակի առիթով մենք կրկին ձայն ենք բարձրացնում, հայտարարե-

լով, որ ԼՂԻՄ-ը երբևէ միջազգային իրավական փաստաթղթերով Ադրբեջանի մաս չի կազմել, ուստի ոչ մի իրավասություն չունի տարածքային ամբողջականության պահանջ ներկայացնելու: Այնպես, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը պետք է կարգավորվի ազգերի ինքնորոշման միջազգային սկզբունքի վրա:

Եվ վերջապես համաշխարհային հանրությունը պետք է լավ իմանա, որ հազարամյակների պատմամշակութային հարուստ ժառանգություն ունեցող, իր պապենական հողի վրա ապրող, բարոյահոգեբանական խրոխտ կեցվածքի և աննկուն կամքի ուժի տեր արցախահային դժվար է ծնկի բերել և վզին փաթաթել ստրկության շղթան:

Արցահայերը տևապես բացառիկ քաջություն և անընկճելի հաստատակամություն են ցուցաբերել իրենց հայրենիքը արաբների, սելջուկ-թուրքերի, թաթար-մոնղոլների անդադար հարձակումներից պաշտպանելու գործում:

Ահա թե ինչպիսի բնութագիր է տվել վերոհիշյալ ռուս բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկին.

«Չկա մի բնագավառ, որ նրանք դրսևորած չլինեն իրենց ձեռներեցությունն ու տաղանդը: Քաղաքականությունը, գրականությունը, հասարակական գործունեությունը, առևտուրը,- կարևոր ասպարեզ են եղել նաև աշխատանքի համար»:

Իսկ 1899 թ. Ս. Պետերբուրգում հրատարակված «Հայեր» գրքում Մագդա Նեյմանը խորը ակնածանքով խոսելով արցախահայերի մասին, տվել է հետևյալ գնահատականը.

«Ղարաբաղի հերոսական որդիները վաղուց փառաբանված են խիզախությամբ, քաջությամբ և վճռականությամբ» (էջ 144):

Այնուհետև նա մեկ առ մեկ բերում է 19-րդ դարի ռազմական գործում մեծ փառքի հասած ղարաբաղյան ծագում ունեցող հայ զորավարների անունները: Ահա դրանք. Մադաթով, Բեհբութով, Լորիս-Մելիքով, Լազարև, Տեր

Ղուկասով, Շելկովնիկով (էջ 150):

Ինչպես նշեցինք, այս գիրքը լույս է տեսել 1899 թ.: Եթե Մագդա Նեյմանը երկարակյաց լիներ, հետագայում պիտի արձանագրեր նաև ռազմական գործում մեծ փառքի արժանացած, արցախյան ծագում ունեցող մյուս զորավարների մասին ևս: Այսպես՝ 1918 թ. Սարդարաբադի հերոսամարտի հրամանատար՝ Դանիել Բեկ Փիրումյանը, Խորհրդային Միության Մարշալ Հովհաննես Բաղրամյանը, նավատորմի ծովակալ՝ Հովհաննես Իսակովը, Ավիացիայի Մարշալ Արմենակ Խամփերյանցը (Խուդյակով), զրահատանկային զորքերի Մարշալ՝ Համազասպ Բաբաջանյանը և բազմաթիվ այլ զորավարներ, հրամանատարներ և հերոսի կոչման արժանացած մարտիկներ:

Իսկ եթե Մագդա Նեյմանը ապրեր մինչև մեր օրերը, ապա առանձին-առանձին հերոսապատումներ պիտի գրեր նաև Արցախի դյուցազնամարտերին մասնակից առյուծասիրտ ազատամարտիկների, ֆեդայիների սխրանքների մասին ևս, որոնց թափած թանկարժեք արյան գնով էր, որ ազատագրվեց Արցախը:

Այսօր Արցախը, որպես անկախ ու ազատ հանրապետություն, իր պետական բոլոր կառույցներով՝ տնտեսական, շինարարական, մշակութային, վերելք է ապրում: Կառուցվում են նոր ձեռնարկություններ, նոր ճանապարհներ, նոր ջրատարներ: Վերանորոգվում են անցյալի հուշարձանները, վանքերն ու եկեղեցիները: Մի խոսքով Արցախի Հանրապետությունը հարատևում է ազատ ու անկախ և պիտի հարատևի շնորհիվ իր փառապանծ բանակի բարձր մարտունակության, հայ ժողովրդի միասնության և վերջապես միջազգային առողջ ուժերի հովանավորության ներքո:

80 ՏԱՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԲՈՎԵՐՈՒՄ

1998 թ. մայիսյան օրերին ամբողջ հայ ժողովուրդը անհուն բերկրանքով ու խանդավառությամբ նշեց Հայաստանի անկախության 80-ամյա հոբելյանական փառապանծ տարելիցը:

Մեծ է 1918 թ. մայիսի 28-ի անկախության դերն ու նշանակությունը հատկապես այն իմաստով, որ 6 դարյա երկարատև ընդմիջումից հետո հայ ժողովուրդը կարողացավ կերտել իր պետականությունը Պատմական Հայաստանի մի փոքր տարածքի վրա:

Իրականացավ տարիներ շարունակ օտար նվաճողի լծի տակ հեծող յուրաքանչյուր հայի նվիրական իղձն ու երազանքը: Հաղթանակեց հայ ժողովրդի գոյատևման և հարատևման անկոտրում կամքը:

Իսկ անկախությունը ձեռք բերվեց Սարդարապատի ճակատամարտի հաղթական շեփորների առնական հնչյունների տակ:

Բայց ինչպե՞ս եղավ և ինչո՞ւ եղավ Սարդարապատը:

Այս առումով եթե համառոտակի հետադարձ հայացք գցենք 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբներին տեղի ունեցած իրադարձություններին, նկատում ենք հետևյալը.

1878 թ. հունիսին գումարված Բեռլինի վեհաժողովից հետո, երբ հայկական հարցը միջազգային բնույթ ընդունեց, սուլթանական կառավարության ազգային և կրոնական հալածանքները մեծ չափերի հասան: Առանձին թուրք պետական գործիչներ բացահայտ հայտարարում էին Օսմանյան կայսրությունում հայ ազգը բնաջնջելու մասին:

Եվ այդպես 1894-1896 թթ. Սասունի և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ վայրերում, ինչպես նաև Կ. Պոլսում տեղի ունեցած ահավոր կոտորածներին զոհ գնացին մոտ 300.000 անմեղ հայեր: Այդքան էլ ստիպողաբար լքեցին

իրենց բնօրրանը և տարագրվեցին օտար ափեր:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին արևմտահայության վիճակը առ ավելի վատթարացավ: Գավառներում կրկին տեղի էին ունենում վայրագ սպանություններ, բռնաբարություններ, ունեցվածքի հափշտակություններ: Իսկ 1915-1916 թվականներին երիտթուրքերի կառավարության կիրառած ցեղասպան քաղաքականության հետևանքով արևմտահայությունը կանգնեց իսպառ ոչնչացման վտանգի առջև, տալով մեկուկես միլիոնից ավելի անմեղ զոհեր: Պատերազմի վերջավորության ստեղծված քաղաքական նպաստավոր պայմանների առկայությամբ, Թուրքիան նպատակադրվեց ընդհանրապես նվաճել և հայաթափել Արևելյան Հայաստանը ևս:

Բանը նրանումն է, որ Ռուսաստանում հեղափոխական շարժման հետևանքով քաղաքական իրադարձությունների փոփոխումը ծանր կացություն ստեղծեց նաև Հայաստանում և Անդրկովկասում, հատկապես այն ժամանակ, երբ ռուսական զորամասերը սկսեցին զանգվածաբար լքել դիրքերը կովկասյան ռազմաճակատներից և տարերայնորեն հեռանալ իրենց բնակավայրերը:

Ռուսական զորքի հեռացումով հայ ժողովուրդը կանգնեց թուրքական բանակի ներխուժման մահաբեր սպառնալիքի տակ:

Խախտելով Երզնկայի զինադադարի պայմանները և պատրվակ բռնելով, թե հայկական և վրացական զորամասերի զբաղեցրած տարածքում մահմեդական բնակչությունը ենթարկվում է հալածանքների, 1918 թ. սկզբին թուրքերը լայնածավալ հարձակման անցան ոչ միայն նվաճելով Թուրքահայաստանը, այլև գրավելով Ռուսաստանի հովանավորության տակ գտնվող Արևելյան Հայաստանի գյուղերն ու քաղաքները, ընդհուպ հասնելով Ալեքսանդրապոլի (Գյումրի) մատույցները: Ռազմական հաջողություններով արբեցած

Թուրքական զորքերը 1918 թ. մայիսի 15-ին գրավեցին Ալեքսանդրապոլը:

Այնուհետև Թուրքական բանակի մի խմբավորում շարժվեց Արարատյան դաշտ՝ Երևանը գրավելու նպատակով, իսկ մյուսը՝ դեպի Ղալաքիլիսա (այժմ՝ Վանաձոր): Մայիսի 21-ին գրավեցին Սարդարապատ գյուղն ու երկաթուղային կայարանը:

Հայ ժողովուրդը կանգնեց լինել-չլինելու, կենաց-մահու վտանգի առջև: Փրկության համար միայն մեկ ճանապարհ կար: Ոտքի կանգնել միասնական ուժերով և հակահարված տալ թշնամուն: Այդպես էլ եղավ: Երևանի և հայրենի երկրի պաշտպանության համար համախմբվեցին հասարակության բոլոր խավերը, քաղաքական կուսակցությունները, հոգևորականները, որոնք հեղեղի նման ռազմի դաշտ դուրս գալով միահամուռ միացան հայկական սակավաթիվ կանոնավոր զորամասերին: Մի քանի օր տևած համառ ու ծանր մարտերից հետո կոտրեցին թշնամու դիմադրությունը: Թուրքական զորքը պարտություն կրելով նահանջեց դեպի Ալեքսանդրապոլ: Մյուս կողմից Բաշ-Ապարանի հայկական զորամասը մայիսի 23-27-ին ոչ միայն կասեցրեց թուրքական զորքի առաջխաղացումը, այլև լիակատար պարտության մատնելով, ստիպեց հակառակորդին խուճապահար փախուստի դիմել: Նույնը տեղի ունեցավ նաև Ղարաքիլիսայի շրջանում:

Այստեղ մենք ստիպված ենք կրկին մի պահ ետ գնալու և մի ակնարկ գցելու Սարդարապատի հերոսամարտին նախորդող տարիների իրադարձություններին:

Դեռևս անցյալ դարավերջին հայ ժողովուրդը համակված էր սուլթանական ծանր լուծը թոթափելու և ազատության հասնելու բուռն տենչով և շատ լավ էր հասկանում, որ միայն տևական պայքարի միջոցով կարող է դուրս գալ այդ իրավազուրկ վիճակից: 19-րդ դարի վերջերին սուլթանական տիրապետության հայահալած քաղաքականության դեմ պայքարելու համար Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում աշխուժացավ հայդուկային-ֆիդայական շարժումը:

Արևմտահայության զանգվածային տեղահանության և կոտորածների ընթացքում, Մուսա Լեռից մինչև Վան, Զեյթունում, Շապին-Գարահիսարում, Ուրֆայում, Հաջընում, Յոզգաթում և այլուր, հայ ֆիդայի քաջերը ինքնապաշտպանական անհավասար մարտերում հերոսական կռիվներ մղեցին թուրք ոսոխի դեմ և փառքով պսակեցին հայի ազատատենչ ոգին:

Հայ ժողովուրդը բազմաթիվ հայրենասիրական երգեր հյուսեց հայրենիքի ազատության համար պայքարող այդ անձնազոհ քաջերի մասին: Իրականում սասունցի, զեյթունցի քաջարի մարտիկների ազատատենչ ոգին ամենայն խորությամբ թևածեց նաև 1918 թ. Սարդարապատի ճակատամարտի աշխարհազորայինների, ինչպես նաև մեր օրերում Արցախի ազատագրության համար պայքարող մարտիկների սրտերում:

Սարդարապատի հերոսամարտում իրենց խիզախ գործողություններով աչքի ընկան.

Զեյթունցիների հեծյալ գունդը,
Երզնկայի հետևակային գունդը,
Իգդիրցի աշխարհազորայինները,
Մակուի գումարտակը,
Խնուսի գունդը,
Մշեցիների ջոկատը,

ինչպես նաև Երևանի և շրջակա գյուղերից հավաքված աշխարհազորայինները:

Իսկ վերջնական հաղթանակը ձեռք բերվեց հայկական կանոնավոր զորամասերի և կամավորական վաշտերի համատեղ գործողություններով, ռազմական մեծ փորձ ունեցող, հմուտ զորավարների հրամանատարության ներքո: Ահա

նրանք.

Զորավար՝ Թովմաս Նազարբեկյան,

Զորավար՝ Մովսես Սիլիկյան,

Գնդապետ՝ Դանիել Բեկ Փիրումյան,

Գնդապետ՝ Պողոս Փիրումյան,

Արամ Մանուկյան,

Դրաստամատ Կանայան (Դրո),

Գարեգին Նժդեհ և շատ ու շատ ՝ավագ և կրտսեր սպաներ:

Մի խոսքով «Ո՛չ ոք չի մոռացվում, ոչի՛նչ չի մոռացվում»:

Հայաստանի անկախության 80-ամյա տոնակատարության այս օրերին, հուզումով և սրտի անհուն հպարտությամբ տեղեկացանք, որ Սերոբ Աղբյուրի կողակից և ազգային հերոսուհի Սոսե մայրիկի աճյունը օտար ափերից տեղափոխվեց Երևան, որպեսզի մայիսի 28-ին ըստ արժանվույն մայր հողին հանձնվի Եռաբլուրի փառաբանված հերոսների շիրիմների կողքին: Մեր հպարտությունը կրկնապատկվեց, երբ օրերս տեղեկացանք, որ շուտով Եռաբլուրի փառքի տաճարում իրենց վերջնական հանգրվանն են գտնելու նաև ազգային փառաբանված մի շարք հերոսների, այդ թվում՝ Դրո Կանայանի, զորավար Անդրանիկի և այլոց սուրբ աճյունները:

Եվ այդպես՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերի արդյունքն եղավ այն, որ հայ ժողովուրդը ոչ միայն փրկվեց թուրքական ոչնչացման ծրագրից, այլև հաղթանակեց երկար տարիների ազգային ազատագրական պայքարը և Արևելյան Հայաստանի մի փոքր հատվածում կերտեց ազգային անկախ պետականությունը:

1918 թ. մայիսի 28-ին Թիֆլիսում գտնվող Հայոց Ազգային Խորհուրդը հռչակեց Հայաստանի անկախությունը և հունիսի կեսերին կազմելով Հայաստանի Հանրապետության

առաջին կառավարությունը՝ Հովհաննես Քաջազնունու գլխավորությամբ, հաստատվեց Երևանում: Հետագայում այդ պաշտոնը հաջորդաբար վարեցին նաև Ալեքսանդր Խատիսյանը, Համազասպ Օհանջանյանը և Սիմոն Վրացյանը: Բոլորն էլ պատկանում էին Հայ Հեղափոխական Դաշնակցությանը:

Հարկ է նշել, որ երկարատև պատերազմների հետևանքով երկիրը գտնվում էր տնտեսապես խիստ քայքայված վիճակում: Այստեղ էին ապաստանել երիտթուրքերի կոտորածներից փրկված 300 հազար գաղթական հայեր: Սովն ու համաճարակը վխտում էին ամենուրեք:

Այդ ծանր օրերին մեծ նշանակություն ունեցավ օտարերկրյա կառավարությունների, հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգների մարդասիրական օգնությունը, Հայաստանին տրամադրելով զգալի քանակությամբ ալյուր և ցորեն:

Այնուհանդերձ կառավարության և ժողովրդի ջանադիր աշխատանքով աստիճանաբար դրական տեղաշարժեր կատարվեցին տնտեսության և մշակութային կյանքում: Կառուցվեցին նոր ջրանցքներ, էլեկտրակայաններ: Բացվեցին մի շարք արդյունաբերական գործարաններ, որոնց արտադրանքը հրատապ կենսական նշանակություն ուներ:

1919 թ. մայիսի 6-ին Նախարարների Խորհուրդը որոշում կայացրեց Հայաստանում ստեղծել առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Համալսարանը, որն իր դռները ուսանողության համար բացեց 1920 թ. հունվարի 31-ին:

1919 թ. կեսերին Հայաստանի ներքին իրավիճակը բավականին կայունացավ: Հանրապետության քաղաքական ղեկավարությունը գտնվում էր Հայ Հեղափոխական Դաշնակցության կուսակցության ձեռքին, որի շուրջ բոլորված մյուս կուսակցություններն ու կազմակերպությունները միահամուռ կանգնեցին հայոց անկախ պետականության պաշտպանության դիրքերում:

Եռագույնը ընդունվեց որպես ազգային դրոշ, իսկ այնուհետև հաստատվեց ՀՀ պետական զինանշանն ու օրհներգը: Դիվանագիտական կապեր հաստատվեցին առանձին օտար պետությունների հետ: Ամենակարևորը՝ պայքարի նոր ուժ ստացավ ազատ, անկախ և միացյալ Հայաստանի սկզբունքի իրականացման գաղափարախոսությունը:

Դժբախտաբար արտաքին աշխարհում, հատկապես Ռուսաստանում տեղի ունեցած քաղաքական փոփոխման պատճառով, 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանը խորհրդայնացվեց: Իշխանությունը անցավ բոլշևիկ համայնավարների ձեռքը:

Ես անհրաժեշտ չեմ գտնում մանրամասն խորանալ 70 տարվա ընթացքում տեղի ունեցած իրադարձություններին: Համայնավար նոր վարչակարգի հարուցած քաղաքական թերություններն ու տնտեսական դժվարությունները հայտնի են բոլորին: Եղան լուրջ անիրավություններ, հատկապես ոտնահարվեցին հայ ժողովրդի արդար իրավունքները: Բռնագրավվեցին և հափշտակվեցին դարերից իվեր իրեն պատկանող հողային տարածքները...

Այդ բոլորը հաստատվեցին Մոսկվայի սովետա-թուրքական բարեկամության և եղբայրության մարտ 16, 1921 թվականի տխրահռչակ պայմանագրով, հոկտեմբեր 13-ի կարսի պայմանագրով, ինչպես նաև հուլիս 5-ի Ռուսաստանի Խորհրդային համայնավար կովկասյան բյուրոյի որոշումով, ուր Ղարաբաղի տարածքը հանձնվեց Ադրբեջանին:

Հակառակ այս բոլորին, հետագայում հայրենի ժողովրդի ներդրած ջանադիր աշխատասիրության շնորհիվ, Հայաստանը աննախընթաց վերելք ապրեց մշակութային, գիտության, քաղաքաշինության, ինչպես նաև արդյունաբերության առանձին ճյուղերում:

Այնուհետև վերակառուցման և հրապարակայնության կարգախոսի շարժման հետևանքով փլուզվեց Խորհրդային

Միությունը:

1991 թ. սեպտեմբերի 21-ին հռչակվեց Հայաստանի անկախ Հանրապետությունը: Մինչ այդ սեպտեմբերի 2-ին հռչակվել էր նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Այսօր ամենուրեք ըստ արժանվույն նշվում և մեծարվում է մայիսին ձեռք բերված անկախությունը:

Այո՛, մեծ է իմաստն ու խորհուրդը 1918 թ. մայիսի 28-ի հայության կերտած անկախ պետականության: Չլիներ Հայաստանի Առաջին Հանրապետությունը, չէին լինի ո՛չ երկրորդն ու ո՛չ էլ երրորդը:

Այնպես որ եկեք բոլորս միահամուռ բոլորվենք մեր հայրենիքի անկախ պետականության ամրացմանն ու տնտեսական հզորացման գործընթացին և նոր նվաճումներ արձանագրենք միասնականության և մեր սուրբ երազների իրականացման ասպարեզում:

Այսօր աշխարհի չորս կողմը սփռված հայ ժողովրդի զավակները, ինչպիսի պայմաններում էլ ապրեն, կարոտով իրենց հայացքը ուղղել են դեպի իրենց մայր հայրենիքը՝ ազատ ու անկախ Հայաստանին, որը հայության հարատևման՝ հայապահպանման միակ հույսն է ու ապավենը:

Իզուր չէ, որ հայ բանաստեղծները, մտավորականությունն ու քաղաքական գործիչները, գնահատելով ու փառաբանելով անկախության գաղափարի իմաստն ու վեհությունը, շատ խորիմաստ խոսքեր են ասել ու գրել այդ մասին: Ես ուզում եմ խոսքերս ավարտել մեր օրերի տաղանդավոր արձակագիր՝ Ստեփան Ալաջաջյանի հետևյալ դիպուկ գնահատականով.

«Անկախությունը մարդկության պատմության մեջ իբրև պետականություն ներկայանալու և գոյատևման իրավունքի մեր բարոյական մեծագույն հաղթանակն էր:

Անկախությունը մեր հերոսների մահվան գինն է ու հոգու հանգիստն է բոլոր այն նահատակների, որոնք ընկան

հերոսամարտերում, որոնք զոհվեցին այս մեծ նպատակի քաղաքական տատասկոտ ու քարքարոտ ճանապարհին...

Ազգի գոյատևման հիմքը հայրենիքն է, հայրենիք ունենալը, իսկ հայրենիքի գոյատևման ճշմարիտ հիմքը՝ անկախությունը: Մեր սրբազան պարտքն է պահպանել ու զարգացնել այն ձեռք-ձեռքի, ուս-ուսի, խելք-խելքի»:

(Տե՛ս, Ստեփան Ալաջաջյան, Գոյատևման երաշխիքը, Նոր Օր, սեպտեմբեր 21, 1996)

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒՅՑՈՒՆ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ

19-րդ դարի վերջերին սուլթան Աբդուլ Համիդի բռնատիրության հայահալած քաղաքականության դեմ Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում բուռն կերպով ուժեղացավ հայդուկային-ֆիդայական շարժումը: Դրա հիմնական նպատակն էր պայքարել բռնությունների դեմ, թոթափել սուլթանական ծանր լուծը և ազատագրել բազմաչարչար հայ ժողովրդին:

Տվյալ ժամանակ այդ ազատատենչ պայքարի ամենաակնառու դեմքերն էին՝ Հունոն (Հարություն աղա), Արաբոն (Ստեփանոս Մխիթարյան), Հակոբ Սարկավագը, Աղբյուր Սերոբը (Վարդանյան), Հրայր Դժոխքը (Արմենակ Ղազարյան), Մեծն Մուրատը (Համբարձում Բոյաճյան), Անդրանիկը (Օզանյան), Գևորգ Չավուշը (Ադամյան), Մախլութոն (Սմբատ Բորոյանը), Փարամազը (Մաթևոս Սարգսյան), Քեռին (Արշակ Գավաֆյան), Վազգենը (Տիգրան Տերոյան), Նիկոլ Դումանը և այլ բազմաթիվ քաջարի ֆիդայիներ:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարը ղեկավարում էին հայ ազգային երեք կուսակցությունները՝ Արմենականները, հնչակյանները և ՀՀ Դաշնակցությունը:

Հայկական բարենորոգումների ծրագիրը իրականացնելու նպատակով կուսակցությունները կազմակերպում էին ցույցեր, ահաբեկումներ, զանազան հանդուգն գործողություններ, զինված ապստամբություններ, ինչպես նաև ինքնապաշտպանական մարտեր, որպեսզի գրավեն մեծ տերությունների ուշադրությունը հայկական հարցի վրա:

Հանուն ազատության ու անկախության մղվող այդ պայքարը պսակվում էր մերթ հաղթանակով և մերթ ցավալի

պարտությամբ։

Հատկապես Մեծ Եղեռնի օրերին հայ ժողովուրդը դիմեց գոյատևման և ինքնապաշտպանական կռիվների։ Անձնուրաց հերոսական մարտեր տեղի ունեցան Վանում, Շատախում, Շապին-Գարահիսարում, Ուրֆայում, Մուշում, Սասունում, Անտիոքի շրջանում՝ Մուսա Լեռան վրա։ Ինքնապաշտպանական այս մարտերի շնորհիվ էր, որ հազարավոր հայեր փրկվեցին իրենց սպառնացող վտանգից։

Ահա գոյատևման այս պայքարին և հայ ժողովրդի ազգային ազատագրական շարժմանն է նվիրված ստորև բերված ժամանակագրությունը։

1862 թ.

Լեռնային Կիլիկիայում գտնվող Զեյթուն գյուղաքաղաքի քաջարի լեռնականները հերոսաբար դիմադրեցին Մարաշի Ազիզ փաշայի ստվար զորամասերի հարձակումներին, խայտարակ պարտության մատնելով նրան։ Այնուհետև 1895-1896 թթ. Աբդուլ Համիդի կազմակերպած կոտորածների ընթացքում, զեյթունցիները դիմեցին ինքնապաշտպանության և փառավոր հաղթանակներ տարան թշնամու դեմ։ Մարտերը ղեկավարում էին Ղազար Շովրոյանը և Աղասի Թուրսարգսյանը։

1890 թ.

Հուլիս 15,- Հնչակյան կուսակցության Կ. Պոլսում կազմակերպած Գում Գափուի ցույցով պահանջեց, որպեսզի իրագործվի Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով հայերին վերաբերող բարենորոգումների ծրագիրը։ Ընդհարման ժամանակ եղան զոհեր և վիրավորներ։ Ցույցը գլխավորում էին՝ Հարություն Ջանգյոզյանը, Մեծն Մուրատը և ուրիշներ։

Սեպտեմբեր 22,- ՀՀ Դաշնակցություն կուսակցության նախաձեռնությամբ Սարգիս Կուկունյանի ջոկատը (78 հոգի) Կարսի մարզից փորձեց անցնել Արևմտյան Հայաստան և կազմակերպել հայ ժողովրդի ազատագրության պայքարը։

Սակայն սահմանի մոտ մարտի բռնվեց թուրք սահմանապահների գերակշռող ուժերի հետ և ստիպված նահանջեց։

1893 թ.

Հունիս 1,- Քրդական Համիդիե զորագնդերը շրջապատեցին Բիթլիսի նահանգում գտնվող Տալվորիկ գյուղը, որը ռազմավարական կարևոր նշանակություն ուներ ամբողջ Սասունի համար։ Հայերը դիմեցին ինքնապաշտպանության և կազմակերպված հակագրոհներով հետ մղեցին թշնամու գրոհները։ Ինքնապաշտպանական մարտերը ղեկավարում էին Սպաղանաց Մակարը, Խչեի Գասպարը, Զուրոյի Պետրոսը, Մգրեն, Համզեն, Տեր Գափրիելը։ 1904 թ. Սասունի ապստամբության ընթացքում Տալվորիկը կրկին հարձակման ենթարկվեց թուրքերի և քրդերի կողմից։ Սակայն հայերի ռազմամբթերքի սպառման պատճառով անհաջող ավարտ ունեցավ ինքնապաշտպանությունը։ Եղան բավականաչափ զոհեր։

1891-1894 թթ.

Սասունը դարձավ ազգային ազատագրական շարժման կենտրոն։ Սասունցիները պայքարեցին, որպեսզի կյանքի կոչեն 1878 թ. հայերի բարենորոգումներին վերաբերող որոշումները և տարան մի շարք հաղթանակներ թուրքական կանոնավոր զորքերի դեմ։ Այնուհանդերձ անհավասար մարտերում պարտություն կրելով, թուրքական իշխանությունները գործադրեցին զանգվածային կոտորածներ։ Սասունցիների ինքնապաշտպանությունը ղեկավարում էին՝ Մեծն Մուրատը, Գևորգ Ջավուշը, Հրայր Դժողքը, Մորուք Կարոն (Կարապետ Ավոյան)։

1895 թ.

Ամռանը թուրքական ջոկատները հարձակվեցին Խլաթի հայկական Սոխորդ գյուղի վրա։ Հայերը դիմեցին ինքնապաշտպանության։ Այն ղեկավարեց Սերոբ Աղբյուրը իր ֆիդայիներով և հմտությամբ պարտության մատնեց թուրքերին։ 1897 թ. թուրքերը կրկին հարձակվեցին, բայց չկարողա-

ցան գերել Սերոբ Աղբյուրին։

Սեպտեմբեր 18,- Կ. Պոլսի Բարձրագույն Դռան (Պապ-ը Ալի) շրջակայքում Հնչակյան կուսակցությունը կազմակերպեց խաղաղ ցույց, որպեսզի կյանքի կոչվի մայիսյան բարենորոգումների ծրագիրը։ Եղան ընդհարումներ։ Հայերից զոհվեցին շուրջ 2000 մարդ։ Պապ-ը Ալիի ցույցի կազմակերպիչներն էին՝ Մ. Հացագործյանը, Ա. Կամսարականը, Վ. Արզումանյանը, Լ. Մկրտչյանը և ուրիշներ։

1896 թ.

Օգոստոս 14,- Մի խումբ դաշնակցական զինված մարտիկներ Բաբկեն Սյունու ղեկավարությամբ գրավեցին Կ. Պոլսի «Բանկ Օթոման»ը, պահանջելով, որպեսզի կյանքի կոչվի բարենորոգումների ծրագիրը։ 13 ժամ տևած բախումներից հետո, երբ ֆիդայիները երաշխավորություն ստացան, որ իրենց պահանջները կիրականացվեն, թողեցին բանկը։ Այնուհանդերձ խոստումները ոչ միայն չիրականացան, այլև թուրքական իշխանությունները Կ. Պոլսում և գավառներում նոր կոտորածներ սանձազերծեցին։

1897 թ.

Հուլիս 25,- Տեղի ունեցավ Խանասորի արշավանքը։ ՀՀԴ կուսակցության Արևելյան Բյուրոյի որոշմամբ շուրջ 300 հայ մարտիկներ վրեժ լուծեցին քրդական Մազրիկ կոչվող ցեղից, որոնք 1896 թ. դավադրաբար հաշվեհարդար էին տեսել շուրջկալի մեջ ընկած հայ ֆիդայիներից։ Խանասորի արշավանքի ընդհանուր հրամանատարն էր Վարդանը (Սարգիս Մեհրաբյան), օգնականներն էին Իշխանը (Հովհաննես Արզուության), Մոկացի Մանուկը, Էրզրումցի Արամայիսը, Նիկոլ Դումանը։ Հեծելախմբի հրամանատարն էր Սևքարեցի Սաքոն։

1898 թ.

Հոկտեմբեր20,- Սերոբ Աղբյուրը Բաբչեն գյուղի մոտ իր զինակիցներով կատարյալ պարտության մատնեց թուրքական կանոնավոր ջոկատներին։

1901 թ.

Տարոնի գավառի Բերդակ գյուղում տեղի ունեցավ կռիվ Գևորգ Չավուշի ջոկատի և թուրք-քրդական զինվորների միջև։ Գևորգ Չավուշի խումբը հմտությամբ ճեղքելով պաշարումը ապաստանեց լեռներում։ Բերդակի կռիվը ֆիդայական շարժման հերոսական էջերից մեկն է։

Նոյեմբեր,- Մի խումբ ֆիդայիներ Անդրանիկի գլխավորությամբ ամրացան Մշո Ս. Առաքելոց վանքում։ Այս ձեռնարկով հայ ֆիդայիները թուրքական իշխանություններից պահանջում էին վերջ տալ հայերի նկատմամբ գործադրվող հալածանքներին։ Ֆերիկ Մուհամմեդ Ալի փաշայի հրամանատարությամբ թուրքական զորախմբերը պաշարեցին վանքը։ Նոյեմբեր 27-ին ֆիդայիները անձնազոհաբար ճեղքելով պաշարումը ապաստանեցին լեռներում։

1904 թ.

Սասունի ապստամբության ընթացքում հայ ֆիդայիների մի խումբ Անդրանիկի գլխավորությամբ ամրացան Ախթամար կղզում և մի շարք մարտեր մղեցին իրենց շրջապատող թուրքական ջոկատների դեմ։ Ի վերջո զինապաշարը սպառելով գաղտնի հեռացան Վան քաղաքի ուղղությամբ։

Ապրիլ 11,- Սասունի Շենիկ գյուղում տեղի ունեցավ կռիվ հայ ֆիդայիների և թուրքական ջոկատների միջև։ Այն տևեց 4 ժամ և ավարտվեց հայերի հաղթանակով։ Շենիկի կռվով սկսվեց 1904 թ. Սասունի ապստամբությունը։ Սասունցիները պահանջում էին, որ կառավարությունը կյանքի կոչի 1895 թ. «Մայիսյան բարենորոգումների» որոշումը։ Ինքնապաշտպանական կռիվներին մասնակցում էին Հրայր Դժողքը (Արմենակ Ղազարյան), Անդրանիկի ֆիդայական ջոկատը, Գևորգ Չավուշը, Հակոբ Կոտոյանը, Սեբաստացի Մուրադը, Սպաղանաց Մակարը և ուրիշներ։

Ապրիլ 16,- Սասունի ապստամբության ընթացքում Իշխանաձորի հայերը դեպի Տալվորիկ նահանջի ընթացքում

թեժ կռվի բռնվեցին թուրք և քուրդ ջոկատների հետ: Տալվորիկից եկած ֆիդայիների օգնությամբ իշխանաձորցիները կարողացան ապահով տեղափոխվել Տալվորիկ:

Ապրիլ 20-22,- Տեղի ունեցավ Գելիեգուզանի կռիվը: Այն Սասունի ապստամբության վերջին մարտերից մեկն էր, որը ղեկավարում էին Անդրանիկը, Գևորգ Չավուշը, Հաջի Հակոբը, Մակարը, Զոլոն (Հարություն Աբրահամյան):

Օգոստոս 10,- Խլաթ գավառի Շամիրամ գյուղի մոտ տեղի ունեցավ կռիվ հայ ֆիդայիների և թուրքական ջոկատի միջև: Մարտը գլխավորում էր Անդրանիկը: Մասնակցել են՝ Գևորգ Չավուշը, Սմբատը, Մուրատը, Սեպուհը (Արշակ Ներսիսյան) և ուրիշներ: Ֆիդայիները քաջաբար կռվելով կարողացել են ճեղքել շրջափակումը և շարժվել դեպի Ախթամար կղզին:

1905 թ.

Փետրվար,- Բաքվում հայկական թաղամասերի վրա թաթարների հարձակման ընթացքում Նիկոլ Դումանը իր մարտական ընկերների հետ հակահարված տալով փրկեց մեծ թվով հայերի կյանքը:

Մայիս 11,- Դրոն հաշվեհարդար տեսավ Բաքվի հայերի կոտորածների կազմակերպիչ՝ նահանգապետ Նակաշիձեի նկատմամբ:

Հուլիս 21,- ՀՀ Դաշնակցություն կուսակցությունը մահափորձ նախաձեռնեց Սուլթան Աբդուլ Համիդի դեմ: Այն չհաջողվեց:

1906 թ.

Մայիս,- Ժնևում լույս տեսավ Անդրանիկի «Մարտական հրահանգներ» գրքույկը, որը եզակի երևույթ էր հայ ռազմագիտական մտքի պատմության ասպարեզում:

1907 թ.

Ժնևում լույս տեսավ Նիկոլ Դումանի «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության» խորագրով ռազմագիտական գրքույկը:

Մայիս 27,- Սուլուխի մոտակայքում տեղի ունեցավ կռիվ Գևորգ Չավուշի ֆիդայիների խմբի և թուրքերի միջև: Այս մարտում Գևորգ Չավուշը վիրավորվեց և ընկավ հերոսի մահով:

1912 թ.

Հոկտեմբեր 9,- Սկսվեց Բալկանյան պատերազմը: Առաջին իսկ օրերից ստեղծվեց հայկական զորամաս Մակեդոնա-Օդրինյան աշխարհազորի կազմում: Հրամանատարն էր Գարեգին Նժդեհը, տեղակալը՝ Անդրանիկը: Հայկական զորամասը աչքի ընկավ իր բազում հերոսություններով: Տարած հաղթանակների թվում հատկապես ակնառու դարձավ թուրք զորավար Մեհմեդ Յավեր փաշայի զորամիավորումի ջախջախումը:

1914 թ.

Հուլիս 23,- Ռուսական բանակի շարքերում Արևմտյան Հայաստանը ազատագրելու նպատակով նախաձեռնվեց կազմակերպել հայ կամավորական ջոկատներ: Առաջին համաշխարհային պատերազմի ռազմական գործողությունների ընթացքում հայ կամավորական ջոկատները կարևոր հաղթանակներ տարան Դիլմանում, Խանասորում, Բաշքալեյում, Իգդիրում, Ալաշկերտում, Վանում, Մուշում, Բիթլիսում, Սարիղամիշում և Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում: Հաջորդաբար ստեղծված կամավորական ջոկատների հրամանատարներն էին՝ Անդրանիկը, Դրոն (Դրազտամատ Կանայան), Համազասպը (Սրվանձտյան), Քեռին, Վարդանը, Ա. Ջանփոլատյանը, Իշխանը:

1915 թ.

-Մեծ Եղեռնի ընթացքում համատարած կոտորածներից խուսափելու համար սասունցիները ինքնապաշտպանական կռիվներ մղեցին թուրք ջարդարարների դեմ: Սակայն պարտություն կրելով թուրքական կանոնավոր զորքերից շատերը

թաղնվեցին լեռներում և ձորերում։ Այդ մարտերում անձնուրաց կռվեցին բազմաթիվ ֆիդայական ջոկատներ, որոնց գլխավորում էին՝ Փեթարա Մանուկը, Ռուբենը (Տեր Մինասյան), Կոմսը (Վահան Փափազյան), Իշխան Շառոն, Մուշեղը, Սաղտունցի Հովհաննեսը, Վահան Վարդանյանը, Մշեցի Մճոն (Մկրտիչ Պոլոյան), Իշխանաձորցի Արթինը և Կրպոն, Ստեփան Վարդաչերը և ուրիշներ։

-Մեծ Եղեռնի ընթացքում Մուսա Լեռան շրջակայքում գտնվող 6 հայկական գյուղերի (Քեբուսիե, Վագրֆ, Խդրբեկ, Յողունլուք, Հաջի Հաբիբլի, Բիթիաս) բնակչության մեծ մասը չենթարկվելով թուրքական իշխանությունների բռնագաղթի հրամանին, բարձրացան լեռ և 40 օր ու գիշեր հերոսական մարտեր մղեցին թուրքական կանոնավոր բանակի դեմ, մինչև որ ֆրանսիական «Գիշեն» և «Ժաննա Դ'Արք» շոգենավերը օգնության հասնելով պաշարվածներին տեղափոխեցին Եգիպտոս։ Ինքնապաշտպանությունը ղեկավարում էր հատուկ զինվորական մարմինը Եսայի Յաղուբյանի գլխավորությամբ։ Կարևոր դեր կատարեցին նաև Պետրոս Տմլաքյանը, Պետրոս Թութաղլյանը, Տիգրան Անդրեասյանը, Հակոբ Կարագյոզյանը և ուրիշներ։

Ապրիլ,- Վանի կուսակալ Ջեվդետ փաշան առաջին հարվածը ուղղեց շատախցիների վրա։ Ապրիլի 3-ին դավադրաբար սպանվեցին Խորհրդարանի անդամ Իշխանն (Նիկողոս Պողոսյան) ու նրա ուղեկիցները։ Կազմվեց զինվորական մարմին, որի անդամներն էին՝ Տիգրան Բաղդասարյանը, Ազատ Սիմոնյանը, Սամվել Մեսրոպյանը։ Շատախի ինքնապաշտպանությունը Վան-Վասպուրական հերոսամարտի բաղկացուցիչ մասն էր կազմում։

Ապրիլ 7-ից մինչև մայիս 6,- Վանի հայ բնակչությունը հերոսական ինքնապաշտպանական մարտեր մղեց թուրք ջարդարարների դեմ։ Վանի և շրջակա գավառների (Շատախ, Հայոց Ձոր, Արճեշ, Թիմար, Ալջավազ) մարտերը ղեկավարում

էր Վասպուրականի հայ ինքնապաշտպանական Մարմինը, որի անդամներն էին՝ Արամ Մանուկյան, Արամ Եկարյան, Գափրիել Սեմերջյան, Կայծակ Առաքել, Բուլղարացի Գրիգոր, Հրանտ Գալիկյան, Փանոս Թերլեմեզյան։ Այս ինքնապաշտպանության արդյունքը եղավ այն, որ 120 հազար վասպուրականցիներ փրկվեցին թուրքական կոտորածներից և գաղթեցին Արևելյան Հայաստան։

Ապրիլ 17-18,- Ուրմիայի լճի շրջանում գտնվող Դիլման գյուղաքաղաքի մոտ տեղի ունեցավ ճակատամարտ թուրքական և ռուսական զորքերի միջև։ Թուրքերի ջախջախման խնդրում մեծ դեր խաղաց ռուսական բանակում գործող հայկական կամավորական ջոկատը Անդրանիկի հրամանատարությամբ։

Հունիս,- Թուրքական իշխանությունները նենգորեն հավաքագրեցին Շապին Գարահիսարի երիտասարդությանը և անողոքաբար սպանեցին։ Բնակչությունը դիմեց ինքնապաշտպանության։ Բնակչությունն ու զինյալները որոշ ժամանակ պատսպարվեցին Շապին Գարահիսարի հինավուրց բերդում և համառորեն դիմադրեցին թշնամուն։ Ի վերջո զինամթերքի և պարենի սպառումով պարտվեցին։ Ինքնապաշտպանական մարտերը գլխավորում էին Ղուկաս Դեովլաթյանը, Ավագ Տյուրիկյանը, Գարեգին Կարմիրյանը, Շապուհ Օզանյանը, Իսրայել Օզանը, Գասպար Ղուկասյանը, Հմայակ Գարագյոզյանը և ուրիշներ։

Հունիս 15,- Թուրքական դատարանի անարդար, նենգ վճռով Կ. Պոլսի Սուլթան Պայազիտ հրապարակում անողոքաբար կախաղան բարձրացվեցին Հնչակյան կուսակցության 20 անվեհեր գործիչներ, որոնք պայքարել էին թուրքական դարավոր լծից ազատագրել Հայաստանը։ Հայ ժողովուրդը տևապես իր հարգանքի տուրքն է մատուցել Հնչակյան 20 կախաղանների պայծառ հիշատակին և բարձր գնահատել նրանց ազատատենչ վեհ գաղափարները։ Ահա նրանք՝

Փարամազ, Դոկտ. Պեննե Թոռոսյան, Արամ Աչըքբաշյան, Գեղամ Վանիկյան, Երվանդ Թոփուզյան, Ռուբեն Կարապետյան, Հովհաննես Տեր-Ղազարյան, Թովմաս Թովմասյան, Հակոբ Բասմաջյան, Մուրատ Զաքարյան, Մկրտիչ Երեցյան, Գարեգին Պողոսյան, Արմենակ Համբարձումյան, Երեմիա Մանանյան, Աբրահամ Մանուկյան, Մնաս Քեչիչյան, Սմբատ Գլըճյան, Գառնիկ Բոյաջյան, Հրանտ Եկավյան, Պողոս Պողոսյան:

Հունիս-Հուլիս,- Լեռնային Կիլիկիայի Ֆընդըճագ, Դերեքյոյ և Քեչիֆլի գյուղերի հայ բնակիչները զեյթունցի մարտիկների օգնությամբ ինքնապաշտպանական կռիվներ մղեցին թուրք ջարդարարների դեմ և փրկեցին հայ բնակչությունը զանգվածային կոտորածներից: Մարտերը ղեկավարում էին Վարդևար Քեհյանը, Մինաս գոլանջյանը, Հովսեփ Զեյթունցյանը, Նազարեթ Կոջոյանը: Ֆընդըճագցիները քաջարի դիմադրություն ցույց տվին նաև 1920 թ. քեմալականների հալածանքների ընթացքում:

Հուլիս,- Մուշ քաղաքի բնակչությունը ոտքի ելավ «մահ կամ ազատություն» նշանաբանով: Թեև վատ էին զինված, այնուհանդերձ կռվեցին քաջաբար և անհավասար մարտերում շատերը նահատակվեցին: Մշո ինքնապաշտպանությունը ղեկավարում էր հակոբ Կոտոյանը (Հաջի Հակոբ):

Սեպտեմբեր-հոկտեմբեր,- Տեղի ունեցան Ուրֆայի ինքնապաշտպանական մարտերը, երբ թուրքական իշխանությունները սկսեցին բռնի տեղահանել ու կոտորել Ուրֆայի հայ բնակչությանը: Ուրֆացիները անձնվիրաբար կռվեցին թշնամու գերազանց ուժերի դեմ և շատերը ընկան հերոսի մահով: Ինքնապաշտպանական մարտերը գլխավորում էին՝ Մկրտիչ Յոթնեղբայրյանը, Հարություն Ռասթկելենյանը, Հովհաննես Իմիրզյանը, Լևոն Էղբերլերյանը, Արմենակ Աթարյանը, Խորեն Քյուփելյանը:

1916 թ.

Փետրվար 18-19,- Ռուսական բանակի շարքերում կռվող հայ կամավորական վաշտը, Անդրանիկի հրամանատարությամբ գրավեց Բիթլիսը: Այս մեծ հաղթանակի համար Անդրանիկը ստացավ Սուրբ Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշան՝ սրով և ժապավենով: Հետագայում՝ 1918 թ. հունվարին ռուսական կովկասյան բանակի հրամանատարությունը Անդրանիկին շնորհեց զորավարի բարձր կոչումը:

Հոկտեմբեր 27

Լոնտոնում համաձայնություն կնքվեց հայկական լեգիոն (զորագունդ) ստեղծելու մասին: Լեգիոնը դաշնակիցների (Ֆրանսիա) բանակի շարքերում քաջարի մարտեր մղեց Սիրիայում, լիբանանում, Կիլիկիայում: Հատկանշական է, որ Հայկական Լեգիոնը 1918 թ. սեպտեմբերի 19-ին գրավեց Արարայի բարձունքը Պաղեստինում:

1918 թ.

Հունվար-մայիս,- Տեղի ունեցավ Էրզրումի նահանգի Խոտորջուր գավառակի հայության ինքնապաշտպանական կռիվները թուրքական ջոկատների դեմ: Թուրքերը խախտելով Երզնկայի զինադադարի պայմանագիրը սկսել էին վերադարձրավել ռուսների ազատագրած հայկական գավառները: Խոտորջրի զինվորական խորհրդի անդամներն էին՝ Օգոստինոս Սչանյանը, Վ. Բագրադյանը, Հ. Բալջյանը, Ֆ. Ամիրազյանը, Վ. Տեր-Պողոսյանը, Կ. Պապյանը: Օգնություն չստանալով դրսից Խոտորջուրի հայությունը խմբերով տեղափոխվեց Արևելյան Հայաստան և այլ երկրներ:

Մայիս 21-29,- Սարդարապատ կայարանի շրջակայքում տեղի ունեցան թեժ մարտեր Արևելյան Հայաստան ներխուժած թուրքական զորաբանակի և հայկական կանոնավոր զորամասերի ու աշխարհազորի միջև: Այն ավարտվեց հայկական ուժերի տարած լիակատար հաղթանակով և հնարավորություն ստեղծեց վերականգնել հայկական պետականությունը: 1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի

հանրապետությունը։ Սարդարապատի հաղթանակը ձեռք բերվեց հայ զորավարների և սպաների հմուտ ղեկավարությամբ։ Ահա նրանք՝ Զորավար՝ Թովմաս Նազարբեկյան, զորավար՝ Մովսես Սիլիկով, Գնդապետ՝ Դանիել Բեկ Փիրումյան, Արամ Մանուկյան, Գնդապետ՝ Պողոս Բեկ Փիրումյան, Գնդապետ՝ Կ. Հասան Փաշայան, Պանդուխտ (Միքայել Սերյան) և շատ ուրիշներ։

Մայիս 24-28,- Ղարաքիլիսայի (այժմ՝ Վանաձոր) մոտ տեղի ունեցավ ճակատամարտ հայկական և թուրքական զորքերի միջև։ Հայկական զորքերի հրամանատարն էր Թովմաս Նազարբեկյանը։ Ղարաքիլիսայի մարտերի ընթացքում հայերը ունեցան մեծ կորուստներ, բայց կարողացան կասեցնել թշնամու առաջխաղացումը դեպի Սևանի ավազան և Երևան։

Մայիս 23-29

Սարդարապատի ճակատամարտի ընթացքում թուրքական հրամանատարությունը փորձեց Երևան արշավել նաև հյուսիսային կողմից, բայց մատնվեց անհաջողության, քանի որ Սարդարապատի հայկական զորքերից մոտ 6 հազար մարտիկներ Զոր. Դրոյի գլխավորությամբ շտապ դիրքեր գրավելով Բաշ Ապարանում, կատարյալ պարտության մատնեցին թուրքական զորքերին։ Բաշ Ապարանի կռիվներին հայերին օժանդակեցին եզդիները, Զահանգիր Աղայի գլխավորությամբ։

Մայիս 28,- Հռչակվեց ազատ և անկախ Հայաստանի հանրապետությունը։ Վարչապետ ընտրվեց Հովհաննես Քաջազնունին։

1920 թ.

-Ֆրանսիական զորքերը երբ դավադրաբար դուրս եկան Կիլիկիայից, քեմալականները գրավեցին Ուրֆան, Այնթաբը, Մարաշը, Սիսը և սկսեցին հալածել իրենց ընօրրանը վերադարձած հայերին։ Զգալով վերահաս վտանգը՝ հաջընցիները կազմակերպեցին քաղաքի ինքնապաշտպանությունը։ 1920

թ. ապրիլ-հոկտեմբեր ամիսներին հաջընցիները քաջաբար դիմադրեցին թուրք կանոնավոր զորքերին, սակայն գերազանց զինված թշնամու դեմ չկարողացան հաղթանակով ավարտել իրենց պայքարը։ Հոկտեմբերի 15-ին քեմալականները գրավեցին Հաջընը և մեծ մասամբ կոտորածի ենթարկեցին հաջընցիներին։ Հաջընի ինքնապաշտպանության ղեկավարներն էին՝ փաստաբան Կարապետ Զալյանը, Հաջընի հոգևոր առաջնորդ՝ Պետրոս Սարաջյանը, Սարգիս Ճեպեճյանը, Արամ Թերզյանը և ուրիշներ։

-Ապրիլի սկզբներից մինչև 1921 թ. փետրվարի 8-ը տեղի ունեցավ Այնթաբի հայության ինքնապաշտպանական կռիվները քեմալականների հարձակումների դեմ։ 1921 թ. հոկտեմբերի 20-ի թուրք-ֆրանսիական համաձայնագրից հետո այնթաբցիները ստիպված հեռացան իրենց ընօրրանից։ Այնթաբի ինքնապաշտպանության կազմակերպիչներն էին՝ Ա. Լևոնյանը, Ա. Գալեմքարյանը, քահանա Ներսես Թավուզճբյանը և ուրիշներ։

Սեպտեմբեր-նոյեմբեր,- Տաղանդավոր զորավար Գարեգին Նժդեհը իր զինակից կապիտան Պողոս Տեր-Դավթյանի աջակցությամբ Զանգեզուրում կարևոր հաղթանակներ տարավ, գրավելով Ղափանը, Սիսիանը և Գորիսը։ Գարեգին Նժդեհի այս աննկուն պայքարով Զանգեզուրը մնաց հայերի ձեռքին և հետո միացավ Խորհրդային Հայաստանին։

1921 թ.

Մարտ 15,- Բեռլինում Սողոմոն Թեհլիրյանը ահաբեկեց Թուրքիայի ներքին գործերի նախարար՝ Թալեաթին։

Հուլիս 19,- Հայ վրիժառու (ՀՀԴ կուսակցության անդամ) Միսաք Թոռլաքյանը Կ. Պոլսում ահաբեկեց Բաքվի 1918 թ. սեպտեմբերին հայերի կոտորածների կազմակերպիչ Բեհբութ խան Ջիվանշիրին (Ադրբեջանի ներքին գործերի նախկին նախարար)։

Դեկտեմբեր 6,- Արշավիր Շիրակյանը Հռոմում ահաբեկեց

Մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշային:

1922 թ.

Ապրիլ 17,- Արամ երկանյանը և Արշավիր Շիրակյանը Բեռլինում ահաբեկեցին «Թեշքիլաթ-ը մահսուսե-ի» (Հատուկ կազմակերպություն) նախագահ՝ Բեհաէդդին Շաքիրին և Տրաբիզոնի նախկին նահանգապետ Ճեմալ Ազմիին:

Հուլիս 25,- Պետրոս Տեր-Պողոսյանը և Արտաշես Գևորգյանը Թիֆլիսում ահաբեկեցին ծովային նախարար՝ Ճեմալին:

Օգոստոս 4,- Թուրքմենիստանի առաջին Հիսարյան հատուկ հեծյալ բրիգադի հրամանատար Հակոբ Մելքումովի ձեռքով Զաղան Ղըշլաղում ահաբեկվեց Էնվերը:

1970 թ.

1970- ական թվականների սկզբներին ստեղծվեց «Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ» քաղաքական կազմակերպությունը, որի հիմնական նպատակն էր Թուրք դիվանագետների ահաբեկումների միջոցով համաշխարհային հասարակության ուշադրությունը բևեռել հայկական հարցի լուծման: Ստիպել Թուրքիային, որպեսզի ճանաչի 1915 թ. հայերի ցեղասպանությունը և արդար հատուցում տա նրա հողային և նյութական պահանջներին: Կազմակերպությունը լուծարվեց 1984 թ.:

1988 թ.

Փետրվար 20,- Սկսվեց Արցախի ազատագրության պայքարը: ԼՂԻՄ-ի Մարզային Խորհուրդը որոշում ընդունեց դուրս գալ Ադրբեջանի կազմից և միանալ Հայաստանին: Ի պատասխան այս շարժման Ադրբեջանցիները սկսեցին բռնի տեղահանել և կոտորել հայերին: Հետագա մի քանի տարիների ընթացքում Արցախի ազատամարտիկները հերոսական պայքար մղեցին, ազատելով Արցախի քաղաքներն ու գյուղերը: Տարբեր մարտերում կազմակերպչական և հրամանատարական բարձր տաղանդով աչքի ընկան Մոնթե Մելքոնյանը, Լեոնիդ Ազգալդյանը, Սիմոն Աչըգկյոզյանը, Նորիկ

Դանիելյանը, Տիգրան Սարգսյանը, Շահեն Մեղրյանը, Մանվել Եղիազարյանը, Սամվել Գևորգյանը, Հակոբ Հակոբյանը, Մանվել Գրիգորյանը, Մովսես Գորգիսյանը, Երվանդ Սահումյանը և շատ ուրիշներ, որոնցից շատերը իրենց կյանքը զոհաբերեցին Արցախի ազատագրման սուրբ գործին:

1991 թ.

Սեպտեմբեր 2,- Հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Սեպտեմբեր 21,- Հռչակվեց Հայաստանի անկախ Հանրապետությունը:

1992 թ.

Մայիս 9,- Լեռնային Ղարաբաղի հայկական ուժերը թեժ մարտերից հետո ազատագրեցին Շուշի քաղաքը:

Մայիս 15-18,- Ազատագրվեց Բերդաձորը, Լիսագորը, Զաբուղ գյուղը և Լաչինը: Բացվեց Արցախը Հայաստանին կապող միջանցքը:

Սեպտեմբեր 1,- Ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի հանրապետության պաշտպանության բանակը:

1993 թ.

Փետրվար 20-21,- Արցախի հայ ազատամարտիկներին հաջողվեց ազատագրել Մարտակերտի մեծագույն գյուղը՝ Հաթերքը, ինչպես նաև Զափար, Զարդախաչ, Զաղլիկ և Ումուդլու գյուղերը: Մինչ այդ ազատագրել էին Զլդրան, Վաղուհաս և մի շարք այլ գյուղեր:

Ապրիլ 7,- Հայ ազատամարտիկները ամբողջությամբ գրավեցին Քելբաջարի շրջկենտրոնը և Լաչին-Քելբաջար թունելը:

Հունիս 27,- Հայկական զինված ուժերը հուժկու հարվածով ազատագրեցին Մարտակերտ շրջկենտրոնը:

Հուլիս 23,- Ազատագրվեց Աղդամը:

Օգոստոս 23,- Ազատագրվեց Ֆիզուլին:

Հոկտեմբեր 28,- Ազատագրվեց Զանգելան քաղաքը:

1994 թ.

Ապրիլ 25-26,- Ազատագրվեց Բաշ-Քարվենդ, Օրթա-Քարվենդ, Շիխլար գյուղերը և այնուհետև Թարթառի շրջկենտրոնը:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայ ժողովրդի պատմություն, 6-րդ հատ., Երևան, 1981:
2. Աշոտ Սարգսյան, Արարատ Հակոբյան, Հայոց պատմություն, Երևան, 1997:
3. Հայկազ Պողոսյան, Զեյթունի պատմությունը, Երևան, 1969:
4. Ռուբեն Սահակյան, Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990:
5. Հ. Թուրշյան, Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1969:
6. Հ. Բուրսալյան, Մուսա լեռան հերոսամարտը, Հալեբ, 1954:
7. Ռուբեն Սահակյան, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1923 թթ., Երևան, 1970:
8. Հրաչիկ Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, գիրք-Ա և գիրք-Բ, Երևան, 1996:
9. Կնյազ Թառոյան, Արևմտահայերի ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, Երևան, 1980:
10. Աշոտ Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984:
11. Հայկական հարց, Հանրագիտարան, Երևան, 1996:
12. Պարբերական մամուլ, «Ասպարեզ», «Մասիս», «Նոր Օր», «Նոր Հայաստան»:

ԱՊՐՈՒՄ ԵՆՔ ԵՎ ԳՈՅԱՏԵՎՈՒՄ
(Վերջաբանի փոխարեն)

Տարիներ առաջ, մի օր ինձ հրավիրեցին «Արվեստի և գրականության թանգարան» ուսումնասիրելու և թարգմանելու Գրիգոր Զոհրապի ձեռագրային ֆոնդը՝ հատկապես Մեծ Եղեռնի օրերին աքսորավայրից իր սիրեցյալ կողակցին՝ Քլարա Զոհրապին ուղղված նրա օսմաներեն նամակներն ու հեռագրերը: Այդ նյութերը խիստ անհրաժեշտ էին թանգարանի ավագ գիտնական Գոհար Ազնավուրյանին, որովհետև տվյալ ժամանակ նա ուսումնասիրության նյութ էր դարձրել Գրիգոր Զոհրապի աքսորավայրի ողիսականը:

Սկսեցի կարդալ և վերծանել մեծ գրողի, հրապարակախոսի, միջազգային համբավի արժանացած իրավաբանի և 1908-1915 թթ. թուրքական պառլամենտի հայ պատգամավորի օսմաներեն ձեռագրերը:

Կարդալով այդ նյութերը օր-օրի վրա հուզվում էի էապես: Նրա դառը ճակատագրի մանրամասնությունները խորապես ազդում էին վրաս: Ակամա ապրում էի այդ տառապալի, ահավոր իրավիճակը: Անկախ ինձանից, այնպես էի կլանվել եղեռնական այդ նյութերով, որ կարծեք թե ես էի գտնվում վագոնում և թուրք ժանդարմների հսկողությամբ ինձ էին տանում անհայտ ուղղությամբ...

Հայտնի է, որ Գրիգոր Զոհրապը երկարատև քաշքշուկներից հետո դավադրաբար և անողոքաբար սպանվեց աքսորի ճանապարհին:

Այսպես մի քանի օր և ի վերջո կատարեցի իմ պարտքի զգացումը մեծ գրողի անմահ հիշատակին և հանձնելով պատրաստի նյութերը, դուրս եկա թանգարանից: Մտամոլոր քայլերս ուղղեցի այսօրվա «Հանրապետության» հրապարակը («Արվեստի և գրականության թանգարան»ը գտնվում է դեպի հրապարակ նայող Պատմության թանգարանի ետևի մասում):

Անակնկալի գալով, մի քանի րոպե քարացած, դիտում էի, թե ինչ է կատարվում հրապարակում։ Ինքս ինձ հարց էի տալիս. «Ո՞ւր էի հինգ րոպե առաջ, ինչպիսի եղեռնական մտքերով տարված և ո՞ւր եմ հիմա»։

Ես այդքան հայ երեխաների բազմություն մի տեղ հավաքված չէի տեսել երբեք։ Հրապարակը լցված էր խումբ-խումբ հայ մանուկներով և պատանիներով։ Առնական հնչում էին չեփորների, թմբուկների, փողերի ձայներ և դրանց հետ մեկտեղ՝ հայրենասիրական երգեր։ Ինչ որ նախապատրաստվում էին տողանցքի, հրապարակային ելույթի համար։

Ականջիս մինչև այսօր հնչում է այդ օրվա ուրախ մթնոլորտի «աղմուկ-աղաղակը»։ Երևանյան պայծառ Արևի ճառագայթների ներքո կյանքը եռում էր իր իսկական իմաստով։ Շատրվանի կողքին, բարձր աստիճանների վրա կանգնած, բավական ժամանակ դիտում էի այդ տեսարանը։

Մոռացել էի քիչ առաջվա եղեռնային խոհերս։ Պահը այնքան ազդեցիկ էր, որ ակամա հուզվում էի, բայց դա ուրախության հուզմունք էր արդեն։

Ուրեմն մենք կանք, գոյատևում ենք։ Այս երեխաները կերտելու են դժվարին, բայց փայլուն մեր ապագան։

Ի վերջո դժվարությամբ հեռանում եմ հրապարակից մտքիս մեջ անընդհատ կրկնելով. ՈՒՐԵՄՆ ԿԱՆՔ, ԱՊՐՈՒՄ ԵՆՔ ԵՎ ԳՈՅԱՏԵՎՈՒՄ...







AVETIS PAPAZYAN

GENOCIDE AND THE STRUGGLE FOR SURVIVAL

April 24th, of the year 2000 marks the 85th anniversary of a tragic event. At the beginning of the 20th century, an atrocious Genocide was perpetrated against the Armenian people.

As a result of this Genocide, which was conducted by the Young Turk Government, all Armenians in the Ottoman Empire stood before annihilation. During these attacks upon innocent lives, 1.5 milion became victims.

Mersiless mass deportations and massacres from towns and villages in Western Armenia, as well as from localities with Armenian populations in Asia Minor had entirely nothing to do with measures being taken for military reasons, as the question of annihilating the Armenian people had been worked out and settled beforehand by the Central Committee of the "Ittihad ve Terakki" (Union and Progress) party. To solve the Armenian problem they had chosen the total extermination of Western Armenians.

The Armenian Genocide was accompanied by a massive program of deportation. The survivors of this horror were forced to march into Syrian deserts and during the march many of them lost their lives due to exhaustion, torture, starvation and desease.

In fact, the deportation was mostly the execution of Western Armenians. As the United State ambassador in Istanbul Henry Morgenthau confirmed; "The real purpose of the deportation was robbery and destruction; it really represented a new method of massacre. When the turkish authorities gave the orders for these deportations, they were merely giving the death warrent to a whole race; they understood this well, and, in their conversations with me, they made no particular attempt to con-

ceal the fact" (H. MORGENTHAU, Ambassador Morgenthau's Story, N. Y., 1918, p. 309).

Here are two portions from the articles of American newspapers, which were issued in 1915 during Armenian Genocide.

"The shocking news of the massacre, tortur and deportation of Armenian Christians makes a special appeal to American sympathy and helpfulness. From numerous and reliable sources in Turkey it seems certain that this is not a matter of local disorders or petty oppression, but a systematic effort to extirepate the Armenian race. Thousand of families have been driven from their homes to starve upon the roads. Towns and villages have been divested of their inhabitants. Many are being put torture to force them to renounce their Christian faith. Women are interned in harems and children are sold as slaves". "THE INDEPENDENT", September 27, 1915. The title of the article is; "THE DEPOPULATION OF ARMENIA".

"The most brutal, the most ruthless, the most inexcusable, and the most widespread massacres of christians in the last thousand years are deluging Armenia with the blood of men, women, and children. Whole villages are wiped out by fire, sword, and deportation. It seems evident that this movement against the Armenians is part of a concerted scheme against all non-turkish and christian inhabitants of Turkey...". "THE MISSIONARY REVIEW OF THE WORLD", November, 1915. The title of the article is; "THE ASSASSINATION OF ARMENIA".

A cruel suffering period followed the Genocide of 1915. Many Armenians scattered across the Earth, forced to relocate, but never able to discover home or country again. while, others escaped to Eastern Armenia. The survivors not only suffered material losses but also had to endure the loss of their homeland, Western Armenia.

Presently, several governments acknowledge April 24th as

a Memorial Day in remembrance of the victims of the Armenian Genocide. Although it is recognized as a Memorial Day, but the international community has never forced compensation of the victim's of this tragedy. Thus far, no property or territory has been returned.

Unfortunately Turkey, after all these years refuses to acknowledge these terrible deeds. In our days, Turkish ruling circles and historians continue to persistently reject the Genocide of Western Armenians, and on the whole, and aim at falsifying the history of the Armenian people by various means and anti-academic publications.

All these arguments are profoundly wrong. In reality the whole world knew how the bloody Sultan Abdul Hamid and his successors, the Young Turks, committed a policy of genocide to resolve the Armenian question, and how they took advantage of World War 1 as an opportunity to exterminate completely the Armenian population in the Ottoman Empire.

It will be noted that nowadays the destruction of Armenian churches, monastries, monuments, and cemetries are part of a systematic Turkish cultural genocide, to eradicate the name of Armenia and Armenians from their native country.

This book contains two main sections. The first section delves into various cultural perspectives, of intellectuals, regarding the Armenian Genocide. Resources focus particularly on international press releases and letters from survivors. This section also highlights the destruction of Western Armenian heritage, and religious architectures.

The second section encompass the author's historical researches regarding the Armenian's struggle for freedom, survival, and independence.

The book is dedicated in commemoration of the 85th anniversary of the Armenian Genocide.

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

ԱՎԵՏԻՍ ՓԱՓԱԶՅԱՆԸ ծնվել է 1931 թ. Սիբիրյի Լաթաքիա քաղաքում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի Ս. Հակոբյանց Ազգային երկսեռ վարժարանում և այնուհետև՝ Բեյրութի Ս. Նշան դպրոցում:

1946 թ. ընտանիքը հանդերձ ներգաղթել է Հայաստան և հաստատվել քաղաքամայր Երևանում: Բարձրագույն ուսումը ստացել է 1955-1960 թթ. Երևանի Պետական համալսարանի Ռոմանո-գերմանական ֆակուլտետում:

1961 թ. ընդունվել է Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի թուրքական բաժինը և բարեհաջող հանձնելով ասպիրանտուրայի քննությունները մեկնել է Մոսկվա, Միութենական Գիտությունների Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտ, ուր 3 տարվա ուսումնառությունից հետո պաշտպանել է գիտական ավարտաճառը՝ «Քյաթիբ Չելեբիի ճիհան նյուման և ֆեզլեքեն որպես աղբյուր Հայաստանի պատմության» 17-րդ դար խորագրով և ձեռք բերել միջնադարի Թուրքիայի պատմության աղբյուրագետ-պատմաբանի մասնագիտությունը: Այնուհետև 32 տարի շարունակաբար աշխատել է Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում: 1988-92 թթ. ղեկավարել է ինստիտուտի աղբյուրագիտական բաժինը:

1968-75 թթ. Երևանի Պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետում դասավանդել է Թուրքիայի պատմությունն ու օսմաներեն լեզուն (արաբատառ թուրքերեն):

Իր հրատարակությունների մեծ մասը նվիրված է Հայաստանի և հայ ժողովրդի մասին միջնադարի թուրք պատմագիրների հաղորդած նյութերի ուսումնասիրությանը: Օսմաներենի գիտակ աղբյուրագետ պատմաբանը 1983 թվականից սկսել է զբաղվել հայերի ցեղասպանության հարցերով: 1988 թ. Երևանում հրատարակվել է նրա «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի» գիրքը և մի շարք գիտական հոդվածներ: Վերոհիշյալ գիրքը հետագայում թարգմանվել է անգլերեն և արաբերեն լեզուներով:

1996 թ. Մեծ Եղեռնի 80-ամյակի կապակցությամբ Լոս Անջելոսում լույս տեսավ նրա «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» ուսումնասիրությունը:

Լոս Անջելոսի հայ մամուլում տպագրված նրա գիտական հոդվածները ամփոփված են իր կազմած «Հայկական հարցը և Մեծ Եղեռնը» խորագրով մատենաշարի 7 հատորներում:

Գիտական զեկուցումներով հանդես է եկել միջազգային մի շարք գիտաժողովներում: Փրոֆ. Ավետիս Փափազյանն այսօր էլ բուռն կերպով շարունակում է զբաղվել միջնադարի թուրքական աղբյուրների, արխիվային նյութերի, ինչպես նաև հայկական հարցին և Մեծ Եղեռնին վերաբերող նյութերի ուսումնասիրությամբ: Վերջերս Հայաստանի Արևելագիտության ինստիտուտի Գիտական խորհրդի որոշումով լույս տեսավ նրա կոթողային մի աշխատությունը՝ «Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին 16-19-րդ դարերում» խորագրով:

Հրապարակախոսական հոդվածներով և մասնագիտական դասախոսություններով նա իր աշխույժ մասնակցությունն է բերում Լոս Անջելոսի հայ համայնքի հայրենանվեր միջոցառումներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 7

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 12
Ա. Ամերիկացիները հայերի ցեղասպանության մասին 14
Բ. Ռուսաստանը հայերի ցեղասպանության մասին 32
Գ. Ֆրանսիացիները հայերի ցեղասպանության մասին 38
Դ. Գերմանացիները հայերի ցեղասպանության մասին 45
Ե. Անգլիացիները հայերի ցեղասպանության մասին 54
Զ. Հունաստանը հայերի ցեղասպանության մասին.. 59
Է. Իտալիան հայերի ցեղասպանության մասին..... 63
Ը. Աշխարհի զանազան երկրների կառավարություններն ու ներկայացուցիչները հայերի ցեղասպանության մասին 65
Թ. Թուրք պետական գործիչներն ու պատմաբանները 1894-1896 և 1915-1916 թթ. հայերի ցեղասպանության մասին 81
2. ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԻՑ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 93
3. ՁԱՅՆ ՏԱՌԱՊԵԼՈՑ (Առաջաբան և հատվածներ վերապրողների նամակներից) 100
4. ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՉԸՆԶԱՅՈՒՄԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 112

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ
ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՊԱՅՔԱՐ

1. ՋԵՅԹՈՒՆԻ 1895-96 ԹԹ. ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 128
2. ՊԵՏԵՎԻԻ ՏԱՐԱԶՈՎ ՀԱՅԸ ԿԱՄ ՈՐԲԱՀՎԱՔԻ ՀԱՎԱՏԱՎՈՐ ՆՎԻՐՅԱԼԸ 138
3. ԱՐՑԱԽ (Պատմա-աշխարհագրական համառոտ ակնարկ) 147
4. 80 ՏԱՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԲՈՎԵՐՈՒՄ 158
5. ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ 167
6. ԱՊՐՈՒՄ ԵՆՔ ԵՎ ԳՈՅԱՏԵՎՈՒՄ 183
7. Անգլերեն ամփոփում 185
8. Հեղինակի մասին 188

ԱՎԵՏԻՍ ՓԱՓԱԶՅԱՆ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՊԱՅՔԱՐ

Հրատարակչության տնօրեն՝ ՍՈԿՐԱՏ ՄԿՐՏՉՅԱՆ
Հրատարակչության խմբագիր՝ ՄԱՇԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
Սրբագրիչ՝ ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ
Համակարգչային շարվածք՝ ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ

Շապիկի ձևավորումը

Նկարիչ՝ ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Համակարգչային ձևավորող՝ ԳԱՐԵԳԻՆ ՄԱՐԳԱՅԱՆ

Տպագրությունը՝ օֆսեթ
Թուղթը՝ օֆսեթ
Չափը՝ 60x84 1/16
Ծավալը՝ 12 տպ. մամուլ
Գինը՝ պայմանագրային

«Զանգակ-97» հրատարակչություն, Երևան, Մարշալ Բաղրամյան 3,
հեռ./ֆաքս՝ 56-30-82, e-mail: zangak@arminco.com

«Զանգակ-97» հրատարակչության տպարան, Երևան, Վարդանանց փակուղի 8: